



CUML

21000000

891.99

V-16





891.99

15-16

6 NOV 2011

16

ԱՐԱՐԱՏ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿ.

ՄԱԼԽԱՍ

ԶԱՐԹՈՆԻ

Ե. ՀԱՏՈՐ

ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի
1934, ՊՈՍՏՈՆ

ԶԱՐԹՕՆ Ք

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԵՐԲ ԱՌԻԻԾ ԳԵՒՕՆ ԿԸ ԳՈՐԾԷ

— Վալլահ, էլ չեմ սպասեր:

— Չէ, ախպերս, «մէկ շարաթ սպասեցէք» պատուիրեց մեզ պարոն Լեւոնը: Դեռ երկու օր ալ ունինք. եթէ խապար մը չելաւ, այն ատեն շատ լաւ, ճամբայ կ'ելլենք:

— Սարսախ սարսախ կը խօսիս, — բարկացաւ Առիւծ Գեւոն, — մէկ շարաթն ալ անցաւ, երկուքն ալ: Փառք Աստուծու, ես ալ խելք ունիմ, հաշիւ բռնել դիտեմ...

— Գեւո, Աստուածդ սիրես, մենք հինգշաբթի գիշեր եկա՞նք թէ չէ...

— Հա', հինգշաբթի գիշեր:

— Որ էդպէս է, ուրբաթ մէկ, շաբաթ երկու, կիրակի երեք, երկուշաբթի չորս, երեքշաբթի հինգ, էս օր էլ չորեքշաբթի...

— Ծօ, աւանակ, ինծի Առիւծ Գեւո կ'ըսեն, դո՞ւն ինծի հաշիւ ընել պիտի սովորեցնես, ծօ', քեզի որ կ'ըսեմ օխթը, ութը օր անցաւ, ուրեմն անցաւ, հասկցա՞ր, ալ բերանդ չբանաս... Բայց որ կ'ուզես երկու օր մ'ալ ըսպասել, քու խօսքդ թող էղնի: Աստուած պելադ տայ, քեզի ընկեր չտուին ինձ, գլխուս փորձանք տուին, կոտորով փորձանք: Ի՞նչ ընեմ, ճախ մեղքն ես, ճար չունիմ՝ պիտի քաշեմ...

Լեւոնի Սուրբ Խաչ վանքէն մեկնելու օրէն իսկ, Առիւծ Գեւոն ու Թոփալ Սատանան անվերջ շուն ու կատու խաղցեր էին: Մարազի մէջ իրարու կողքի երկնցած՝ Ա-



4083-89

ուրիճ Գեւօն գիշերները կը լուսցնէր անընդհատ ծխելով եւ հայհոյելով Թոփալ Սատանային, որ յարդի վրայ երկընցած՝ հանդստօրէն կը խուկար: Մեր Առիւծ Գեւօն մարազի մէջ բանտարկուելու անսովոր, կը պնդէր երթալու մասին: Ան իւրայատուկ կերպ մը ունէր օրերը հաշուելու, որ սովորական թուարանութեան հետ նմանութիւն չունէր: Երկրորդ օրէն սկսած՝ կռիւր փրթաւ երկու ընկերներու միջեւ:

— Ծօ՛, ... մեռելի սղայ, շարաթը շատո՞նց անցաւ, — կ'ըսէր Առիւծ Գեւօն՝ երկար բեխերը ուրբելով, — ի՞նչ նստեր ենք, երթանք Հայոց Ձոր Մոսոյի քով:

Թոփալ Սատանան մատներու վրայ օրերու հաշիւը բռնելով՝ վերջի վերջոյ կը համոզէր ընկերը դեռ օր մ'ալ սպասելու: Այդ օր սակայն, Առիւծ Գեւոյի համբերութիւնը մաղլցեր էր սանդուխի ամենավերի աստիճանը, այլեւս Թոփալ Սատանայի մատի հաշիւներն ալ չէին դօրեր դայն համոզելու:

— Որ գիշեր եղաւ, հայտա՛, ճամբայ կ'ելլենք, հասկըցա՞ր, Սատանայ: Ա՛լ բերանդ չբանաս, վալլա՛, ձեռքէս փորձանք մը կ'ելլէ... Էս քանի՛ շարաթ եղաւ, նրստեր՝ վանքի հացը կ'ուտենք:

Թոփալ Սատանային կը մնար համաձայնիլ ընկերոջ պահանջին, ալ աւելի դայն չգրգռելու համար: Սակայն կէս օրուան մօտ, կուռուպաշի Պաղտօն անակնկալօրէն յայտնուեցաւ վանքի մէջ: Առիւծ Գեւոյի հետ հին ընկերներ էին: Պաղտօն յայտնեց, որ Լեւոնէն լուր կայ, որ այդ գիշեր իսկ պէտք է Այգեստան անցնին:

— Տեսա՞ր, — խօսքը Առիւծ Գեւոյին ուղղելով ինքնավստահ շեշտով, ըսաւ Թոփալ Սատանան, — որ կ'ըսէի սպասե՛նք...

— Ծօ, ձէ՛նդ կտրէ՛, — թունդ բարկացաւ մեր Գեւօն, — իմ հաշիւովս հինգ վեց օր եղաւ գալերնիս, տահա

մէկ երկու օր ալ ունէինք... Ա՛լ բերանդ մի բանար Թոփալ: Հա՛ Պաղտօ, ուրեմն այս գիշեր կ'երթանք:

— Մթնելուն ես կուգամ, ձեզ առաջնորդելու: Հիմա մէկ՝ վանահօր մօտ երթամ:

Գաղաք երթալու լուրը առնելով, այլեւս Առիւծ Գեւոյի քէֆին քէֆ չէր հասներ: Փափախը ծոց ու յանկարծ բռունցքի ուժեղ հարուած մը իջեցուց Թոփալ Սատանայի մէջքին.

— Հը՞, Թոփալ, որ կ'ըսէի համբերենք, քիչ մ'ալ սպասենք, անշուշտ խապար մը կ'ելլէ մեր պարոն Լեւոնէն: Մէրը չմեռնի անոր. աշխարհ տակնուվրայ ընես, նորէն մէջտեղ կ'ելլէ... Հապա ի՞նչ դիտցար, մե՛նք, հին յեղատիտիսկաններս էդ թաւուր մարդ ենք: Ծօ, մեղի գերեզման ալ դնեն՝ նորէն չհաւատաս, օխտը օրը չանցած, անկէ ալ դուրս գալու կերպը կը գտնանք: Հէ՛յ, հէ՛յ, ասկէ աւելի ծանր օրեր տեսած է Առիւծ Գեւօն. ծօ, աս օրերը ի՞նչ են որ: Երբ որ մեծ ջարդի տարին... Ծօ՛, բերանդ չբանա՞ս, ի՞նչ ես անլեղու հայվանի նման նրստեր երեսիս կը նայես. Հայր Աբրահամի կնի՞կը դառձար...

— Ղովտի կնիկը, — ընկերոջ սխալը ուղղեց Թոփալ Սատանան:

— Ծօ քեզի ալ, Ղովտին ալ, Աբրահամին ալ բան մը պիտի ըսէի, մեղայ, մեղայ... բերանդ բաց, երկու խօսք խօսէ:

— Ախպեր, մարդու կա՞րգ կուտաս խօսելու... Մէկ սաղ սալամաթ Այգեստան հասնէինք...

— Հա՛յ հո՛ւյ, ծօ, Այգեստան ալ կ'երթանք, աշխարհի ծէրն ալ. բաւական է որ Առիւծ Գեւոյի հետ ես... փափախը ծոց, քեզի էնպէս ապահով Այգեստան մտցնեմ որ ինքը ալ չիմանաս...

— Եանի ճամբան դիտե՞ս, — տարակուսած հարցուց Թոփալ Սատանան:

— Ճամբա՞ն մի, — Առիւծ Գեւօն ինքնավստահ կերպով ձախ ձեռքի ափը պարզեց ու աջի յուրցամատով սկըսաւ գիծ մը քաշել ափին մէջ, — ծօ՛ Թոփալ, էս մեր վանքն է, էյ ըսէ՛, էս լէ Հաճի Պէքիրի Ղչլան է, ախպօրս ըսեմ, էս լէ ճամբան, հասկցա՞ր:

— է՛, լա՛ւ, ըսենք թէ հասկցայ:

— Արդէն դու որ խելք ունենայիր գդում գլխուդ մէջ, էդ պոյին չէիր մնար: Ես ալ մարդ դտայ՝ շունչ կը հատցնեմ քեզի համար... Ծօ, հա՛յվան, էս Ղչլան է, էս լէ Խոշապու ճամբան: Ղչլան չհասած՝ քիչ մը աջ կը ծըռինք, յետոյ շիտակ Այգեստան, պրծաւ գնաց... հիմա հասկցա՞ր...

— Հա՛, հա՛ ախրերս, հասկցայ, — կարճ կապելու մտքով Գեւոյի հետ համաձայնեցաւ Սատանան՝ ընկերոջ բարկացած տրամադրութենէն գուշակելով, որ Առիւծ Գեւօն շուտով բռունցքի օժանդակութեան պիտի դիմէր, ըսածը հասկցնելու համար:

Հազիւ մթնած, մեր երկու բարեկամները Պաղտոյի հետ ճամբայ ելան ու առանց պատահարի հասան Այգեստան, Փաշի փողոցը ու թաղնուեցան այն պատանիի մօտ, որու հետ նախօրօք խօսած էր Լեւոնը: Առտու լուսը չբացուած՝ Լեւոնը եկաւ ընկերներուն քով:

Այդ երեկոյ հագիւ մթնել սկսած, Մելօն եկաւ Լեւոնի մօտ, եւ երկուքը միասին դուրս եկան փողոց: Մանտապուռի մէջէն անցնելով՝ քիչ ատենէն հասան Կլոր Դարի թրքական փողոցները, քայլերնին ուղղած դէպի Գաղաքամէջ:

Այդ շրջանի փողոցները բոլորովին ամայի էին: Մելօն հեռատեսութեամբ այդ ճամբան ընտրած էր: Ընդհանրապէս թրքական թաղերուն մէջ զինուորական հրահողութիւն գոյութիւն չունէր, եւ ինչո՞ւ էր պէտք հրահողութիւնը, երբ թուրքերը փատիշահի հողեսուն զա-

ւակներն էին, առանձնաշնորհալ դիրքի մէջ, իսկ հայ յեղատիրականներն ալ ունէ ատեն այդ շրջաններով չէին անցներ:

Լեւոնն ու Մելօն, ամայի փողոցներով կէս ժամէ աւելի քայլելէ վերջ, մօտեցան Հայկալանք կոչուած վայրին, որ ատենօք հայկական գերեզմանատուն մըն էր, ուր դեռ մէկ երկու տասանաքարեր կ'երեւէին:

— Հիմա պէտք է զգուշութեամբ շարժիլ, կը մօտենանք արդէն, — շնջալով խօսեցաւ Մելօն, — Օհաննէսը անշուշտ մեզի կը սպասէ: Ես առաջ կ'անցնիմ: Հինդ տասը քայլի վրայ հետեւէ ինձ. ես ինչ որ ընեմ, դուն ալ միեւնոյն կ'ընես:

Մելօն առաջ ինկաւ: Բաւական յառաջանալէ վերջ, ելան Մղքեայի Զադտէն: Մարդ մարդասան չկար: Խաւարի մէջ կ'երեւէր քաղաքի արեւելեան պարիսպը: Հող ճանապարհը ուղիղ եռանկիւն մը կազմած՝ երկու մասի կը բաժնուի: Մէկ թեւը կ'երկարի դէպի հիւսիս, Դաւրէժի Դուռ եւ Աւանց դիւղը, գլխաւոր նաւահանգիստը Վանայ ծովու վրայ, իսկ միւսը՝ գլխաւոր թեւը շեղակի կ'իջնայ դէպի Թաղա Դարկեախ կամ Նոր Դուռ ըսուած փողոցը, որու ձախ կողմը պետական շէնքերն են, կառավարչատունը, ոստիկանատունը, իսկ աջ կողմի վրայ քաղաքամէջը եզերող պազարը, պետական բանտը, որ ուղիղ քաղաքամէջի հարաւարեւելեան անկիւնը կը գտնուի, արեւելեան պարսպի ծայրը:

Ժամանակով Վան քաղաքը ամբողջովին շրջապատուած էր հողէ շինուած ժանիքաւոր շատ հաստ պարսպով մը: Դարերու ընթացքին հարաւային պարիսպը քանդուած էր՝ հեռզհեռէ մեծցող քաղաքին տեղ բանալու համար: Արեւմտեան կողմը դեռ կը մնար պարսպի կտոր մը, իսկ Արեւելեան պարիսպը, կամ Դաւրէժի Դրան կողմը, զարմանալի կերպով անվթար մնացած էր: Գաղաքը շրջապատուած կիսաքանդ պարիսպով, իր կարգին պա-

բիսպն ալ շրապատուած էր լայն փոսով մը: Այդ փոսը ջրով կ'ողողէին քաղաքացիք, երբ թշնամին մօտենար քաղաքի պարիսպներուն:

Ուրբաթ Առուն՝ Այգեստանը եւ Կլոր Դարը կտրելով անցնելէ վերջ, քաղաքի արեւելեան պարիսպէն տասնեակ մը քայլ հեռուորութեամբ կ'երկարի, ու Թագա Դարկեախ փողոցը լայնքէն կտրելով՝ կ'երթայ կը միանայ Կուռուպաշի գետակին:

Մղգեայի Ձաղտէէն եկող մը, որ չ'ուզեր Դաւրէժի դռնով քաղաք մտնել, անպատճառ պիտի անցնի այն տեղով, ուր Ուրբաթ Առուն՝ պարսպին քսուելով կամուրջի տակէն կ'անցնի: Այդ կամուրջը միացման կէտն է Սըղ-գեայի Ձաղտէին եւ Թագա Դարկեախին, միեւնոյն ժամանակ արեւելեան պարսպի հարաւային ծայրը: Ուղիղ այդ կէտի վրայ պարսպէն ներս շինուած է պետական բանտը, միայնակ ընդարձակ շինութիւն մը:

Ինչպէս ըսինք, Մելօն առջեւէն կ'երթար: Մէկ ալ Լեւոնը նկատեց, որ ընկերը չորեքթաթ՝ ատեն մը առաջանալէ վերջ, փոսի մը մէջ անյայտացաւ: Լեւոնը հետեւեցաւ Մելօյի օրինակին: Երբ մօտեցաւ փոսին, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ Ուրբաթ Առուն, Մելօյի գլուխը բարձրացաւ փոսի մէջէն ու լսուեցաւ անոր շշնջոցը:

— Ձգոյշ վար ցատկէ, էս կողմը սարսափելի տղմոտ է:

Կուզէ կուզ, իրարու ետեւէ սկսան առուի հունով առաջանալ, մինչեւ որ հասան կամուրջին:

— է՛, հիմա՞, — հարցուց Լեւոնը:

Մելօն չպատասխանեց եւ ընկերով ձեռքէն բռնած՝ մտաւ կամուրջի թանձր մթութեան մէջ:

— Ծօ, Օհաննէս, — շշնջաց Մելօն, — ծօ, Օհաննէս...

— Էստեղ եմ, Մելօ, ինչո՞ւ ուշացար, էդ հետինդ ո՞վ է...

— Պարոն Լեւոնը... տէ՛, մի տնտնար, տնաքանդ, արդէն ուշացած ենք, շուտով ներս մտի՛ր:

Կամրջի տակ սաստիկ մութ էր, Լեւոնը չէր կրնար բան մը զանազանել, նոյնիսկ Օհաննէսը, որու ձայնը սակայն շատ մօտէն կուգար:

— Հետեւէ՛ ինձ, — լսուեցաւ Մելօյի ձայնը, — հա էդպէս, փէշէս բռնէ, հիմա ծունկի եկուր, գլուխդ վար պահէ, չորեքթաթ ծակէն ներս մտի՛ր... շուտով ծակը կը լայնանայ...

Լեւոնը մեծ դժուարութեամբ Մելօյի քղանցքը բռնած՝ ծակէն ներս մտաւ: Գարշելի հոտ մը կար հոդ: Գրեթէ սողալով նեղ անցքէն, թերեւս տասնեւհինգ քայլ-լաչափ առաջանալէ վերջ, Լեւոնը աւելի ազատօրէն սկըսաւ շարժիլ:

— Հիմա հանգիստ կրնաս կանգնիլ, — լսուեցաւ Մելօյի ձայնը, — ծօ, Օհաննէս մոմպատը կպուր:

Սեւ ձիւթի նման թանձր խաւարը յանկարծ գունաթափուեցաւ, երբ Յովհաննէսը լուցկի մը զարնելով՝ մոմպատը վառեց: Քիչ քիչ Լեւոնի աչքերը վարժուեցան՝ կէս խաւար լոյսով շրջապատը տեսնելու:

Երկարաւուն ընդարձակ սենեակ մ'էր գտնուած տեղը: Ոչ մէկ պատուհան կար, միայն առաստաղէն օդի պաղ հոսանք մը գուշակել կուտար, թէ վերէն բացուածք մը դոյութիւն ունի: Սենեակի մէկ կողմը, յատակի վերայ, նոր փորուած հողի կոյտեր թափուած էին իրարու վրայ: Երբ Լեւոնի աչքերը աւելի պարզօրէն սկսան տեսնել, ան նոր միայն նկատեց, որ այդ սենեակի հակադիր կողմերուն վրայ երկու անցքեր բացուած էին: Անշուշտ ատոնցմէ մէկով ներս մտած լինելու էին, մտածեց Լեւոնը, բայց թէ ո՞րն էր մուտքի ծակը՝ այդ դժուար էր ըսել:

— Էս ո՞րտեղ կը գտնուինք, — զարմացած հարցուց Լեւոնը:

Մելօն ու Յովհաննէսը դբաղած էին գետին թափուած քեանքեանի գործիքները հաւաքելով եւ պարկի մը մէջ լեցնելով :

— Ինչ ըսի՞ր, — հարցուց Մելօն :

— Էս ո՞րտեղ ենք :

— Քաղաքի հինաւուրց պարսպի մէջ. էսպէս շատ ուրիշ սենեակներ ալ կան... Էս անցքը մեր բացածն է, գէպի բանտի բակի տակը կ'երթայ... Հիմա էս կողովը վերցուր եւ հետեւէ մեզ : Ծակը լայն բացեր ենք, կկղելու պէտք չունիս, համարձակ կրնաս քալել :

— Իսկ ինչո՞ւ արտաքին մուտքը այնքան փոքր բացեր էք :

— Ձեկատուելու համար : Երբ ամէն ինչ պատրաստ կը լինի, մէկ երկիւ ժամուան աշխատանք է լայնացնելը : Տէ երթանք, արդէն ուշ մնացեր ենք :

Լեւոնը կողովը շալկած՝ հետեւեցաւ ընկերներուն : Ծակը շեղակի բաւական մը վար իջնելէ վերջ՝ հորիզոնական ուղղութիւն մը կը ստանար : Տասը քայլ անդին սակայն, բացուած անցքը կը վերջանար : Մելօն ու Յովհաննէսը մօտեցան, քլունկով եւ կարճ փետատով սկսան աշխատանքի : Հողի կարծրացած գանգուածը առանց դժուարութեան կը քանդուէր, երբմեն միայն խոշոր քարեր գործը կը դանդաղեցնէին : Լեւոնը շարունակ կողովը կը լեցնէր հողով ու պարսպի միջի սենեակը վերադառնալով՝ կը դատարկէր յատակի վրայ :

Հինգ ժամ անընդհատ աշխատեցան արիւն քրտինք մտած՝ առանց հանգստանալու : Անցքը վեց արշինով երկարած էր :

— Է՛, էս օրուան համար այսքանը բաւական է, — ժամացոյցը նայելով ըսաւ Մելօն, — երեք օրէն պարոն Վահէի սենեակի տակ կը հասնինք : Աստուծով հինգ վեց օրէն...

— Իսկ հիմա ո՞րտեղ կը գտնուինք, — հարցուց Լեւոնը՝ ճակատի քրտինքը սրբելով :

— Բանտի բակին կէսը հասանք : Այդ բակի վրայ կը բացուին չորս դովուշներու պատուհանները, թէեւ մուտքերը հակառակ կողմը կը գտնուին : Երբորդ դովուշի մէջ բանտարկուած է պարոն Վահէն :

— Բայց չէ՞ որ առանձին չէ :

— Ի հարկէ, չէ. իրեն հետ այդ միեւնոյն դովուշին մէջ էն քիչը քսան-երեսուն հողի մ'ալ գտնուելու են... Ի՞նչ կրնանք ընել. այդ մարդիկն ալ ուղենք չուղենք՝ սլտի ազատուին Վահէի շնորհիւ :

— Այդ մասին մտածել իսկ չարժէ... Թող միայն Վահէն ազատուի, հետն ալ քսան մը բանտարկեալ... Թերեւս այդ բանտարկեալները աւելի փոքր չարագործներ են, քան դրսի ազատութեան մէջ գտնուողները :

— Երթանք, ուշացանք, — գործիքները հաւաքելով ըսաւ Մելօն, — շատ ճամբայ ունինք երթալիք մինչեւ կոչնակի դարնելը :

Եւ երեքը միասին դուրս եկան անցքէն՝ սենեակին մէջ ձգելով գործիքները եւ մտան մուտքի նեղ անցքին մէջ :

Գեանափոր անցքին մէջ երկու օր աշխատելէ վերջ, Լեւոնը այլեւս հնարաւորութիւն չունեցաւ այդ աշխատանքին մասնակցելու : Ստիպուած էր հեռանալ Փաշի փողոցէն, ուր իր եւ երեք ընկերներուն ներկայութեան լուրը բերնէ բերան տարածուած էր : Ատկէ գալտ իր ներկայութիւնը Այգեստանի կեդրոնական թաղի մը մէջ անհրաժեշտ դարձած էր : Հարցն այն էր, որ դաւաճանը, դիտցած պահեստները կառավարութեան մատնելէ վերջ, աջ ու ձախ սպառնալով ահաբեկած էր ժողովուրդը եւ գտած ու կառավարութեան յանձնած էր երկու նոր պա-

հետոնք եւս, որոնց գոյութեան մասին, ինք առաջուց
գաղափար խիչ չունէր:

Այդ պայմաններու մէջ, ամէն բանէ առաջ, հրամա-
յական անհրաժեշտութիւն մը դարձաւ հրէշի գործը վեր-
ջացնելը: Լեւոնը կը դիտակցէր, թէ ինչ գնով ալ լինէր,
պէտք էր այդ խնդիրը կարգադրել:

Փաշի փողոցը Այգեաստանի ծայրը՝ մեկուսացած
հանդամանք մ'ունէր: Լեւոնը իր ընկերներով եւ երկու
նոր զինուորներով, որոնք պատանեկան խումբին կը
պատկանէին, փոխադրուեցան Փոքր Քէնտիրճիի վրայ
նայող տուն մը: Տան պատուհանները կը բացուէին ուղիղ
Սղգեայի Ջաղտի վրայ: Այդ տունը յարմար դիրք մ'էր
հսկելու դաւաճանի քայլերուն, որ շրջապատուած գին-
ուորներով ազատ համարձակ կը պտըտէր Սղգեայի
Ջաղտի վրայ, թէեւ Այգեաստանի ներքին փողոցները մը-
տած ժամանակ ծայրայեղ զգուշութիւն կը բանեցնէր,
նոյնիսկ կը ծպտուէր:

Առիւծ Գեւոն ու Թոփալ Սատանան հրացանները
կողքերին դրած՝ նստած էին պատուհաններու քաշուած
վարագոյրներու ետեւ եւ անոնց արանքէն ուշադիր կեր-
պով փողոցի անցուղարձի վրայ կը հսկէին: Դաւաճանը
եթէ երեւնար, առանց այլեւայլի պիտի կրակէին: Այդ էր
Լեւոնի կարգադրութիւնը:

— Ծօ, Թոփալ, էս օր աչքս կը խաղայ... Վալլահ,
էս օր խապար մը պիտի ելլէ...

— Աջ աչքը որ խաղայ՝ խեր է կ'ըսեն, ձախն որ խա-
ղայ՝ շառ է:

— Ծօ, աջ աչքս էր, առտու երկու անգամ խաղաց,
վալլահ, էս օր խեր բան մը պիտի եղնի:

— Անօթի հաւը երազին մէջ կուտ կը տեսնէ,— յօ-
րանջելով փիլիսոփայեց Սատանան,— էս երկրորդ օրը
եղաւ արձանի նման նստեր ենք... ոչ եկող, ոչ դացող...

— Պարոն Լեւոնը ի՞նչ կ'ընէ ներսը:

— Ի՞նչ պիտի ընէ: նստեր՝ երկան երկան նամակներ
կը գրէ... Գեւո՛, դիտե՞ս քաղաքին մէջ ի՞նչ կը խօսին...
Առիւծ Գեւոն, ընկերոջը նայեցաւ հետաքրքրու-
թեամբ:

— Հա ծօ՛, ի՞նչ կը խօսին:

— Կ'ըսեն թէ պարոն Վահէն... լեզուս վրայ չ'եր-
թար՝ որ ըսեմ...

— Հա՛, ես ալ լսեր եմ... — Առիւծ Գեւոն երկար
ա՛խ մը քաշեց, — Թոփալ էս շունը մեր մէջքը կտորեց...
Ծօ Վասակի ծնունդ, ա՛խ, մէկ մը դէմս ելլէիր:

— Է, ի՞նչ կ'ընէիր: Շատ շատ կիւլլէ մը...

— Ձէ հա՛, սարսախ, կիւլլէն մարդու համար է,
դէմդ կուռուղ գուշմանի համար. էդ Վասակը ծէրը սըր-
ցուցած զաղբիւի վրայ պէտք է նստեցնել...

— Որ ի՞նչ...

— Որ քառսուն օր չարչարուելէ վերջը սատկի: Տա-
հա ատ ալ քիչ է... Հէ՛յ հէյ, դաւաճան Դաւո՛, որ մէկ
ձեռքս անցնէիր, մէկ զաղխ մը սրցնէի, մէկ զաղխ մը
սրցնէի...

— Սուս Գեւո՛, աչքդ բաց, — վարագոյրի բացուած-
քին մօտեցնելով դէմքը՝ շնջաց Թոփալ Սատանան, —
զօրք կ'անցնի:

Սատանայի բռնած պատուհանը, տան անկիւնի մօտ
բացուած լինելով, հնարաւորութիւն կուտար անոր,
Ջաղտէի երկայնքով դէպի Համուտ Աղայի կողմը ինկած
ընդարձակ տարածութիւն մը տեսնելու:

— Տղա՛յ, .. պատանի նոր զինուորներէն մէկուն
խօսքը ուղղելով հրամայեց Առիւծ Գեւոն, — շուտ դնա,
պարոն Լեւոնը կանչէ... Ծօ, Թոփալ, շատուո՞ր են...

— Տաս տասներկուք մը կան: Հրացանները պատ-
րաստ, աչքերնին աջ ու ձախ տնկած՝ կամաց կամաց կը
շարժին... օհօ՛, օհօ՛... հըմ... բան մը կայ...

— Ծօ, ի՞նչ կայ... Համբերութիւնս հատցուցիր, շան դաւակ...

— Զօրքի ետեւէն բեռցուած սէլ մը կուգայ...

— Թոփալ, բե՞ռը ինչ է, դուն անկէ խապար տուր:

— Հեռու է, չեմ կրնար ջոկել... Համբերէ, սէլի ետեւէն ալ զինուորներ, տաս-քսան հատ մ'ալ անոնք...

Լեւոնը այդ գիշեր հաղիւ լուսցուցած՝ նստեր էր նամակներ գրելու Պիծային ու Գէորգին: Մանրամասնօրէն նկարագրելով քաղաքի կացութիւնը, բանտարկուածներու վիճակը, Վահէի սպառնացող կախաղանը, դաւաճանի շահատակութիւնները, ժողովուրդի յուսալքուած վիճակը՝ Լեւոնը երկարօրէն կ'անդրադառնար գործունէութեան նոր ուղղութեան մը, որու ծանրութեան կեդրոնը անհրաժեշտօրէն պիտի փոխադրուէր գաւառ՝ կառկառ կամ Շատախի շրջանը:

Նամակները վերջացնելով՝ Լեւոնը քովը կանչեց տան փոքրիկ աղջիկը, հաղիւ վեց տարեկան, Արտամետի խնձորի նման կարմիր թշերով պզտիկ մը, ու վար ճամբեց, որ թոնրատան մէջ սպասող պառաւ կինը իր մօտ ճամբէ: Փոքրիկը ցատկոտելով դուրս ելաւ սենեակէն, ու քիչ վերջ դրան մէջ երեւցաւ պառաւ կին մը, ճմռթկուած դէմքով, հաղիւ մերկութիւնը ծածկած հազար գոյնանի ցնցոտի մէջ:

Այդ պառաւը ընթերցողի նախածանօթ Բերդակցի Ալմաստ մօրքուրն էր:

— Հա՛, քէ մեռնիմ, պարոն Լեւոն, — ձեռքի փայտին վրայ կոթնելով մօտեցաւ պառաւը, — նամակները հա՞զր են...

— Վերջացաւ, մարէ: Հիմա ճամբայ կ'ելլես, էս գիշեր կը մնաս Արտամետ կամ Սուրբ Վարդան, մէկէլ օր կը հասնիս Ախալանք... նամակներս կը յանձնես Աղթամարի նաւավար Մակարին: Հասկցա՞ր, ուրիշ մարդու չտաս...

4083-89

— Ողորմի հօրդ, Ալմաստ մօրքուրդ էդքա՞ն ալ խելք չունի. դործիդ նայէ, դուն լապ ըսէ, էս լապլապուն կը հասկնամ:

Լեւոնը, երբ կը խօսէր Ալմաստ մօրքուրի հետ, պառաւի ձեռքէն փայտն առաւ, վարի ծայրի խցանը հանեց, նամակները ոլորելով կոխեց բացուած ծակին մէջ, դարձեալ խցանով ծակը դոցեց եւ փայտը երկարեց պառաւին:

— Աստուած հետդ, մարէ... Հիմա ճամբայ ե՛լ:

— Աստուած քէ պախի... էս էղնիմ չեղնիմ որ ի՞նչ, դուն անուշ մնաս, ազգն անուշ մնայ:

Հաղիւ թէ պառաւը մեկնած, Լեւոնը սկսաւ նոր նամակ մը գրելու պատրաստուիլ, երբ Առիւծ Գեւոյի ղրկած պատանի զինուորը ներս մտաւ՝ յայտնելով որ փողոցի մէջ արտակարգ շարժում մը կը նկատուի եւ որ զինք կը կանչեն կողքի սենեակէն:

Վայրկենաբար չանթան հաւաքելով՝ Լեւոնը մտաւ ընկերներու գտնուած սենեակը:

— Ի՞նչ կայ:

Թոփալ Սատանան առանց պատասխանելու աչքով փողոցի կողմը ցուցուց: Լեւոնը երկար նայելու պէտք չունէր՝ հասկնալու համար սայլի եւ անոր ընկերացող զինուորներու նշանակութիւնը: Անշուշտ այդ գիշեր դաւաճանը նոր պահեստ մ'ալ ձեռք անցուցած էր:

— Տղաք, չանթաները, — կարգադրեց Լեւոնը Թոփալ Սատանայի տեղը բռնելով, — կապկպեցէք, բան չձգէք... թերեւս Դաւօն սէլը շրջապատող զօրքի մէջ գտնուի:

Առիւծ Գեւօն, անմիջապէս չանթան մէջքին կապելով, նորէն նախկին տեղը գրաւեց: Հին հայդուկը, հրացանը ափին մէջ սեղմած, վարադոյրի ծայրը քիչ վերցուց եւ կատաղի հայեացքով փողոցի անցուղարձին հետեւեցաւ: Ա՛խ թէ Դաւօն մօտեցող զինուորներու մէջ



գտնուէր: Առիւծ Գեւօն թերեւս աղօթեց ալ, որ իր ենթադրութիւնը ուղիղ դուրս գար: Մինչ այդ, իր գիրքի պատճառով, մեր Գեւօն մօտեցող ոչ սայլը եւ ոչ ալ զինուորները կրնար տեսնել: Մէկ ալ երեւցան փողոցի լայնքով ցրուած զինուորները, հրացանները պատրաստ բռնած, աչքերնին տան պատուհաններուն, շարքով կուգային, ամէն պատահականութեան պատրաստ վիճակի մէջ:

Զինուորներու տեսքը այն ազդեցութիւնը դործեց Առիւծ Գեւոյի վրայ, ինչ որ անսպասելիօրէն մօտեցող շուն մը, անկիւն մը սեղմուած կատուի վրայ կ'ունենայ: Անօրինակ կատաղութեամբ վառուեցան Գեւոյի աչքերը, դէմքը սպրթեցաւ, ու ատամները կճրտացնելով, հրացանի բունը սեղմեց ափին մէջ:

— Շան զաւակներ, շան ծնունդներ, — կը քրթմնջէր ինքնիրեն, վարի շրթունքը արիւններու աստիճան խածնելով:

Բայց երբ զինուորներէն վերջ սայլը մտաւ Առիւծ Գեւոյի տեսողութեան սահմանին մէջ, բեռնաւորուած հրացաններու խորձով, փամփուշտներու յատուկ ցինկէ տուփերով, ջրամաններով, փամփուշտակալներով, մեր բարեկամի կատաղութիւնը չափ ու սահմանը անցաւ: Առիւծ Գեւոյի աչքերուն առջեւ կանաչ կարմիր կայծեր երեւցան, աւելի շուտ բնագոյօրէն, առանց ինքնիրեն հաշիւ տալու, հրացանը կոթնցուց ուսին ու նշան բռնելով՝ սայլը քշող զինուորի վրայ կրակեց:

Այդ մէկ հատիկ հրացանի պայթիւնը աննկարագրելի իրարանցում մը առաջ բերաւ: Փողոցի զինուորները, երար անցած՝ սկսան աջ ու ձախ կրակել ու փախչել դէպի ետ, սայլը ճամբու մէջտեղ ձգելով: Պակաս շրթութեան պատճառ չեղաւ անսակնկալ հրացանի պայթիւնը սենեակի մէջ գտնուողներուն՝ մասնաւորաբար Լեւոնի համար, որ Թոփալ Սատանայի հետ ծունկ չոքած անկիւնի մօտ դըռներու պատուհանի առջեւ, վարադոյրի արանքէն զին-

ուորներու անցքը կը դիտէին, դաւաճանը անոնց մէջ գտնալու յոյսով:

Առաջին մէկ երկու բոպէին ոչ ոք հասկցաւ կատարուածը: Սայլէն քանի մը քայլ անդին երկու զինուորներ ինկած էին, իսկ մնացածներէն մաքրուած էր փողոցը: Մէկ ալ Լեւոնը գլուխը ետ դարձուց, ու տեսաւ Առիւծ Գեւօն: Դէմքը ալլակերպուած՝ անվերջ հայհոյանքներ մըթմըթալով, Առիւծ Գեւօն կը շարունակէր կրակել, ծառներու արանքէն փախչող զինուորներու ետեւէն:

— Գեւօ՛, դադրեցո՛ւր, — տեղէն ցատկելով գուաց դայրացած Լեւոնը, — այս ի՞նչ յիմարութիւն ըրիր, — եւ սակայն անմիջապէս զգաց, որ բարկանալու ժամանակը չէ, որ եղածը եղած է արդէն եւ պէտք է առիթէն օգտուել:

— Թոփալ, տեղէդ մի շարժիր. տղաք, ետեւէ՛ս, սայլի սպրանքը, — ու Լեւոնը դուրս թռաւ սենեակէն:

Բայց Առիւծ Գեւօն կանխած էր Լեւոնը: Առանց փափախի, արծաթախառն մագերը հովին տուած, ան երկու ոստիւնով հասաւ սայլի քով եւ ձախ ծունկը գետին դըրած՝ փախչող զինուորներու վրայ սկսաւ կրակել:

Լեւոնն եւ ընկերները երկ-երկու ցինկէ տուփեր գըրկելով՝ տուն մտան եւ իրենց բեռները Թոնրատան մէկ անկիւնը դրին: Երբ կրկին անգամ փողոց վազեցին նորերը բերելու, Լեւոնը տան սեմին վրայ արձանացած կանգ առաւ: Չտեսնուած պատկեր մ'էր աչքին առջեւ պարզուած տեսարանը: Կողքի տուներէն կին, երեխայ, նոյնիսկ պառաւ մամիկներ փողոց թափած էին, ու ինկած սայլին վրայ: Քրքջալով, իրարու օգնելով, սայլի մէջ դիզուած սպրանքը կը կրէին տուն: Նոյնիսկ Լեւոնի թաքնուած տան փոքրիկ աղջիկը, երկու փամփուշտակալ շալկած՝ բեռան ծանրութեան տակ օրօրուելով, ուրախ ուրախ տուն կը վազէր:

— Վարդուհի, էդ ի՞նչ կ'ընես, աղջիկ, — որպէս թէ խոժոռած հարցուց Լեւոնը:

Շրեխան վայրկեան մը շփոթած՝ նայեցաւ Լեւոնի դէմքին, շրթները վրայ բերաւ եւ սլտի սկսէր լալ, երբ Լեւոնի դէմքի վրայ մեղմ ժպտո մը նկատելով՝ շրթները երկարած, թոթով լեզուով ըսաւ.

— Խոլեմ թլքելու գլուխը... մել ապլանքն ի, ո՞ւր կը տանին, — եւ հնչեղ ծիծաղով դռնէն ներս փախաւ:

Հաղիւ մէկ երկու րոպէ անցած՝ սայլը բոլորովին դատարկուած էր եւ միայն մեծ թիթեղէ տուփ մը կը մնար վրան: Թէեւ քանի մը կիներ փորձեցին այդ տուփն ալ շալիւծ փախցնել, բայց շատ ծանր լինելուն, թողուցին եղած տեղը: Լեւոնը կարծես պարզ հանդիսատես մը լինէր: Առաջին անգամ սայլի քով վազելէն վերջ, դրան կշտին յենած, տեղէն չէր շարժած: Մինչ տեղացի երկու ընկերները կիներուն կ'օգնէին, Լեւոնը կը մտածէր հետեւանքի մասին: Առիւծ Գեւոն կարծես սայլէն չէր ուղեր բաժնուիլ, անիւի ետին դիրք բռնած՝ հոն ալ դամուեր մնացեր էր: Արդեօ՞ք վիրաւորուած է, ինքզինքին գալով մտածեց Լեւոնը ու հաղիւ թէ երկու քայլ առաւ անոր մօտ երթալու, երբ փողոցի վերի եւ վարի կողմերէն բազմաթիւ հրացաններ պայթեցան, ու օդը լեցուեցաւ գնդակներու վզղոցի անախորժ ձայներով:

— Գեւո՛, — ինքզինք դրան մէջ նետելով՝ դռուց Լեւոնը, — Գեւո...

Առիւծ Գեւոն՝ աչքերը արիւնով լեցուած՝ վայրկեան մը նայեցաւ Լեւոնին, որպէս թէ հասկցած չլինէր Լեւոնի կանչին իմաստը ու դարձեալ սկսաւ կրակել, կուրծքը տուած սայլի անիւին:

— Հա՛, եկայ...

— Գեւո՛, շո՛ւտ...

Գեւոն բոլորովին հանդարտօրէն հնգանոց թիթեղ մ'ալ ամրացնելով հրացանի պահեստին՝ բխամատովը

փամփուշտները վար մղեց եւ ատոնք ալ իրարու վրայ կրակելէ վերջ, ծանր ու մեծ րարձրացաւ տեղէն ու անհոգ քայլուածքով մը դէպի դուռը ուղղուեցաւ, մինչ բազմաթիւ գնդակներ վզղալով կողքէն կ'անցնէին:

— Գեւո՛, շո՛ւտ...

— Հա՛, պարոն Լեւոն:

Հաղիւ թէ դրան մօտեցեր էր մեր Առիւծ Գեւոն, երբ Լեւոնի պողպատէ ձեռքը աքցանի նման ուսէն բռնած՝ դռնէն ներս նետեց դայն:

— Շո՛ւտ, Գեւո՛, տղաքներուն հետ պատուհանները բռնեցէք, ես հիմա կուգամ:

Թոնրատան մէջ, ուր սայլի վրայէն բերուած ասլրանքը մէկտեղած էր, բազմաթիւ դրկից կիներ հաւաքուած էին:

— Քոյրեր, լաւ գործ կատարեցիք, — թոնրատնէն ներս մտած, ժպտալով ըսաւ Լեւոնը, — բայց ձեր սկսած գեղեցիկ գործը կիսատ մի՛ ձգէք... Մենք դեռ ատեն մը դօրքը կը դրաղեցնենք, իսկ դուք ասլրանքը կրեցէք Թերլեմեղենց այգին, լեցուցէք քէօշկին մէջ... Տէ՛, ձեզ տեսնամ:

Կիներէն ամէն մէկը բան մը վերցնելով՝ իրարու ետեւէ ալդիի դռնով դուրս ելան:

Ժամանակն էր որ Լեւոնը վեր բարձրանար: Մանդուխամատները երկերկու ցատկելով՝ Լեւոնը մտաւ տղոց սենեակը:

Հիմա արդէն կանոնաւոր կռիւ մը սկսած էր: Սայլին հետեւող պահակները թէեւ առջի բերան փախած էին, բայց վրայ հասնող պահակախումբերով ուժովցած, փողոցի հակառակ կողմերէն հետզհետէ կը մօտենային դէպի սայլը, անընդհատ աջ ու ձախ կրակելով:

Սայլի դէպքն ու անոր յաջորդող կռիւը կանխամըտածուած ձեռնարկ մը չէր եղած: Առիւծ Գեւոյի անհաշիւ քայլը պատճառ դարձած էր անսպասելի կռուին:

Բախտաւոր ելք մը ունեցեր էր այդ դէպքը, եթէ միայն նոր բարդութիւններ չառաջանային: Լեւոնը կարգադրեց, որ տղաքը գոհանան որոշ հեռաւորութեան մը վրայ պահելով զօրքը եւ խոստափին արիւնահեղութենէ, եղածը արդէն բաւական համարելով:

Առիւծ Գեւոն երիտասարդ զինուորներէն մէկուն հետ նախկին դիրքը բռնած էր, Թոփալ Սատանան միւս երիտասարդէն հետ՝ անկիւնի պատուհանը: Լեւոնը ոտքի վըրայ, երբեմն մէկուն, երբեմն միւսին կը մօտենար՝ աչալուրջ հետեւելով զօրքի շարժումներուն, որոնք տան պատերու տակէն սողալով, փողոցի հակադիր կողմերէն զգուշութեամբ կը մօտենային:

Մէկ ալ փողոցի մէջ ընդհանուր դռոց մը փրթաւ, ու զօրքը երկու կողմէն եաշատուս պոռալով վազեցին դէպի ճամբու մէջ մնացած սայլը: Գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, այդ ոչ ոք չի կրնար ըսել, մեր Առիւծ Գեւոն, հրացանի խողովակը դարձուց եւ սայլի վրայ մնացած թիթեղէ մեծ տուփին նշան բռնելով՝ կրակեց:

Յանկարծ կարծես սարսափելի երկրաշարժ մը հիմէն ցնցեց ամբողջ թաղը: Չարհուրելի որոտում մը լսուեցաւ, տները երերացին, փողոցի վրայ գտնուած տուններու ապակիները փշուր փշուր եղան, ծառերու ջարդուած ճիւղերը օդը բարձրացան, բազմաթիւ տներու ծեփերը թափեցան:

Լեւոնը սենեակի պատին զարնուելով՝ գետին փրուուեցաւ գրեթէ անդգայ վիճակի մէջ: Թոփալ Սատանան ու ընկերը, որոնց դիրքը ճիշդ սայլի դիմացն էր, ամբողջովին ծածկուեցան առաստաղէն թափած կիրի ծեփով:

Առիւծ Գեւոն շարժման անցեր էր նստած տեղը: Հրացանը կողքին ինկած էր, գլխու փափախը քանի մը քայլ անդին: Երկու ձեռքերով գլխը բռնած՝ եղան նման կը տքար:

— Վա՛յ, զարկուայ... մեռայ... վալլահ ես մեռայ...

Պայթիւնին հետեւեցաւ զարմանալի լուռութիւն մը: Ոչ մէկ հրացանի ձայն: Ամբողջովին թաթախուած փոշիի մէջ, էն առաջ Լեւոնը ինքզինքը գտաւ ու ոտքի ցատկեց, չորս բոլորը նայեցաւ:

— Գեւո՛՛...

— Ախ, պարոն Լեւոն, ես մեռայ, ես զարկուայ...

— Գեւո ջան, — Լեւոնը երկու ոտիւնով ցատկեց Գեւոյի մօտ, գրկեց՝ ու տեղէն բարձրացուց զայն, — բան չկայ, Գեւո՛, ոտքդ գետին դիր... բան չկայ:

Առիւծ Գեւոյի ճակատէն արիւնը առատօրէն կը հոսէր: Չարդուած պատուհանի ապակիի կտորներէն մէկը, խորունկ ճեղք մը բացած էր ճիշդ յօնքերուն մէջտեղը:

Թոփալ Սատանան, որ պարզապէս չճամ էր, ինկած տեղէն երերաց, ճիշդ մը ընելով բարձրացաւ ու զարմացած չորս բոլորը կը նայէր: Էս ի՞նչ էր պատահած իրեն հետ:

Լեւոնը Գեւոն թողնելով վազեց երիտասարդ զինուորի մօտ: Տղան աչքերը բացած՝ կովի անխմաստ հայեացքով պիշ պիշ կը նայէր Լեւոնին, առանց տեղէն շարժելու:

— Ծօ՛, Թոփալ, ես մեռայ, — սրտածմլիկ ձայնով մը ըսաւ Առիւծ Գեւոն, — ես մեռայ, տնաքանդի տղայ:

— Չէ, հա, — Գեւոյի ճակատէն վազող արիւնը տեսնելով՝ վախեցած պոռաց Թոփալը, ցատկեց ընկերոջ մօտ ու գրկեց զայն, — Գեւո, Գեւո ջան...

— Գլխէս զարկուայ...

— Պինդ կեցիր, Գեւո ջան, բան չկայ...

— Ես պիտի մեռնիմ, Սատանայ... ես պիտի մեռնիմ:

— Գեւո՛՛...

— Գիտէի գլխուս գալիքը, արդէն առտու ձախ աչքս

խաղաց... Օ՞Ք, ես մեռայ, կիւլլէն ճակատէս մտաւ,—
ու Գեւօն ձեռքը ճակատին քսելով՝ շճած հայեացքով կը
նայէր սեփական արիւնին:

— Ձախ աչքդ չէր, Գեւօ. դուն ըսիր որ աջ աչքդ
խաղաց...

— Ձէ, ձախն էր...

— Աջը ըսիր...

— Ծօ՛, ես քու... — բարկութեամբ ոտքի ցատկեց
Առիւծ Գեւօն՝ բոլորովին մոռցած, որ ինք մեռած կամ
մեռնելու մօտ էր, որ կիւլլէն ճակատէն անցած էր:

Բայց օդի մէջ բարձրացած բուռնքը այն դիրքով ալ
մնաց յանկարծ, ու Գեւօն բոլորովին ինքզինք գտած՝
ապշած ընկերով երեսն ի վեր բարձրաձայն ծիծաղել սկը-
սաւ.

— Ծօ, սարսախ, կատակ կ'ընէի:

Քիչ թէ շատ շճած, բայց բոլորն ալ ոտքի վրայ,
կրկին հրացանները ձեռք առած էին: Լեւոնը կիսաքանդ
պատուհանին մօտենալով՝ փողոցը դիտեց: Կառքի հետքն
իսկ չէր մնացած. ճամբու վրայ խորունկ փոս մը կ'երե-
ւար միայն, որ առաջ չկար, ու շրջակայ ծառերու ճիւղե-
րէն կախուած՝ թշուառ եղներու պատառ պատառ եղած
մսերը, փորոտիքը:

Փողոցը բոլորովին ամայի էր: Թուրք զինուորներու
մէկ մասը Համուտ Աղի դչլան ապաստանած էր, միւս
մասը՝ շունչը առած Խաչ փողոցի պահականոցը:

— Մենք քաշուինք, — կարգադրեց Լեւոնը. — քանի
գօրքը սահմուկած է, հեռանանք: Տղաք փամփուռաի դա-
տարկ կեղեկները հաւաքեցէք, հետք մը չմնայ: Տէ՛, Գե-
ւօ, առաջ անցիր:

ԴԱԻԱՃԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Այդեստանի մէջ օրը ցերեկով, առաջին անգամն էր,
որ զինուած խումբ մը կ'անցնէր այդիներով: Լեւոնն ու
ընկերները, Խամուր Քէսէնէն քիչ վար, տան մը փողոցի
դուռը բանալ տուին անեցիներուն: Վեր ու վար նայելէ
վերջ, երբ ապահովուեցան, որ փողոցը ամայի է, արագ
քայլուածքով մը անցան Պուռնաղի նեղ փողոցը: Հազիւ
երկու հարիւր քայլ մը առաջացած այդ փողոցով, ձախ
թելի վրայ դանուող տան մը դուռը դարկին:

Ձարմանալի հոգեկան յեղաշրջումով, դեռ երկու ե-
րեք օր առաջ այնքան անբարեացակամ ընտանիքները, ո-
րոնք դռները պինդ մը փակած, չէին ուղեր որեւէ աջակ-
ցութիւն ցոյց տալ, այժմ խնդումներես կը գլխավորէին
մեր փախստական հինգ ընկերները, ճամբայ կը ցուց-
նէին, կ'օրհնէին անոնց երեւումը:

Փոքր կռիւ մ'էր տեղի ունեցածը, բայց այդ՝ ժողո-
վուրդի տրամադրութիւնը դարմանալի կերպով յեղա-
շրջեց: Այդպէս է ժողովուրդը: Եթէ միայն դաւաճանու-
թեան առաջին օրերուն կռիւ մը փրթէր, թէ կուզ կատա-
ղի, արիւնալի կռիւ մը, շատ շատեր, որոնք իրենց անց-
եալը ցեխոտեցին դաւաճանութեամբ կամ դասալքումով,
պատանէչներու վրայ կանգնած, հերոսաբար պիտի կըռ-
ուէին ու թերեւս մեռնէին, առանց վայրկեան մ'իսկ տա-
տամսելու:

Այդիէ այդի անցնելով, վերջապէս Թերլեմեզենց այ-
գիլի մէջ կանդ առին Լեւոնն ու չորս ընկերները: Քէօշկի
առջեւն ու մէջը իրարու վրայ թափթփած էին սայլի վը-
րայէն վերցուած ապրանքները: Թաղի կիներն ու երե-
խաները իրենց յանձնուած գործը լիովին կատարած էին:

Հող թափուած ապրանքը ցերեկով չէր կարելի շար-

Ժեւ, կը մնար որ Լեւոնն ու ընկերները այդ շրջանին մէջ, մօտաւոր տան մը մէջ թագնուէին, մինչեւ որ կատարելապէս մթնէր:

— Մեր ընկերներէն Հմայեակի տունը, հոս շատ մօտը կը գտնուի, — ըսաւ տեղացի կամաւորներէն մէկը, — քանի մը ժամ հոն կրնանք մնալ:

Ուրիշ ճար չկար: Տեղացի զինուորը առաջ ինկաւ, ու քանի մը այդի անցնելէ վերջ, տան մը այգիի դուռը քանալով ներս մտաւ: Հմայեակը տանն էր: Մայրը, ինքն իր վրայ կքած խեղճ կին մը, սենեակի դուռը բացաւ: Մեր բարեկամները տեղաւորուեցան քիւրսիի չորս բոլորը: Հմայեակի փոքր քոյրը, շիկահեր մազերով ութ տասը տարեկան աղջնակ մը, սենեակի մէկ անկիւնը կըծկըւած, սարսափէ՛ ու հետաքրքրութենէ աչքերը խոշոր խոշոր բացած, կը դիտէր այդ օտարականները, որոնց մասին այնքան առասպելական պատմութիւններ լսած էր:

Լեւոնն ու ընկերները հող պէտք է սպասէին մինչեւ մթնալը: Հազիւ կէս օրուան մօտ լինէր: Հմայեակը քովը նստեցուցած, Լեւոնը կարգադրեց, անմիջապէս դուրս գալ իր խմբի անդամներուն լուր տալու, որ երեկոյեան հաւաքուին իր մօտ, կարեւոր խորհրդակցութեան մը համար: Պէտք էր Թերլեմեզեանց այգիի մէջ թափուած զէնքերն ու պարագաները այդ գիշեր իսկ փոխադրուէին ասպհով վայր մը, Հմայեակի ընկերներու օգնութեամբ:

— Վերադարձիդ՝ Փոքր Բէնտիրչիի մօտով անցիր, — խօսքը վերջացուց Լեւոնը, — տես, ի՞նչ կ'անցնի կը դառնայ, ի՞նչ կը խօսուի:

Հմայեակը գոռոզ մազերը հովին տուած, ուրախութեամբ տնէն դուրս թռաւ: Մէկ երկու ընկերներու տները հանդիպելով՝ յայտնեց եղած կարգադրութեան մասին ու անցաւ Փոքր Բէնտիրչիի կողմը: Պայթումէն ի վեր երկու ժամէ աւելի անցած էր: Երբ Հմայեակը մօտեցաւ

այդ տեղին, ուր պայթիւնը տեղի ունեցած էր, տեսաւ դռներու վրայ հաւաքուած կիներու եւ երեխաներու բազմութիւն մը, որոնք զանազան մեկնաբանութիւններով կը պատմէին դէպքի մանրամասնութիւնները: Ամէն մէկը իր հասկցած ձեւով բացատրութիւն մը կուտար պայթումը առաջացնող պատճառներու մասին:

— Քա, աղջիկ, — դրան սեմին վրայ նստած կին մը կը բացատրէր Վերացի կնոջ մը, — պտուկը թոնիրի կուշտը դրած, թանապուրը կը խառնեմ, որ տակը չառնէ. մէկ ալ, ապա՛ր... երկինք դետին ժափք եկաւ: Քա՛, կ'ըսեն մեր տղաքը դու՛մպարա նետեցին ասկերի վրայ: Էն թավուր ձէն... Գոռնամ ես, քիչ մնաց ծծկերս գրկէս վար իյնար...

— Հա՛, ես ալ քիւրսիի տակ կը կնքլարտէի, — կ'ըսէր պառաւ կին մը, — մէկ ալ... էն ի՛նչ ձէն էր... տեսնեմ տան պատերը երերացին... փարջով ջուրը քիւրսիի վրայէն վար ինկաւ: Թօղն ու դումանը աշխարհ բռնեց: Հը՞, աճապ շներէն քանի՞ հոգի սատկեցան...

— Մէրս, հաշի՛ւրը կայ... սատկողը սատկեցաւ, սաղ մնացողներն ալ էնպէ՛ս փախան... Ժամ մը անցաւ, մարդ մարդասան չերեւցաւ Ջաղտի վրայ: Մէկ ալ պատերու տակերէն սողալով փողոցի վերէն ու վարէն շուներէ աւելի ասկեար թափեցան, տուները մտան, ճամբու վրայ բացուած փոսը քննեցին եւ հայտէ գնա որ կ'երթաս: Աստուած տայ, նոր կուի մը չսկսի...

— Աղջիկ, ախրերդ «անտնցմէ» է, դուն կը զիտնաս, դո՞րթ որ պարոն Լեւոնը նորէն քաղաք մտած է...

— Քա՛ չտեսա՞ր, էրկէն սոյոյվ թոփալ մարդը...

— Ա՛պար, աղջի, էն պէտ պէտ մա՞րդը... Աժդահա կը նմանէր...

Հմայեակը հոս ու հոն կանգ առնելով, զանազան փողոցներ պտտելէ վերջ, ուրախ ուրախ ներս մտաւ դռնէն եւ տեսածն ու լսածը մանրամասնօրէն պատմեց Լեւոնին:

Լեւոնը աւելի քան ուրախ էր: Առիւծ Գեւոյի ինքնաբերաբար արձակած գնդակը, բարեբախտաբար, ծանր հետեւանը մը չուներցաւ: Շատ շատ՝ քանի մը օր եւս զինուորական խտուրթիւնները պիտի շարունակուէին ու ամէն ինչ կրկին պիտի մոռցուէր, ինչպէս մոռցուած էին նման շատ մը դէպքեր:

Միջնելու մօտ, անգամ մ'ալ Հմայեակը դուրս ճամբուեցաւ: Անոր երթալէն կէս ժամ անցած էր: Առիւծ Գեւոն, որուն վէրքը Լեւոնը լուացեր ու վիրակապով փաթթեր էր, քիւրսիի վրայ, Թոփալ Սատանայի հետ թրիֆ կը խաղար: Տեղացի երկու զինուորները անոնց մօտ նըստած, ուշադրութեամբ խաղին կը հետեւէին, իսկ Լեւոնը քիւրսիէն քիչ հեռու նստած՝ չանթան որպէս սեղան գործածելով նամակ կը գրէր:

— Ծօ 100, — զսպուած ձայնով մը ձեռքի թղթերը նայելէ վերջ՝ ըսաւ Առիւծ Գեւոն:

— 120, Գեւո՛:

— Խերդէ կ'անիծեմ, Թոփալ... 150:

— Ա՛ռ, նայիմ ինտո՞ր մէջէն պիտի ելլես:

— Ծօ՛, ինծի Առիւծ Գե...

Բայց Գեւոն նախադասութիւնը չկրցաւ վերջացնել:

Յանկարծ Այգեստանի խաղաղ միջնուրտը շոնչալով պատուեցաւ հեռուէն արձակուած հրադէնի մը սուր ձայնէն: Լեւոնն ու ընկերները ընդօստ ցնցուեցան ու իրարու նայեցան հարցական հայեացքով: Ի՞նչ հրադէնի ձայն էր լսուածը: Սակայն, ժամանակ իսկ չուներցան այդ մասին բերան բանալու: Քանի մը վայրկեանէն, անկանոն հրացանաձգութեան մը գոռոցը յաջորդեց առաջին հրադէնի ձայնին: Անշուշտ նոր կռիւ մը փրթած էր, բայց որո՞ւ հետ, եւ ինչո՞ւ հրացանի ձայները թրքական թաղերու կողմէն կուգային:

Ինչպէս անակնկալ կերպով սկսած էր, այնպէս ալ

յանկարծ դադրեցաւ հրացաններու որոտը, երեք չորս բոստի մը շարունակուելէ վերջ:

Ու հիմա կարծես աւելի ծանր խաղաղութիւն մը տարածուեցաւ Այգեստանի վրայ: Ծնչող լուրիւն մը, քարի նման ծանր, հոգեմաշ հանդարտութիւն մը, որ չես դիտեր թէ ի՞նչ ունի իր ծալքերուն մէջ պահուած:

Սենեակի մէջ հաւաքուած ընկերները, որոնք հրացանաձգութեան ձայնը առած՝ ոտքի ցատկած էին, ամէն մէկը հրացանը գրկած, կամաց մը տեղերնին նըստան:

— Հը՞, տեսնես ի՞նչ պատահեցաւ, — ինքնիրեն քրթմնջաց Թոփալ Սատանան, — ձէները թրքական մասէն կուգային:

— Ինծի էնպէս կուգայ, որ... , հանդիսաւոր շեշտով մը սկսաւ խօսիլ Առիւծ Գեւոն, բոլորի ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացնելով, — ինծի այնպէս կուգայ որ, ըհը՛մ, — բայց առանց ըսելու թէ ի՞նչ կը մտածէր, կամ ինքն ալ հաստատ չգիտնալով ինչ մտածելը, բարկութեամբ քիթը տրորեց ու այդքանով բաւականացաւ, առանց նախադասութիւնը վերջացնելու:

— Գեւո՛, դու ալ որպէս թէ բան ըսիր, — հեզնեց Թոփալ Սատանան:

— Որ դու չես հասկնա՞ր...

— Ծօ, ի՞նչ ըսիր որ հասկնայի:

— Հա՛, ծամեմ բերա՞նդ դնեմ... արդէն եթէ դու խելք ունենայիր... Ծօ՛, որ հրացանի ձէներ կան, ուրեմն կռիւ կայ... հասկցա՞ր:

Լեւոնը ինքն ալ որեւէ կերպով չէր կրնար բացատրել հրացանաձգութեան պատճառը: Քաղաքին մէջ դըրսէն եկած մարդ՝ միայն ինքն էր ու իր հետ եղածները: «Կ'երեւի, պատահական հանդիպում մը փախստականի մը հետ», մտածեց Լեւոնը ու նորէն չանթան ձեռք առնելով՝ սկսաւ կիսատ ձգած նամակը շարունակել:

Առիւծ Գեւօն ու Թոփալ Սատանան ալ դարձան իրենց կիսատ ձգած խաղին, որ Գեւոյի սիրած ժամանցն էր:

Առիւծ Գեւօն ժամերով կրնար խաղալ այդ խաղը առանց ձանձրանալու: Շատ անգամ գրեթէ բռնութեամբ կը ստիպէր ընկերները, գիշերուան որեւէ ժամուն քնած տեղէ ելլելով քրիֆ խաղալ: Չես գիտեր ո՞ր տեղէն Առիւծ Գեւօն ճարած է խաղի թղթերը: Սարսափելի կերպով ազտոտ ու իւղոտած խաղաթղթերը խնամքով փափախին մէջ կը պահէր ու վայ անոր, որ առանց իր գիտութեան ձեռք տար այդ թղթերուն: Ընկերները այդ փորձանքէն ազատուելու համար՝ անգամ մը զողջան խաղի թղթերը: Բայց մեր պատուական բարեկամը այնպիսի աղմուկ մը փրցուց, որ ճարահատ, թղթերը մէջտեղ հանեցին ու անգամ մ'ալ չփորձեցին խաղ խաղալ Առիւծ Գեւոյի հետ:

— Ծօ, Թոփալ, 150...

— Հարիւր եօթանասուն...

Այդպէս կը շարունակուէր քրիֆը: Քսան բոպէէն աւելի անցեր էր: Մեր բարեկամները նոյնիսկ մոռցած էին քիչ առաջուան հրացանաձգութիւնը, երբ յանկարծ տան դրսի դուռը չրխկալով բացուեցաւ, ու Հմայեակը շնչապառ սենեակ ինկաւ, դէմքը կաս կարմիր կտրած, գլխու ֆէսը ծոպէն բռնած՝ օդին մէջ շարժելով:

— Ձարկին... զարկին... Սղգեայի Ձազտի վրայ...

Արտասանած երկդիմի խօսքերէն աւելի, Հմայեակի ուրախութենէ ճառագայթող դէմքէն սենեակի մէջ գլուխը արտոնները գլխի ինկան, որ դուրսը անակնկալ նորութիւն մը պատահած էր: Թոփալ Սատանան թղթերը քիւրսի վրայ դրաւ ու բերանը բաց՝ նայեցաւ Հմայեակին: Առիւծ Գեւօն աշխուժով ոտքի ցատկեց: Լեւոնը չանթան մէկ կողմ դրաւ ու հանդարտօրէն հարցուց.

— Ի՞նչ պատահած է, որո՞ւ գարկին... մէկ շունչ առ, Հմայեակ, հանդատայիր...

— Դաւաճանը... պարոն Լեւոն, դաւաճան Դաւօն զարկին բաղնիքին առջեւ... — բառերը իրարու խառնելով վրայ տուաւ պատանին:

— Ծօ, ի՞նչ ըսիր:

Գոռացողը Առիւծ Գեւօն էր, որու դէմքը վայրկէն արար կաս կարմիր կտրեցաւ հեղհահաւի կատարի նման, հաստ վիզը առաջ երկարեց, կարծես աւելի լաւ լսելու համար:

— Հա՛, շունը սասկեցաւ... բաղնիքի առջեւ զարկին... մեր Տաճատն է սպաննողը...

Յանկարծ անօրինակ կատաղութիւն մը բռնեց մեր Առիւծ Գեւոյին, սենեակի մէջ սկսաւ խելառ պար մը պարել, որ սովորական պարերու ձեւը չունէր: Թէ՛ կը խնդար, թէ՛ կուլար: Արցունքի խոշոր կաթիլներ այտերէն վար կը վազէին, մինչդեռ սեղմուած բռունցքներով օդը կը ծեծէր: Մէկ ալ ձեռքը բարձրացնելով բամբեց Թոփալ Սատանայի գլուխը, որու փափախը մինչեւ աչքերը իջան:

— Լա՛ւ, Գեւօ, հանգստացիր: Հմայեակ, լուրը բոլորովին ստո՞յգ է, — հարցուց Լեւոնը՝ իր յուզումը խեղդել ջանալով:

— Կառապան Յովհաննէսը, — արդէն հանդարտած պատասխանեց Հմայեակը, — Յովհաննէսը աչքով տեսեր է... Քաղաքամէջէն վերադարձած ժամանակ տեսեր է Դաւօն եւ Տաճատը խօսքի բռնուած թրքերու բաղնիքին առջեւ: Քսան երեսուն քայլ մը յառաջացած՝ մէկ ալ հրադէն մը պայթեր է ետեւէն: Հաղիւ ժամանակ ունեցեր է ետին նայելու: Տեսեր է դաւաճանը արիւնջուայ գետին ինկած, իսկ Տաճատը աջ ու ձախ կրակելով փախեր է... Հիմա ամբողջ Այգեստանը գիտէ... Ժողովուրդը փողոց թափած՝ իրարու աչքի լոյս կուտան...

— Իսկ Տաճատի մասին ի՞նչ կը խօսուի:

— Փախեր է... բայց ոչ ոք չէ տեսեր ուր երթալը:

— Լաւ, սիրելիս : Այդ այդպէս ուրեմն : Իսկ այս երեկոյեան համար ընկերներուդ լուր տուած ես անշուշտ :

— Ի հարկէ, պարոն Լեւոն :

— Ե՞րբ կը հաւաքուին :

— Երբ որ մթնայ : Պատուիրեցի անոնց՝ որ մեր տունը հաւաքուին :

— Այդ շատ լաւ է : Ուրեմն, կէս ժամէն...

Երբ Լեւոնը կրկին իր կիսատ ձգած նամակը սկըսաւ շարունակել, Առիւծ Գեւօն Հմայեակի թեւէն քաշելով՝ մօտը նստեցուց ու իրարու վրայ քանի մը անգամ պատմել տուաւ անոր՝ ինչ որ լսեր եւ տեսեր էր փողոցներու մէջ :

Լեւոնը աշխատանքը վերջացնելով չանթան հաւաքեց ու մէջքը տուած բարձին՝ սկսաւ մտածել, մինչ դռնունակ ժպիտ մը կը խաղար դէմքին վրայ : Ի դուր չէ, որ ինք Տաճատը ընտրած էր այդ վտանգաւոր ձեռնարկին համար : Այդ պատանիի աչքերուն մէջ ինչ որ յանդուգն, անդսպելի կրակ մը կը վառէր, երբեմն վայրագ կայծկըլտուք մը կ'երեւար՝ դարնան կայծակի նման փայլատակող :

Նախօրօք համաձայնութեան եկած էին իրարու հետ, որ դէպքի մը պարագային Տաճատը կամ ընկերը, եթէ կարենային աղատուիլ, պիտի թագնուէին Սաթենիկենց մօտ : Ուրեմն, իւրովի մտածեց Լեւոնը, եթէ Տաճատը կըրցեր է աղատուիլ, անշուշտ հիմա, Սաթենիկի մօտ կը լինի : Պէտք է այդիւր մէջ թափուած ասլրանքը տեղափոխել վերջ հոն երթալ :

Սկսաւ մթնել : Հմայեակի ընկերները, որոնց ընթերցողը հանդիպեցաւ Սաթենիկենց տունը, հետզհետէ եկան : Ամէնքն ալ միեւնոյն պատմութիւնը կը պատմէին մասնաւոր ոգեւորութեամբ, միաժամանակ հպարտ դրամով, որ Տաճատը իրենց խմբի ընկերներէն էր : Բոլորն ալ

միեւնոյն լուրը կը հաստատէին, թէ դաւաճանը մեռած է :

Ուշ եկողներէն մէկը եղաւ Տէրտէրի Վահանը : Քաղաքամէջ, ոսկերիչի մը մօտ աշակերտութիւն կ'ընէր այդ պատանին : Զարմանալի կերպով լռակեաց, ինքնամփոփ տղայ մ'էր՝ միշտ ալ կարծես ծանր հոգսերով մը տորուած : Երբ ներս մտաւ, անմիջապէս աչքի զարկաւ անոր դունաթափ դէմքը : Խոշոր խոշոր բացուած աչքերուն մէջ անհնարին սարսափ կար :

— Ի՞նչ կայ, Վահան, ի՞նչ պատահած է, Վահան, — ձայնելով ընկերները շրջապատեցին զայն :

— Հէչ, բան չկայ, — ու Վահանը քիւրսիին մօտ նըստաւ՝ աջ ձեռքով ծածկելով աչքերը :

— Ի՞նչ է պատահած, — մեղմօրէն հարցուց Լեւոնը՝ տղու շարժուձեւէն զգալով, որ ան դեռ զօրաւոր սարսափի մը ազդեցութեան տակ կը գտնուի :

— Քաղաքէն կուգայի, — ըսաւ Վահանը, — մէկ ալ...

— Հա՛, մէկ ալ... շարունակէ՛, Վահան, — քաջալերեց Լեւոնը :

— Արեւը մարը չմտած՝ խանութը գոցեցինք, — սկսաւ պատմել Վահանը, ինքզինքը տիրապետելու ներքին ճիգ մը ընելով, — ամէն իրիկուն առտու քալելով կ'երթամ կուգամ Քաղաքամէջ : Խանութը գոցեցինք ու խուրճինը ուսս նետած՝ ճամբայ ելայ : Հանդարտ քայլուածքով մը կ'անցնէի Փրանս. քօնսիւլաթի առջեւէն, մէկ ալ Խաչ Փողանի կողմէն հրաղէնի պայթիւն մը լըսուեցաւ : Կարեւորութիւն չտուի : Քանի մը վայրկեան վերջ, բազմաթիւ պայթիւններ լսուեցան միեւնոյն ուղղութեան վրայ : Քայլերս արագացուցի : Քաղաքամէջէն եկող բազմութիւնը, որոնք մեծամասնաբար հայ խանութպաններ էին, ինչպէս նաեւ այդտեղ գտնուող խանութպանները եւ փողոցի անցորդ թուրքերը ինձ նման

չմած էին անսպասելի հրացանաձողութեան պատճառով: Մէկ ալ թուրք մը խաչ Փողանի կողմէն վազեւազ եկաւ, պոռալով իր աղբակիցներուն. «Ի՞նչ կեցեր էք, կեալուր-ները Դաւօն խիեցին բաղնիքի առջեւ: Մուհամմէտի սուրբ հաւատքին հետեւողներ, պիտի ձգէ՞ք, որ խալամը վերջանայ»:

Վահանի շրթները դողացին, աչքերու ճերմկուցը տարապայման կերպով մեծցաւ, կարծես քիչ առաջ ասը-րած սարսափը կը վերակենդանանար աչքին առջեւ:

— Փողոցի մէջ իրարանցում մը սկսաւ: Ես անդի-տակցաբար սկսայ վազել, — շարունակեց Վահանը: — Յանկարծ խանութպան թուրքերը կացինով, հաստ փայ-տերով զինուած՝ ամէն կողմէ վրայ տուին: Հայ վաճա-ռականներէն շատեր կառքերով սրընթաց անցան: Ոտա-ւորներս ամէն մէկը իր դիւտուն ճարը տեսնելու ետեւէ էր: Ինձմէ քսան քայլ մը առջեւով հայ մշակ մը կը վազէր: Թուրքերը ճամբան կտրեցին ու շրջապատեցին դայն: Հասնողը հարուած մը իջեցուց խեղճի դիւտուն: Մէկ եր-կու վայրկեանէն մշակը սեփական արիւնով շաղախուած՝ գետին ինկաւ: Թուրքերը, անոր գործը վերջացնելէ վերջ, ինկան ուրիշներու ետեւէն: Կացինով զինուած եր-կու թուրքեր ալ զիս տեսնելով, դէպի իմ կողմը վազե-ցին: Ոտքերս դողացին, սիրտս արագ արագ սկսաւ զար-նել, ինքզինքս կորած համարեցի:

Սենեակին մէջ ճանճի տղոց մը կրնար լսուիլ: Ներ-կաները համբացած՝ մտիկ կ'ընէին:

— Թուրքերը մօտեցեր էին ինձի: Աւելի բնաղոթէն քան մտածելով, ուսիս խուրճինը վար նետեցի ու, որքան որ արագ կրնայի, սկսայ վազել դէպի խաչ Փողան: Ճամ-բուս վրայ վեց եօթ դիակներ փռուած էին: Թուրքերը հանդիպող հայը կը սպաննէին: Ինքս ալ չեմ դիտեր, թէ ինչպէ՞ս կրցայ այդ խուժանի մէջէն անցնելով ազա-տիլ...

Այդ պահուն դուռը բացուեցաւ եւ խմբի անդամնե-րէն Արմենակը ուշ մնացողի մը վարանքով ներս մտաւ: Ամէն նոր եկող իր պատմութիւնն ունէր: Մինչեւ այդ ե-կողները բոլորն ալ կը հաստատէին Դաւոյի սպաննուիլը: Արմենակը Սմերիկեան Երջանակի դեղարանին մէջ կ'աշ-խատէր: Ըստ անոր պատմածին, Դաւօն դաշայդիրկ վի-ճակի մէջ էր, բայց դեռ չէր մեռած:

— Ծօ՛, չելլէ՞ առողջանայ, — սարսափած խօսեցաւ Արսէնը, — վայ թէ շունը նորէն ոտքի ելլէ...

— Ձէ այդ մասին մտահոգուելու պէտք չկայ, — ծի-ծաղելով հանգստացուց Արմենակը, — գնդակը վզի վերի կողմէն անցած՝ խրուեր է ուղեղին մէջ. ոչ կրնայ շար-ժիլ, ոչ լսել, ոչ ալ խօսիլ: Մեր բժիշկն ալ կանչուած էր քննելու: Վերադարձին յայտնեց, որ փրկութիւն չունի, ժամերու խնդիր է միայն շան սատկիլը...

— Տղաք, չուշանանք, — տեղէն բարձրանալով ըսաւ Լեւոնը, — երթանք սպրանքը փոխադրելու:

— Աղջի Սաթենիկ, — թոնիրի վրայ ծռած՝ թանա-պուրի պտուկի խուփը բանալով խօսեցաւ մայրը, — աղջի Սաթենիկ...

— Ի՞նչ է, մարէ, — լսուեցաւ կողքի սենեակէն աղջ-կան հնչեղ ձայնը. — Ի՞նչ կ'ուզես...

— Գետինը չանցնիս, նորէն թանապուրի աղը մոռ-ցեր ես... Տանը կը նստի՞ս որ... Խելքդ միտքդ դուրսն է: Հա՛, էն ի՞նչ հրացանի ձէներ էին... Սեղանը շտկէ, հացը ես թրջեր եմ: Պատառ մը բան ուտենք, կէս օրը անցեր է... սիրտս մարեցաւ:

Սաթենիկը 15-16 տարեկան միջահասակ, թխիկ աղ-ջիկ մ'էր՝ կաս կարմիր այտերով, որ վանեցի աղջիկնե-րուն այնքա՛ն յատուկ է: Ծղօտներէ հիւսուած սեղանը երկու ձեռքով բռնած՝ ան ներս մտաւ թոնրատունը ու

Թոնիրի կուշտին դունաւոր սիւոց մը փոփելով՝ աղքատիկ սեղանը յարդարեց :

— Անուն հօր եւ որդւոյ եւ... — Հա', աղջի', էն ի՞նչ հրացանի ձայներ էին : Նորէ՞ն շները կատղեցան... դետնին տակը մտնեն... Հոգւոյն Սրբոյ, ամէն... Կերակուրը պողեցաւ...

Պառաւը, քանի մը պատառ ուտելէ վերջ, մէկ ալ դարձաւ աղջկանը .

— Հա, աղջի'կ, չըսիր թէ էն ի՞նչ հրացանի ձայներ էին...

— Մայրի'կ, չեմ դիտեր... ես դրկիցի տունն էի... ո՞վ դիտէ ի՞նչ էր...

— Սաթէ՛ն, լեզուիդ տակը բան մը կայ :

— Մարէ, ժամ պատարագ, բան չկայ... ես ալ լսողաց լսեր եմ : Կ'ըսեն թէ Սղդեայի Ջաղտի վրայէն թուրք զինուորները սել մը ապրանք տարած ատեննին՝ մեր յեղափոխականները յարձակեր են վրանին ու սելի ապրանքը փախցուցեր...

— Ո՛ր... .

— Կ'ըսեն քանի մը հատ ալ ասկեար սատկեր է : Մեր տղաքը պատուհանէն ուսմբեր նետեր են...

— Քէօքերնին չորնայ էնոնց, քէօքերնին... Ա՛խ, որ իմ ասլան տղաս խփեցին...

Պառաւի ձայնը կտրուեցաւ, եւ արցունքի խոշոր կաթիլներ ինկան դողդողացող ձեռքին վրայ...

Սաթենիկը չտեսնելու զարկաւ մօր արցունքը : Ամէն անգամ, որ դէպք մը պատահէր, կամ կռիւ մը տեղի ունենար, մօր սրտի հին ցաւերը կը նորոգուէին : Մեծ տղան կուռի մը մէջ սպաննուած էր Կուռուպաչ դիւզի մէջ : Տարիներ անցած էին այդ օրէն, բայց պառաւը չէր կըրնար մոռնալ այն սեւ օրը, երբ սելի մը վրայ նետած՝ քաղաք բերած էին իր ասլան զաւակի դիակը :

— Տէ', մարէ բաւական է... ,— սեղանը հաւաքելով

ըսաւ Սաթենիկը, — հա', ես քիչ մը դուրս պիտի ելլեմ...

— Աղջիկ, նորէն ո՞ւր կ'երթաս, — հոգւոց հանելով հարցուց մայրը, — էս քանի օրս տանը նստած չունիս, քեզի հետ ի՞նչ է պատահած :

— Ճանրմ, ո՞ւր պիտի երթամ որ, դուն ալ շարունակ կը հարցնես : Մէկ մը մեր Համասփիւռին հանդիպիմ. շարաթ մը եղաւ չեմ տեսած...

— Աղջիկ, տահա երկու օր առաջ էր, Համասփիւռը քեզի տեսնելու եկաւ...

Բայց Սաթենիկը չլսեց մօր վերջին խօսքերը : Ծալը դլխուն նետելով՝ կողքի սենեակէն բազը ելաւ ու անկէ ալ փողոց :

Պառաւը տնքտնքալով թոնրատունը աւլեց, ամանները լուաց եւ դորձերը վերջացնելով քիւրսիի տակ նըստած՝ սկսաւ դուլպայ դորձել : Կամաց կամաց աչքերը փակուեցան, դուլպան ձեռքէն ինկաւ ու ան եղանակաւոր խոռոցով մը սկսաւ մրափել :

Երեկոյեան կողմ, ժամու կոչնակի ժամանակ միայն Սաթենիկը վերադարձաւ տուն, ձեռքը դիրք մը բռնած : Հաւատացնելով մօրը, որ ինք ամբողջ ժամանակ Համասփիւռենց տունն էր, Սաթենիկը քիւրսիի վերմակը քաշեց վրան եւ դլուխը բարձին դնելով՝ աչքերը փակեց : Մայրը քունը առած՝ շարունակեց դուլպայ հլւսել, երբեմն հատիկները փախցնելով, որ զինք սաստիկ կը նեղացնէր :

— Անտէր մնայ, աչքերս ալ չեն տեսներ, — քթի տակէն մըթմըթաց պառաւը, — ինչ ալ կանուխ մ'իջցաւ. մէկ ճրագը կպցնեմ :

Հազիւ թէ ճրագը աթոռակին վրայ դրած էր, երբ յանկարծ հեռաւոր հրացանաձգութեան բոմբիւնները մինչեւ թոնրատուն խուժեցին :

— Մեղայ քէ Աստուած, — երեսը խաչակնքելով ըսաւ պառաւը՝ ամբողջովին լսողութիւն կտրած, — նորէն չը-

ները կատարէր են... Աղջիկ Սաթենիկ, մէկ աչքդ բաց՝ տեսնեմ... դուքսը աշխարհը տակնուվրայ եղաւ...

— Ի՞նչ է, մարէ, — աչքերը տրորելով պառկած տեղը նստաւ Սաթենիկը, — չես ձգեր որ աչքերս խփեմ...

— Աղջիկ, մէկ մտիկ ւրէ, նորէն կռիւը փրթաւ, հըրացանի ձէները կարծես թրքերու կողմերէն կուգայ:

— Հա՞, տեղէն ցատկելով թոնրատան դուռը բացաւ Սաթենիկը, — դո՛րթ մարէ, կռիւ կայ, տեսնես ո՞ր կողմն է, ի՞նչ է պատահեր նորէն:

Դուռ դրացի փողոցի դռներու վրայ հաւաքուեցան:

— Քա՛ հա՛րս, — քովի դրացի կնոջ կը ձայնէր պառաւ կին մը, որու ականջները լաւ չէին լսեր, — հա՛րս, նորէն ի՞նչ կայ, կ'ըսեն կռիւ է. դորթ որ կռիւ է:

— Հա՛, խաթուն նէնէ, Խաչ փողանի կողմէն ձայները կուգան:

— Քաղաքամէջէն գալու կեախ է, — ձեռքերը տրորելով լացակամած կ'ըսէր երիտասարդ կին մը տաբեկից կնոջ մը, — մարդս դեռ տուն չեկաւ:

Այդպէս, դուռ դրկից հաւաքուած, հազար ու մէկ ենթադրութիւններ կ'ընէին հրացաններու ձայներու մասին, երբ կրկին խաղաղութիւն տիրեց:

Կամաց կամաց մթնեցաւ:

— Աղջի Սաթէն, ներս երթանք, — ըսաւ մայրը, — վաղը առտու յայտնի կը լինի թէ ի՞նչ կռիւ էր:

Մայր ու աղջիկ ներս քաշուեցան: Սաթենիկը, փողոցի ու այգիի դռները գոցելէ վերջ ներս մտաւ թոնրատունը ու մօրը կողքին, քիւրսիի տակ նստելով՝ ճրագի աղօս լոյսի օգնութեամբ կարդալ սկսաւ ցերեկով հետը բերած գիրքը:

Թերեւս կէս ժամ մը անցած լինէր կամ ժամ մը, երբ Սաթենիկը յանկարծ ձեռքի գիրքը քիւրսիի վրայ նետեց եւ ականջները սրած՝ թոնրատան դրան կողմը գլուխը ուղղեց:

— Մարէ՛, կարծես բակին մէջ մարդ կայ:

— Ականջիդ ձէ՞ն եկաւ, — ձեռքի դուլպան վար դնելով՝ պառաւն ալ ուշադրութեամբ սկսաւ մտիկ ւնել:

Իրօք, տան բակին մէջ ոչ թէ մէկը կար, այլ այդ մէկը կը փորձէր թոնրատան դուռը առանց աղմուկի բանալ: Երկու կիները վախեցած՝ իրարու նայեցան: Գիշերուան այդ պահուէն ո՞վ կրնար լինիլ:

— Ինչ վո՞ւ վի, — ամբողջ քաջութիւնը հաւաքելով հազիւ կրցաւ ըսել պառաւը, որու ձեռքն ու ոտքը անորոշ սարսափի ազդեցութեան տակ կը դողային:

— Մարէ, բաց ես եմ...

— Դուն վո՞ւ վի իս:

— Մարէ... ես, ես, Տաճատն եմ: Սաթենիկը տո՞ւնն է...

— Աղջի...

Բայց արդէն Սաթենիկը ոտքի ցատկած՝ բացաւ դուռը: Դրան սեմին վրայ երեւցաւ Տաճատը, վարանոտ դէմքով, հէյպէ մը նետած ուսին: Հազիւ թէ նկատելի փոփոխութիւն մը կը նշմարուէր անոր արտաքին երեւոյթին մէջ, թերեւս քիչ մը դունաթափ կ'երեւար, քիչ մ'ալ շփոթած:

— Տաճա՛տ, — ահամայ բացապանչեց Սաթենիկը՝ մէկդի քաշուելով, որ տղան կիսաբաց դռնէն ներս մըտնէ, — ի՞նչ կայ, Տաճատ:

— Բան չկայ, Սաթենիկ, — որպէս թէ բոլորովին անհոգ, Տաճատը ներս մտնելով՝ դուռը գոցեց ու հէյպէն ուսէն վար դնելով քիւրսիին մօտեցաւ, — բարի իրիկուն, մարէ, ցուրտ է:

— Բարի եկար, տղաս... խեր լինի:

— Հէչ բան չկայ, ձեր թաղով կ'անցնէի, ըսի, մէկ ներս մտնամ՝ տեսնեմ ի՞նչ հալի էք:

— Լաւ, լաւ, ինչպէ՞ս պիտի լինինք, օր մը լաւ, օր մը վատ... Մօտեցիր, նստիր քիւրսիի տակ, մըսած կը

լինիս... Հա՛, էն ի՞նչ թուանքի ձէներ էին, Տաճատ: կատղեր են շները, նորէն հայ քրիստոնեայի դիտուն փորձանք պիտի բերեն. ա՛խ, մէկ մը պատէինք էս շներու երեսը տեսնալէ: Թըրքերու թաղէն կուգային ձէները:

— Հա՛, մարէ, էս ալ լսեցի... է՛, ո՞վ դիտէ նորէն ի՞նչ է պատահեր...

Սաթենիկը Տաճատի դէմն ու դէմը նստած՝ ուշադրաբութեամբ կը դիտէր անոր դէմքը: Բացի դէմքի գունատութենէն, Տաճատը կարծես փուշերու վրայ նստած լինէր: Երբեմն թեթեւ դող մը կ'անցնէր մարմնի մէջէն: Լարուած վիճակ մը ունէր, նասպատակի մը նման, որ առանց որսորդը տեսնելու՝ կը զգայ անոր մօտիկութիւնը:

Տղու այդ անհանդարտ վիճակը զարմանալի թուեցաւ Սաթենիկին: Արտակարգ բան մը պատահած լինելու է, մտածեց Սաթենիկը, ինչո՞ւ Տաճատը այնպէս մը նրատած է, կարծես ամէն բոլորի ցատկելու պատրաստ վիճակի մէջ:

Յանկարծ կասկած մը Սաթենիկի միտքը պղտորեց: Չլինի՞ թէ... եւ սակայն ուսը թօթուելով՝ հեղնական ծիծաղ մը շրթներուն վրայ Սաթենիկը ետ մղեց մտքի մէջ ծաղած կասկածը: Է՛հ, Տաճատը հաղիւ թէ դեռ անփորձ պատանի մը լինէր: Բայց ինչո՞ւ դիշերով եկած էր իրենց տունը, բան մը, որ երբեք պատահած չէր, բացի մէկ երկու անգամէն, երբ պատանեկան խումբերը իրենց տանը հաւաքուած էին:

— Տաճա՛տ, մէ՞կը կը սպասես, — փորձելու մտքով հարցուց Սաթենիկը:

Տղան անորոշ իմաստով մը, աջ ուսը բարձրացուց անվճռական ձեւով: Տաճատը ինքն ալ հաստատ չէր դիտեր, թէ Լեւոնը գալով էր այդ երեկոյ:

Երբ վերջին անգամ Տաճատը տեսնուեցաւ Լեւոնի հետ, վերջինս որոշ հրահանդներ տալով յայտնեց՝ թէ յաջող կամ անյաջող փորձէ մը վերջ Սաթենիկենց

տունը ապաստանէր: Եթէ դէպք մը պատահելու լինէր, ինք կը լսէր եւ դիշերով կուգար զինք տեսնելու եւ հարկաւոր կարգադրութիւնները ընելու համար:

Որքան ալ որ վստահ Լեւոնի գալուն, Տաճատը շատ անհանդիստ դրութեան մէջ կը գտնուէր. ախ, երանի մէկ Լեւոնը դար:

— Աղջի, կարծես այդիի դուռը կը թխկացնեն, — ձեռքի դործը ձգած, խօսքը Սաթենիկին ուղղեց պառաւը, ակնոցները ձակտին վրայ բարձրացնելով, — մէկ ել բազը, տես ո՞վ է:

Դրսէն կը լսուէր դրկից Սանտրադործ Սարգսենց հարսին ձայնը...

— Սաթենի՛կ, ս՛ւ-ս՛ւ... Սաթենիկ...

Երբ Սաթենիկը տեղէն բարձրանալով՝ կը պատրաստուէր բազը ելլել, Տաճատը անմիջապէս ոտքի ցատկելով հէյտէն շարկեց ու անոր ճամբան կտրեց.

— Աւելի լաւ է, որ այդ կինը զիս հոս չտեսնայ, — քիչ մը շփոթած ըսաւ Տաճատը, — ըհմ... թո՛ղ չտեսնէ... էս ախոռի մէջ կը սպասեմ...

Սաթենիկը զարմացած նայեցաւ տղուն: Տաճատը ի՞նչ պատճառ կրնար ունենալ թաղնուելու, այն ալ դըրկից կնոջ մը պատճառով: Բայց Տաճատը ժամանակ չտրուաւ անոր հարցում մը ընելու: Սաթենիկի հետ միասին բազը ելլելով՝ կամաց մը անոր ականջին փախաց.

— Սաթենի՛կ, յետոյ կ'իմանաս... Հոս եկայ, պարոն Լեւոնին սպասելու... թերեւս այս դիշեր գայ: Անպատճառ կուգայ... Ես ախոռին մէջ կը սպասեմ, — ու արագ շարժումով մը ախոռի դռնէն ներս սարդեցաւ:

— Աղջիկ, խլացե՞ր էք, — այդիի դուռը շարունակելով ձեծել պոռաց դրկից հարսը. — Սաթենի՛կ, ո՞ւ... Սաթենիկ...

— Եկայ, եկայ, հիմա դուռը բացի, — եւ Սաթենիկը աճապարեց դրան փայտէ լեզուակը ետ քաշել:

— Աղջի, կէս ժամ եղաւ դուռը կը ծեծեմ, — չափազանցելով ըսաւ հարսը, — կարծեցի քնած էք: Էսոր սոխուկով թաղայ ժափիկ շինեցինք, ըսի քիչ մը մօրքուրին տանիմ... մայրդ արթնուն է...

— Էս ժամանակ ալ մարդ քնի՞, ներս եկուր, դուրսը ցուրտ է:

Սաթենիկն ու դրկից հարսը ներս մտան թոնրատունը: Սաթենիկի մայրը սովորական բարեսիրտ ժպիտով դիմաւորեց երիտասարդ կինը, որու հանդէպ մասնաւոր համակրանք մը ունէր: Հագիւ թէ քիւրսի տակ տեղաւորուած՝ հարսը արագ արագ սկսաւ լեզուին տալ, կարծես ճիւղեր մը ետեւէն ինկած, կը հալածէր զինքը:

— Քա՛, մօրքուր, մոլժտես տուր. խորոտ բան մը: Ձէ՛, մինչեւ որ բան մը չառնեմ, բերանս պիտի չբանամ. ժամ պատարագ, պիտի չըսեմ: Որ դիտնաք, ուրախութեանէս խենթեցեր եմ: Որ իմացայ, ըսի մէկ վաղեմ մօրքուրին պատմեմ, սիրտը հովանայ: Մարդս քիչ առաջ պազարէն տուն եկաւ: Երեսը նայեցայ, ամէն օրուան թթու երեսը չէ: Եա՛ Սուրբ Գէորդ կ'ըսեմ մտքէս, էս մարդս ինչո՞ւ կը խնդայ: Քա, դու մի ըսեր, աչքովը տեսեր է շուն Դաւօն գետին փռուած... Քա, ո՛ւ, ինչպէ՞ս ալ բերնէս փախաւ... որպէս թէ պիտի չըսէի... Հապա՞, շան պէս սատկեցուցեր են, բաղնիքի դրան տռչեւ... Թուրքերն ալ քանի մը խեղճ ու կրակ հայեր մեռցուցեր են ի՞նչ Փողանի մօտ: Ա՛խ, երկնքէն կրակ թարիլ անոնց գլխուն: Անոնց զէօքը կարուրի... Ամէն տան մէջ հիմա հարսնիք է: Դուք ինչպէ՞ս չէք լսած... Քա, ես ալ լեզուիս տուր ու նստայ: Ձէ, մօրքուր, պիտի երթամ, մեր տղամարդիկը սեղանէն նոր ելան, աման չամանը պիտի լուացուի... Ըսի, մէկ երթամ մոլժտէ տամ մօրքուրին, թող սիրտը փառաւորուի... Օ՛խ, շանստակ եղաւ սաղայէլը: Էրնէկ մարը անոր տեղ քար մը ծնէր... աղբութեան տունը կործանեց... Ես ալ լեզուիս տուր, հիմա երեխաները...

տէ մօրքուր, ես գնացի... Օրհնուրի զարնողի ձեռքը... Քա վույ, քիչ մնաց մոռնայի, — ու հարսը, որ քիչ մը տեղէն բարձրացեր էր երթալու համար, նորէն տեղաւորուեցաւ հաստ ներքնարկի վրայ. — հասար չէ՞ք հարցնեք թէ խփողը ով է... մարդու հաւատալը չի դար... Քա, չհարցնէ՞ք թէ ով խփեց էն շունը:

Սաթենիկը արմանք զարմանք կտրած՝ բերանը չէր կրնար բանալ: Արդեօք Համասիի՞ւրը կամ ընկերուհի՞ն, մտածեց Սաթենիկը, որ օրերէ ի վեր աչք երկուքի փընտրուողին կ'օժանդակէր, հայկական թաղերու մէջ Դաւոյի քայլերը լրտեսելով: Այդ կէս օրէն վերջն ալ, նորէն գնացեր էր անոնց հետ, Սղգեայի Ջաղտէն: Ինք քսան երեսուն քայլ մը առջեւէն կը քայլէր, իսկ երկու բոշա աղջիկներն ալ ետեւէն: Բայց Դաւոյին չէին հանդիպած: Բայց ո՞վ գիտէ, մտածեց Սաթենիկը, թերեւս իր բացակայութեան ժամանակ Համասիիւրը կամ ընկերուհին հանդիպած լինէին շանը:

— Հա՛րս, դո՛րթ կ'ըսես, — ճակատին դրած ակնոցները մինչեւ քթի ծայրը իջեցնելով զուարթացած հարցուց պառաւը, — աղջի հարս, դո՛րթ կ'ըսես: Քէօ բերա՛ն օրհնուրի... ես արդէն գիտէի որ բան մը պատահեցաւ կոչնակէն վերջ, էն որքա՛ն հրացանի ձէն լսեցի... Անանկ չէ՞, Սաթէն...

— Հա՛, կոչնակի կեախ, թուրքերու բաղնիքի առջեւ... Տղան զարկեր ու փախեր է, — ոգևորութեամբ շարունակեց հարսը. — ետեւէն թուրք ասկեարներ շատ հըրացան բացեր են, բաց մեռնիմ Տիրամօր զօրութեանը, մազին իսկ չէ դպեր...

— Քա՛, հա՛րս, մէկ ըսէ, զարնողը ո՞վ է:

— Որ ըսեմ՝ մօրքուր, չես հաւատար... Արդէն լսողները երեսնին խաչ կը հանեն, արմանք զարմանք կըտրած... Էն թերլեմեզենց որբեւայրի հարսի...

— Է՛ր...

— Ճանրմ, էն խլլոտ Տաճատը... թիզ մը լակոտ... մեղա՛յ, մեղա՛յ, անոր ոտացը դուրպան եղնիմ, տեղն ու տեղը շան սասակ դարձուցեր է Դաւոյին...

— Աղջիկ, Տաճատը ըսիր, — գրեթէ ճշաց պառաւը՝ քթի ծայրը իջած ակնոցը նորէն ճակտի վրայ հանելով, — քա, հիմա Տաճատը...

Փայլակի նման Սաթենիկի մէջ ծաթած էր ճամբատութիւնը: Հիմա կը հասկնար Տաճատի գունաթափութեան, ջղայնութեան պատճառը: Առանց ձգելու, որ մայրը խօսքը շարունակէ, կամաց մը քիւրսիին տակէն ժըտեց մօրը աղբըր եւ խօսքը ուղղելով ճահիլ հարսին՝ ըսաւ.

— Աղջի ի՞նչ կ'ըսես, Տէր Աստուած, շիտակ որ մարդու հաւատալը չի գար: Ո՞վ կրնար սպասել այդ տղայէն... Հը՞ Մարէ, առաջ Տաճատը շուտ շուտ կուգար մեզի, էս ամիս մը եղաւ որ եկած չունի, — ու Սաթենիկը մասնաւոր շեշտ մը դնելով ըսածին՝ մօրը նայեցաւ:

Պառաւը անմիջապէս հասկեցաւ աղջկան միտքը ու բերանը փակեց: Երբ հարսի երթալէն վերջ, մայր ու աղջիկ առանձին մնացին, պառաւը յուզումէն ամբողջ մարմնով կը դողար:

— Սաթէն, տղան ինչո՞ւ ձգեցիր որ երթայ... ո՞ւր գնաց խեղճը, ապա որ գլխուն փորձանք մը գայ, հիմա տէ՛վրիյէները փողոցները բռնած կը լինին:

— Մարէ, մեր ախոռի մէջ պահուեցաւ Տաճատը, — մօրը ականջին շնչաց Սաթենիկը, — հիմա կ'երթամ կը կանչեմ:

Քիչ վերջ Տաճատը Սաթենիկի հետ ներս մտաւ: Պառաւը մէկ կուլար, մէկ կը համբուրէր քովը նստած Տաճատը, որ շատկեկ մը չփոթած կ'երեւէր պառաւի անակընկալ զեղումէն:

Որքան ալ որ մայր ու աղջիկ փորձեցին, չկրցան Տաճատը խօսեցնել: Երբ շատ վրայ կուտային, Տաճատը

կաս կարմիր կտրած, յանցաւորի նման գլուխը կը կախէր:

Իրիշերը բաւական առաջացեր էր: Պառաւը գնաց քընելու: Տղան ու աղջիկը առանձին մնացին:

— Ուրեմն, Տաճատ, կը սպասես, որ պարոն Լեւոնը այս դիշեր գայ:

— Այդպէս պատուիրեց: Ըսաւ թէ՛ եթէ բան մը պատահի, հոս ապաստանիմ: Անշուշտ մինչեւ հիմա դէպքի մասին լսած կը լինի. վստահ եմ որ կուգայ:

— Ինչ որ է, այս դիշեր գայ կամ չգայ, դու հոս կը մնաս... Ես վաղը Յակոբի միջոցով անոր լուր կ'ուղարկեմ: Այդ մասին մի մտահոգուիր: Հոս բոլորովին ապահով ես, եթէ մէկը չտեսաւ հոս մտնալը...

— Չէ, ոչ ոք, այդիներով եկայ:

Որքան ալ որ Սաթենիկի խօսքերը հանգստացնող էին, բայց նորէն Տաճատը կարծես ամբողջովին լսողութիւն էր կտրած: Դրսէն լսուող փոքր շուկ մը գինքը տեղէն վեր կը ցատկեցնէր: Հողեկան անհանդիստ վիճակ մը, երբ մարդ ենթակայ է լսելու՝ երբ իրօք լսելու ոչինչ կայ:

Յանկարծ Տաճատը անհանդարտ շարժում մը ըրաւ ու նապաստակի նման ականջները սրեց: Այս անգամ կասկած չկար, որ մէկէ աւելի մարդիկ բակին մէջ կը քալէին: Մէկ ձեռքը նետեց հէյսլէին, միւսով անշարժ մնալու շարժում մը ըրաւ Սաթենիկին: Ամենափոքր շուկ մ'իսկ չէր լսուեր թոնրատան մէջ, երբ դրսէն թոնրատան բարձր պատուհանի ապակիին նետուած կարծր իրի մը չխկոցը լսուեցաւ:

— Մերոնք են, — ուրախացած քրքշաց Սաթենիկը ու աշխոյժ տեղէն բարձրանալով դրան մօտեցաւ:

— Ըսի, որ կուգայ անպատճառ, — հանդարտած պատասխանեց Տաճատը ու տեղէն բարձրանալով Սաթենիկին հետ մօտեցաւ թոնրատան դրանը:

Իրօք, Լեւոնն ու ընկերներն էին եկողները: Թերեմ-
մեղենց այգիի քէօշկին մէջ ու դուրսը թափուած ապրան-
քը ապահով թագատոցի մը մէջ պահելէ վերջ, անոնք ե-
կած էին Տաճատը գտնալու: Ներս մտնելուն պէս, Լեւո-
նը հուժկու թեւերուն մէջ գրկեց Տաճատը եւ հարադատ
եղբօր նման համբուրեց դայն: Միւսները ձեռքէ ձեռք
կ'անցընէին Տաճատը, փայտալեւոյ, համբուրելով դայն,
կարծես փոքր երեխայ մը լինէր: Երբ վերջապէս գրկընդ-
խառնումներն ու համբոյրները վերջ մը գտան, բոլորը
շարուեցան քիւրսիի շուրջը: Սաթենիկը քաշուեցաւ կող-
քի սենեակը, մօրը մօտ: Մնացին մեր բարեկամները:

— Է՛, Տաճա՛տ, սիրելիս, պատմէ՛ լսե՛նք... Ինչ-
պէ՞ս հանդիպեցար Դաւոյին, — հարցուց Լեւոնը՝ կան-
խելով Առիւծ Գեւօն, որ պէխերը սրելով կը պատրաստ-
ուէր նման հարցում մը տալու:

— Բաղնիքի առջեւ հանդիպեցայ, — շառագունած ը-
սաւ Տաճատը, Առիւծ Գեւոյի եւ Թոփալ Սատանայի մէջ-
տեղը սեղմուած, — կրակեցի ու փախայ...

— Ծօ՛, մաշալլահ, ի՞նչ ալ պատմող մ'ես եղեր, —
ծանր թաթը տղու ուսին դարնելով մոնչաց Առիւծ Գեւօն,
— քու մէրդ չմեռնի, աւելի կարճ չէի՞ր կրնար խօսիլ...

Ընդհանուր խնդուք մը ծայր տուաւ: Տաճատը շփո-
թած՝ մէկ մէկուն կը նայէր մէկ միւսին, չհասկնալով
պատճառը անոնց այնքան սրտանց ծիծաղին:

— Ուրեմն, այդպէս, — քահ քահ ծիծաղելով շարու-
նակեց Առիւծ Գեւօն, — կրակեցիր ու փախար...

— Այո՛, կրակեցի ու փախայ, — Առիւծ Գեւոյի հեղ-
նական հարցումը չհասկնալով պատասխանեց Տաճատը,
մինչ կողքինները ալ աւելի փրթկոցով ծիծաղիլ սկսան:

— Գեւօ՛, հանգիստ ձգէ տղան, — մոայլուած սաս-
տեց Լեւոնը, — մի՛ խանդարեր, ազատ թող որ ուղած ձե-
ւովը շարունակէ պատմել: Պատմէ, Տաճատ, ինչպէս որ

պատահեցաւ, ո՞ւր հանդիպեցար, ինչպէ՞ս մօտեցար
Դաւոյին:

— Այսպէս էր, — ինքզինք հաւաքելով սկսաւ պատ-
մել Տաճատը, — քաղաքամէջ իջած էի: Երեկոյեան կողմ,
երբ պաղարը սկսաւ գոցուիլ, շատերու նման, ես ալ Այ-
դեստան կուգայի: Բոլորովին յոյս չունէի անոր հանդի-
պելու: Մէկ ալ աչքս վերցնեմ, որ Դաւօն բաղնիքի դրան
առջեւ փոլիս քոմիսէրի մը ընկերակցութեամբ եւ քանի
մը զինուորներով շրջապատուած՝ ճամբուն վրայ կանգ-
նած՝ քաղաքէն եկողները աչքէ կ'անցընէ: Տասհարուած-
եան մավղէրս ուսիս հէյպէյի մէջ էր, իսկ բրաւունինկ
ատրճանակս տախտիս աջ գրպանի մէջ: Բնազդօրէն
ձեռքս տարի գրպանս ու ատրճանակի կոթը սեղմեցի...

— Ղոչաղ տղայ ես, — բաւականութեամբ փայտալը
մէկ կողմի վրայ ծռելով ըսաւ Առիւծ Գեւօն, — շիտակը
լաւ հայդուկ մը պիտի դառնաս, եթէ քանի մը ամիս ձեռ-
քիս տակ մնաս... Է՛, սիրտդ կոչնակի նման զարնել սկը-
սաւ...

— Այո՛, — յանցաւորի նման գլուխը կախելով խոս-
տովանեցաւ Տաճատը, — երբ աչքս վերցուցի ու քանի մը
տասնեակ քայլ հեռաւորութեան վրայ տեսայ հրէշը, ա-
րիւնը գլուխս ցատկեց, սիրտս սկսաւ արագ արագ խը-
փել... Բայց եւ այնպէս ինքզինքս հաւաքելով, ճամբաս
շարունակեցի ու մօտեցայ անոր: Զարմանալի կերպով
որքան մօտեցայ, այնքան հանդարտած կը դգայի, բոլո-
րովին ինքզինքս դտած...

— Բայց, ինչ որ անհասկալի է, այն է, որ քեզ ձը-
դեցին անոր մօտենալու, — տարակուսանքով գլուխը
շարժեց Լեւոնը, — ընդհանրապէս թուրքերը դայն շըր-
ջապատած, հայերու պատեհութիւն չէին տար անոր մօ-
տենալու:

— Ես չէի որ մօտեցայ, — շարունակեց Տաճատը, —
Դաւօն, երբ հեռուէն զիս տեսաւ, մօտը կանչեց զիս: Զեմ

կրնար ըսել, թէ եթէ ինք զլիս չկանչէր, ես պիտի յաջողէի պէտք եղածին չափ մօտենալ իրեն: «Օ՛ Տաճատ, — զլիս տեսնելուն հեռուէն պոռաց, — էստեղ եկուր»: Անշուշտ հրաւէրը կրկնել չտուի: Որքան կրնայի անմեղ դէմք մը շինեցի ու որպէս թէ վախվխելով՝ մօտեցայ իրեն, աջ ձեռքս դրսպանս, ատրճանակի կոթին վրայ... «Օ, շան լակոտ, — բարկացած դուաց՝ ձեռքի ատրճանակը շարժելով, — այդ նորէն ինչե՞ր դրած էք իմ մասին ձեր թերթին մէջ»: Ես, թերթի մէջ անոր մասին դրուածներէն բոլորովին լուր չունեցողի նման փորձեցի ուրանալ: Բայց իմ չքմեղանքի խօսքս սաստիկ բարկացուց զայն, դէմքը աւելի մռայլեցաւ, ու ատամները կրճտացնելով սպառնաց. «Ես քեզի ալ դիտեմ, քու ընկերներդ ալ. եթէ անգամ մ'ալ իմ մասին տող մը բան գրէք, ձեզ բոլորդ ալ բանտերու մէջ փտեցնել կուտամ: Ինծի Տհերցի Դաւօ կ'ըսեն, կը հասկնա՞ս»... Չեմ կրնար ըսել, թէ ինձ հետ խօսած ժամանակ կասկած մը անցա՞ւ իր մտքէն թէ չէ, բայց ամբողջ ժամանակ աչալուրջ ու շաղբութեամբ աչքերուս մէջ կը նայէր... Կը զգայի որ թեթեւ շարժում մը իմ կողմէս, դեռ ատրճանակս դուրս չբերած՝ առանց այլեւայլի պիտի կրակէր վրաս... Բարեբախտաբար, այդ պահուն քաղաքամէջէն եկող կառք մը արագօրէն կ'անցնէր դէպի Խաչ Փողան: Մենք ճամբու մէջտեղը կանգնած էինք: Կառքը այնքան մօտէն անցաւ, որ Դաւօն բնադէօրէն քայլ մը ընկրկեցաւ ու գլուխը ետ դարձուց կառքի մէջ նստողները տեսնելու համար: Առիթն էր: Աջ ձեռքս տափառի դրսպանէս հանելս ու կրակելս մէկ եղաւ: Կարծեմ ուղղակի գլխուն կրակեցի... Դաւօն շանթահարուածի նման՝ ոռնալով դետին փռուեցաւ: Շուրջինները հազիւ թէ գլխի ինկած էին թէ ինչ պատահեցաւ, երբ ես սկսայ դէպի Խաչ Փողանի կողմը փախչիլ, որքան որ ուժ կար ոտքերուս վրայ:

— Իսկ քովը գտնուող ոստիկաննե՞րը, դօ՞րքը, մի-թէ չիտրձեցի՞ն արգիլել...

— Շխտակը չեմ գիտեր: Ատրճանակը քաշելս, կրակելս ու փախիլ սկսելս հազիւ Յ-Ա երկվայրկեան տեւեց: Անոնք դեռ ինքզինքնին չէին գտած, երբ ես սկսայ փախիլ: Որոշ կերպով կը լսէի ետեւէս վազող քայլերու ձայները ու հրացաններու որոտը... Այդ պահուն հազիւ թէ մէկը նշմարելու վիճակի մէջ լինէի: Նալպանտեաններու փողոցը չհասած՝ դէպի աջ նեղ փողոց մը կ'երկարի դէպի Արարուց հրապարակի կողմը: Փայլակի նման արագ խորհուրդ մը լուսաւորեց միտքս: Խաչ Փողանով պէտք չէր որ անցնէի: Այդ նեղ փողոցը մտայ: Ետեւէս լսուող ձայները կը շատնային: Հալածողները կրնկակոխ հասնելու վրայ էին: Չեռքս նետեցի ուսիս հէյալէյին ու մաւղեր ատրճանակս քաշելով՝ դէպի ետ երեք չորս անգամ կրակեցի, ու անմիջապէս ինքզինքս նետեցի այգիի մը կիսաքանդ պատէն ներս: Չեմ դիտեր, թէ զիս հալածողները ի՞նչ եղան: Շունչս բռնուած էր, ոտքերս կը դողային, բայց կը շարունակէի հարբածի նման օրօրուելով վազել: Մաքսապետներու տան մօտէն Նալպանտեաններու փողոցը ցատկեցի: Տեսնեմ Խաչ Փողանի կողմէն հինգ-վեց ձիաւոր զինուորներ դէպի իմ կողմս կ'արշաւեն: Քանի մը զնդակ ալ անոնց կողմը կրակելէ վերջ, փողոցի դիմացի պատը մագլցելով այգիներու մէջ ինկայ: Ատեն մ'ալ վազելը շարունակելէ վերջ, բոլորովին յողնած, քայլերս դանդաղեցուցի: Այլեւս ապահով չըրջանի մէջ էի: Կամաց կամաց մթնեցաւ: Ինչպէս որ պատուիրած էիր, այգիէ այգի անցնելով՝ հոս հասայ:

— Ախպօրս ըսեմ, մենք ալ ժամանակին բաներ մը ըրած ենք, — սովորական ճոռոմարանութեամբ սկսաւ Առիւծ Գեւօն, բայց Լեւոնի յօնքերու կիտուիլը տեսնելով, առանց խօսքը շարունակելու, փափախը շտկեց, ու բարեկամաբար Տաճատի ուսը ծեծելով բաւականացաւ,

Թէեւ մեծադղորդ ճառ մը ըսելու բուն ցանկութիւն մը կը զգար իր մէջ: Եթէ միայն Լեւոնը ներկայ չլինէր, ակոսասլով կը մտածէր Առիւծ Գեւօն, ի՞նչ տեղն էր հունամբը ցուցունելու:

— Մեզի հետ պիտի մնաս, — քանի մը վայրկեան մը տածելէ վերջ խօսեցաւ Լեւոնը, — մեզի հետ միայն կըրնաս ապահով զգալ, մինչեւ որ ձիւնը վերնայ ու ճամբաները բացուին: Յետոյ քեզ արտասահման կ'ուղարկենք ուսումը շարունակելու համար:

— Ինչպէս որ կարգադրես, — դէմքը պայծառացած՝ համաձայնեցաւ Տաճատը:

— Առայժմ մաւղեր ատրճանակը բաւական է, մինչեւ որ կարճ հրացան մը հանենք պահեստէն... Գեւօ՛, աչքը Տաճատի վրայ պահէ...

Առիւծ Գեւօն այնպէս ուժով սեղմեց Տաճատը իր ջլապինդ թեւերուն մէջ, որ խեղճ սղու աչքերը դուրս ինկան:

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆՏԸ

Վահէի ձեւական դատավարութիւնը երեք օրէն վերջացաւ: Թուրքը դիտէ, երբ ուզէ, արտաքին ձեւականութիւնները պահելով իր մտադրածը ընել եւ այն ալ շմեցընող արագութեամբ:

Բնականաբար Վահէի ձերբակալութիւնն ու դատավարութիւնը շատ մեծ իրարանցում առաջ բերաւ ժողովուրդի մէջ: Նախ որ յեղափոխական յայտնի դէմք մ'էր, եւ որ աւելին է, Վահէն ձերբակալուելու պահուն քանի մը պաշտօնեաներ սպաննած էր: Երբ դատավարութիւնը սկսաւ, ուսական եւ պարսկական քոնսիլներու թարգմանները կանոնաւոր կերպով ներկայ գտնուեցան բոլոր նիստերուն: Այդ պարագան ստիպեց կառավարութիւնը աւելի ազատութիւն տալու բանտարկեալին, օտարներու մէջ այն սպաւորութիւնը առաջացնելու համար, թէ Թուրքիոյ մէջ ալ արդարադատութեան ձեռքերը կաշկանդուած չեն: Հակառակ Վահէի կրկնակի մերժումներուն, կառավարութեան կողմէ երկու պաշտպան փաստաբաններ նշանակուած էին, որպէս թէ մեղադրեալի շահերը պաշտպանելու համար: Մէկը հայ երիտասարդ մ'էր, մտացի ու կարող, բայց որ հասկնալի պատճառներով բերանը չէր կրնար բանալ: Երկրորդը՝ փաթթոցաւոր թուրք մ'էր, տգէտ մարդ մը, որ հասարակ արգաւիակներու քիտմանը՝ կարող փաստաբանի մը համբաւ կը վայելէր, եւ որ անշուշտ պիտի ըսէր ինչ որ ներքին կրնար համարուիլ Սուլթանի հաւատարիմ հպատակի եւ ուղղափառ իսլամի մը:

Դատավարութեան սկզբնական շրջանին, Վահէն առանց այլեւայլի խոստովանեցաւ իր յեղափոխական դեպքերէն մէկը լինելը, ընդունեց զէնքով դիմադրելը

ու ատոր հետեւանքով տեղի ունեցած սպանութիւնները :

Վահէն կարծես ուրախութեամբ ընդառաջ կ'երթար դատախազի ամբաստանութիւնները հաստատելու, առանց ինքզինքը պաշտպանելու որեւէ փորձ ընելու : Հաղիւ երբեմն ուղղումներ ընելով կը բաւականանար, երբ դատախազը սուտ եւ արտառոց վերագրումներ կ'ընէր յեղափոխականներու հասցէին, բայց երբ հարցը եկաւ հայ յեղափոխական շարժումը ընորոշելու, չխօսելու քաղաքականութիւնը Վահէն մէկդի ձգեց եւ լայնօրէն օգտագործեց այդ պատեհութիւնը, փաստօրէն ապացուցանելով որ միայն Համիտեան կառավարութեան յոռի վարչութիւնն էր պատճառը հայ ժողովուրդի անօրինակ մարտիրոսութեան : Դարեր շարունակ ճնշուած ու լլկուած՝ հայ ժողովուրդը յուսահատ յեղափոխութեան արնոտ ճամբան ձեռք առած էր, մէկ անգամ ընդ միշտ ազատելու համար թրքական անտանելի լուծէն :

— Մի՛ փորձէք արտաքին պատճառներ յերկրելու, դուք էք մեղաւորը, — աջ ձեռքը բարձրացուցած, լեցուն հնչեղ ձայնով խօսած էր Վահէն, — դուք էք բուն պատճառը, Պոլսոյ մէջ նստած նախարարներէն սկսած մինչեւ գաւառական յետին դպիթիէն ստեղծեցիք այս դժոխքը, որ Թուրքիա կը կոչուի, եւ ձեր զազրելի տիրապետութեան շնորհիւ, ճարահատ հայ ժողովուրդը ըմբոստութեան գիրկը նետեցիք : Երկար դարերէ ի վեր տիրելով մեր հրաշալի երկրին՝ դուք շէն երկիրը քանդելով ու աւերելով ապրեցաք, դուք անյադ պարազիտներ եղաք, առանց ստեղծագործական կարողութիւն մը յայտնաբերելու : Դարեր շարունակ, տղրուկի նման ծծեցիք հպատակ ժողովուրդներու անտեսութիւնը, մինչեւ որ հասցուցիք զայն այս ողբալի վիճակին : Այս օր, Թուրքիայի ժողովուրդը, երկրի մէկ ծայրէն մինչեւ միւսը սարսափելի աղքատութեան ճիրաններուն մէջ կը դալարուի : Ի՞նչ տուիք ձեր դարեւոր տիրապետութեան շրջանին բոլոր

այն ժողովուրդներուն, որոնց տիրապետեցիք ձեր եւթաղանի շնորհիւ : Արիւն, աւեր, թալան ու կոտորած : Ուրիշ ոչինչ : Եթէ պատահէր, որ մէկ վայրկեանի մէջ յանկարծ վերնայիւր մէջտեղէն դուք եւ ձեր ժողովուրդը, ամբողջ երկրին մէջ ոչ մէկ արժէքաւոր հետք պիտի մընար ձեր հարիւրաւոր տարիներու տիրապետութիւնը յիշեցնող : Դուք մեր երկրի վրայ ծանրացող անէծք մը եղաք, առանց օրհնութիւն մը դառնալու ցանկութեան :

Ընդհանրապէս խօսած ժամանակ բոլորովին սառը, արտայայտուելու դուստ ձեւ մ'ունէր Վահէն : Երեք օրուան դատավարութեան ընթացքին հազիւ անգամ մը սովորականէն բարձր հնչեց Վահէի ձայնը : Այդ այն ժամանակ պատահեցաւ, երբ թուրք փաստաբանը, հակառակ Վահէի ընդդիմութեան, որպէս թէ պաշտպանողական ճառ մը սկսաւ, երկարապատում աղօթքով մը Վեհափառ Սուլթանի արեւշատութեան համար :

— Ամենաողորմած, բարեգութ եւ հայրախնամ Վեհափառութեան, տիեզերահռչակ Օղոստափառ կայսեր, որու զահը անասան մնայ մինչեւ յաւիտեան յաւիտենից, անոր վեհանձն գութին ու անհուն բարութեան կապաւինի պաշտպանեալս, որ մոլորուած . . .

— Բաւական է, — Վահէն ձեռքը սեղանին դարնելով ոտքի ցատկած էր. — Տէր դատաւոր, կը պահանջեմ, որ վերջ տրուի այս խայտառակ կատակերգութեան : Այս . . . այս ողորմելի մարդը, հակառակ իմ ցանկութեանս, դուք նշանակեցիք որպէս թէ զիս պաշտպանելու համար : Մեծահոգի կառավարութեան այս շնորհէն մեծ ուրախութեամբ կը հրաժարիմ ու կը պահանջեմ, որ այս վրան բաց կեղծիքը վերջ ունենայ : Ես ինքզինքս պաշտպանելու համար, այս մարդու օժանդակութեանը պէտք չունիմ :

Դատավարութիւնը անսովոր հետաքրքրութիւն մը առաջացուցած էր ժողովուրդի մէջ : Ոչ միայն հայերը առէն օր խոռոնեւրամ կը դիմէին դատարան, այլ եւ թուր-

քերը: Դատարանի փոքր սրահը խուռներամ լեցուած կը լինէր, ուր, ինչպէս կ'ըսեն, ասեղ ձգելու տեղ չէր մընար:

Վահէի դատը, Պոլսէն եկած հրամանի մը վրայ, անջատուած էր ընդհանուր գործէն: Մինչդեռ, Դաւոյի դաւաճանութեան հետեւանքով հարիւրաւոր ձերբակալուածներու նախնական հարցաքննութիւնն իսկ տեղի չէր ունեցած, Վահէի դատը ամենայն արագութեամբ կ'աշխատէին վերջացնել:

Դեռ դատավարութիւնը չվերջացած՝ պազարի մէջ խանութպանները իրարու հետ կը խօսէին արուելիք վճիռի մասին: Բոլորի համար ալ բաց գաղտնիք մ'էր, որ մահուան վճիռը Պոլսէն եկած էր: Այս հանգամանքը, Վահէի անցեալ գործունէութիւնն ու հռչակուած անունը, օտար քօնսիւններու ներկայացուցիչներու դատին հետեւելը, խոշոր ազդակներ էին ժողովուրդը դէպի դատարան քաշելու համար: Բայց ասոնցմէ աւելի բան մը կար, որ կը մղէր ժողովուրդը դէպի դատարան: Խուռ բազմութեամբ հայեր ու թուրքեր կը սպասէին դատարանի դրան բացուելուն, երբ իրար կոխկրտելով ներս կը խուժէին, յարմարաւոր տեղեր գրաւելու համար:

Ժողովրդական այդ մեծ հետաքրքրութեան բուն պատճառը Վահէի անձնաւորութիւնն էր, կամ աւելի ճիշդ, անոր խօսելու կերպը: Ըստ երեւոյթին, Վահէի զուսպ եւ անմեղ խօսքերուն մէջ այնքան նուրբ հեղնանք մը, ծաղրանք մը կար մասնաւորաբար Վանի նահանգի պաշտօնէութեան հասցէին, որ ժողովուրդը, մօտէն ճանչնալով այդ մարդիկը՝ հոհալով կը հետեւէր անոր խօսքերուն, — հոհուել մը, որ աւելի հաւանութեան արտայայտութիւն մ'էր: Վահէն անխնայ կերպով կը մերկացնէր այդ հերոսները, տեղով թուականով կը ցուցնէր անոնց կատարած զեղծումները, գողութիւնները եւ թէ ինչպէս այդ մարդիկ, կողոպտելով խեղճ ժողովուրդը ու

պետական սնտուկը, անպատիժ կը մնային ու դեռ նորանոր շքանշաններով կը զարդարուէին անոնց կուրծքերը: Անմեղ հրեշտակի դէմք հագած, Վահէն սկսաւ պատմել զինուորական վարչութեան մէջ կատարուած հսկայական գողութիւններու մասին: Հարիւր հազարաւոր ոսկիները կը հալէին բարձրաստիճան զինուորականներու կողորդներու մէջ, մինչդեռ զինուորները ողորմելի սնունդ կը ստանային եւ ցնցոտիներ՝ որպէս հագուստ:

— Տարեկան հինգ հազար ոսկիի պիւտձէ մը յատկացուած է զօրքի կօշիկներու համար, — բացականչած էր Վահէն, մատնանշելով իր մօտ կանգնած զինուորները, — դատաւորներու ուշադրութեանը կը յանձնեմ այս զինուորներու տրեխները, թերեւս դուք կրնաք ըսել թէ՛ որո՞նց զբաւաններուն մէջ հալեցան հազարաւոր ոսկիները, որոնք յատկացուած էին կօշիկներու համար:

Ունկնդիր թուրքերէն շատեր ատամ կը ճտացնելով մտիկ կ'ընէին այդ անհաւատի յանդուգն քննադատութիւններուն, բայց շատեր ալ կային, որ տխրութեամբ գլուխին կ'օրօրէին, որպէս թէ ըսել ուզէին. «Ճշմարիտ կ'ըսէ, մեր տունը այսպէս կը քանդեն մեր մեծերը»: Եւ, բնականաբար, դատարանին մէջ արտասանուած Վահէի խօսքերը, կը տարածուէին դատարանէն դուրս, պազարի մէջ, տուններու մէջ, ամէն տեղ ալ զարմանալի կերպով կենդանի հետաքրքրութիւն մը առաջացնելով:

Դատաւորներու նախագահը, Օֆեյի փաթթոցաւոր մը, զառամած ծերուկ մ'էր: Այդ մարդը, ոչ հազուադիւր դատաւորներէն էր, որոնք առանց անձնական կարողութեան միմիայն ընտանեկան կապերու շնորհիւ կը բարձրանան մեծ դիրքերու: Դատաւորի եղբոր աղջիկը տարիներ առաջ ինկած էր սուլթանական պալատը, Սուլթանի ունեցած հարիւրաւոր զեղուհի հարձերէն մէկը դառնալու բախտին արժանանալով: Խեղճ հարձը, իր շը-

քեզ մարմինը տրամադրելով Սուլթանին, ճարպիկութիւն ունեցած էր իր աղբակահներու վիճակը բարւոքելու: Արդէն այդ նպատակով ալ ճամբած էին զինք իր ծրնողները: Այդ աղջկան բարեխօսութիւններու շնորհիւ իր հօրեղբայրը, Սիւրմէնէի նման յետ ինկած քաղաքի մը դատարանի պարզ դրազերը, քանի մը տարիի ընթացքին զարմանալի արագութեամբ ժաղլցեր էր բազմելու համար Վանի նահանգի դատարանի նախագահական աթոռին:

Սաստիկ տղէտ, կրօնամոլ ու ազահ մարդ մ'էր դատաւորը: Բազմաթիւ «պատմութիւններու» պոչ մը ունէր իր անունին հետ կապուած, ամէն մէկ պատմութիւնը կապուած խայտառակ կաշառակերութեան մը հետ: Ասով մէկակեղ, Վանի մէջ, շատ ազդեցիկ անձնաւորութիւն մը կը համարուէր: Ամէնքը կը վախնային իրմէ, որպէս մէկէ մը, որու ձայնը կրնար լսուիլ պալատին մէջ: Այսքանը բաւական էր, որ բոլորը ճկէին իր առջեւ եւ մատի արանքով նայէին իր վրան բաց քաջագործութիւններու վրայ, թէեւ իր հակառակորդները բերնէ բերան կը տարածէին ժողովուրդի մէջ, անոր ըրած ու չըրած գեղծումները:

Երբ Վահէն, դատաւարութեան ընթացքին սուր հեզնանքով կը ձաղկէր պաշտօնեաներու կատարած գեղծումներն ու աչկարա թալանը, դատաւորը որպէս թէ խիստ նկատողութիւններ կ'ընէր, նոյնիսկ երկու անգամ լռեցուց զայն, բայց ներքուստ կը հրճուէր՝ զինք բամբասողներու խայտառակուիլը տեսնելով: Դատաւորը ներքուստ շատ ուրախ էր, թո՛ղ ժողովուրդը իմանայ, թէ միայն ինքը չէ գեղծարար, կաշառակեր եւ թէ իր միսը ծամողները վարագոյրի ետեւ ինչե՛ր կը կատարէին, որոնց մասին բան մը չէր լսած ժողովուրդը:

Դատաւարութեան ընթացքին, երբ Վահէն այնքան ազատօրէն կը մերկացնէր պաշտօնէութեան կատարած խայտառակութիւնները, բաւ մ'իսկ չէր արտասանած

Թրքական դատարանի կամ դատաւորներու հասցէին: Այս պարագան, թերեւս ակամայ, նպաստաւոր տրամադրութիւն մը ստեղծեց դատաւորի սրտին մէջ: Վահէն թէեւ ասպտամբ անհաւատ շուն մ'էր, բայց իր գործին կուզար: Անոր միջոցով խերը կ'անխճէր իր թշնամիներուն:

Կարելի է երեւակայել դատաւորի սարսափն ու կատաղութիւնը, երբ թուրք փաստաբանի ճառը ընդմիջելով՝ Վահէն սկսաւ իր պաշտպանողականը արտասանել: Ինքնարդարացման ճառ մը չէր այդ: Կարծես մէկէն դերերը փոխուեցան, կարծես Վահէն դատախազի դերը ստանձնեց, իսկ կառավարութիւնը դատապարտեալի աթոռի վրայ նստեցաւ: Փաստերով ասպոցուցանելէ վերջ կառավարական պաշտօնէութեան ապիկարութիւնը, կատարած գողութիւնները, ան խօսեցաւ հայ, քիւրտ եւ թուրք գիւղացի ժողովուրդի անտանելի վիճակի մասին, թէ ինչպէս անոնք հասած էին վիճակի մը, երբ արդէն տան մէջ բրդուճ մը հաց ունենալը մեծ բախտաւորութիւն կը համարէին: Ու դառնալով դէպի դատաւորը, Վահէն ձայնը բարձրացնելով՝ շարունակեց.

— Անշուշտ, զիս այնքան միամիտ չէք կարծեր: Այս հաստատութենէն արդարութիւն սպասելու չափ անխելք մէկը չեմ: Իմ մասին Պոլսէն եկած դատաւիճիւրը քիչ վերջ պիտի կարգայ մեր յարգելի դատաւորը, որ հող բազմած է պարզապէս որպէս խրտուիլակ մը: Եթէ նոյնիսկ այդպէս չլինէր, ի՞նչ արդարութիւն կրնայի սպասել այս հաստատութեան մէջ, որու նախագահը, — ու Վահէն ցուցամատը ուղղեց դէպի նախագահը, — ամէնքդ ալ դիտէք, որ դեռ երկու ամիս առաջ Ատելճավազի արիւնարբու դազան Այի բէկէն երկու հարիւր ոսկի կաշառք ստացաւ եւ...

— Լուցէք...

— ... Բանտի դռները բացաւ անոր առջեւ...

Երկու կողքերուն կանգնած դափթիաները բռնու-

Թեամբ Վահէն տեղը նստեցուցին, մինչ դատարանի մէջ սեղմուած բազմութիւնը բարձրաձայն կը հռհռար:

Երբ կէս ժամ անցնելէ վերջ, կողքի սենեակի դուռը նորէն բացուեցաւ ու դատաւորները որպէս թէ վճիռը տալու համար խորհրդակցելէ վերջ ներս մտան, նախադահլը բարկութենէն դեռ այլայլած դէմքով աթոռը դրաւեց եւ ձեռքի թուղթը աչքէ անցընելով, ակնոցը քթի ծայրը իջեցուց ու ատամներու արանքէն սուլեց:

«Ամբաստանեալ Վահէն, որու անիծապարտ խորհուրդները, Աստուած հեռու ընէ, Ալի Օսմանի վեհապանձ դահուռն դէմ ուղղուած էին, որու ոճրագործ արարքները ամբողջ աշխարհին ծանօթ են, մեր ժողովուրդի խաղաղ եւ անդորր կեանքը վրդովելով՝ քանի մը սրիկաներ շուրջը հաւաքած, ատոնք բոլորն ալ անիծեալ լինին յաւիտեանս յաւիտենից, զէնքով դիմադրած, եւ նորին Վեհափառութեան հաւատարիմ ծառաներէն քոմիսար մը եւ երկու ոստիկաններ սպաննած լինելով, միաձայնութեամբ մահուան կը դատապարտուի, կախաղանի միջոցով»:

Մինչ մեռելային լուսութեան մէջ կը հնչէր նախադահլի բարկութենէ՝ զոպուած ձայնը, Վահէն լուռ, հեղնական ժպիտ մը դէմքին, բաձկոնի կոճակին հետ կը խաղար, կարծես դատաւորի վճիռը իր կեանքին հետ կապ մը չունենար:

Կորսուած, անյոյս կռիւ մ'էր Վահէինը: Երբ ծնկէն վիրաւորուած՝ թուրքերուն ձեռքը ինկաւ, այլեւս պարզ էր, թէ ի՞նչ վախճան կը սպասէ իրեն: Առաջին օրէն իսկ հաշտուած այդ դադափարին հետ, այլեւս չմտածեց իր մասին: Ընդհակառակը, սրտցաւօրէն ընկեր բանտարկեալներու վիճակով հետաքրքրուած՝ կ'աշխատէր ամէն հնարաւոր միջոցով անոնց կացութիւնը թեթեւցնել, յուսալքուածներու տրամադրութիւնը բարձրացնել, հար-

ցաքննութեան ժամանակ տալիք պատասխաննին թելադրել:

Վահէն ու Գարեգինը ազատումի որեւէ յոյս չէին կրնար ունենալ, այդ պատճառով ալ իրենց վրայ վերցուցած էին պատասխանատուութիւնը կատարուած յեղափոխական աքթերու: Այսպիսով կը յուսային մնացածներու վիճակը թեթեւցնել: Հակառակ որ Վահէն ընկերներէն զատուած, զնտանի մը մէջ արգելափակուած էր, բանտարկուելէն օր մը վերջ հնարաւորութիւն ստեղծեց յարարերուելու մնացած բանտարկեալներու հետ, որոնք բանտի զանազան դովուշները նետուած էին: Իսկ քանի մը օր վերջ, բանտի թուրք կարտիագնեքու (պահապան) միջոցով դրսի հետ յարարերութեան մէջ մտաւ: Լքում՝ ներսը, բանտի մէջ, լքում դուրսը, ուր գրեթէ աչքի զարնող մէկը չէր մնացած:

Ժամանակ մը վերջ դրսի հետ ունեցած կապն ալ կը տըրուեցաւ, նամակը ստացող երիտասարդի ձերբակալուելուն պատճառով:

Նախնական հարցաքննութիւնը վերջանալէն յետոյ, բանտի մուտքի մօտ գտնուող զնտանէն դուրս էին բերած Վահէն ու փոխադրած սլարտէզ-բակի վրայ նայող առաջին դովուշը, ուր իրմէ զատ քսանհեհինդ ուրիշ բանտարկեալներ կային: Միեւնոյն բաժանմունքին մէջ կը գտնուէին Եկաւեանը ու չորս ընկերներ, իսկ մնացածները մեծամասնաբար քրտեր էին եւ քրէական յանցանքներու համար բանտարկուած մէկ երկու թուրքեր ու հայեր:

Ընկերները Վահէի դալով անչափ ուրախացած՝ դէպի բակը նայող պատուհանի մօտ տեղ պատրաստեցին անոր համար: Դովուշի թուրքերն ու քրտերն ալ, որոնք այնքա՞ն առասպելական պատմութիւններ լսած էին Վահէի մասին, մեծ յարգանքով ընդունեցին զայն, մանաւանդ որ ձերբակալուելու պահուն երեք մարդ սպաննած լինե-

լու հանգամանքը խոր տպաւորութիւն ձգած էր բանտարկեալներու վրայ :

Կարտիաններու գլխաւորը բարձրահասակ, դաժան մարդ մ'էր : Օրը մէկէ աւելի անգամներ կը շրջէր ղովուռները, կարդադրութիւններ կ'ընէր, կը սաստէր անհնազանդ բանտարկեալները, երբեմն կը ծեծէր, երբ որեւէ խնդրի պատճառով բանտարկեալները իրարու հետ կը կռուէին : Բայց եւ այնպէս քաղաքական բանտարկեալներու հանդէպ վերապահ ընթացք մ'ունէր : Ընչդէ, որ անոնց ալ կը հայհոյէր, ինչպէս միւսներուն, բայց ատկէ անդին չէր անցներ, տանջարան-զնտանին մէջ անոնց կերած ծեծը բաւական համարելով :

Բոլոր բանտարկեալներու մէջ Վահէն առանձնաշքնորհեալ գիրք մը ունէր : Նոյնիսկ սովորական կարտիանները ու իրենց մեծը յարգալից վերաբերմունք մը ունէին անոր հանդէպ, զայն համարելով յեղափոխականներու գլխաւորը :

Օր մը, բանտարկուելէն մօտաւորապէս ամիս մը վերջը, Վահէն անակնկալ կերպով նամակ մը ստացաւ դրսէն, շարժներու յուսահատեցնող լուծիւնէ յետոյ : Կէս օրէն առաջ ղովուռէն ելած, կարտիանի մը ընկերակցութեամբ պէտքարան կ'երթար Վահէն, երբ Սարի Մէհմէտ Աղան, այդպէս էր կարտիաններու մեծին անունը, բակի մէջ հանդիպելով իրենց, սկսաւ հայհոյել կարտիանին, որ այդ առտու իր սենեակին մուտքը մտոցեր էր աւելլ, ու զայն ճամբեց, որ իր սենեակը մաքրէ :

— Քալէ, պիղծ անհաւատ, — վայրագ դէմքը ա'լ աւելի խոփոտելով հրամայեց Մէհմէտ Աղան, հրելով Վահէն որ կանգ առած էր :

Մէհմէտ Աղան կրնկակոխ հետեւեցաւ Վահէին, որ նեղ միջանցքը անցնելով՝ մտաւ փոքր բակ մը : Այդ բակի վրայ կը բացուէին բանտի կարդով շարուած ճեմիչները :

Կարտիաններու գլխաւորը, Վահէի ետեւէն բակը մը-

տաւ եւ գլուխը աջ ու ձախ դարձնելով, երբ վստահ եղաւ որ ուրիշ մարդ չկայ, դօտիի արանքէն տոմսակ մը հանեց ու արագօրէն Վահէի բուռին մէջ սեղմեց :

— Սահադճին տուաւ, — շնջաց Մէհմէտ Աղան :

Վահէն տարակուսած՝ անոր դէմքին կը նայէր, հաստատ չգիտնալով, թէ պէ՞տք է վերցնէր տոմսակը :

— Ես անոր իսս բարեկամն եմ, — Վահէի տատամսիլը նկատելով՝ շարունակեց Մէհմէտ Աղան, — հօրենական բարեկամներ ենք, ինձմէ մի կասկածիր... Եթէ պատասխան ունիս, գրէ՛, ես կը տանիմ... բայց մարդ չտեսնէ գրելը, ոչ ալ այս փառաւրան...

Վահէն տոմսակը գրպանը կոխեց ու մտաւ ճեմիչներէն մէկը, որ ամենէն լուսաւորն էր : Իրարու մէջ հագցըլած երկու տոմսակներ էին : Մէկը հաղիւ երկու տող կը պարունակէր : Վահէն նախ ստորագրութեանը նայեցաւ : Իր ընկերներէն Նշանի ստորագրութիւնը կը կրէր : Տոմսակի կարճ բովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն էր : «Մէհմէտ Աղան հին ծանօթ մ'է : Տարիներ հաւատարմութեամբ մեզի ծառայած : Կրնաս վստահիլ : Նըշան» :

Վահէի աչքերը ուրախութեամբ կայծկլտացին : Նշանի երկտողը կարդալէ վերջ, երբ բազմաթիւ անգամներ ծալուած երկրորդ տոմսակը բացաւ, քիչ մնաց զգացած ուրախութենէն ակամայ բացադանչէր : Աչքերուն չէր կրնար հաւատալ : Շատ բարակ թղթի վրայ, մանր թուանշաններու երկար շարքեր ու տակը՝ Լեւոնի ստորագրութիւնը : Քանի մը վայրկեան կարծես թուանշանները թողթի վրայ կը պարէին. բայց երբ Վահէի յուզումը քիչ մը անցաւ, ան սկսաւ թուանշանները մեծ ուշադրութեամբ կարդալ : Քանի տոմսակի ընթերցումը կը շարունակուէր, Վահէի աչքերը այնքան աւելի կը փայլէին, դէմքը կը ճառագայթէր :

Երբ վերջացուց ընթերցումը, վայրկեան մը երկուք

տոմսակը ձեռքին մէջ պահեց: Յօնքերը կ'իտած, կեդրոնացած հայեացքով՝ ան դրան երկաթէ կղպանքին նայեցաւ, ապա ծանր շարժումով տոմսակը կտոր կտոր ըրաւ ու նետեց ձեմիշի ծակին մէջ:

Երբ դուրս եկաւ, ու Մէհմէտ Աղայի հետ կ'անցնէր փոքր բակէն, Վահէն այլեւս առանց տարակուսանքի դարձաւ անոր ու ըսաւ.

— Գոյլս մատիտ չունէի, կէս օրէ վերջ կ'ուզեմ պատասխան մը գրել... անշուշտ կը տանիս:

— Տանիլը կը տանիմ, բայց դուրս մի ելլեր, մինչեւ որ ես ձեր ղովուչը մտնամ... Պատճառ մը կը գտնամ կարտիանը ճամբելու: Աւելի լաւ է, որ ես քեզի հետ դամ, այդ ձեւով աւելի ապահով կրնաս գրել պատասխանդ ու մարդ ալ չի նկատեր: Պէտք է զբոյժ լինել, եթէ անգամ մը կասկածին, որ քեզ հետ դադանի յարաբերութեան մէջ եմ, զիս պաշտօնանկ կ'ընեն: Տարիներէ ի վեր, ես բանտարկուած յեղափոխականներու եւ Սահադճի Նշանի միջնորդը եղած եմ:

— Հինէ՞ն կը ճանչնաս Նշանը:

— Հօրենական բարեկամներ ենք:

Երբ Վահէն վերադարձաւ իր ղովուչը, սովորական տեղը, պատուհանին մօտ նստաւ, մտածկոտ արտայայտութիւն մը դէմքին վրայ: Կը մտածէր թէ, արդեօ՞ք յայտնէր ընկերներուն Լեւոնէն ստացած նամակի մասին: Այնպիսի պարագաներու մէջ կը գտնուէին, որ փոքր տարածայնութիւն մը, բերնէ վախած անզոյժ խօսք մը կրնար անսպասելի ծանր հետեւանքներ ունենալ: Երկար մտածելէ վերջ, Վահէն վճռեց միայն Եկաւեանին յայտնել, որ պատասխանատու եւ վստահելի ընկեր մ'էր:

Վահէն հաղիւ կէս օրէն վերջ միայն հնարաւորութիւն ունեցաւ Եկաւեանի հետ խօսելու: Երկուքը միասին երկընցած էին Վահէի կասկածելի մաքրութեամբ թաղիքի կտորին վրայ:

— Եկաւեան, առանց իմ կողմս դառնալու, գլուխդ աւելի մօտեցուր ինձի, — կամաց մը շնչաց Վահէն, — շատ կարեւոր տեղեկութիւն մը ունիմ հաղորդելու:

— Որմէ՞, ի՞նչ բանի մասին, — աշխուժով հարցուց Եկաւեանը:

— Հանդարտ, մեր տղայ, ուրիշները կրնան նկատել: Բոլորովին անտարբեր ձեւով մը մտիկ ըրէ: Այս օր, Լեւոնէն նամակ ստացայ...

— Իրա՞ւ, ո՞րտեղ է, — այս անգամ ինքզինը դսպելով հանդարտօրէն հարցուց Եկաւեանը, թէ եւ ուրախութեանէն պատրաստ էր Վահէի վզին վաթթուելու:

— Քաղաք իջած է, — հաղիւ լսելի ձայնով մը շարունակեց Վահէն, — անորոշ կերպով ի՞նչ որ ձեռնարկի մասին կը խօսի... բանտի յատակագիծը կը պահանջէ, եւ մեր ու ընկերներու գտնուած ղովուչներու մասին որոշ տեղեկութիւններ կը պահանջէ:

— Է՛, յետոյ, ուրիշ ի՞նչ նորութիւններ կը հաղորդէ:

— Քանի մը խօսք իր մասին. Գէորգը, Պիժան Կաւաշի կողմը մնացեր են, ինք երկու ընկերներով քաղաք իջած է: Շատ վատ լուրեր քաղաքէն ու շրջականերէն:

— Լա՛ւ, հիմա Լեւոնի դրած նամակին մասին...

— Այո՛, մտիկ ըրէ, Եկաւեան, դու գրեթէ բոլոր ղովուչները գտնուած ես, ցերեկներն ալ աղատօրէն ասոր անոր քով կ'երթաս, կրնաս գէշ աղէկ բան մը պատրաստել... Պէտք է նշանով մը ընդգծել մեր գտնուած ղովուչը, եւ Գարեգինի տեղը: Ձեմ դիտեր ծրարքի էութեան մասին, բայց Լեւոնը մասնաւոր կերպով կը շեշտէ իմ ու Գարեգինի ղովուչները:

— Չ'ըսեր թէ ինչո՞ւ համար է...

— Անշուշտ քէֆի համար չ'ուզեր: Գուրսը բաներ մը կը մտածեն: Կ'ըսէ, տոմսակին պատասխանը երբ ստանայ, մանրամասնօրէն պիտի գրէ եւ մեզի ալ ծանօթացնէ

ծրագրուած ձեռնարկի մանրամասնութիւնները: Գիտես
լեւոնի բնաւորութիւնը, խօսուածքի նման գրելու մէջ ալ
ժուտկալ է:

— Իսկ դու պատասխանեցի՞ր:

— Դեռ ոչ, քիչ վերջը պէտքարան երթալու պատըր-
ուակով պիտի երթամ գրելու...

— Ո՞ւր պիտի երթաս:

— Ճեմիշը: Հոն հնարաւորութիւն կ'ունենամ աղա-
տօրէն գրելու:

— Լաւ տեղ գտեր ես... Ըսենք՝ աւելի ապահով է
քան այս տեղը, հո՛ւս, հազար աչք կայ մեզ դիտող: Ես
ալ հիմա գործի կ'անցնիմ...

— Քանի մը անգամ քայլերովդ չափէ սենեակները
լայնքէն ու երկայնքէն, միջանցքն ալ չմոռնաս, ... Թէեւ
խելքս չի հասնիր թէ բանտի յատակագիծը ի՞նչ բանի
պէտք կ'ընայ դալ...

— Է՛, ո՞վ գիտէ, թերեւս գիշերանց բանտի վրայ
յարձակում մը կը ծրագրեն...

— Այդ պարագային յատակագիծը շատ բանի մը
պէտք չի դար: Ըսենք յարձակումով ներս մտնելը դրեթէ
անկարելի է: Բայց քանի որ կ'ուզեն, պարտաւոր ենք
ձամբել:

— Տէ, ուրեմն ես գործի անցնիմ: Կ'ուզե՞ս որ յայտ-
նեմ Գարեգինին Լեւոնի նամակի մասին:

— Անշուշտ, բայց առայժմ ուրիշ ոչ մէկ ընկերոջ:

Եկաւեանը յօրանջելով տեղէն բարձրացաւ ու դուրս-
չէն դուրս եկաւ: Վահէն սպասեց Սարի Մէհմէտ Աղայի
գալուն, որ չուշացաւ:

Ատկէ վերջ Վահէն ամէն օր հնարաւորութիւն ունե-
ցաւ կանոնաւոր կերպով թղթակցելու Լեւոնի հետ: Եր-
կու օր չանցած, Լեւոնը մանրամասնօրէն դրեց փախուս-
տի ծրագիրը, որ ամէն կերպով գործնական ու հնարաւոր
թուեցաւ Եկաւեանին ու Վահէին:

Բնականաբար, երբ Լեւոնի ձեռնարկի մանրամաս-
նութիւնները իմացան, Վահէն, Եկաւեանը եւ Գարեգինը
լարուած ջղերով հետեւեցան դրսի աշխատանքներուն, ո-
րոնց յաջողութենէն կախուած էր իրենց փրկութիւնը:

Հինգերորդ օրը, ուշ ատեն Եկաւեանն ու Վահէն, կողք
կողքի երկնցած կը պատրաստուէին քնել: Նոյն դովուշի
մէջ գտնուող բանտարկեալները քնած էին արդէն: Երբ
Վահէն գլուխը բարձին դրած՝ աչքերը փակելով փորձեց
քնել, յանկարծ իրեն այնպէս թուեցաւ, որ գետնի տակէն
միօրինակ հարուածներու խուլ տմբոց մը կը լսուէր: Ե-
կաւեանը դեռ քնած չէր: Կամաց մը ընկերը միթեց:

— Մեր տղայ, ահանջդ բարձին փակցուր, տես թէ
գետնի խորքէն աղմուկ մը կը լսե՞ս: Ինծի կը թուի թէ...

— Ձէ, բան չեմ լսեր, — մէկ երկու վայրկեան ու-
շադրութեամբ մտիկ ընելէ վերջ ըսաւ Եկաւեանը:

— Բայց ինծի կը թուի, թէ կը լսեմ կանոնաւոր հար-
ուածներու օտարոտի խուլ ձայն մը:

— Կատուն երազին մէջ ձկան փուշ կը տեսնէ, — քթի
տակէն ծիծաղելով պատասխանեց Եկաւեանը ու վերմա-
կը գլխուն քաշած՝ աչքերը դոցեց:

Այդ գիշեր Վահէն չկրցաւ քնել: Երկար ժամանակ
լսողութիւնը սրած՝ մտիկ կ'ընէր: Երբեմն կը թուէր թէ
լսած տմբիւնները կը դադարէին, երբեմն ալ այնքան ո-
րոշ եւ բարձր կը լսուէին, որ Վահէն արդէն բացարձա-
կապէս վստահ էր, որ գետնի տակ, թերեւս վեց եօթ ար-
շին հեռաւորութեան վրայ, իր ընկերները փախուստի
անցք մը կը փորէին իրենց համար: Հիմա, արդէն խուլ
տմբոցը շատ որոշ կերպով կը լսուէր:

— Եկաւեան, հը՛, մեր տղայ, — ու Վահէն փորձեց
ընկերը արթնցնել:

Ընկերը անիմաստ բառեր արտասանելով՝ միւս կող-
քին վրայ դարձաւ:

— Եկաւեան, — ու այս անգամ արդէն ուժեղ կերպով

ընկերոջ թեւը ցնցեց Վահէն, — Եկաւեան, արթնցիր:

— Հը՛... .

— Տօ, դահրումար, — չրթունքը ընկերոջ ականջին մօտեցուցած՝ շնջաց Վահէն, — մէկ աչքերդ բաց, տնաքանդ:

— Հը՛, ի՞նչ կայ... տօ, չես ձգեր որ քնեմ... .

— Մտիկ ըրէ, մեր տղայ, հիմա ի՞նչ կ'ըսես, դետնի տակէն բոմբիւններ կը լսուի՞ն թէ ոչ:

Եկաւեանը աչքերը բացաւ, ինքզինքը ցնցեց ու բոլորովին արթնցած՝ ականջը դրաւ բարձին վրայ: Կասկած չկար այլեւս, որոշապէս կը լսուէին հարուածներու բուրբ տմբիւնը:

— Ըհըմ, մեր տղաքը գործի վրայ են, — ուրախացած ըսաւ Եկաւեանը, — ինչպէս կ'երեւի, ճիշդ մեր ղովուշի տակ կ'աշխատին... .

— Թերեւս, դժուար է ըսել, բայց այս ձայնը զիս շատ կը մտահոգէ... . Եթէ աւելի մօտենալու լինին, մենք որ կը լսենք, պատահաբար արթուն մնացող բանտարկեալ մը կամ նոյնիսկ կարտիան մըն ալ կրնայ լսել:

— Ուրեմն, պէտք է անմիջապէս դրել Լեւոնին, որ շատ աղմուկ չհանեն... .

— Այսինքն՝ չաշխատին, — հեգնօրէն ընկերոջ խօսքը կտրեց Վահէն, — չէ, սիրելիս, անոնք ցերեկները անկարող աշխատելու՝ գիշերով կուգան, իսկ երբ քլաւնկը հողին կը դարնեն, անշուշտ ձայն կուտայ... . մենք պէտք է ինքներս ճար մը մտածենք այդ մասին:

— Ուրեմն... .

— Մտածենք, թերեւս միջոց մը գտնենք ձայնը խափանելու:

Վահէն եւ Եկաւեանը այլեւս անկարող քնելու, ուշադրութեամբ կը հետեւէին ներքեւէն եկած տմբիւններու միօրինակ ձայնին:

Լոյսը բացուելէն ժամ մը առաջ, ստորերկրեայ ձայ-

նը դադրեցաւ: Ինչպէս ընթերցողը գիտէ, Մելօն ու ընկերը դեռ լոյսը չբացուած՝ աշխատանքը կը դադրեցնէին ու կը մեկնէին Այգեստան:

— Կարծես ձայները դադրեցան, — ատեն մը ուշադրութեամբ մտիկ ընելէ վերջ ըսաւ Եկաւեանը:

— Անշուշտ, լոյսը բացուելու մօտ է:

Յաջորդ առտու Վահէն գրեց Լեւոնին հետզհետէ աճող աղմուկի մասին ու թելադրեց, որ աշխատանքը դադրեցնեն կէս գիշերէն ժամ մը վերջը, իսկ մինչեւ այդ ժամը, դետնափորէն լսող ձայները անլսելի դարձնելու հոգը իր վրայ առաւ:

Վահէն ինքնաշատուկ միջոցի մը դիմեց գետնափորէն եկող աղմուկը անլսելի դարձնելու համար, ղովուշին մէջ մինչեւ ուշ գիշեր կենդանութիւն պահելով: Ամէն ղովուշի սրճեփն ունէր: Դրսէն խոշոր դուլիս մը ոռոսական շաքար ապսպարեց, եւ մթնելէն վերջ փոքր մուրճով մը սկսաւ շաքարը մանրել ու ղովուշի բանտարկեալները հիւրասիրել թէյով, հաց ու պանիրով:

— Մահուան դատապարտուած մարդը, — ծիծաղելով կ'ըսէր Վահէն բանտարկեալներուն, — իր ողջութեանը պարտաւոր է հողեհացի մասին մտածել: Կախուելէն վերջ ո՞վ է քելեխի մասին մտածողը... . Ձեմ ուզեր պարտական մնալ... . էս քանի օրս բոլորդ ալ իմ հիւրս էք:

Թըք, թըք, թըք, միօրինակ կերպով կ'իջնար շաքարը ջարդող փոքր մուրճը, մինչ Վահէն ընկերները կենդանի խօսակցութիւն մը մէջտեղ նետած՝ կը զբաղեցընէին բանտարկեալները: Վահէն թէյի պատմութիւնը տարածուեցաւ բանտի միւս ղովուշներուն մէջ ալ: Ագրեցիկ բանտարկեալներէն շատեր, մանաւանդ քլարտ բէկեր, աղաներ կամ յայտնի աւազակներ, որոնք առանձնաշնորհեալ գիրք մը ունէին, իրիկունները սկսան հաւաքուիլ Վահէնի գտնուած ղովուշը, ժամանակ անցընելու համար: Կախաղանի դատապարտուած լինելու հանգա-

մանքը, անոր անցեալը, ձերբակալուած ժամանակ երեք մարդ տեղն ու տեղը սպաննելը մասնաւոր դիրք մը տւած էին Վահէին:

Ընդհանրապէս բանտի մէջ դըսի աշխարհի թշնամութիւնները վերջ կը գտնան: Հոն մարդու մը անձնական արժանիքները կը դնահատուին ամէն բանէ առաջ: Թուրքը, բայց մանաւանդ քիւրտը պաշտամունք մը ունի խիզախ, քաջ մարդու հանդէպ: Ոչ մէկ ժողովուրդ այնքան անվերապահօրէն կ'երգէ թշնամի մը քաջութիւնը, ինչպէս քիւրտը: Վերցուցէք քիւրտ ժողովուրդի երգերը, որոնք գրեթէ բայառարար նուիրուած են միջցեղային կըռիւներուն: Անոնց մէջ, անշուշտ անէծք ու հայհոյանք կայ թշնամիի հասցէին ուղղուած, բայց երբեք ուրացում, երբեք անոր քաջութիւնը, տղամարդութիւնը վարագուրելու ճիգ:

1890-էն վերջ, քիւրտը որ առաջ վարժուած էր այնքան արհամարհանքով նայելու վախկոտ Ֆլայի վրայ, կամայ ակամայ սկսաւ հայդուկի դովքը հիւսել իր երգերուն մէջ, երբ հայ յեղափոխական շարժումի շնորհիւ հրապարակ իջան հայ մարտական խմբերը: Քիւրտ աղջիկը եւ ճահիլ հարսը երգեցին իրենց ցեղի կտրիճներու շարքին հայ յեղափոխական կտրիճներն ալ, անիծելով դովեցին անոնց տղամարդութիւնը, վայելով փառաբանեցին անոնց արձակած զնդակներու անշեղութիւնը:

Վահէն բանտարկութենէն առաջ արդէն դէմք մ'էր քրտական աշխարհին մէջ: Գիտէին անոր անունը, ունեցած կռիւները, ու մէկէ աւելի երգերու մէջ քիւրտ աղջիկները կ'երգէին անոր դեղեցիկ դէմքը, սեւ աչքերը, արձակած զնդակը, որ «մութին մէջ իսկ թշնամին կը գտնար», անոր խելագար քաջութիւնը, որ ոչ մէկ սահման կը ճանչնար:

Երբ զինուորական հիւանդանոցէն բանտը փոխադրեցին հազիւ բժշկուած Վահէն, բանտարկեալ քիւրտերը

մասնաւոր յարգանքով շրջապատեցին յեղափոխութեան «մեծը» ու քիչ ատենէն անոր դրաւող հմայքի ազդեցութեան տակ ինկան: Վայ թէ կարտիան մը կոպիտ վերաբերմունք ցոյց տար Վահէի հանդէպ. անկիւն մը սեղմած, տիկոց մը կը քաշէին ու անշուշտ կարտիանը երկրորդ անգամ չէր փորձուեր նման վերաբերմունք մը ցոյց տալ: Վահէն ալ իր կարգին հաշտարարի դեր կը կատարէր բանտին մէջ: Երբեմն երկու ղովուշներու մէջ չնչին պատճառով կռիւ մը ծագելով, մինչեւ արիւնահեղութեան կը հասնէր: Բաւական էր որ Վահէն դար: Կողմերը անմիջապէս կռիւը կը դադարեցնէին, իրենց դատը անոր յանձնելով:

Թէյի հիւրասիրութեան նորութիւնը հնարեւէն վերջ, երբ ուշ ատեն ուրիշ ղովուշներու հիւրերը կը քաշուէին ու Վահէի սենեակի մէջ գտնուողներն ալ կ'երկնային քնելու, ստորերկրեայ թնդիւնները արդէն դադրած կը լինէին:

Այսպէս անցան հինգ օրեր, մինչեւ որ Լեւոնը իմացուց, թէ ամէն ինչ պատրաստ է, թէ փորողները արդէն հասած են ղովուշի տախտակամածի տակ, ուրկէ շատ որոշ կերպով կը լսեն Վահէի մուրճի հանած ձայնը: Այդ միեւնոյն նամակով Լեւոնը փախուստի ժամը կ'որոշէր յաջորդ գիշեր կէս գիշերէն ժամ մը անցած, ու որոշ նախազուշական հրահանգներ կուտար ընկերներուն:

Ապրիլ ամսու երկուքն էր, իսկ փախուստը տեղի պիտի ունենար երեքին:

Հայաստանի երկարաշունչ ձմեռը վերջին օրերը կ'ապրէր: Լեւոնը միապաղաղ ձիւնը տարածուած սաւանի մը նման, վերէն վար երկնցող սեւութեան երկար շերտեր կը ցուցադրէր: Դաշտերու ձիւնը կ'իսովին հալած, թումբերու տակ կամ արեւ չտեսնող փոսերու մէջ օրհասական կռիւ մը կը մղէր արեւի տաք ճառագայթներու կամ հարաւի տաք քաթիին դէմ, որ անոնց վրայի

չերտերը լիզելով կ'անցնէր, ջրոտելով դիզուած ձիւնը: Գարնանային տաք անձրեւներն ալ պակասը կը լրացնէին: Ամենաուշը, սպրիլի տասնեւհինգին գարնան աւետարեք արագիւնները պիտի գային հարաւի տաք երկիրներէն, ե- կեղեցիի մը դժբէթին վրայ, կամ մենաւոր ծառի մը ճիւղերուն՝ աշնան ձգած բոյները վերանորոգելու:

Լեւոնի նամակը ստացած գիշեր, ոչ Վահէն եւ ոչ ալ Եկաւեանը կրցան քնել: Օր մը միայն կը դատէր զիրենք ազատ աշխարհ դուրս գալէ, երբ բանտի չորս պատերէն դուրս ինկած՝ իրենց սովորական կեանքին մէջ պիտի մխրճուէին: Այդ գիշեր երկուքն ալ անհանգիստ քնով մը քնացան: Գետնախոր անցքէն լսուող սովորական աղմուկը դադրած էր:

Այդ գիշեր կարծես վերջ պիտի չունենար: Վերջապէս լոյսը ծագեցաւ ու ամսամած երկինք մը, անընդհատ սկսաւ անձրեւել:

Վահէն՝ բանտարկութեան շրջանին հոգեկան հաւասարակշռութիւնը պահած՝ գրեթէ անտարբերութեամբ դիմաւորած էր բանտի դրկանքներն ու ապագան, որու ինչ վերջաւորութիւն ունենալու մասին պատրանք մը չէր ունեցած երբեք: Սակայն, Լեւոնի առաջին նամակէն, մանաւանդ գետնախոր անցքի դովուշի տակ հասնելէն վերջ, Վահէն հետզհետէ ջղայնանալ սկսաւ: Առաջ՝ հաշտուած էր կատարուելիքի հետ: Վերջէն, երբ ամէն կողմէ յոյսի դանբեր դոցուեցան, յանկարծ Լեւոնը մէջտեղ ելաւ: Նոր ծագած յոյսի հետ, սպասումի օրերը ծանրօրէն բեռնաւորեցին ջղերը, որոնք երկաթէ պարաններու նման ձգտուած էին:

Այդ օր, երբ մութը իյնալէն վերջ, անգամ մ'ալ սիրած Վասպուրականի հողին վրայ պիտի կանգնէր որպէս կապանքներէ ազատուած մարդ մը, Վահէն՝ բոլորովին անհանգարտ՝ չէր կարող տեղ մը նստած մնալ: Եթէ բանտարկեալ ընկերները քիչ մը աւելի դիտելու կարող անձ-

նաւորութիւններ լինէին, պիտի գուշակէին, որ ան ահագին հոգեկան փոթորիկ մը կ'ապրի: Նստած տեղը անհանգիստ, մէկ ոտքի կ'ելէր, մէկ դուրս կուգար միւս դովուշները այցելելու, ուր առանց երկար նստելու, նորէն կը վերադառնար, ու դէպի բակը նայող պատուհանին քով կանգնելով, մատներով կը թմբկահարէր ասպակին:

Եկաւեանը, բնաւորութեամբ աւելի սառնարիւն, հազիւ տեղէն կը շարժէր: Երբեմն միայն դուրսը վերցնելով՝ հայեացքը դուրս կը նետէր պատուհանէն մաղուող անձրեւը դիտելու, որ կարծես վերջ պիտի չունենար:

Ծայրայեղ դաղտնապահութիւն պահելով՝ Վահէն ու Եկաւեանը որոշած էին մինչեւ երեկոյ ոչ ոքի, նոյնիսկ մօտիկ ընկերներու չյայտնել փախուստի մասին: Երեկոյան, երբ մթնէր, բանտարկուած ընկերներէն ամենավտանդուածները պիտի համախմբէին իրենց դովուշը: Խնդիրքով կամ կաշառքով պիտի աշխատէին, որ անոնք այդ գիշեր իրենց հետ մնան: Այդ մասին, Վահէն վրստահ էր, որ կարտիաններու գլխաւորը, Սարի Մէհմէտ Աղան դժուարութիւն մը պիտի չհանէր, մանաւանդ երբ մէծիտ մը սեղմէր անոր ափին մէջ:

— Փորձէ քիչ մը հանգստանալ, — Վահէին թելադրեց Եկաւեանը, երբ կէս օրուան ճաշէն վերջ, իրարու կողքի երկնցան, — ամբողջ ցերեկը վայրկեան մը հանդարտ նստիլդ չտեսայ: Ո՞վ դիտէ, թէ դուրս գալերնու ի՞նչ բանի կրնանք հանդիպիլ, պէտք է կազմ ու պատրաստ լինիլ...

— Ճիշդ է, բայց չեմ կրնար... կարծես ծանր թաթ մը սիրտս ափին մէջ առած կը սեղմէ...

— Ի՞հ, շուտով կ'անցնի... քանի մը ժամ մնաց... էս անձրեւն ալ...

— Ո՞վ դիտէ, թերեւս անձրեւը աւելի լաւ է... փողոցները ամայի կը լինին...

— Լեւոնը պիտի դա՞յ...

— Անշուշտ, կը գրէ, թէ բացի Մելոյէն, ինք չորս ընկերներով կամուրջի մօտ պիտի լինի: Թէեւ կարծեմ աւելի լաւ պիտի լինէր, եթէ չգային... Մէկ էս ծակէն դուրս գայինք, առանց դժուարութեան ինքզինքնիս Այգեատան կրնայինք նետել...

— Կը կարծե՞ս թէ ժամանակ է ընկերները մէկտեղելու:

— Դեռ ոչ, քիչ մ'ալ սպասենք:

Հազիւ մթնելուն ժամ մը մնացած էր: Բանտարկեալները զանազան դովուշներու մէջ համախմբուած՝ իրենց սովորական կեանքը կ'ապրէին: Յանկարծ, բանտի նեղ միջանցքին մէջ, ծանր քայլերու բազմաթիւ դուրիւններ լսուեցան: Վահէի դովուշին մէջ, ուր բանտարկեալները զանազան խմբակներու բաժնուած թուղթ կը խաղային եւ կամ սովորական խօսակցութեամբ բռնուած էին, դրսէն լսուած ազմուկի հետեւանքով տիրեց արտասովոր լուսթիւն մը: Ամէնքը տարակուսանքով իրարու կը նայէին: Մօտեցող ծանր քայլերու հետ կը լսուէր իրարու քսուող գէնքերու մետաղական չոր ձայնը: Կասկած չկար, որ անյայտ պատճառով մը, յանկարծ զօրքը կը լեցուէր բանտի մէջ: Ըսենք՝ այդ սովորական երեւոյթ մ'էր բանտին մէջ, ուր երբեմն արիւնհասեղ կռիւներ տեղի կ'ունենային, ու կարտիանները անկարող կարգ պահպանելու, բանտապետը կը դիմէր զօրքի օժանդակութեան: Բայց այդ օրը բանտին մէջ ոչ մէկ արտասովոր դէպք պատահած էր արդարացիելու համար զօրքի յանկարծական երեւումը...

— Վաստակաւ կողմէս զօրքի գալէն, — ընկերոջ ականջին շնորհակց Վահէն:

— Թերեւս սովորական խուզարկութիւն մը պիտի կատարեն բանտի մէջ: Տարին մէկ քանի անգամ այդ տեղի կ'ունենայ:

Վահէն պատասխանելու ժամանակ իսկ չունեցաւ: Յանկարծ շնորհակցով դովուշի ծանր դուռը բացուեցաւ ու

սեմին վրայ երեւցաւ սպայ մը եւ անոր հետեւը կանգնած բազմաթիւ զինուորներ, սուինաւոր հրացանները պատրաստ բռնած: Բանտապետը, դաժան ալպանացի մը, որմէ կը սարսափէին բանտարկեալները, քայլ մը առաջ գալով՝ հրամայեց.

— Ոչ ոք իրեղէններուն ձեռք չզարնէ: Անմիջապէս ոտքի կանգնեցէք...

— Գեղի ըսի որ սովորական խուզարկութիւն մը պիտի կատարեն, — շնորհակց Եկաւեանը:

Վահէն տարակուսած, ուսերը թօթուեց: Ծովը ինկնողը անձրեւէն չի վախնար, իւրովի մտածեց Վահէն ու Եկաւեանի հետ բարձրացաւ նստած տեղէն:

Բանտարկեալները առանց ձայն ծալտուն հանելու՝ կատարեցին բանտապետի հրամանը:

— Հիմա էս ծայրէն սկսած, — բանտապետը աջ կողմը կանգնածները մատնանշելով, — իրարու հետեւէ դուրս, միջանցքը ելէք: Ծան որդի, խօսիլը արգելուած է, — ձեռքի մտրակը քիւրտի մը գլխուն իջեցնելով՝ գոռաց բանտապետը. — Հայտէ՛, մի տնտնաք, արագ արագ իրարու հետեւէ դուրս եկէք:

Մինչ դովուշի մէջ գտնուող բանտարկեալները դուրս կողպային, միջանցքի մէջ գտնուող զօրքը զանոնք անմիջապէս շրջապատեց: Միւս դովուշներու մէջ, մեռելային լուսթիւն մը կը տիրէր: Բանտապետն ու սպան, երկու հիւս արհեստաւորներով միասին, դատարկուած դովուշի մէջ մնացին, դուռը վրայ բերելով: Քիչ անցած, ներսէն սկսան լսուիլ խուզ հարուածներու արձագանքը: Ուրաքի եւ սղոցելու ձայներէն պարզ էր, որ ներսը, տախտակամածի մէկ մասը կը քանդէին:

Վահէն յուսահատ դառնութեամբ Եկաւեանին նայեցաւ: Անկասկածելի էր, որ կառավարութիւնը վերջին ժամուն գաղտնիքը կերպով մը երեւան հանած՝ եկած էր

տեղին վրայ ստուգելու: Բախտի չար հեղնանքով, անձ-
բեւը փախուստի ամէն յոյս կը մեռցնէր:

Վահէն, որ ամբողջ օրը այնքան ջլային եւ անհան-
դարտ ժամեր անցուց, երբ արդէն համոզուեցաւ որ անց-
քի դադարները պարզուած է, եւ փախուստի հարցը վեր-
ջացած, զարմանալի հողեփոխութեամբ մը, բոլորովին
հանդարտեցաւ, լարուած ջղերը հանդստացան ու ամէն
օրուան նման սովորական տրամադրութիւն մը զգաց իր
մէջ: Յուսարեկուած, բայց անդորր վճռականութիւն մը
եկաւ վրան. ինքն իր կամքին, իր ջիղերուն տէրն էր
այլեւս:

Երբ անցքի բերանը բանալէ վերջ, սպայի ընկերակ-
ցութեամբ բանտապետը դուրս եկաւ զովուշէն, կատաղի
աչքերը ոլորելով մօտեցաւ եւ բռունցքի ուժեղ հարուած
մը իջեցուց Վահէի կողին՝ ատամներու արանքէն սուլե-
լով:

— Խնդր անհաւատ. ես քու հողիդ պիտի հանեմ,
չուն շան որդի... բոլոր հայ շները գատեցէք, — հրամա-
յեց կարտիաններուն, — ու տարէք իմ սենեակս, ես հիմա
կուգամ: Մնացածները նորէն լեցուցէք զովուշը, եւ ձեզ-
նէ երկուքը ամբողջ գիշեր թող մնան բանտարկեալներու
հետ:

Վահէն, Եկաւեանը եւ ուրիշ չորս հայեր, որոնք մի-
եւնոյն զովուշին մէջ բանտուած էին, ամէն կողմէ շրջա-
սպատուած գինուորներով՝ առաջնորդուեցան բանտի
մուտքի աջ կողմը դռնուող բանտապետի բնակարանը:
Երկու ընդարձակ սենեակներէ բաղկացած էր այդ շէնքը:
Մէջ շէնքի առջեւ նեղ ու երկայն միջանցք մը կ'երկարէր,
որու ձախ կողմին վրայ կը գտնուէին բանտի հինգ հատ
զնտաններ, որոնցմէ չորրորդը կը գործածուէր որպէս
տանջարան՝ բանտարկեալները խոստովանեցնելու հա-
մար:

Երբ Վահէն ու ընկերները բանտապետի սենեակը

մտցուցին, Սարի Մէհմէտ Աղան, կարտիաններու գըլ-
խաւորը, հոն կը գտնուէր: Անոր սովորաբար դաժան
դէմքը մեղմացած՝ նոյնիսկ ակամայ գուլթ, ախոսսանք
կ'արտայայտէր: Տխրութեամբ հայեացքը անդին դար-
ձուց, երբ Վահէի աչքերը իր աչքերուն հանդիպեցան:

Քիչ վերջը, ներս մտան բանտապետն ու սպան, երեք
չորս կարտիաններու հետ միասին: Բանտապետի արիւ-
նով լեցուած աչքերը կանգ առին Վահէի դէմքին վրայ:

— Է՛, Վահէ էֆէնտի, ուրեմն մեր սիրալիբ հիւրա-
սիրութենէն դժգոհ էք, — հեղնօրէն խօսքը Վահէին ուղ-
ղեց բանտապետը, — կ'երեւի, առանց մնաք բարով ալ
ըսելու այս գիշեր պիտի չուէիք... Հը՞... չունշան որդի,
առջեւս շիտակ կանգնէ... շիտակ կանգնէ կ'ըսեմ... Հի-
մա քիչ մը խօսելիք ունիմ հետդ... Վնաս չունի, էս ըն-
կերներն ալ թող ներկայ լինին, որ լսեն թէ իրենց մեծը,
ինչպէ՞ս գաղտնիք մը կրնայ պահել... Է՛, հիմա, Վահէ
էֆէնտի, որ ձեր փախուստը ջուրը ինկաւ, դէմ դիմաց
քիչ մը խօսինք: Երկար բարակ խօսելու պէտք չկայ. հոս
խաղ խնդումի համար չեմ բերած քեզ: Զեր դրսի գործա-
կիցներուն անունները յայտնէ տեսնանք...

— Գործակից, ի՞նչ բանի գործակից, — բոլորովին
հանդարտօրէն հարցուց Վահէն՝ ուղիղ բանտապետի աչ-
քերուն նայելով, — շիտակը, միտքդ չեմ հասկնար, շատ
խորհրդաւոր կերպով կը խօսիս:

— Օ՛, լաւ, շատ լաւ կը հասկնաս միտքս, — ու բան-
տապետը բարկութեամբ տեղէն բարձրացաւ, — անհաւա-
տի լակոտ, քեզմէ շատ աւելի յամառ մարդիկ խօսեցու-
ցեր եմ. պողպատի նման ամուր մարդիկ ներս մտած են
այս սենեակէն, ու մոմի նման կակղցած դուրս ելած:

— Բայց ես խօսելու պատրաստ եմ, — նրբօրէն հեղ-
նեց Վահէն, — եթէ միայն գիտնամ, թէ ի՞նչ բանի մասին
կ'ուզես որ խօսիմ: Ես ընդհանրապէս խօսիլը կը սիրեմ...

Եթէ չես հաւատար, հարցուր դատաւորին, դատարանի մէջ ես պէտք եղածը...

— Զա՛յնդ, — ոռնաց կաս-կարմիր կտրած բանտապետը, Վահէի ակնարկութենէն խայթուած, — հոս դատարանի սրահը չէ, եւ ոչ ալ դրսէն մարդիկ կան. էդ լեզուդ քէօքէն դուրս կը քաշեմ եւ շներուն կը նետեմ: Մէհմէտ Ալա, Ֆալախկան սա շանը ոտքերուն անցուր, տեսնեմ: Չես խոստովանիր, հա՞, ես քեզի այնպէս մ խօսել տամ, որ պապդ ալ գերեզմանին մէջ դարմանայ...

Կարտիաններէն մէկը սենեակի անկիւնէն Փալախկան վերցնելով մօտեցաւ, ուրիշ երկուքը պառկեցուցին Վահէն, ու կօշիկները հանելով՝ ոտքերը անցուցին Փալախկայի մէջ ու չուանը պրկեցին:

Սպան որ մինչ այդ պարզ հանդիսատեսի դիրք բռնած էր, մօտեցաւ մէջքի վրայ պառկած Վահէին, ու որպէս թէ կարեկցելով անոր վիճակին՝ ըսաւ.

— Վահէ էֆէնտի, կը տեսնէք որ հասարակ չարագործի մը նման ծեծ պիտի ուտէք. ոչ ձեր դիրքին, ոչ ձեր անունին կը վայելէ այս վիճակը: Մեծ բան մը չէ ըսելիքնիդ, ամէնունը տալու պէտք չկայ, տուէք ձեր դրսի գործակիցներէն մէկ երկուքին անունը: Այդքանով մենք կը գոհանանք, դուք ալ, մենք ալ կ'ազատինք այս ցաւալի անհրաժեշտութենէն...

— Շատ ղրածուած եմ, — հեղնօրէն ծիծաղեցաւ Վահէն, — անշուշտ ձերը աւելի ցաւալի վիճակ մ'է քան թէ իմս: Թերեւս ձեր փափուկ սիրտը չի դիմանար այս հանդէսին ականատես վկայ մը լինելու, բայց նայեցէք՝ մեր բարեկամ բանտապետը ինչպէս ոգեւորուած թեւերը վեր կը սոթթէ...

— Բաւակա՛ն է, — սպան մէկ կողմ առնելով, Վահէին մօտեցաւ բանտապետը, — շատ խօսք չ'ուզեր, իմ բնաւորութիւնս առանց երկար բարակ խօսքի գործ տես-

նալն է: Վերջին անգամ լինելով կը հարցնեմ, դրսի համախոհներու անունները պիտի տա՞մ թէ ոչ...

— Ո՞ր համախոհներու մասին է խօսքդ, ես հաղարաւոր համախոհներ ունեցեր եմ...

Բանտապետի բռնած կաղնի փայտէ մահակը վեր բարձրացաւ ու սարսափելի թափով վար իջաւ Վահէի մերկ ոտքերուն վրայ՝ խուլ ձայն մը հանելով: Ներկաները շունչերնին բռնեցին:

Վահէն ամբողջ մարմնով ցնցուեցաւ, դէմքին կաթիլ մը արիւն չմնաց. ատամները պինդ սեղմած, թակարդը ինկած գաղանի մը վայրագ հայեացքով նայեցաւ բանտապետին:

— Պիտի չխօսի՞ս, պիտի չխօսի՞ս, — ինքնիրմէ ելած կը կրկնէր բանտապետը՝ անընդհատ հարուածներ լեզնէնելով Վահէի ոտքերուն:

Միայն երկրորդ հարուածի ժամանակ ակամայ ձիջ մը արձակեց Վահէն: Մինչ բանտապետը հարուած հարուածի ետեւէն կը տեղացնէր, Վահէի գլուխը մէկ կողմի վրայ ինկաւ, ու նուազած՝ աչքերը գոցուեցան:

Ոչ մէկ ազդ այնքան հմտօրէն զարգացուցած է տանջելու արհեստը, որքան թուրքը: Տանջանքը մասնադիտական նրբութեան հասցուցած՝ ան դիտէ լաւագոյն կերպով գործադրել զայն, միեւնոյն ժամանակ ուշադիր՝ որ զոհը յանկարծ ձեռքէն չսլքնի, անժամանակ մեռցնելով: Հազիւ թէ Վահէն անզգայ դիակի նման նուազած ինկաւ, բանտապետը հարուածները դադրեցնելով՝ հրամայեց կարտիաններուն ուշքի բերել Վահէն:

Խոր տքոցով մը Վահէն աչքերը բացաւ: Նախ չհասկըցաւ, թէ ո՞ւր կը գտնուէր, ի՞նչ էր պատահած իրեն հետ: Շճմած հայեացքը դարձուց սենեակի մէջ գտնուողներուն, ու աչքերը կանգ առին բանտապետի դէմքին: Մահակը ձեռքը, որսին վրայ ցատկելու պատրաստ դա-

զանի մը դիրքով կանգնած՝ բանտապետը անօթի աչքերը ուղղած էր գետինը պառկած Վահէին վրայ:

— Հը՛, պիտի խօսի՞ս, — մահակը բարձրացնելով սպառնաց բանտապետը:

— Աստուածդ սիրես բաւական է, — նորէն մէջ ինկաւ սպան, որպէս թէ սաստիկ կարեկցելով բանտարկեալին, — ալ բաւական է, անշուշտ Վահէ էֆէնտին գիտցածը պիտի ըսէ:

— Պիտի խօսի՞ս թէ չէ, — մահակը սպառնալին շարժելով կրկնեց բանտապետը:

— Ծանրմ, վայրկեան մը համբերէ, — միջամտեց ըսպան, — ժամանակ տուր որ ինքզինքը գտնայ: Մեծ բան մը չէ, մէկ երկու անուն կուտայ եւ խնդիրը կը լմնայ: Անանկ չէ՞ մի, Վահէ էֆէնտի:

Վահէն ինքզինքը գտած էր: Վայրկեան մը երկուք նայեցաւ սպայի ու բանտապետի դէմքերուն, հեզնօրէն ժպտաց, ու հազիւ լսելի ձայնով մրմնջեց.

— Ծեծը շարունակեցէք...

— Զէ՛, ծեծը բաւական է, չո՛ւն, ֆալախկան հանեցէք ոտքերէն... Մէհմէտ Աղա, շիշերը կրակը դիր, լաւ մը կարմրցուր: Հիմա քեզի կը խօսեցնեմ... Հա՛, անհաւատի տղաքներ, — դարձաւ միւս բանտարկեալներուն, որոնք սենեակի մէկ անկիւնը քարէ արձաններու նման սահմուկած հանդիսատես կը լինէին այդ տեսարանին, — հա՛, դուք ալ լաւ նայեցէք, շուտով կարգը ձեզի պիտի դայ, ողջ ողջ պիտի տաղեմ ձեզի աւանակներու նման:

Եկաւեանն ու միւս բանտարկեալները անկիւն մը սեղմուած՝ լուռ ականատես էին Վահէի ծեծին: Զինուորներով շրջապատուած, անկարող իրենց ընկերոջ օգնելու՝ անոնք կը սպասէին իրենց հերթին, որ պիտի չուշանար: Վահէի թեւերը մտած՝ երկու կարտիաններ դայն ոտքի հանեցին: Ոտքերու տակերը ուռած, անկարող ա-

նոնց վրայ կոխելու, Վահէն կոնակը տուաւ պատին, մարմնի ծանրութիւնը կրունկներուն վրայ պահելով:

Կարտիան մը կրակարանի վրայ ծած՝ երկաթէ շիշերը կը տաքցնէր: Սպան ու բանտապետը անկիւն մը քաշուած՝ ցած ձայնով իրարու հետ կը խօսակցէին: Անոնց խօսակցութենէն ինչպէս կ'երեւէր, անհամաձայնութիւն մը կար երկուքին մէջ: Սպան ջղազրգիւ ձեւով մը, կ'ուզէր բան մը հասկցնել բանտապետին, որ սակայն կամ չէր հասկնար եւ կամ կը յամառէր իր խօսքին վրայ: Մէհմէտ Աղան, մէկըի քաշուած, աչքի պոչով Վահէին կը նայէր դպացած վիշտը ծածկել ջանալով: Մէհմէտ Աղան, վերջի ժամանակները իրօք կապուած կը զգար այդ անհաւատ երիտասարդին, որ այնքա՛ն աղնուական եւ մեծահոգի վերաբերմունք մ'ունէր բոլոր բանտարկեալներու եւ իրեն հանդէպ:

— Ծօ՛, շիշերը չտաքցա՞ն դեռ, — ատեն մը վերջ սպայի քովէն հեռանալով, խօսքը կրակարանի քով գտնուող կարտիանին ուղղելով՝ դռաց բանտապետը:

— Հա՛, հա կարմրեցան...

— Հատ մը տուր տեսնեմ, սա շանը փանթուոնն ու վարտիկը վար իջեցուցէք...

Վահէն սարսափելի ծեծէն վերջ շարժելու կարողութիւն իսկ չունէր: Գլուխը կուրծքին ինկած էր: Կուրծքը ծանր ծանր կը բարձրանար ու կ'իջնար: Անզօր կատաղութեամբ լեցուած, շրթները արիւնքելու աստիճան կը կծուէր, ինքզինքը չկորսնցնելու համար:

Երբ կարտիանները Վահէի տաբատն ու վարտիկը վար քաշեցին, սենեակի մէջ այնպիսի քար լուռութիւն մը տիրեց, որ ներկաներէն ոչ ոք կը համարձակէր ազատօրէն շնչել:

— Տեսնենք թէ հիմա ալ պիտի լու՞ս:

Բանտապետը շիկացած շամփուրը ձեռքը յառաջա-

ցաւ, ու սաղայէլական ծիծաղով մը՝ գլուխը մօտեցուց Վահէի դէմքին:

— Տեսնենք հիմա ալ պիտի լռե՞ս, — հեղնօրէն կըրկնեց բանտապետը ատամները կրճտացնելով:

Վահէն ալ ուսին վրայ ինկած գլուխը յանկարծ բարձրացուց, դէմքը անդամադրելի զգուանքով մը ծըռմըռեց ու թքաւ բանտապետի երեսին:

— Սրիկայ...

Ներկաներէն ոչ ոք յստակ դադափար մը ունեցաւ, թէ ատկէ անմիջապէս վերջ ի՞նչ պատահեցաւ: Երկաթէ շամփուրը մէկդի ինտած՝ բանտապետը երկու ձեռքով բռնեց Վահէի ձախ ձեռքէն ու սկսաւ պրկել զայն, մինչ Վահէն կը դաւարուէր յատակի վրայ, ու եզան նման ծանր կը տքար:

— Խօսէ՛, խօսէ՛, խօսէ՛, — կ'ոռնար բանտապետը՝ ալ աւելի դարձնելով Վահէի թեւը:

Վահէն յանկարծ սարսափելի ճիչ մը արձակեց: Բանտապետի ուժեղ պրկումի հետեւանքով, Վահէի թեւուկը տեղէն ելած էր: Նոյնիսկ կարտիանները, որոնք բանտապետի չափ վարժ էին տանջելու արհեստին մէջ, սահմուկած իրարու նայեցան:

— Պէ՛, մարդ, խենթեցա՞ր, — բարկացած պոռաց սպան ու բանտապետի թեւէն բռնած ուժով մը մէկդի հրեց զայն, — խելքդ հացի հե՞տ կերար... Գիտես, որ վաղը առտու... ընժմ... արդէն ծեծելու ալ չէիր... Այդ վիճակին մէջ տեսնողները ի՞նչ պիտի ըսեն: Հազար անգամ ըսի, դուն նորէն քու էչդ քշեցիր: Ես այս գործին մէջ մաս չունիմ: Վաղը առտու հազարաւորներ պիտի տեսնան, օտարներ ալ: Պէ՛ մարդ Աստուծու, եթէ պիտի խօսեցնես, ահա էդ շները խօսեցուր, — ու մատով ցոյց տուաւ Եկաւեանն ու միւս բանտարկեալները, — քու ձեռքդ բռնողը ո՞վ է, ինչ կ'ուզես ան ըրէ, բայց ասոր ձեռք զարնելու չէիր:

— Ճիշդ է, իրաւունք ունիս, — զգալով թէ ի՞նչ մեծ յիմարութիւն գործած էր Վահէն չարչարելով՝ բնդբնդաց բանտապետը, — իրաւունք ունիս, քիչ մը շատ առաջ դացի, Մէհմէտ աղա, տար էս մարդը միջանցքի աջ կողմի ամենավերջին դովուշը: Մինչեւ լոյս քովը կը մընաս... հասկցա՞ր... ոտքին հինա դիր կամ ձէթով տադէ: Ինչ կ'ուզես ըրէ, միայն թէ կարենայ վաղը առտու ոտքի ելնել:

Մէհմէտ աղան, կարտիանի մը օգնութեամբ, քնքշօրէն դրկեց նուազած Վահէն, ու բանտապետի սենեակէն դուրս եկաւ:

— Է՛, հիմա դու առաջ եկուր տեսնեմ... դուն, դուն, Եկաւեան էֆէնտի, քեզի կ'ըսեմ, մեր Վեհափառ Սուլթանի կառավարութենէն դժգոհ ես, Հայաստանի ազատութիւն կ'ուզէիր, անչուտ հայ թագաւոր մ'ալ կ'ուզէիր, ես քեզի էնպէս թագաւորութիւն մը տամ, որ երբեք մտքէդ չելլէ...

Մինչեւ կէս դիշեր աղիողորմ ճիչեր ու հառաչանքներ կը լսուէին բանտապետի սենեակէն:

ԿԱԽԱՂԱՆԸ

Խատիճէն Վահէի ձերբակալուելու հետեւանքով, շարաթներէ ի վեր իսկական դժոխք մը կ'ապրէր: Թէեւ Լեւոնի հետ ունեցած տեսութենէն վերջ սրտին մէջ յոյս մը ծագեր էր Վահէն ազատուած տեսնելու, բայց ամէն անցած օր իր ունեցած հաւատքէն բան մը հետը կը տանէր: Ամէն օր սովորական ժամուն, կուգար Սոնիայի մօտ: Կուգար անոր քովը ազատօրէն լալու, սրտի դառնութիւնները թափելու Սոնիայի առջեւ, մինչ տանը մէջ, ամուսնոյն ներկայութեանը պէտք էր ուրախ, խնդումներես երեւնար:

Այդ ծանր ապրումներու շրջանին, Խատիճէի միակ միտքարութիւնը Սոնիան դարձած էր: Կէս օրէ վերջ կուգար Սոնիայի մօտ, դէմքը երկարած, աչքերը շատ լալէ սովորական փայլը կորսնցուցած, երեխայի նման կը փարէր անոր եւ հոնգուր հոնգուր կ'արտասուէր: Բայց ամէն անգամ ալ բարեկամուհիին խօսքերէն յուսադրուած՝ մեղմօրէն ժպտելով կը մեկնէր:

Սոնիան, թէեւ Վահէն փախցնելու ծրագրի մանրամասնութիւններուն անծանօթ էր, բայց գիտէր որ, Լեւոնի եւ ընկերներու կողմէ ինչ որ դադանի աշխատանք կը կատարուէր: Այդ արդէն որոշ գրաւական մը կը համարէր յաջողութեան: Վերջի օրերը, աւելի շուտ բնադէօրէն, կը զգար, որ ձեռնարկի պահը մօտեցեր է:

Այն օրը, երբ քիչ վերը նկարագրուած անցքերը տեղի կ'ունենային բանտին մէջ, Յակոբը Լեւոնէն տոմսակ մը բերաւ Սոնիային: Երկտող մ'էր: Լեւոնը այդ գրուածութեամբ կը խնդրէր, որ եթէ հնարաւոր է, Սոնիան համաձայնի իր մօտ պահել, քանի մը օրուան համար, երկու շատ կարեւոր ընկերներ: Սոնիան ուրախութեամբ համաձայնեցաւ, բայց երբ Յակոբը յայտնեց, որ ինք այդ գէշեր ստիպուած է դուրսը անցընել ու հազիւ թէ լուսաբա-

ցի մօտ պիտի կրնայ վերադառնալ, Սոնիան անմիջապէս գլխի ինկաւ, որ այդ երեկոյ անսովոր դէպք մը տեղի պիտի ունենայ:

— Բացակայութիւնդ վնաս չունի, ես առանձին ալ կրնամ մնալ, բայց անկեղծ կերպով ըսէ, Յակոբ եղբայր, դու գիտե՞ս թէ այդ երկու փախստականները ովքե՞ր են:

— Հա, անշուշտ, — ծոծրակը քերելով տատամտտ պատասխանեց մեր Ուրանցցի բարեկամը:

— Կրնա՞ս ինծի ըսել, չէ՞ որ վերջապէս ես պիտի տեսնեմ զիրենք, ինձմէ ծածկելը լմաստ չունի:

— Անշուշտ կրնամ ըսել, չեմ կարծեր թէ պարոն Լեւոնը քեզմէ ծածկել ուզէր: Այս գիշեր, — ու Յակոբը ձայնը ա'լ աւելի ցածցնելով՝ Սոնիայի աղանջին բաներ մը փսիսաց:

— Օ՛ր, — ուրախացած բացազանչեց Սոնիան ու աշխուժով ձեռքերը իրարու շփեց, — ուրեմն ամէն ինչ պատրաստ է...

— Այո՛...

— Մինա՞կ պիտի երթաս, թէ ընկերներով:

— Անշուշտ ընկերներով:

— Իսկ պարոն Լեւոնը:

— Ի հարկէ միասին: Այո՛, մութը կոխելուն կը մեկնիմ անոր մօտ: Յետոյ, չորս ընկերներով կ'երթանք քաղաքամէջ: Քու մասիդ կը մտածեմ: Մինակ պիտի մնաս, օրիորդ: Ափսոս որ Մարիամը մօտդ չես կրնար պահել... շատախօս է... զիտցածն ու չզիտցածը դրկիցներուն կը պատմէ:

— Իմ մասին բնաւ մի մտահոգուիր, ես մինչեւ ձեր վերադարձը արթուն կը սպասեմ, միայն կը խնդրեմ որ ըսես՝ Լեւոնին վտանգ մը... ըսել կ'ուզեմ, — Սոնիան աճապարեց ըսածը ուղղել, դէմքը բոլորովին շառագունած, — ըսել կ'ուզեմ թէ՛ գնացողներուդ վտանգ կը ըսպառնա՞յ, թերեւս հանդիպում մը ունենաք:

— Հաղիւ թէ,— ապահովցուց Յակոբը,— մինչեւ Գաղաքամէջ պիտի երթանք, այդքան միայն, թէեւ ո՞վ գիտէ, կրնայ միշտ անակնկալ մը պատահիլ: Է՛հ, շատ դարդ մի ընեք, օրիորդ, մենք աւելի ծանր օրեր տեսած ենք...

— Երանի յաջողէիք: Երթալէդ առաջ Շէյթանը թոնրատան մէջ կապէ, նորէն օյին մը չխաղայ մեր գլխուն:

Կէս օրէ վերջ սոյլորական ժամուն եկաւ Խատիճէն: Անցնող քանի մը շաբաթներու ընթացքին զգալի կերպով փոխուած էր մանկամարդ կիներ: Սաստիկ նիհարած, դէմքին վրայ ապրած տառապանքը խոր դժերով դրոշմուած էր: Հաղիւ Սոնիայի հետ առանձնացած՝ փարեցաւ ընկերուհիին եւ գլուխը յենած անոր կուրծքին՝ սկսաւ արտասուել:

— Նո՛ւ, հրեշտակս,— փաղաքշելով ընկերուհիին մազերը շոյեց Սոնիան,— նու, սիրելիս, հանդարտէ... շատ լաւ լուր մ'ունիմ քեզի հաղորդելու:

— Սոնիա, ա՛խ, Սոնիա,— ու մանկամարդ կնոջ աչքերը դեռ արցունքոտ, նոր յոյսով մը վառուեցան,— պարոն Լեւոնէն լուր կա՞յ, այս որքա՛ն երկար սպասեցի, եթէ միայն գիտնաս թէ ինչ սարսափելի դժոխք մը կ'ապրիմ, ցերեկը հանգիստ չունիմ, գիշերը՝ քուն:

— Երեսա՛յ, կարծես միայն դու կը տառապիս, չէ՞ որ Վահէն մեր ալ թանկագին ընկերն է:

— Գիտեմ, Սոնիա, գիտեմ. բայց իմ ցաւս, ապրած սարսափս... երբեմն աչքերս կը գոցուին, ու կոշմար երազ մը, զարհուրելի պատկեր մը կը ցցուի առջիս...

— Շուտով ատոնք անցած երազ մը կը դառնան:

— Ուրեմն պարոն Լեւոնէն լուր մը կայ, է՞նչ կ'ըսէ, է՞նչ լուր:

— Այս երեկոյ,— շնչաց Սոնիան,— այս երեկոյ պիտի փախցնեն Վահէն ու ընկերները: Նախապատրաստա-

կան աշխատանքները լրացած են, ու ամէն ինչ պատրաստ է:

— Այս... այս... այս երեկոյ,— ու Խատիճէն յորդառատ արցունքներ թափելով՝ մէկ կը ծիծաղէր, մէկ կը դրկէր ու գորովանքով կը համբուրէր Սոնիան,— Սոնիա, հրեշտակս... Աստուած իմ, ուրախութենէս պիտի խենթենամ, մի՞թէ ճշմարիտ կ'ըսես, Սոնիա, անգինս, Վահէն պիտի ազատի...:

— Համբերէ, օր մ'ալ համբերէ, Խատիճէ, պիտի տեսնես որ ամէն ինչ յաջող պիտի վերջանայ, դու ալ պիտի մոռնաս այս արցունքներդ, տառապանքդ:

— Բայց, Սոնիա, անգինս, ես ինչպէ՞ս համբերեմ մինչեւ վաղը, ինչպէ՞ս համբերեմ... Գէթ քանի մը խօսքով փախուստի մանրամասնութիւնները յայտնէ: Ինչպէ՞ս պիտի փախցնեն... խօմ վտանգաւոր չէ՞... Ախ, եթէ գիտնաս, որքա՛ն արիւն արցունք լացի ես շաբաթներէ ի վեր... ուրեմն, այս գիշեր ազատուած կը լինի, Վահէն ազատուած կը լինի: Է՛ն, է՛ն սարսափելի բանը, գիշեր ցերեկ աչքիս առջեւ է,— ու Խատիճէն ակամայ դողաց ու աչքերը զարհուրանքով լայն բացուեցան.— ցերեկը աչքիս կ'երեւայ, գիշերները երազիս մէջ... Թող Վահէն փրկուի միայն, ես այլեւս ոչինչ, ոչինչ կ'ուզեմ... Բայց անցնի այս կոշմարը, իմ Վահէն ազատի:

Մթնիլ սկսած էր, երբ Յակոբը վեր բարձրանալով՝ յայտնեց, որ կառքը եկած է եւ Հիւսէյին բէկի ծառան խանութին կը սպասէ: Բաժնուելու պահուն Խատիճէն դրկեց Սոնիան եւ ականջին փախաց:

— Սոնիա, անգինս, եթէ կրնաս, առտու հանդիպէ կամ լուր մը դրկէ:

— Անշուշտ... թէեւ ատոր պէտք չես ունենար, իմ գալէս առաջ ինքը կը լսես արդէն:

Խատիճէի մեկնելէն քիչ վերջ, Յակոբն ալ այգիներով ճամբայ ելաւ, Լեւոնի մօտ երթալու համար: Այդ օր ըն-

կերներով Սաթենիկենց տունը թաղնուած էր Լեւոնը: Կարգին մթնած էր, երբ թոնրատան դուռը ճռնչալով բացուեցաւ եւ Յակոբը ներս մտնելով՝ քիւրսիի շուրջը շարուած դտաւ ընկերները:

— Հա, եկա՞ր Յակոբ, մենք ալ քեզի կը սպասէինք, — գլուխը վեր վերցնելով ըսաւ Լեւոնը ու նորէն իր աշխատանքին դարձաւ, մինչ ընկերները դայն չխանդարելու համար՝ ցած ձայնով կը շարունակէին իրենց խօսակցութիւնը:

— Վա՛հ, Տաճա՛տ, դո՞ւն ալ հոս, — ուրախացած մօտեցաւ Յակոբը եւ գրկելով պատանին՝ ջերմօրէն համբուրեց, — ապրիս, տղամարդու գործ տեսար...

— Տահա ինչե՛ր պիտի ընէ, — ինքնաբաւականութեամբ երկար բեխերը շոյելով ըսաւ Առիւծ Գեւօն, քովը տեղ բանալով որ Յակոբը նստի, — մէկ երկու ամիս որ ձեռքիս տակ մնայ, առիւծի ձագ պիտի դարձնեմ Տաճատը, դուն վերջէն պիտի տեսնես թէ դեռ ինչեր պիտի ընէ աս տղան: Առիւծ Գեւօն մարդու աչքին մէջ նայելով ինչ ջուրի մարդ լինելը մէկէն կը հասկնայ: Աս տղուն խմորը, ուրիշ խմոր է. մեծ ախպօրս ըսեմ, մենք ալ ժամանակին ասոր պէս, կրակի մէջ նետուող լակոտ էինք: Հէ՛յ, հին ժամանակներ, մեծ կոտորածի տարին, որ Իւչ Գիւլիսէ ուխտի կ'երթայի...

— Պէ՛ ախպեր, դուն ալ նորէն Իւչ Գիւլիսէն սկըսար, — Առիւծ Գեւօնի խօսքը կտրեց Թոփալ Սատանան, — մէկ Յակոբը լսենք, որքա՛ն եղաւ որ իրար չենք տեսած:

— Ծօ՛, նորէն քեզի ի՞նչ գրողս դիպաւ, — Թոփալ Սատանային սաստեց Գեւօն, — մարդ քովդ բերանը բանալու չէ: Է՛ Յակոբ, Ղլլճայի կռիւէն ասդին իրարու հանդիպած չէինք. քէֆդ, հալդ, մեծ ախպեր:

— Է՛, կ'ապրինք, Գեւօ... Ե՞րբ պիտի շարժուինք... Առիւծ Գեւօն առանց պատասխանելու Լեւոնի կողմը

նայեցաւ, որպէս թէ ըսել ուզէր, ախր ես ի՞նչ դիտնամ՝ ասոր հարցնելու է:

— Յակոբ, կ'ուզե՞ս փարթի մը թրիֆ խաղանք, — Առիւծ Գեւօն առանց սպասելու որ դիմացինը հաւանութիւն յայտնէ, փափախի մէջէն իւղոտ քարտերու ծրարը հանեց ու սկսաւ խառնել. — էս Թոփալ Սատանան հիչ մէջէն չէ, արդէն ծտի չափ խելք ալ չունի:

— Եա՛, էս օր վեց փարթի տարի, դեռ երես ալ ունիս կ'ուրանաս: Հը՞, էնպէս չէ՞, Տաճատ...

— Ծօ, Կաճէտու ծուռ, — աչքերը բարկութեամբ ուրելով, ընկերոջ խօսքը կտրեց Առիւծ Գեւօն, — ծօ, դուն ո՞վ, դիս յաղթողը ո՞վ, ես էնպէս հանաքի համար երբեմն կը ձգեմ որ... Յակոբ, թուղթը կտրէ՞ նայիմ...

— Վազ անցիր, Գեւօ, թերեւս հիմա ճամբայ ելլենք... Իմ գէնքերս ո՞ւր են...

— Էս տղու ձեռքի հրացանը պիտի վերցնես, — Առիւծ Գեւօն տեղացի երկու պատանինքէն մէկը մատնանչեց. — էս ու Տաճատը հոս պիտի սպասեն: Դեռ ատեն կայ ճամբայ ելնելու, բայց քանի որ չես ուզեր խաղալ... խօսքդ թող լինի: Հէ՛յ անցած օրեր. կը յիշե՞ս, Յակոբ, ինչ դեղեցիկ կարճ կաղակի մոսին մը ունէիր ձեռքդ Ղլլճայի կռուին: Բոլոր հայդուկներու աչքը վրան էր... Ախպեր, ի՞նչ մեղքս պահեմ... մտքէս կ'ըսէի, Աստուած չընէ, եթէ Յակոբին բան մը պատահելու լինի, ձեռքի հրացանը ես պիտի վերցնեմ: Զօռ կռիւ էր, լաւ ջարդեցինք, բայց մենք ալ ի՞նչ տղաք կորսնցուցինք, ամէն մէկը մէկ մէկ ասլան:

— Առիւծ Գեւօ, — անհամարձակ խնդրեց Տաճատը, — բերնէ բերան լսած եմ այդ կռուի մասին: Եթէ պատմէիր...

— Ծօ՛, տղաս, քեզի չպատմէ, ալ որո՞ւն պատմէ Առիւծ Գեւօն, — ու փափախը կողքի ծռելով՝ սկսաւ Առիւծ Գեւօն.

— Տաճա՛տ, տղա՛ս, երեք օրէ ի վեր անօթի էինք... Գործոթի կռուէն վերջ անցանք Յաղթայ տաղ, ցերեկ մը հոն մնացինք, անկէ ալ անցանք Ղլլճայի լեռը: Անօթու-թենէ փորերնիս վընկ վընկ կ'ընէր... Գէշ աղէկ բարձրա-ցանք սարը... Պարոն Գէորդը երեք մասի բաժնեց խու-բը... Հէ՛յ, լուս իջնայ վրադ, Նիկոլ ջան, ոնց որ մար-դարէ: «Գեւո», ըսաւ, «էս օր կամ բան մը կը գտնանք ուտելու կամ քիւրտերը մեզի կ'ուտեն»... Մեր տասնեա-կը կոճայ կողմը դիրք բռնած էր: Ամէն մէկս դէշ աղէկ դիրք մը բռնած՝ կը սպասէինք: Քանաքեոցի Յակոբը ինձմէ երկու քայլ հեռուն քարի մը տակ պառկած էր: «Վալլահ, տեղէս չեմ շարժիր կ'ուզէ քիւրտը դայ, կ'ուզէ թուրքը, անօթութենէ աչքս խաժ մաժ կը տեսնէ», կ'ը-սէր ողորմած հոգին... Համբարը, որ հարցնես, աժդա-հար հասակով երեսն ի վար պառկած՝ տքալով փորը կը տրորէր... Ծօ՛, աւանա՛կ, կը բարկանամ վրան, կարգին նստէ, էդ ի՞նչ անճոռնի ձէներ կը հանես: «Մեծ ախպեր, — կ'ըսէ Համբարս, — փորիս մէջ քամի կայ»: «Ծօ՛, կ'ը-սեմ, քամին էդ դըրում գլխիդ մէջն է. ել, տեղդ շէնքով շնորհքով նստէ»... Էս թոփալ Սատանան ալ անոր քովը երկնցած՝ շան պէս կը վնկար...

— Հա՛, դուն ալ ուրիշներու չանթաները կը խառ-նըշտկէիր՝ բրդուճ մը հաց գտնելու համար, — Գեւոյի խօսքը կտրեց չարացած թոփալ Սատանան, — դէմքդ չոր չարխի նման ճմրթկած էր, փորդ մորդ հալած, բարա-կացաւ ունեցողի նման դեղնած կ'երեւէիր...

— Սո՛ւս, ծօ՛, ուղտի կաշին նորէն իշու բեռ մը կը լինի. դուն ան ատեն սատկած շան նման կ'երեւայիր աչ-քիս... հիմա ալ արդէն մեծ բան մը չես, բաւական է որ ուժով մը փչեմ՝ տեղէդ կը թռչիս... Հա, Տաճատ, տը-ղաս, ոչ ոքի վրայ հալ չէր մնացեր շարժելու...

— Հապա վարժապե՞տը...

Առիւծ Գեւոյի խոժոռ դէմքը զարմանալի քնքուչ ար-

տայայտութիւն մը ստացաւ, երբ վերլիշեց Վարժապե-տը, այն քնքուչ, մեղմ պատանին, որուն սակայն այն-քա՛ն կը նեղացնէր ինք:

— Հա՛, երկնքի լուսերուն մէջ խաղայ անոր հոգին, Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի աթոռին առջեւ...

— Գեւո՛, Գեւո՛, — սաստելով ընկերոջ խօսքը կըտ-րեց թոփալ Սատանան, — ծօ, մեղք մի գործեր... Վար-ժապետը փոռտ էր...

Առիւծ Գեւոն չճած՝ վայրկեան մը ունկնդիրներուն նայեցաւ: Իսկապէս, Վարժապետը փոռտ էր: Արդեօ՞ք անոր հոգին ալ հայ քրիստոնեաններու նման եօթերորդ երկինքը կրնար բարձրանալ, ուր Հայր Աստուածը, Յի-սուս Գրիստոսը, Մարիամ Աստուածածինը ու բոլոր սուր-բերը իրենց յատուկ տեղերն ունէին: Այս, շատ բարդ հարց մ'էր Առիւծ Գեւոյի համար: Աչքերը խոժոռած նա-յեցաւ թոփալ Սատանային, որ յիմարաբար այսքան ծանր խնդիր մը մէջտեղ նետած էր: Բարկութեամբ փա-փախը յօնքերուն վրայ բերաւ ու բռունցքը քիւրտի վըայ իջեցնելով՝ վճռական ձայնով մը շարունակեց.

— Փոռտ մըրտ չեմ գիտնար. Աստուած լուսաւորէ մեր Վարժապետի հոգին, աջակողմեան սուրբերու դա-սին մէջ Սուրբ Գէորդի մօտ աթոռ մը տայ անոր: Աղջ-կայ պէս համեստ, ասլանի սիրտ ունէր մեր Վարժապե-տը... «Քա, հարս, էդ ի՞նչ կ'ընես», խնդալով կը հար-ցընեմ անոր: «Մեծ ախպեր», կ'ըսէ մեր Վարժապետը, դուրսը վեր առնելով, «բանջար կը քաղեմ. էս խոտերը կ'ուտուին»... Վա՛խ, ինչ ասլան տղաքներ կորսնցու-ցինք էն քամբախտ կռուին մէջ... Մէկ ալ կռիւը սկսաւ... Հէ՛յ, հէ՛յ, անօթի սատկած տղաքը մէկ մէկ ասլան կտրեցան: Թ՛Քանքը վերցնողը քարի մը տակ չոքեցաւ... Մեր դիրքը էն առաջօք էր: Սարը բարձրանալուն՝ աչքիս հանդիպած էր այդ տեղը, մտքէս ըսի՛՝ էս տեղը բռնելու յարմար դիրք մ'է...

— Պարոն Գէորգը ընտրեց զիրքերը, — Գեւոյի քիչ առաջուան ըսած խօսքերէն նեղացած՝ Թոփալ Սատանան ընդմէջեց զայն, ուղեւորվ ցոյց տալ, որ Գեւոն պատմած ատեն իր դերը կը չափազանցէր:

— Որ ի՞նչ... հելէ դու խօսքի մի՛ խառնուիր... Մէկ էսոր բերնին նայեցէք: Տօ, սարսախ, իմ մտքէս անցաւ՝ ըսի: Ի հարկէ, պարոն Գէորգը զիրքերը ցուցուց... Ըսելիք ի՞նչ է... Տաճա՛տ, դու ատ Թոփալի խօսքերուն կարեւորութիւն մի տար, անոր լեզուն ջաղացքի չախչախ է: Հա՛, էն կը պատմէի, մէկ ալ կուրը սկսաւ, երկինք երկիր շարժ եկան, ամէն կողմէ բլուր բլուրաւոր զնդակներ տեղացին մեր զիրքերու վրայ, ոնց որ կարկուտ... Ծօ՛, Թոփալ, մէկ ալ որ բերանդ բացեր ես... Ախպօրս ըսեմ, մըջիւնի նման թուրքն ու քիւրտը սարի փէշերով սկսան բարձրանալ: Իրարու ձէն կուտանք, պարոն Գէորգի սուլիչի ձէնը կ'անենք, ողորմած հոգի Նիկոլը իր կարգին կը հրամայէ՝ «տղաք, կրակեցէք. փամփուշտը խնայել», հէյ հէյ, ալ տուր որ կուտաս, շողգամի նման սկսանք ջարդել... Հա՛յ, հո՛ւյ, քրտերն ու զօրքը...

Թոնրատան դուռը ճանչալով բացուեցաւ, եւ Սաթե-նիկը ներս մտնելով մօտեցաւ Լեւոնին:

— Այդիի կողմէն երկու մարդ կուզան...

— Շատ լաւ, իմ սպասածներս լինելու են: Գեւօ՛, մէկ դուրս ելիր՝ տես թէ ովքե՞ր են:

Քիչ անցած՝ Մելօն, Քեանքեան Յովհաննէսն ու Առիւծ Գեւօն ներս մտան թոնրատունը:

Մելօն մօտեցաւ եւ խոր հոգոց հանելով՝ նստաւ Լեւոնի մօտ, յոգնած շարժուձեւով մարդու մը նման որ ամբողջ օրը քալեր է, ծանր բեռ մը շալակին:

— Հը՞, խեր է, Մելօ՛, — շարունակելով դրել հարցուց Լեւոնը, — դեռ ճամբայ ելլելու բաւական ժամանակ կա՞յ:

Մելօն առանց պատասխանելու գլուխը կախեց եւ

խոր հառաչանք մը արձակեց: Տիրեց զարմանալի խոր ու ճնշիչ լուսթիւն մը: Առիւծ Գեւօն խի, Մելոյի դէմքը տեսնելով՝ պատմութիւնը կիսատ ձգած, ակնապիշ կը նայէր անոր:

Ձեռքի դրիչը վար ձգելով՝ Լեւոնը բարձրացուց գլուխն ու շիտակ Մելոյի աչքերուն նայեցաւ: Մելոյի դէմքը ամբողջ ողբերգութիւն մը կը պատկերէր...

— Հը՞, Մելօ՛, ի՞նչ կայ, — սիրտը դող ինկած հարցուց Լեւոնը:

— Ամէն ինչ փճացաւ, — գլուխը տխրութեամբ տարուբերելով խօսեցաւ Մելօն, — ամէն ինչ փճացաւ, ալ ճամբայ ելլելու պէտք չկայ, վերջացաւ: Կառավարութիւնը գտած է գետնափորը, բանտը զինուորական կըրկնակ շղթայի տակ առնուած է...

Լեւոնի դէմքը վայրկենաբար մոխիր կտրեցաւ, ի դուր շրթները կը շարժէր՝ առանց ձայն մը կարենալ հանելու: Ծուրջիները, բացի Մելոյէն ու Քեանքեան Յովհաննէսէն, թէեւ գետնափորի գոյութեան մասին դաղափար չունէին, բայց դիտէին, որ այդ դիչեր շատ կարեւոր ձեռնարկի մը պիտի մասնակցէին եւ որ այդ ձեռնարկը վահէի եւ ընկերներու ազատուելու հետ կապ մ'ունէր:

Դիւրին է երեւակայել Մելոյի խօսքերէն վերջ բուրի զգացած դառն յուսախարութիւնը:

— Բայց, բայց ինչպէ՞ս... Մելօ՛ ինչպէ՞ս կառավարութիւնը գլխի է ինկած, — մինչեւ կողորդը բարձրացած հեծկտուրը զսպելով՝ հաղիւ կրցաւ հարցնել Լեւոնը, — չէ՞ որ մեր երեքէն զատ ոչ ոք չէր դիտեր... ուրեմն... — դառն ժպիտ մը խաղաց Լեւոնի դէմքին վրայ:

Մելօն բռնեց Լեւոնի հաշմուած ձեռքը, եւ ուժով մը սեղմեց, որպէս թէ ձեռքի սեղմումով ուզէր վստահութիւն ներշնչել անոր:

— Ձէ՛, պարոն Լեւոն, մատնութեան խնդիր չկայ...

ձիւնհալ է, գետինը խխում ջուր կտրած վիճակի մէջ, մեր քօռ բախտէն, բանտի տանիքի ջրթանն ալ, դու մի ըսեր, ուղիղ գետնափորի վրայ կը վազէ եղեր... Անտէր մնայ էս օրուան անձրեւը, բակի հողը այնքան ջուր կը ծծէ, որ կէս օրէ վերջ յանկարծ բակի գետինի մէկ մասը կը չոքի, երկու կողմերէն ծածկելով մեր անցքը... Առջի բերան թուրքերը գլխի չեն իյնար թէ ինչու այդ յանկարծակիան փրկուամը, բայց երբ նոր բացուած փոսը կ'իջնան, ամէն բան յայտնի կը դառնայ, փոսի երկու կողմերէն կը տեսնեն բացուած անցքը: Մարդ կ'իջեցնեն անցքերուն մէջ, ու ամէն ինչ յայտնի կը դառնայ:

— Յետո՞յ, յետո՞յ, — մեքենայաբար հարցուց Լեւոնը:

— Կամուրջի մօտ տասնեակ մը զինուորներ կանդնած՝ անցքի բերանը կը պահեն: Բանտը շրջապատուած է զօրքով: Գաղաքամէջէն վերադարձող հայերէն շատեր խուզարկուեցան: Մէկ երկուքին սաստիկ ծեծեցին թուրքերը: Իսկ թէ բանտին մէջ ի՞նչ կ'անցնի կը դառնայ՝ ոչ ոք չի գիտեր... Ոչ մէկուն թոյլ չեն տար դուրս դալ բանտէն, նոյնիսկ կարտիաններուն արգիլուած է իրենց տները երթալ: Մեր բարեկամն ալ դուրս չէ եկած դեռ, թէեւ նշանը մինչեւ ուշ տեսն խանութը քաց պահեց, սպասելով որ լուր մը ստանայ: Վաղը յայտնի կը լինի...

— Ուրեմն, ամէն յոյս կորա՞ւ, — դառնօրէն խօսեցաւ Լեւոնը:

— Պէտք է անմիջապէս ուրիշ միջոց մը մտածել, մտածենք, տեսնենք թէ ի՞նչ կրնանք ընել:

— Այո՛, եթէ միայն մեզ ժամանակ տան նոր միջոց մը գտնալու: Տղաք, պատրաստուեցէք: Հմայեակենց տունը պիտի երթանք այս գիշեր... Յակոբ, վերադարձիր օրիորդ Սոնիայի մօտ: Կը պատմես լսածիդ մասին... Մեղո՛, վաղը իրիկուն անպատճառ մօտս եկուր, Հըմայեակենց տունը, հետդ մասնաւոր խօսելիք ունիմ:

Մինչ տղաքը սաստիկ ընկճուած դէնքերնին կը կապէին, Լեւոնը ձեռքերը մէջքին վրայ կապած՝ գլուխը կախ, թեթեւ մը կաղալով թոնրատան երկայնքին ետ ու առաջ կը քալէր, գլխուն սարսափելի հարուած մը կերած դինովի նման:

Երկու կարտիաններ թեւերէն, իսկ Սարի Մէհմէտ աղան ալ ոտքերէն գրկած՝ հասցուցին Վահէն բանտապետի կարգադրած ղովուշը, ուր այնքան շատ բանտարկեալներ կային, որ ազատ շարժուելու տեղ իսկ չկար:

Մինչ այդ, բոլոր ղովուշներու մէջ արդէն շրջան ըրած էր գետնափոր անցքի պատմութիւնը, ընդհանուր յուսախարուսթիւն մը առաջացնելով:

Ամէն ազգի բանտարկեալ, անգամ մը բանտարկուած, այլեւս ետին կը ձգէ դոսի աշխարհի հակամարտութիւնները, թշնամութիւնները եւ առանց այլեւայլի ընդհանուր միութիւն մը կազմած՝ կառավարութեան հանդէպ ընդդիմադիրի դերք մը կը բռնէ: Այս հոգեբանական պատճառով ալ, ծրագրուած փախուստի այնպիսի ղովուշներ, մանաւանդ Վահէի եւ ընկերներու բանտապետի սենեակը տարուելը, որու նշանակութիւնը շատ պարզ էր բանտարկեալներէն շատերու համար, մեծապէս տխրեցուցած էր այն ղովուշի մարդիկը, ուր փոխադրեցին Վահէն:

Առաջին տպաւորութեամբ, բանտարկեալները կարծեցին, թէ եթէ Վահէն մեռած ալ չէ, անշուշտ հոգեվարք վիճակի մէջ կը գտնուի: Գլուխը ետ ինկած, դէմքը բոլորովին դունաթափ ու աչքերը կիսախուսի, Վահէի վրայ կենդանութեան նշան մը չէր երեւնար: Միայն երբեմն խոր շնչառութիւն մը առնելով՝ մեղմօրէն կը հեծեծէր: Բանտարկեալները, իրենց անկողինները ա՛լ աւելի իրարու մօտեցնելով, ղովուշի վերի անկիւնը տեղ

մը քացին Վահէի համար՝ մէկը իր բարձը տուաւ, ուրիշ մը ներքնարկ մը, վերմակ մը, ու բազմաթիւ ձեռքեր զգուշութեամբ սառկեցուցին Վահէն:

— Աստուած, Աստուած, — հառաչեց ծերունի քիւրտ աւաղակ մը, որ թուրք թահախտար մը կողոպտելու եւ զախթիա մը սպաննելուն համար ութ տարիէ ի վեր բանտարկուած էր. — թուրքի տունը քանդուի, դադանն իսկ ինկածին վրայ ձեռք չի բարձրացներ: Աստուածային օրէնքի, շարիաթի դէմ է բանտարկեալը տանջելը... թուրքը մարդակեր բորենիէն ալ վատ է... Աստուած անոր տունը քանդէ...

Միեւնոյն զովուշին մէջ կը գտնուէր մեր վաղածանօթ Գարեգինը ուրիշ տասնեւչորս ընկերներով, որոնք քանի մը օրէ ի վեր զնտաններէն փոխադրուած էին այդ սենեակը: Երբ բախտակից ընկերները տեսան Վահէն այդ վիճակին մէջ, շրջապատեցին դայն, ու Գարեգինը կողքին նստելով՝ թաց շորով մը սկսաւ վիրաւորի ճակատը զովացնել: Քանտարկեալի մը մօտ գտնեալ ալ ճարուեցաւ, ու քանի մը կաթիլ կաթեցուցին Վահէի սեղմուած շրթներէն ներս:

Մարի Մէհմէտ աղան, բանտապետի հրամանի համաձայն, բանտարկեալի մօտ մնաց: Այդ մարդը, որ բանտարկեալներու սարսափն էր, զարմանալի կերպով ընկճուած տեսք մ'ունէր: Գլուխը կրծքին կախած՝ իրարու ետեւէ սիկարէթ կը քաշէր, երբեմն ցաւակից հայեացք նետելով Վահէի դէմքին:

— Վահէ', Վահէ', — ընկերով վրայ ծռած կը շարժար Գարեգինը՝ յուսահատօրէն ձեռքերը տրոքելով, — Վահէ', սիրելիս, աչքերդ բաց, տես ուղբեր շրջապատեր են քեզ...

Երբ Վահէն դրկած բանտապետի սենեակէն դուրս կը բերէին, կարտիաններէն մէկը ձախող շարժումով մը այնպէս մը սեղմած էր Վահէի դուրս ինկած թեւը, որ

այլեւս ցաւին չըլիմանալով՝ Վահէն նուազած էր: Անկողնին վրայ երկնցած, աչքերը կիսախուփ, Վահէն հետզհետէ ինքզինք կը գտնար, կը լսէր ընկերներու խօսակցութիւնը, առանց սակայն աչքերը բանալ կարենալու, կարծես վարադոյր մը իջած լինէր աչքերուն առջեւ, Գիտարութեամբ, բայց վերջապէս կիսախուփ աչքերը քացաւ շուրջիններուն նայեցաւ ու հայեացքը կանգ առաւ Գարեգինի դէմքին: Ճանչցաւ: Շատ մեղմ ժպիտ մը խաղաց դէմքին վրայ:

— Վահէ', Վահէ'...

— Այո'...

— Իսն չկայ, Վահէ', մէկ երկու օրէն ոտքի կ'ելլես...

Վահէն չսպտասխանեց, բաւականացաւ ընկերով աչքերուն նայելով, բայց այդ հայեացքը այնքան պերճախօս էր, որ Գարեգինը սարսուռ մը զգաց ու կծկուեցաւ վիրաւոր ընկերով մօտ, կարծես անոր պաշտպանութեանը ապաւինելու համար:

Վահէն հիմա արդէն յստակօրէն կը յիշէր բանտապետի սենեակի մէջ կատարուածը, իր ծեծուելը, թէժ շամփուրը, բայց ամէն բանէ աւելի սպալի բարկութիւնը եւ ըսած յատկանշական խօսքերը դրոշմուած էին մտքին մէջ. «Գիտես որ վաղը առտու... արդէն ծեծելու ալ չէիր... Այդ վիճակի մէջ տեսնողները ի՞նչ պիտի ըսեն»...

Վահէի համար սարդ էր այդ խօսքերու իսկական իմաստը: Երբեք խաբուսիկ յոյս մը չէր ունեցած բանտարկութեան շրջանին: Գիտէր թէ՛ ի՞նչ կրնայ սպասել թրքական արդարադատութենէն: Ասով մէկտեղ վերջի հնարաւորութիւնը փախուստի, թեւաւորած էին զինք, յոյսի ուժեղ աղբիւր մը դառնալով իր մէջ: Մանաւանդ վերջի օրերը, փախուստը այնքան մօտիկ եւ անկասկա-

ծելի կը թուէր, որ արդէն կատարուած իրողութեան մը խաբկանքը կը պատճառէր Վահէին ու ընկերներուն:

Ու ըհհա, յանկարծ ամէն յոյս, ամէն ահնկալութիւն մէկ հարուածով կը վերնար մէջտեղէն, ու կը մնար Վահէն դէմ յանդիման իրեն սպառնացող վաղուան հետ:

Երբ Վահէն դժուարութեամբ աչքերը բանալով, վըրան կախուած Գարեգինի մտահոգուած դէմքը տեսաւ, փորձեց հին օրերու նման ուրախ դէմք մը ցոյց տալ ընկերոջը, բայց ոտքերուն եւ մանաւանդ թեւի անտանելի ցաւը ճմռթիկեց դէմքը: Անկարող էր ազատօրէն խօսելու:

Սարի Մէհմէտ աղան, որ Վահէի անկողնին մօտ ծալապատիկ նստած կը շարունակէր ծխել, քիւրտ բանտարկեալի մը հետ խօսքի բռնուելով, իմացաւ, որ խօսակիցը լաւ դրըզճի մ'էր ու կոտորուածներէ կը հասկընար: Խնդրեց, որ Վահէի ոտքի ուռած բշտիկները խնամէ, մանաւանդ, եթէ կրնայ, տեղէն ելած թեւը տեղը ձգէ: Բանտարկեալ քիւրտը դործի անցաւ, Վահէի վըրաւոր թեւը մերկացնելով՝ սկսաւ մաթել, մինչ Վահէն ատամները սեղմած՝ կ'աշխատէր ցաւին դիմանալ:

— Մէհմէհ աղա, — ցաւէն կծկուած դէմքին վրայ թոյլ ժպիտ մը խաղցնելով՝ Վահէն խօսքը ուղղեց բանտապետին, — ինչո՞ւ էս նեղութիւնը կուտաք ինձի... միեւնոյնը չէ՞, թեւը դուրս ինկած կամ ոչ...

— Վահէ էֆէնտի, դուրս ինկած թեւը սարսափելի ցաւ կը պատճառէ...

— Իսկ վաղը առաւօտեան ցաւը աւելի՞ պակաս պիտի լինի... հէ՞, ինչ կ'ըսես Մէհմէտ Աղաս, — ու նշանակալից հայեացքով մը Վահէն նայեցաւ կարտիաններու գլխաւորին:

Մէհմէտ Աղան, առանց պատասխանելու, օֆ մը քաշեց, չփոթած դէմքը մէկդի դարձուց ու սիկարէթի ծուխը ուժով մը ներս քաշեց:

Ղրըզճի քիւրտը, բաւական երկար ատեն Վահէն չարչրելէ վերջ, որպէս թէ թեւը տեղը ձգեց, ոտքի բըշտիկները եռացած ձէթով տաղեց ու պարտքը կատարած մարդու գոհունակութեամբ քաշուեցաւ իր անկիւնը:

Կամոց կամոց զավուչի բանտարկեալներէն ամէն մէկը իր տեղաշորի վրայ երկնցած քնացաւ, Վահէի մօտ մնացին Գարեգինը, երկու ուրիշ ընկերներ եւ Սարը Մէհմէտ Աղան: Ոչ ոքի բերանը չէր դար բան մը խօսելու. ամէն մէկը ինքն իր մէջ ամփոփուած՝ մտալ մտքերու անձնատուր եղած էր: Եթէ մէկը կար, որ դեռ ինքզինքը կը պահէր, առանց անձնատուր լինելու ընդհանուր յուսաբեկութեան, ան ալ Վահէն էր:

— Է՛, Գարեգին, — առատ մագերը թափ տալով խօսեցաւ Վահէն՝ աշխատելով ձայնին ուրախ հնչիւն մը տալ, — մեր տղայ, չխօսկան հարսի նման մունջ մի մընար, քիշերը երկար է, դեռ մինչեւ լուսաբաց որքա՞ն ժամանակ ունինք... Դարտ մի ըներ, վաղուան օրն ալ կ'անցնի ուրիշ օրերու նման, այդ մասին չարժէ սրտաբեկ լինիլ: Այդ ալ կ'անցնի: Հա՛, Գարեգին, երնէկ հիմա Զիաթունուկի վրայ գտնուէինք, անուշ ձէնովը մէկ Հոռովելը կլկլացնէիր... Կը յիշե՞ս, անցեալ տարի դարնան, անգամ մը վերին վարադ հաւաքուած էինք, արեւը չծագած Աստղեան Բերդը բարձրացանք խմբով: Էն ի՞նչ հոյակապ տեսարան էր, որ այն տեղէն պարզուեցաւ մեր առջեւ: Անգամ մը Արագածի կատարէն տեսած էի արեւի ծագումը, անգամ մ'ալ Աստղեան բերդէն: Կը յիշե՞ս, Գարեգին, Արաուլի լեռնաշղթայի կատարները հրդեհուած էին, եւ արեւը կրակէ ահադին դունդի մը նման ոստոստելով՝ դուրս կուգար կրակ ծովի մէջէն... Աստղեան Բերդը, Կորդեան Քարը, Սիփանը, Արտաւը ու բոլոր լեռներու գագաթները արեւի ճառագայթներով ողողուած էին, մինչ վարը, խաւարի մէջ թաղ-

ուած քաղաքը չէր երեւնար... Հրաշք պատկեր մ'էր...
Մեր նախահայրերը ի զուր չէ որ Աստղեան Բերդը կա-
ռուցին Արեւ Աստուածին երկրպագելու համար... Ան-
կարելի է որ մարդ այդ տեղէն արեւի ծագումը տեսնէ
ու իր հոգուն մէջ չզգայ քնութեան մեծ աստուածութիւ-
նը... Հեթանոս հայը բնապաշտ ու հզօր, քրիստոնեայ
հայը երկնային թագաւորութեան երազանքովը օրօր-
ւած՝ մեղկացաւ... Է՞, սիրելիս, մեր ժողովուրդին հը-
ղօր Վահագն աստուածները են պէտք, քան Յիսուս Նա-
զովրեցի մը... Ձէ, գլուխդ մի՛ շարժեր, գիտեմ որ իմ
տեսակէտս չես բաժնիր... Ըսէ՛ տեսնեմ, ի՞նչ կը կար-
ծես ո՞րը աւելի լաւ կը լինէր, վաղը առտու փշէ պսակ
մը ունենալ դիտիս, դառան նման հեղ ու խոնարհ, թէ՞
լեցուն մառգէր ատրճանակ մը ձեռքիս մէջ... Անշուշտ,
ճաշակի խնդիր է, ես վերջինք կը նախընտրեմ... Հա՛,
մառգէր ըսի, միտքս ընկաւ... պէտք է գրել Լեւոնին,
որ Մաղենց տունը փոքր պահեստ մը ունինք, բուխերիկի
մէջ լինուած, այդ պահեստի տեղը միայն Պիժան ու ես
գիտէինք, պէտք է այդ տեղէն հեռացնել: Մէկ ալ Կառ-
կառի ժողովրդական գէնքերը պէտք է հաւաքել... Պի-
ժան ծանօթ է... Բայց այդ մասին ես կ'աշխատիմ դրել,
դեռ մինչեւ առտու շատ ժամանակ կայ...

— Բայց ինչո՞ւ վաղը առաւօտեան մասին կը շեշ-
տես, կարծես թէ առաւօտեան...

Բայց Գարեգինը չկրցաւ խօսքը շարունակել, բան
մը դէմ առաւ կորկորդին մէջ:

— Փրաւ որ ինչո՞ւ համար, ես ալ չեմ գիտեր, թէ
ինչո՞ւ համար, թերեւս քմայք մը, — մեղմօրէն ծիծա-
ղելով Մէհմէտ Աղային՝ թուրքերէն շարունակեց. — Ոտ-
քերուս ցաւը բաւական մեղմացաւ, եռացած ձէթը շատ
օգտակար եղաւ: Կարծեմ քու օգնութեամբ կրնամ քա-
լել: Կ'ուզեմ պէտքաբան երթալ, — ու խորհրդաւոր ձե-
ւով մը նայեցաւ կարտիաններու պետին:

Մեծ դժուարութեամբ, Մէհմէտ Աղան վիրաւորը
հասցուց մինչեւ ճէմիչները, ու հոն մէջքը տուած պա-
տին՝ համբերութեամբ սպասեց Վահէի դուրս գալուն:
Երբ ժամ մը վերջը Վահէն դուրս եկաւ, Մէհմէտ Աղան
նշմարեց, որ երիտասարդի աչքերը թրջուած էին, ու
ան բուռն ճիշդ մը կը թափէր սովորական ուրախ տրա-
մադրութիւնը կեղծելու:

Դեռ ճեմիչներու փոքր բակէն դուրս եկած չէին,
երբ Մէհմէտ Աղան դգաց, որ Վահէն ջերմօրէն իր ձեռ-
քը կը սեղմէ:

— Ծնորհակալ եմ քեզմէ, Մէհմէտ Աղա, — շնջաց
Վահէն, — էվէլ պակաս հէլալ ըրէ: Էս փոքր դումարը
իմ չնչին նուէրս թող լինի... Այս ծրարն ու նամակը կը
յանձնես Նշանին, շատ բարեւ կ'ընես իրեն, տեսածիդ
պէս կը պատմես...

Մէհմէտ Աղան բառ մը չկրցաւ արտասանել, Գլուխը
անդին դարձուց, որ Վահէն շտեմնէ դգացած ցաւէն
ճմռթկած դէմքը: Մեքենաբար Վահէի յանձնած ծրարն
ու նամակը ծոցը կոխեց ու կիսովին շալկելով դայն՝
հասցուց Ղովուշք:

Գարեգինը բոլորովին վաստակաբեկ, երկար սպասե-
լէ յողնած, երկնցած Վահէի անկողնին կուշտը կը քնա-
նար:

— Ձէ, Մէհմէտ Աղա, ձայն մի՛ տար, թող հանգիստ
քնէ... արդէն իմ քունս ալ կուգայ, քիչ մը երկնամ...

Վահէն աչքերը գոցեց ու փորձեց քնել: Հակառակ
որ արտեւանունքները քնատութենէ կը կոտտային,
միտքը գարմանալի կերպով արթուն՝ կը գործէր: Հին
ու նոր պատկերներ մէկը միւսին կը յաջորդէին արագօ-
րէն: Վահէն ինքն ալ չէր գիտեր, թէ ինչո՞ւ երեւակա-
յութիւնը տարաւ զինքը մինչեւ Գերմանիա, Միւնխէն
քաղաքը, ուր տարիներ առաջ անցուցած էր ուսանողա-
կան երջանիկ օրեր: Կենդանի կերպով երեւակայութեան

մէջ պատկերացաւ իր փոքր սենեակը, մաքուր անկողինով ու դրքերով ծանրաբեռնուած սեղանը, որուն առջեւ այնքան ժամեր կուայացած կարդացքեր էր խելօք համարուած հեղինակներու գործերը, որպէսզի յետոյ ալ... Ու Վահէն հեղինակներէն ժպտաց :

Չանազան պատկերները իրարու կը յաջորդէին, եւ Վահէն հոգեկան քաւականութեամբ բոլորովին անձնատուր եղած էր անոնց : Թրքական բանտի մէջ, աղտոտ խշտեակի վրայ երկնցած՝ ան կ'սպրէր հին անցած օրերը : Ամենէն աւելի վառ դոյներով պատկերացաւ երեւակայութեանը մէջ Թադէոս Առաքեալ վանքի մէջ անցուցած օրերն ու իրատիճէն : Այդ վերջիչուամբ կենդանացուց զինք ու միաժամանակ անհնարին ցաւ մը զգաց : Վաղանցիկ շքեղ երազ մը, ու առաւօտեան՝ վերջին վարդոյրի միակ դերակատարը պիտի լինէր ինք : Ապա իրատիճէն, այն մանկամարդ կինը, որ այնքան հզօր կերպով գերեց զինքը՝ իր թափուր սրտի տիրուհին դառնալով, ի՞նչ էր վիճակուած անոր եւ զաւակին : Հաղիւ երկու անգամ միայն տեսած էր փոքր Ալին, իր հարազատ զաւակը, որ մեծնալով պիտի դառնար Հայտարանցիներու ապագայ բէկը : Սրտի դառն կսկիծ մը զգաց Վահէն ու ատամները սեղմելով՝ հեծկտուքը զսպեց :

Հետզհետէ իրարու յաջորդող պատկերները սկսան մշուշոտիլ, ու Վահէն դիտակցութիւնը կորսնցուցած՝ քնացաւ : Դովուշի վերի անկիւնը, պատի վրայ ամրացած նաւթի աղտոտ լապտերը հազիւ կը լուսաւորէր ընդարձակ սենեակը, ուր բանտարկեալները խշտիկներու վրայ երկնցած՝ կը խորդային, բացի Սարի Մէհմէտ Աղայէն, որ Վահէի գլխավերեւը նստած՝ իրարու ետեւէ գլանիկներ պլլելով, ազահօրէն վը ծխէր, տխրօրէն Վահէի դէմքը դիտելով :

Ամբողջ բանտին մէջ շշուկ մ'իսկ չէր լսուեր, միայն երբեմն միջանցքի մէջ քալող կարտիաններու ոտքերուն

խուլ ձայնը կը խանգարէր ծանր լուսթիւնը : Ընչող խաղաղութեան մէջ ժամերը ժամերու կը յաջորդէին, մինչ Մէհմէտ Աղան, առանց դիրքը փոխելու, կը շարունակէր ծխել :

Շուտով արշալոյսը կը ծագէր : Յանկարծ կարտիաններու պետը ամբողջ մարմնով ցնցուեցաւ : Միջանցքի մէջ լսուեցաւ բազմաթիւ մարդոց ոտքերու աղմուկը : Սարի Մէհմէտ Աղան գիտէր թէ այդ ինչ կը նշանակէ, ու լեցուած աչքերով, նայեցաւ Վահէի գունաթափ դէմքին : Գլուխը բարձրացուց, ու հայեացքը դուրս նետեց բակին վրայ բացուող պատուհանէն : Սկսած էր լուսնալ, Բանտի միջանցքին մէջ, մօտեցող համաչափ քայլերու դուրիւնը կը հնչէր Մէհմէտ Աղայի ականջներուն : Մէկ ալ դովուշի ծանր դուռը չընկալով բացուեցաւ ու սեմին վրայ երեւցան բանտապետն ու սպան, իսկ անոնց ետեւէն զինուորներու սուրներու պսպղոցը :

Մինչ այդ, դովուշի քանտարկեալները դրան բացուելու ձայնէն արթնցած, ստուերներու նման լուռ, նրստան իրենց խշտիկներու վրայ : Բոլորի սահմուկած հայեացքները կեդրոնացան Վահէի ուղղութեամբ, որ անխուով կը քնանար :

— Վահէ է՞Ֆէնտի, Վահէ է՞Ֆէնտի, արթնցիր, Վահէ է՞Ֆէնտի, — մեղմօրէն քնացողի ուսը ցնցելով՝ ըսաւ Մէհմէտ Աղան, — արթնցիր, ժամանակ է երթալու :

— Հա՛, ի՞նչ կայ, — ընդոստ արթննալով հարցուց Վահէն եւ յանկարծ դրան առջեւ կանգնած բանտապետն ու սպան տեսնելով՝ ամէն ինչ հատկցաւ :

Բանտապետն ու սպան հանդարտ քայլերով մօտեցան Վահէին, մինչ վերջինս Մէհմէտ Աղայի օգնութեամբ կ'աշխատէր պառկած տեղէն բարձրանալ :

— Երթալու ժամանակ է, Վահէ է՞Ֆէնտի, — խուպոտ ձայնով խօսեցաւ բանտապետը :

— Բարի լոյս բանտապետ, բարի լոյս, զապիտ է—

Ֆէնտի, չէի կարծեր թէ այնքան երկար քնած եմ: Երթալու ժամանակ է, հա՞... Ես պատրաստ եմ... Բանտասպէ՛տ, չէ՛, շիկացած շիշերու պէտք չկայ զիս ոտքի հանելու... Տաղելու մէջ շատ վարպետ ես, խօսք չ'ուզեր: Կ'երեւի թէ՛ հայրդ ժամանակին քէպապաճի մ'էր: Ո՞վ գիտէ, թերեւս պայտար մ'էր... Ինչ որ ալ լինի, վարպետ մարդ մ'ես...

— Դուք ալ օգնեցէք Մէհմէտ Աղային, — կողքի կարտիաններուն հրամայեց բանտարպետը, — երկու կողմերէն թեւերը մտէք:

— Հա՛, այդպէս, տաքատէս բռնեցէք, — խօսքը ուղղեց կարտիաններուն, որոնք կը փորձէին օգնել Վահէին ոտքի ելլելու. — զիս քայեցնելու նեղութիւնն ալ դուք քաշեցէք: Անշուշտ շատ հեռու լինելու չէ երթալիք տեղերնիս, — կառավարչատան հրապարակը, լընդարձակ տեղ մ'է, թամաշաճիներ ալ շատ կ'առնէ... Է՞, զապիտ էֆէնտի, ինչպէ՞ս կը դպաք այս առտու, կը յուսամ որ գիշերը հանգիստ քնացաք... Է՞, ինչպէ՞ս վերջացաւ ձեր հարցաքննութիւնը, երէկ գիշեր ընկերներս խօսեցուցի՞ք, ձեր ուղած անունները իմացա՞ք... Չէ՞, դժգոհ կ'երեւիք, դէմքերնիդ արդէն կը ցուցնէ, որ շատ ալ դո՛հ չէք մնացեր... Է՞հ, ի՞նչ ընենք, զարմանալի խենթ մարդիկ կան աշխարհի մէջ... կը նախընտրեն շիշերով տաղուիլ քան լերաննին բանալ... Դժուարութեամբ, բայց ոտքի հանեցին Վահէն, երկու կարտիանները թեւերը մտած:

— Գարեգին, սիրելիս, մօտեցիր...
— Վահէ՛, Վահէ՛...
— Պինդ կեցի՛ր, բան չկայ, թուր ընկերներուն համբոյրներս, մնաս բարով...
Գարեգինի հետ համբուրուելով, Վահէն երկու կարտիաններու օգնութեամբ ոտքերը քսքսելով՝ մօտեցաւ զովուչի դրանը: Ամէն ինչ որ կարելի էր ջարդոտել,

ջարդուած էր Վահէի մարմնի վրայ, բացի դուրսէն: Առատ ու երկար մազերով, կենդանի աչքերով, հեղնոտ ժպիտով, այդ շքեղ դուրսը աջ ու ձախ կը դառնար՝ արձանացած բանտարկեալներու՝ մէկ երկու սիրալիլ խօսք ուղղելու համար:

— Է՛, պապա, — խօսքը ծերունի քիւրտ աւաղակին ուղղեց Վահէն, — էվէլ պակաս հէլալ ըրէ... շատ դարտ մի ըներ, աս ալ կ'անցնի... աշխարհը ոչ քոնն է, ոչ իմս:

— Եարաբալիմ, Եարաբալիմ, — ծունկերը ծեծելով կը հեծկլտար ծերունի քիւրտը:

Քանի մը քայլ անդին Վահէն կանգ առաւ զառամած թուրք բանտարկեալի մը առջեւ, որու հետ երբեմն տաճա կը խաղար:

— Ալի Աղա, տամայի վերջի խաղը ես տարի... սրտիդ մ'առնեմ, իմ ճամբաս հսպէս ալ վերջանալու էր... Առաքել, դատարանի մէջ ինքզինքդ պահել գիտցիր, ամենալաւ պատասխանը, չեմ գիտեր, չտեսայ, է...
Աջ ու ձախ բանտարկեալներուն հետ խօսելով երբ զովուչի դրան սեմին հասաւ, Վահէն դուրսը ետ դարձուց ու անյողդողդէ ձայնով մը խօսքը ուղղեց սենեակի մէջ գտնուողներուն.

— Եղբայրներ, էվէլ պակաս հէլալ ըրէք, մնաք բարով...
Որպէս թէ հինաւուրց գերեզման մը լինէր զովուչը: Ձայն ծպտուն չելաւ: Ծատեր, լուռ կ'արտասուէին, բայց ոչ մէկ չթօնէր շարժեցաւ երթաս բարով մաղթելու: Ախր ինչպէ՞ս երթաս բարով ըսէին այդ կենսուրախ երիտասարդին, որ թերեւս կէս ժամ վերջը գոյութիւն ունենալէ պիտի դադրէր: Գարեգինը ինքն իր վրայ կըծկըւած՝ հեծկլտալով կ'արտասուէր:

Միջանցքի աղմուկէն թուր զովուչներու բանտարկեալները արթնցեր էին: Դռներու վրայ բացուած փոքր ծակերու մօտ բազմաթիւ դուրսներ խոնուած՝ վերջին

անգամ մ'ալ կ'ուզէին տեսնել Վահէ Էֆէնտին: Բակին վրայ նայող պատուհաններու երկաթէ ձողերուն մէջ կ'երեւային իրարու վրայ բարձրացած թանտարկեալներու գլուխները: Շատեր կ'արտասուէին:

Բակին մէջ երեք տասնեակ զինուորներ եւս կը սպասէին՝ սուխաւոր հրացանները պատրաստ բռնած: Անոնք սպայի հրամանին վրայ՝ չորս կողմէն կարգով շարձապատեցին Վահէն:

— Հրացանները ուսերո՛ւդ, — ջոկատի գլուխը անցնելով հրամայեց սպան, — իլէրի՛, ա՛րջ:

Ձինուորները համաչափ քայլերով դիմեցին դէպի բանտի մուտքի դուռը: Բանտի առջեւ բացուող նեղ փողոցը լեւի լեցուն էր զինուորներով, որոնք երկու մասի բաժնուած՝ հազիւ նեղ անցք մը ձգած էին: Երբ Վահէն, բանտապետի, երկու կարտիաններու եւ Մէհմէտ Աղայի ընկերակցութեամբ մտան երկուստեք շարուած զինուորներու արանքը, զօրքը սկսաւ առաջանալ նեղ փողոցով դէպի Թաղա Թարկեախ կոչուող դուռը:

Այնքան խիտ զօրքի շարքերով շրջապատուած էր Վահէն, որ չէր կրնար շուրջը տեսնել, ամէն կողմէն միայն զօրք ու փալիւղ սուխաններ կ'երեւային: Բայց երբ Թաղա Թարկեախէն դուրս եկան կառավարչատան առջեւ երկարող լայն փողոցը, երկուստեք զօրքը քիչ հեռացաւ՝ լայն անցք մը թաց ձգելով, որու մէջէն կը քալէին Վահէն ու բանտի պաշտօնեաները:

— Մէհմէտ Աղա, Սէլամլըքի ժամանակ Սուլթանն իսկ այսքան շուքով չեն տանիր, — հեղնօրէն ծիծաղելով ըսաւ Վահէն, — մաշալլահ, խեղճ, անհաւատ հայու մը այսքան պատիւ... Հը՞, բանտապետ, Վանի մէջ ալ զօրք մ'նացե՞ր է. — Կ'երեւի շատ ալ հանդիստ չէք, ո՞վ գիտէ, ինչեր կրնան պատահիլ: Օ՛, հասանք արդէն:

Լուսնալ սկսած էր: Վարագայ լերան կատարները սուկեզօծուած կը փալիլէին: Հակառակ կառավարոս-

թեան ձեռք առած միջոցներուն, այդ առտու Վահէի կախուելու լուրը տարածայնուեր էր, ու ահադին բազմութիւն մը շուրջանակի հաւաքուած՝ անհամբեր կը սպասէր կառավարչատան առջեւ: Գրեթէ բացառաբար թուրք խուժան մ'էր: Հազիւ պատահաբար եկած հինգ վեց արհեստաւոր հայեր ներկայ էին, որոնք առտու շատ կանուխ Այգեստանէն քաղաքամէջ իջնալնուն, բազմութիւն մը հաւաքուած տեսնելով, հետաքրքրութենէ մղուած, խառնուած էին թուրք խուժանին:

Բնութեան հոյակապ գեղեցկութիւն մ'է Վասպուրականի վերջալոյսն ու արշալոյսը: Վահէն՝ կարօտով հայեացքը դարձուցած դէպի Վարագայ սարը: Որքա՛ն երջանիկ օրեր ապրած էր ընկերներով այդ սարի բարձունքներուն վրայ: Ու հիմա՞... Եթէ Վահէի սիրտը սարսափելի ցաւէն կծկուեցաւ, արհամարհական ժպտը սակայն, չլքեց դէմքը: Կարտիաններու օգնութեամբ կը քալէր, շքեղ գլուխը բարձր բռնած, կարծես անդիտակից իրեն սպառնացող սարսափելի վախճանին: Յանկարծ զօրքը անշարժ կանգնեցաւ: Կանգ առին եւ կարտիանները: Վահէն կարծես երազէ մը արթնցած՝ շուրջը նայեցաւ: Ընդարձակ բոլորակի մը մէջը կը գտնուէր, իսկ այդ բոլորակի մէջտեղը, հազիւ երեք չորս քայլ իրմէ հեռու, սիւն մը տնկուած էր: Սիւնէն կախուած պարանը առաւօտեան մեղմ քամիէն հանդարտօրէն կը ճօճուէր:

Վահէն վայրկեան մը երկուք կիտած յօնքերով նստեցաւ սիւնին, ճօճուող պարանին ու հետզհետէ լայնացող ժպիտ մը ծածկեց երեսը: Հանդարտօրէն դառնալով քովը Վանդնող սպային՝ բոլորովին անտարբեր ձեւով մը ըսաւ.

— Սիւնը շիտակ չեն տնկած, դէպի ետ ծռած կ'երեւի... բայց վնաս չունի, ծանրութիւնս ալ մեծ բան մը չէ... նոյնիսկ բանտապետի ծանրութեանն ալ կը դիմանայ... Անանկ չէ՞: Ձէ՛, մի վախնար, Սուլթանի հա-

ւատարիմ ծառաները չեն կախեր, ձեր կարգը վերջէն պիտի դայ:

Ու բանապետի երեսն ի վեր ծիծաղեցաւ:

Մինչ կարտիան մը կ'օգնէր Վահէին ոտքի վրայ մը նալու, մէկ ուրիշը անոր ձեռքերը բարակ չուանով մը ետեւէն իրարու կապեց: Ուղիղ սիւնի դէմն ու դէմը, աթոռներու վրայ բազմած էին կառավարական բարձր պաշտօնեաները, ինչպէս նաեւ օտար քոնսիւլներու թարգմանները: Անոնց շարքին կծկուած էր Քաղաքամէջի քահանաներէն մէկը, որ վերջի պահուն կանչած էին, առանց յայտնելու թէ ինչո՞ւ համար:

Երբ Վահէն կանգնեցուցին ուղիղ սիւնի տակը, աթոռի մը մօտ, դատարանի քարտուղարներէն մէկը ոտքի ելլելով՝ սկսաւ կարգալ Սուլթանի իրատէն, որով կը հաստատէր մահուան վճիռը: Բոլորը ոտքի ելած՝ կ'ունկընդդէին: Վերջացաւ: Ոստիկանապետը, մօտենալով փսիսաց քահանայի ականջին:

Ծերունի քահանան, բոլորովին գունաթափ, ոտքերն ու ձեռքերը դող ելած, մօտեցաւ Վահէին, մինչ արցունքի խոշոր կաթիլներ ալեփառ մօրուքին վրայ կ'իյնային:

— Զաւակս, նահատակ զաւակս... Աստուած օգնէ քեզ... Աստուած իմ, Աստուած... զաւակս, բան մը ունի՞ս ըսելիք... խոստովանանք մը...

Բանտէն դուրս գալէն վերջ, առաջին անգամ լինելով Վահէի մարմարէ դէմքին վրայ վշտի վաղանցուկ արտայայտութիւն մը նկարուեցաւ: Տխրօրէն ղիտեց քահանան ու ինքզինք հաւաքելով մեղմօրէն ըսաւ.

— Տէր հայր, քեզի բան չունիմ ըսելիք, իմ ըսելիքս ասոնց համար է: Ծնորհակալ եմ որ եկար... Իմ հայրս ալ ծերունի մ'էր քեզի նման, ձեռքդ մօտեցուր՝ համբուրեմ...

Մինչ Վահէն իրեն երկարուած ձեռքը կը համբու-

րէր, քահանան ծոեցաւ ու հարազատ հօր քնքշութեամբ Վահէի ճակատը համբուրեց:

— Զաւակս... հայրենիքի նահատակ զաւակս...

Բայց քահանան այլեւս չկրցաւ շարունակել: Ոստիկանապետը խստօրէն անոր թեւէն բռնած՝ մէկդի քաշեց ու դառնալով սիւնի քով կանգնած բոշա երիտասարդին, հրամայեց.

— Հայտէ՛, շուտ գործիդ անցիր...

Վահէն բարձրացուցին աթոռին վրայ, բոշա երիտասարդն ալ ուրիշ աթոռի մը վրայ բարձրացաւ, պարանի սապոնած օղակը անցուց Վահէի վիզը ու վար իջաւ, ձեռքը դրած Վահէի կանգնած աթոռի յենարանին, տըրուած նշանի մը վրայ աթոռը Վահէի ոտքերու տակէն ետ քաշելու համար:

Դատարանի քարտուղարը մօտենալով՝ բարձր ձայնով մը հարցուց.

— Դատապարտեալ Վահէ, արդարակոբով դատարանի որոշումով եւ Օգոստափառ Վեհապետի հրամանով, որու գահը յաւիտեանս յաւիտենից անասան պիտի մնայ, քու անիծապարտ գաղափարներուդ, եւ գործած ոճիրներուդ համար, դատապարտուած ես կախուելու: Ըստ ընկալեալ սովորութեան, վերջին խօսքի իրաւունք ունիս, թերեւս խնդիրք մը, աղերս մը ունիս:

— Խնդի՞րք, աղե՞րս... անշո՛ւշտ, մեռնող մը բան մը կ'ունենայ խնդրելու...

Վահէի դէմքին վրայ չար ժպիտ մը խաղաց, երբ տեսաւ, թէ ինչպէ՞ս աթոռներու վրայ բազմած պաշտօնեաները իրարու ականջի սկսան փսիսալ:

— Պիտի խնդրէի, — շարունակեց Վահէն հեղնօրէն, որ այս բոշան հեռացնէք աթոռիս քովէն, մինչեւ որ խօսքս վերջացնեմ...

Քարտուղարի գլխի հաւանութեան նշանին վրայ,

ոստիկանապետը բողայի թեւէն բռնած քանի մը քայլ
ետ տարաւ զայն :

— Այսպէս աւելի լաւ է . երկար ըսելիք չունիմ , դա-
տարանի մէջ խօսեցայ արդէն... Հարցուցէք դատաւո-
րին , թէ եւ ան շատ ալ չախորժեցաւ ըսածներէս : Այն-
պէս չէ՞ , դատաւոր պէյ : Շատ մեծ բազմութեամբ եկած
էք բարի ճանապարհ մաղթելու ինձ : Շնորհակալ եմ :
Թուրք մեծահոգութեան նշան է... Կախաղանի չուանը
վիզս անցուած է արդէն , երթալէ առաջ կ'ուզէի մեծ ա-
ւետիս մը տալ ձեզ : Ես որ քանի մը վայրկեան վերջը
յաւիտենականութեան պիտի միանամ , որոշակի կը լսեմ
օսմանեան կայսրութեան փլուզումի ճարճատիւնը...
Դուք չէ՞ք լսեր... Վա՛յ ձեզի , որ ահանջ ունիք եւ չէք
լսեր , աչք ունիք ու չէք տեսներ... Դուք անընդունակ
դիտելու , կը փորձէք կախաղաններով սարսափեցնել հայ
ժողովուրդը . մե՛նք՝ յեղափոխականներս պատրաստ ենք
ծիծաղելով դիմաւորել մահը : Բայց դուք այդ չէք կըր-
նար հասկնալ : Աւելի վատ ձեզ համար : Մենք հայրենի-
քի ազատութեան համար ուրախութեամբ կը մեռնինք ,
դուք ձեր դոյութիւնը պահելու համար , սարսափով
կ'ապրիք... Մոնկոլական դիշատիչ բնադրով , դարեր
շարունակ դուք քանդեցիք , դուք առանց շէնցնելու , ա-
մայացուցիք մեր շէն երկիրը... Հիմա ես ձեզի կ'ըսեմ .
Դուք քանդելով պիտի քանդուիք , ամայացնելով պիտի
ամայացնէք ձեր օճախը . որովհետեւ դուք անարժան
ժողովուրդ մ'էք , դուք անէծք մ'էք մարդկութեան երե-
սին նետուած : Դուք չսովրեցաք բարձր իտէալի մը հա-
մար զոհուիլ... Դուք չսիրեցիք հայրենիքը , որովհետեւ
դուք այս երկրին մէջ օտարներու նման ապրեցաք : Դուք
քանդեցիք ու կողոպտեցիք միայն : Դուք եկեր էք ահա-
նատես լինելու իմ մահուան : Լաւ , ուրեմն , տեսէք , թէ
ինչպէ՞ս կը մեռնի հայ յեղափոխական մը... Կեցցէ՛ ա-
զատութիւնը... Կեցցէ՛ հայ ժողովուրդը...

Եւ Վահէն բոլորովին անսպասելի շարժումով մը ա-
թուր մէկդի հրեց ոտքի տակէն : Մարմինը ծանրօրէն եր-
կու ոտք վար ինկաւ : Պարանի օղակը սեղմուեցաւ եւ
անկման ուժգնութենէն կոտրեց Վահէի վզոսկրը :

Հաղիւ չորս հինգ վայրկեան նոր մորթուած վառ-
եակի նման թպրտաց Վահէն ու մէկ ալ բոլորովին թուլ-
ցած՝ մարմինը անկենդան կախուեցաւ պարանի ծայրէն՝
թեթեւակի ճօճուելով :

Վահէն մեռած էր :

ՎԱՀԷԻ ՎԵՐՁԻՆ ՆԱՄԱԿԸ

Հմայեալիենց տանը արտակարգ կենդանութիւն կը տիրէր: Լեւոնը եւ ընկերները այդ գիշեր, սովորականէն քիչ մը ուշ, անակնկալ կերպով եկած էին ցերեկը հոն անցընելու համար: Հմայեալի մայրը, թոնիրի վերայ կուացած, այդ բազմութեան համար կէս օրուան ճաշը կը պատրաստէր: Հմայեալի փոքր քոյրը, զանգրահեր չարածճի աղջնակ մը, մօրը փէշէն բռնած, լեզուին կուտար՝ սենեակի մէջ հաւաքուած օտարական մարդոց մասին խօսելով:

— Մարէ, էն պետ պետ մարդը...

— Աղջի, ձէնդ կտրէ, մէկ էն շերտիւր տուր...

— Քա, մարէ, այգիէն նոր մարդիկ կուզան... պօյ, պօյ, պօյ, որքա՞ն մարդիկ կուզան: Հիմա ախպերս դպրոցէն կուզայ... Մայրիկ, ի՞նչ կ'եփես, թանապո՞ւր...

Ձբաղած մայրը ուշադրութիւն իսկ չէր դարձներ աղջկան պլպլոցներուն: Թէեւ կերակուրի պատրաստութեամբ զբաղած էր, բայց ծանր մտահոգութիւն մը կը ճնշէր սիրտը: Յեղափոխականները սիրել՝ կը սիրէր անշուշտ, ազգի մարդիկ էին, բայց եթէ կառավարութիւնը իմանար անոնց գտնուած տեղը, այնքան տներ այրուած էին անոնց պատճառով: Ինք, խեղճ այրի կին մը, երկու որբերով ծանրաբեռնուած, Աստուած չընէ, եթէ բան մը պատահելու լինէր... եղած չեղածը մէկ տուն մ'էր, եթէ այն ալ այրուէր... Մինուճար դաւակը, դեռ դպրոց կ'երթար: Խեղճ կնոջ ապագայ յոյսն էր այդ պատանին: Բայց ան ալ, խելքը միտքը տուած ազգի դործերուն, մօր սիրտը ահ ու դողի մէջ կը պահէր:

Այգիի վրայ նայող սենեակին մէջ սովորականէն ա-

ւելի բազմութիւն մը կար: Բացի Լեւոնի մշտական ընկերներէն, տեղացի հին ընկերներէն շատեր եկած էին խորհրդակցելու կացութեան մասին: Քաղաքի ակնկոծ վիճակը, Վահէին սպառնացող վտանգը, կառավարութեան խստութիւնները ծանր հոգեկան վիճակ մը ստեղծած էին: Ասով մէկտեղ, հոգեբանական տեղատուութիւն մը սկսած էր շատերու մէջ, ոմանք, որ առաջ խոհեմութենէ կը քարոզէին, պատրաստ էին պայքարի մէջ նետուելու: Այս տրամադրութիւնը հետզհետէ վարակիչ հանգամանք մը կը ստանար:

Սմէն եկող նոր լուր մը կը հաղորդէր: Ոմանք կը պնդէին, թուրքերէ լսած լինելով, թէ կառավարութիւնը որոշած է կախաղանի վճիռը Բաղէշի մէջ իրազործել, թէ մէկ երկու օրէն Կաւաչ-Կարճկանի ճամբով Վահէն հոն պիտի ճամբուի: Ուրիշներ, ընդհակառակը, կը պնդէին, թէ իրենք վստահելի աղբիւրէ լսած են, որ Վահէն Կարին պիտի ճամբուի, կախուելու համար այդ քաղաքին մէջ, ուր վերջերս ժողովրդական շարժում մը ծայր տուած էր:

Կային ուրիշներ ալ, որոնք կ'ըսէին թէ՛ թէեւ Վահէն Բաղէշ պիտի զրկուի, բայց կառավարութիւնը վախնալով որ յեղափոխականներու կողմէ ճանապարհին զայն փախցնելու փորձ մը կրնայ կատարուիլ, որոշած է առաջատանաւում Գատուան ճամբել, անկէ ալ ցամաքով՝ Բաղէշ:

Իրարու հակասող այս լուրերը, ինչպէս վերջէն յայտնի եղաւ, կառավարութիւնը ինք տարաճայնել արւած էր, որպէսզի կատարուած իրողութեան մը առջև դնէ յեղափոխականները:

Լեւոնը, այդ լուրերը ստանալով, արդէն սուրհանդակ հանած էր Կաւաչի շրջանը՝ թելադրելով այդ տեղի ընկերներուն աչալուրջ հսկողութեան ենթարկել ճանապարհները եւ կասկածելի շարժում մը նկատելու պա-

գային, անմիջապէս խմացնել Պիծային: Միեւնոյն կարգադրութիւնը եղած էր Թիմարի շրջանի մասին: Ատկէ դատ Աւանց լուր ճամբուեցաւ հսկելու առաջատանաւերու շարժումներուն վրայ:

Լեւոնը, թէեւ շրջապատուած քաղմաթիւ ընկերներով, բայց կարծես մինակ կը դգար ինքզինքը, ծանր թախիծ մը հոգին կը ճնշէր, իր մտքերով տարուած, հազիւ թէ կը լսէր շուրջիններու խօսակցութիւնը: Գետնափորի անյաշողութիւնը ուղղակի խորտակած էր հոգին: Ծիչդ է, նոր ծրագիրներ կ'որոճար, միջոցներ ձեռք կ'առնէր, բայց հոգիին մէջ անակերականդնելի աւեր մը գործուած էր: Որքան ալ որ նոր կարգադրութիւններ կ'ընէր, նոր միջոցներու մասին կը մտածէր, բայց ներքին ձայն մը կարծես կը շնչար ահանջին. «Ի՞նչ որը ի դուր, վահէն կորած է»:

Կէս օրուան ժամանակն էր, երբ Հմայեակը դպրոցէն եկաւ ու, փոխանակ ամէն օրուան նման ուրախ դուարթ մօր ու քրոջը հետ կատակելու, գլուխը կախած ուղիղ Լեւոնի դռնուած սենեակը մտաւ: Բնականէն երկար դէմքը կարծես ա'լ աւելի երկարած էր: Ծշմած արտայայտութիւն մ'ունէր ու այնքա՛ն յուզուած էր, որ երբ սկսաւ խօսիլ, կը կտկտէր ու բառերը դժուարութեամբ բերնէն դուրս կուգային:

— Պարոն Լեւոն... դպրոցէն գալու Նորաշէնի փողոցի մէջ կառապան Տիգրանին հանդիպեցայ... Քաղաքէն կուգար... պատմեց... պատմեց, որ պարոն Վահէն...

— Ի՞նչ, ի՞նչ պատահած է,— չորս կողմէն լսողները վրայ տուին:

Լեւոնը կարծես կանխազգացում մ'ունեցաւ, առանց բառ մը արտասանելու գլուխը կախեց:

— Պարոն Վահէն կառավարչատան առջեւ... այս առտու... կախեր են...

Լուրը այնքան անսպասելի, շփոթուցիչ էր, որ լրտողները կարծես Հմայեակի խօսքերը չհասկնալով՝ ապշած իրարու կը նայէին:

— Էօ՛Ք...

Առիւծ Գեւօն էր, որ փափախը գլխէն հանելով՝ գետին դարկաւ:

Սարսափելի ճնշող լութիւն մը ծանրացաւ սենեակի մէջ. ներկաները կարծես կը վախնային շարժում ընելու, ձայն մը հանելու:

— Էօ՛Ք, արհուս վահէն,— ու կարմիր թաշկինակ մը ծոցէն հանելով՝ Առիւծ Գեւօն արցունքաւ աչքերը սրբեց,— արհուս եղաւ վահէն, մեր թեւը կոտորուեցաւ:

Որ սուգով համակուած, հաւաքուած ընկերները մէկիկ մէկիկ ցրուեցան: Լեւոնի հետ մնացին իր զինուոր ընկերները:

Ժամեր շարունակ, սենեակին մէջ ձայն մը չսուեցաւ, բացի Առիւծ Գեւոյի խոր հառաչանքներէն, որոնց մէջէն, կարծես արցունք կը կաթկթէր:

Երեկոյեան կողմ Գաղաքամէջէն եկաւ Նշանը: Սատիկ այլայլած ու ընկճուած տեսք մ'ունէր: Լեւոնի մօտ նստելով՝ գրպանէն հանեց ծրար մը, ու հագիւ լսելի ձայնով մը շնչաց.

— Մէջը նամակ ալ կայ... կախուելէն մէկ երկու ժամ առաջ դրած է... Գիչ առաջ մեր մարդը բերաւ...

Լեւոնը բնազդօրէն ձեռքը երկնցուց, վերցուց ու հայեացք մը նետեց ծրարի վրայ: Յանկարծ դէմքը ալ աւելի դունաթափուեցաւ, շրթները դողացին ու անպարեց ծրարը գետին դնել, կարծես թէ ան կրակի կտոր մը լինէր, ձեռքը պիտի այրէր:

Վահէի մահուան լուրը ստանալէ վերջ, Լեւոնը ժամերով նստած տեղը անշարժ մնացեր էր, անյատակ յուսահատութիւն մը աչքերուն խորը: Կարծես կենդանի մեռած մը լինէր, շարժումները մեքենական, դէմքը եր-

կարած ու քարէ կերտուած, կիսախոռակ աչքերը մեռելի աչքերու նման պաղած ու անշարժ:

Նշանը, մօտ ընկեր մ'էր, տարիներու յեղափոխական մը, լաւ ու վատ օրեր տեսած, ծանր պայմաններու մէջ աշխատած, բայց երբեք դէմքին ծիծաղը չէր պակասած, այժմ սակայն, կէս ժամու չափ նստելէ վերջ, դըլ-խիկոր մեկնեցաւ, թոյլորովին ընկճուած վիճակի մէջ:

— Ես վաղը երեկոյ նորէն կուգամ, — հողոց հանելով ըսաւ մեկնած պահուն, — թերեւս ուրիշ նորութիւններ լինին... Ո՞ր տեղ կրնամ քեզ հանդիպիլ...

Լեւոնը չլսեց իսկ ընկերոջ վերջին հարցումը: Հայեացքը պատուհանէն դուրս անորոշ կէտի մը սեւեռած՝ կը մտածէր: Ո՞վ գիտէ, թերեւս չէր ալ մտածեր, անհր-նարին վտի ծանրութեան տակ ընկճուած, գիտակցա-կան ետը թմրած էր:

— Մենք քեզի կ'իմացնենք, — Նշանի թեւէն բռնած մէկ կողմ քաշեց Առիւծ Գեւօն, — կը տեսնես թէ ի՞նչ հալի մէջ է... մի՛ խօսեցներ...

Նշանի մեկնելէն վերջ, Հմայեակն ու մայրը թէեւ քիւրսիի վրայ ընթրիքի սեղանը շտկեցին, բայց ոչ ոք մօտեցաւ: Առիւծ Գեւոյի գլխի բացասական շարժումին վրայ, Հմայեակի մայրը սեղանը հաւաքեց ու մեկնեցաւ, մինչ Հմայեակը կամաց մը տեղաւորուեցաւ իր ընկերոջ, Տաճատի կողքին:

Մթնիլ սկսաւ: Քիւրսիի վրայ դրուած ճրագի աղօտ լոյսը հագիւ կէս խաւար կը լուսաւորէր ընդարձակ սենեակը: Փոխադրուելու ժամանակը կը մօտենար, բայց Լեւոնը կարծես այդ մասին չէր ալ մտածեր: Ի դուր մէկ երկու անգամ բարձր ձայնով հաղաց Առիւծ Գեւօն, Լեւոնի ուշադրութիւնը գրաւելու համար:

Երկար ժամանակ միեւնոյն դիրքով մնալէ վերջ, մէկ ալ Լեւոնը դուրսը դարձուց, կողքին դրուած ծրարը դիտեց վայրկեան մը ու վարանոտ շարժումով ծրարը

վերցնելով՝ հանդուցուած թաշկինակը բացաւ: Ծրարին մէջ բացի Վահէի ժամացոյցէն, արծաթ մատիտակալէն, ծխափողէն ու ոսկի օղակ մատանիէ մը, իրարու մէջ անցըած երկու տոմսակներ կային: Մէկը հայերէն գրուած նամակ մ'էր, ուղղուած Լեւոնին, իսկ միւսը ռուսերէն երկտող մը: Պարզ էր, թէ որո՞ւ կը պատկանէր այդ երկտողը:

Լեւոնը, պղտոր աչքերով մէկ երկու վայրկեան հայեացքը նամակի վրայ պտըտցնելէ վերջ, բարձրաձայն սկսաւ կարդալ իրեն ուղղուած նամակը, մինչ ընկերները, դուրսնին կախած, առանց ձայն ձուն հանելու, երկիւղածութեամբ կը լսէին Վահէի վերջին խօսքերը, որ արդէն սրբազան կտակի մը հանգամանքն ունէր, աւանդ ձգուած յեղափոխութեան զինուորներուն:

Մթնելէն ժամ մը անցած էր, երբ Ուրանցցի Յակոբը եկաւ, ինչպէս նախորդ իրիկուն պատուիրած էր Լեւոնը: Վահէի եղբրական վախճանը լսած էր արդէն: Մզաւորի նման, գլուխը կախ, առանց խօսելու ներս մը-տաւ սենեակէն, ու քիւրսիի կշտին տեղաւորուեցաւ:

— Երանի ես մեռնէի անոր տեղը, — աչքերը սրբելով շնջաց Առիւծ Գեւօն, — հազարներու մէջ մէկ հատիկ էր Վահէն:

Յակոբը, առանց խօսելու, սեղմեց Առիւծ Գեւոյի ձեռքը:

Կէս ժամ վերջը, Լեւոնը մեքենական շարժումով չանթան հաւաքեց, ու ոտքի ելաւ:

— Այս գիշեր եւ վաղը ցերեկ այստեղ կը մնաք, — խօսքը Առիւծ Գեւոյին ուղղելով ըսաւ Լեւոնը, — հոս կը սպասէք, մինչեւ որ ինքս գամ: Իսկ այժմ, Յակոբ, մի-ասին դուրս ելնենք:

Երբ երկու ընկերները դուրս եկան այգին, Յակոբը հարցուց.

— Հիմա ո՞ւր կ'ուզես որ երթանք...

— Շիրակ ձեզ մօտ :

Յակոբն ու Լեւոնը այդիէ այդի անցնելով՝ հասան Սոնիայի բնակարանը : Երբ սանդուխներէն բարձրանալով Լեւոնը ներս մտաւ սենեակը, Սոնիան քիչ մը դարձացած այդ անակնկալ այցելութենէն, մեքենաբար մօտեցաւ ու առանց բառ մը արտասանելու, սեղմեց Լեւոնի ձեռքը : Լեւոնի դէմքը, պարզօրէն կը խօսէր աղու հոգեկան տառապանքի մասին :

Կողք կողքի դիւանի վրայ նստան, Լեւոնը գլուխը սեղմած ձեռքերով, մինչ Սոնիան կարեկցաբար կը նայէր Լեւոնի տառապանքէ կծկուած դէմքին, անոր հաշմըւած ձեռքի ջղային կծկումներուն :

Սոնիան այդ առտու շատ կանուխ, հիւանդի մը այցելութեան զնացած միջոցին, հայ խանութպանէ մը լըսած էր Վահէի կախաղան հանուելը : Այնքան սարսափելի անակնկալ մ'էր այդ լուրը, որ առջի պահուն չէր ուզած հաւատալ, բայց երբ մէկ ուրիշ ծանօթի մը հանդիպելով, միեւնոյն տեղեկութիւնը ստացաւ, այլեւս համոզուեցաւ, որ այդ դժբախտ լուրը իրողութիւն մ'էր : Առջի գիշեր ուշ ատեն Յակոբը վերադարձեր էր Լեւոնի մօտէն եւ հնարաւորութիւն չէր ունեցած մանրամասնօրէն պատմելու պատահած դժբախտութեան մասին :

Վահէի կախաղան բարձրանալը շքեցնող հարուած մ'եղաւ Սոնիայի համար : Մինչդեռ կը սպասէր Վահէին հանդիպել, ժամանակի մը համար իր տանը մէջ պատըսպարել, ահա կը լսէր անոր մահուան գուժը : Դեռ օր մը առաջ, այնքան վստահ խօսքերով յուսադրած էր Խատիճէն, հաւատացուցեր էր մանկամարդ կնոջ, թէ Վահէն շատ շուտով պիտի աղատուէր բանտէն ալ իրեն սպառնացող կախաղանէն ալ, եւ որ մտահոգուելու բոլորովին հիմք չկար այլեւս :

Սոնիան հոգեկան ծանր տառապանքով սպասած էր Խատիճէի գալուն, վստահ՝ որ ան լուրը առնելուն պէս

անմիջապէս իր մօտ պիտի վազէ : Բայց Խատիճէն սովորական ժամին չերեւցաւ : Ժամ մը սպասելէ վերջ, Սոնիան մեծապէս մտահոգուած՝ ինք զնացած էր Խատիճէն տեսնելու : Դեռ վեր չբարձրացած՝ Խատիճէի պառաւ ստնտուն, Հիւսիսային Կովկասէն եկած չէրքէզ կին մը, մղկտալով յայտնած էր, թէ երիտասարդ խանութը, առաւօտեան երբ Հիւսէյին բէկի հետ նստած թէյ կը խրմէին, ղոլամներէն մէկը ներս մտնելով բէկին պատմած էր Վահէի կախուելու մասին : «Մէկ ալ լսեմ, որ վերէն զիս կը կանչեն», շարունակած էր ստնտուն, «վեր ելլեմ ու ի՛նչ տեսնեմ, Խատիճէն մեռելի նման երկնցած, բէկն ու ղոլամները շուարած, չորս բոլորը կը դառնային, առանց իրական օգնութիւն մը հասցնելու անոր : Գրկելս ու իր սենեակը տանիս մէկ եղաւ : Անկողին դրի, երեսին ջուր սրսկեցի... Պառկած էր որպէս թէ մեռած լինէր : Հազիւ երբեմն մեղմօրէն կը վնկար : Օ՛Ք, աղջիկս ձեռքէս կ'երթայ...»

Սոնիան առանց այլեւայլի աճապարած էր վեր բարձրանալ : Հազիւ սենեակի դռնէն ներս մտած՝ Խատիճէն զայն տեսնելով, անկողնէն ցատկած էր ու հեկեկալով փարած վզին, մինչեւ որ գիտակցութիւնը կորսնցնելով, նուաղելով ինկած էր գետին :

Խատիճէի մօտ երկար նստելէ վերջ, Սոնիան վերադարձած էր տուն մոայլ տրամադրութեամբ եւ բարձրանալով սենեակը՝ անձնատուր եղած էր ծանր խոհերու : Ատկէ քիչ վերջն էր, որ Լեւոնը բոլորովին անսպասելի կերպով յանկարծ երեւցած էր :

— Ծանր է, շատ ծանր խեղճ Խատիճէի վիճակը... կարծես խենթացած լինի, — առաջինը Սոնիան սկսաւ խօսիլ, զսպուած ձայնով մը, կարծես մեռելատան մը մէջ դտնուած լինէր :

— Բոլորիս համար ալ անդառնալի կորուստ մ'է Վահէի մահը, ա'լ աւելի մեծ կորուստ մը մեր շարժման հա-

Տար, — ձեռքերը դիտէն վար առնելով տիրօրէն խօսեցաւ
Լեւոնը, որու ձայնը դարմանալի կերպով մեղմ հնչակա-
նութիւն մը ստացեր էր. — Վահէի մահով յեղափոխա-
կան շարժումը անփոխարինելի ուժ մը կորսնցուց :

— Անշուշտ, անդառնալի կորուստ մ'է, եւ գործի ու
ժողովուրդի համար, բայց դուք՝ յեղափոխականները,
այս կեանքին մէջ կարծրացած՝ կրնաք դիմանալ սար-
սափելի հարուածին: Ես թերեւս կին մը լինելով՝ աւելի
կը մտածեմ Պատիճէի մասին... Դուք չէք գիտեր, թէ
ի՞նչ ողբերգութիւն մը կ'ապրի այդ դժբախտ կինը: Ե-
րէկ՝ դեռ այնքան վառ յոյսերով ոգեւորուած, իսկ
այսօր... Անհնարին տառապանք մը կ'ապրի այդ կինը:

— Դժուար չէ հասկնալը... նամակ մը ունիմ անոր
յանձնելի...

— Որմէ՞... — ու յանկարծ դիտի իյնալով թէ որ-
մէ՞ կրնար լինիլ այդ նամակը, Սոնիան թաշկինակով
արցունքոտ աչքերը սրբեց, ու կենդանի հետաքրքրու-
թեամբ նայեցաւ Լեւոնին դէմքին:

— Այո՛... ճիշդ գուշակեցի՛ք. մեռնելէն մէկ երկու
ժամ առաջ դրած է եւ խնդրած, որ նամակը ես անձամբ
յանձնեմ Պատիճէին, անձնական մանր մունր իրեղէն-
ներու հետ...

— Հրաշալի տպեղանի մը պիտի լինի այդ լուրը,
Պատիճէի համար, — ուրախացած, աւելի շատ ինքնիրեն
խօսեցաւ Սոնիան, — ափսոս, այժմ շատ ուշ է, թէ չէ՝
հիմա կ'երթայի լուր տալու... Ուրեմն, ձե՞զ ալ դրած
է... հետաքրքիր է շատ...

Սոնիայի խօսելու ձեւէն Լեւոնը հասկցաւ, թէ աղ-
ջիկը կը ցանկար իմանալ նամակի բովանդակութիւնը,
բայց չէր համարձակեր խնդրել:

— Կ'ուզէ՞ք կարդամ...

— Օ՛, անշուշտ, եթէ միայն կարելի է...

— Մասամբ ձեզ ալ կը վերաբերի... ստիպուած եմ

ինքս կարդալ, — ծոցէն վահէի նամակը հանելով՝ բա-
ցատրեց Լեւոնը, — երբեմն տողեր թուանշանով գրուած
են... զգուշութեան համար, որ օտարի մը ձեռք անցնե-
լու պարագային...

— Ի հարկէ, հասկանալի է. խնդրեմ:

Սոնիան արմուկը յենած բարձին՝ պատրաստուեցաւ
լսելու:

«Սիրելի Լեւոն եւ ընկերներ, — սկսաւ կարդալ Լե-
ւոնը՝ զգալիօրէն ձայնը յուզումէ դողալով, — ճակա-
տագրական ժամը մօտեցած է: Քանի պատեհութիւն
կայ, կ'ուզեմ երկտողս հասցնել, վերջին ծնաք բարովս
ըսելու համար, քիչ վերջը շատ ուշ կը լինի: Անշուշտ
ներելի է ինձ, կախաղանի ստուերի տակ կանգնած մէկու
մը համար, վերջին ցանկութիւն մը ունենալ: Կ'ուզեմ
ընկերներս հաւատան, որ վերջին ժամերս կ'ապրեմ այն-
պէս, ինչպէս ապրեցայ ամբողջ կեանքս: Կը մտածեմ
ձեր բոլորի մասին, մեր սրբազան գործի մասին, որու
վախճանը տեսնել ինձ չվիճակուեցաւ: Ո՞վ գիտէ,
թերեւս ձեզմէ շատեր աւելի բախտաւոր լինին, տեսնե-
լով հայրենիքի վայլուն ապագան, որու համար այնքան
թարմ երիտասարդներ իրենց կեանքը նուիրեցին:

« Ի հարկէ, դժուար է մեռնիլ այսքան երիտասարդ
տարիքի մէջ, երբ այնքա՞ն եռանդ կայ մէջս գործելու,
երբ այնքան երազներ կը մնան չիրականացած: Բայց
պէտք է հաշտուիլ անխուսափելիի հետ եւ պատրաստը-
ւիլ մահուան: Ես վստահ եմ, որ ձեզմէ ամէն մէկը հայ
ժողովուրդի ազատութեան համար սիրալոյսով իր կեան-
քը պիտի նուիրէր, ինչպէս նուիրեցին մեր հարիւրաւոր
ընկերները: Ես անոնցմէ ոչ մէկէն աւելի եմ: Զխօսինք
անձնական վշտի մասին: Մեզ՝ ժողովուրդի առաջնորդ-
ներու համար մահը գոյութիւն չունի, կայ միմիայն
ազգային գերագոյն նպատակը, որու համար պէտք է

զոհել ամէն ինչ: Մենք, այս ճանապարհէն քալողներս, անձնական կեանք չենք կրնար ունենալ:

«Սիրելի Լեւոն, կ'ուզէի մէկ երկու խօսք գրել գործի մասին... Բայց եթէ դիտնաս թէ ո՞ր տեղ կը գրեմ այս նամակը եւ ի՞նչ վիճակի մէջ... Այս գիշեր մեծահոգի բանտապետը զիս սենեակը տարաւ խոստովանցելու համար, որպէսզի ինձմէ իմանայ թէ՛ դրսէն ուղքօր փորեցին դետնափորը... Կրնաս երեւակայել, թէ ի՞նչ միջոցներու դիմեց զիս խօսեցնելու համար: Ինձ հետ էին Եկաւեանը եւ ուրիշ չորս ընկերներ: Սարսափելի կերպով տանջեր են խեղճերը, առանց խօսեցնել կարեւնալու:

«Ընդհանրապէս մեր բանտարկեալ ընկերները ամենածանր պայմաններու մէջ կ'ապրին: Անհրաժեշտ է հետաքրքրուիլ բանտը մնացած ընկերներու վիճակով... Շատեր կարօտ վիճակի մէջ են, նիւթական միջոցներէ զուրկ... պէտք է կանոնաւոր կերպով նիւթապէս օժանդակել: Վերջերս զաւառներէն բազմաթիւ նոր ձեռքա-կալուածներ լեցուցին բանտը: Մեծագոյն մասը մեր ընկերներէն են, կան ուրիշներ ալ, որոնք գեղերու աչքի զարնող մարդոցմէ են, հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ատոնց վիճակի վրայ: Առհասարակ, բանտարկեալներուն օգնելու գործին կրնայ նպաստել օրիորդ Սոնիան, իր ունեցած կապերու շնորհիւ...»

«Սեղճ Լեւոն, եթէ իմ կեանքս այսպէս յանդարծ կը կտրուի, քեզ ալ աւելի բախտաւոր կեանք մը չվիճակուեցաւ, ո՞վ գիտէ, թերեւս կենդանի մեռածի կեանք ապրիլը աւելի դժուար է, քան կախաղան բարձրանալը»:

Սոնիան մինչ այդ, առանց ղերքը փոխելու, լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէր: Բայց երբ Լեւոնը վերջին տողերը կը կարդար, յանկարծ ղերքը փոխեց եւ ուշադրութեամբ անոր նայելով՝ ըսաւ.

— Լաւ չհասկցայ այդ վերջի տողերու իմաստը...

Ինչո՞ւ համար Վահէն ձեզ կենդանի մեռած կ'անուանէ... Ներեցէք, եթէ անհատական գաղտնիք մ'է, — ու Լեւոնի շփոթիլը նկատելով՝ զղջաց այդ անխորհուրդ հարցումը տուած լինելուն համար:

Լեւոնը խուսափեցաւ ուղիղ Սոնիային նայելէ: Մէկ երկու բոպէ լուռ մնաց՝ ձեռքի նամակին հետ խաղալով, ու ապա անտարբեր ձեւով մը ուտերը վեր քաշեց, որպէս թէ լսել ուզէր՝ «Իսկապէ՛ս, իմ ալ զարմանքս կուգայ, խելքս չի հասնիր թէ ինչո՞ւ համար այդպէս գրած է»:

— Ոնդրեմ շարունակեցէք... կը ցաւիմ որ ընդմիջեցի ձեզ, — անտարբեր ձեւանալով խօսեցաւ Սոնիան, կուահելով, որ այդ մասին Լեւոնը չէր ուզեր բացատրութիւն մը տալ:

«Վերջին անակնկալ դէպքերը, — վարանոտ ձեւով շարունակեց Լեւոնը նամակի ընթերցումը, — կը ստիպեն ձեզ վերադնահատումի ենթարկել մեր նախկին գործունէութիւնը: Հարցը գլխաւորապէս գործնական ձեւերու կը վերաբերի: Դժբախտաբար, ժամանակ չունիմ երկարօրէն փոսելու այդ հարցերու մասին, կը բաւականանամ միայն հարցերը շարելով: Դուք արդէն երկար ժամանակ կ'ունենաք անոնցմով զբաղուելու, հանգամանօրէն քննելու զանոնք: Գլխաւորը՝ զինական ուժի կեդրոնացման հարցն է, քաղաքի մէջ կամ անմիջական շրջակաները: Իմ կարծիքովս, մինչեւ որ մտադրուած ձեռնարկի մը ժամանակը հասած չլինի, ամէն կերպ պէտք է խուսափիլ կեդրոնացման ախթեմէն, որու կործանարար (հետեւանքները դժբախտաբար տեսանք: Չնախատեսուած դէպք մը, ու ահա տարիներու աշխատանքով հաւաքուած զինական պահեստները կառավարութեան ձեռքը վ'անցնին, ու մենք նորէն սկիզբէն պիտի ակսինք, անչափ եռանդ ու մարդկային զոհեր տալով:

«Երկրորդ անմիջական հարցը ժողովրդական դէնքերու ապահովութեան խնդիրն է: Ներկայ պայմաններու

մէջ, ինչպէս արդէն ձեռնարկեր էք, պէտք է այդ գէն-
քերը հաւաքել ու թագստոցներու մէջ պահել: Իմ կար-
ծիքով առ այժմ քու քաղաք մնալը աւելորդ է: Անցիր
չրջանները, մասնաւորաբար Շատախ ու Մոկս, աշխա-
տէ ժողովրդական գէնքերը փրկել կորուստէ... Միեւ-
նոյն ժամանակ քու եւ ընկերներուդ ներկայութիւնը կ'ո-
գեւորէ գիւղացիութիւնը, որոնք անտիրական մնալով
կրնան թողորովին յուսահատիլ:

«Պէտք է խուսափիլ այլեւս զինատար խմբերու գոր-
ծունէութենէն: Վերջին երկու տարուան փորձառութիւ-
նը մեզ համար համոզեցուցիչ պիտի լինի, որ կողմնակի
միջոցներով աւելի արդիւնաւէտ ձեւով կրնանք Յրկիր
գէնք մտցնել, առանց մարդկային կորուստներու, քան
նախկին ձեւով, երբ ամէն մէկ գէնք, հայդուկի մը
կեանքի գնով երկիր վը մտցնէինք:

«Տարիներու մեր յեղափոխական գործունէութիւնը
Յրկիրին մէջ հասցուց գէնքի վարժ կռուող երիտասարդ-
ներու պատկառելի թիւ մը: Պէտք է մտածուած ձեւով
մը օգտագործել այդ ուժերը՝ խուսափելով անհարկի
կռիւնների, որոնք բացի մարդկային կորուստներից, այս-
պէս թէ այնպէս մեր գործի ընթացքը վը կասեցնեն:

«Ընդհանուր շարժումի մը պարագային, զինուորա-
կան ղեկավարները ժողովուրդի ծոցէն իսկ դուրս կու-
գան, պէտք է միայն ռազմունակութիւնը ընդհանուր ե-
րեւոյթ մը դարձնել: Ասոր համար ալ Պիծայի, Գէորդ-
գի, Մոսոյի եւ քեզ հետ պտրտող զինուորներու մէկ մա-
սը շուտ շուտ պէտք է փոխել, մինչեւ որ մեր երիտա-
սարդութիւնը մասսայականօրէն ֆեդայու դպրոցէն ան-
ցած լինի:

«Բանտարկուած հարիւրաւոր ընկերները ազատելու
մասին, լրջօրէն մտածելու էք եւ պէտք է համապատաս-
խան միջոցներու գիւմէք: Թուրքիոյ մէջ ամենազօր դրա-
մով ամէն ինչ կարելի է: Մեր բարեկամ Ն. էֆէնտին

տեսնել եւ կաշառք խոստանալու է, որ աշխատի փրկել
բանտարկուածներէն թեթեւ յանցանքներով դատապար-
տուածները: Ի հարկէ, խօսքս Եկաւեանի, Գարեգինի,
Ներսէսի մասին չէ, բայց կարելի է անոնց վճիռներն
ալ մեղմացնել, եթէ աշխատող մը լինի... Յամենայն
դէպս մի մոռնար մեր բանտարկուած ընկերները:

«Վանքի ապրանքները առ այժմ թող այնտեղ ալ
մնան, մինչեւ որ այս փոթորիկը անցնի: Սեպտեմբերին
կարելի է մտածել զանոնք ներս անցընելու մասին:

«Չոփուրի խնդիրքը անտես մի՛ ըներ: Թո՛ղ վանքէն
մէկը անցնի Արասլու ու այնտեղ կրպակ մը բանալով
գործի ձեռնարկէ, ատով հեշտացուցած կը լինինք Չո-
փուրի գործը:

«Որեւէ ձեւով աշխատելու ես քիւրտ Գոլոզը վեր-
ջացնել: Խնդիրը անոր գողացած մէկ ձիու ու հրացանի
մասին չէ, այլ անոր առած քայլի ծանրակշիռ հետե-
ւանքներու մասին է: Եթէ այդ Գոլոզը չպատժուի, մեր
հմայքն ու հեղինակութիւնը մեծապէս ինկած կը լինի
մեզ հետ գործ ունեցող քիւրտերու աչքին: Այս հան-
գամանքը պէտք է մտքէ հանել: Գոլոզը ամէն գնով
պէտք է պատժուի:

«Տէ, սիրելիս, յոգնեցայ գրելէ: Երբ վաղը արեւը
ծագի, իմ կեանքիս վերջին վարագոյրը արդէն քաշուած
կը լինի: Չարժէ տրտմիլ ասոր համար: Ես բոլորովին
խաղաղ սրտով կը դիմաւորեմ մահը: Ես իմ պարտքս
կատարեցի: Սրտագին կը համբուրեմ ընկերները... Կը
սեղմեմ անոնց կոշտացած ձեռքերը, ուժ ու եռանդ կը
մաղթեմ անոնց՝ շարունակելու մեր սրբազան կռիւը,
որմէ այնքան անակնկալ կերպով կը բաժնուիմ ես:

«Իմ անդին Ղեւոն, կը յիշե՞ս երբ առաջին անգամ,
մենք հանդիպեցանք իրարու, դու նորահաս պատանի մը
այն ժամանակ, անփորձ նոր սկսնակ մը: Ինձ համար
այդ բարեբախտ հանդիպումը բաւական եղաւ դնահա-

տելու քու արժէքը, դուշակելու քեզ վերապահուած դե-
րը: Ես չէի սխալուած: Դու այսօր տիրական դէմք մ'ես
Վատպուրականի մէջ ու ծանր պարտականութիւն մ'ու-
նիս ուսերուդ վրայ: Ինչպէս մինչեւ այժմ, ամուր պատ-
ուանդան մը եղար գործին, շարունակէ միեւնոյն ճանա-
պարհով: Մարդու անդնահատելի յատկութիւնը տալու
կարողութիւնն է. տալ առանց ասկարկութեան, առանց
փոխարինութեան մը ակնկալութեան: Իսկ այդ առաքի-
նութեան ընդունակ են միայն հողիով հարուստ քիչերը:
Դու այդ քիչերէն մէկն ես: Մտայէ հայ ժողովուրդին,
եղիր ժողովուրդին հետ, ահա քեզի ուղղած իմ վերջին
խօսքը: Ձերմօրէն կը համբուրեմ քեզ»...

Լեւոնի ձայնը հազիւ կը լսուէր: Սոնիան դէմքը
թաշկինակով ծածկած՝ լուռ կ'արտասուէր: Քանի մը
բոպէ վերջ, աչքերը սրբելով՝ մեղմօրէն հարցուց.

— Ո՞չ մէկ խօսք Խատիճէի մասին:

— Յետ գրութեան մը կայ, — նոյն ձեւով պատաս-
խանեց Լեւոնը, — երկտող մը միայն: Լսեցէք.

Չներհակ նամակը ինքը անձամբ յանձնէ տիրոջը,
ինչպէս եւ ծրարի մէջ գտնուած իրեղէնները: Ինձմէ
մնացած վերջին յիշատակներն են ատոնք... անբաւա-
կան յիշատակներ, որոնք թերեւս աւելի պիտի դառնա-
ցընեն զայն: Միակ դառնութիւնը, որ ամպոտած է հո-
գիս, այդ՝ հարազատ զաւակիս ապագայ վիճակն է:
Ձեմ դիտեր, թէ ի՞նչ կը լինի անոր կեանքը, թայց իմ
սիրելի Լեւոն, եթէ երբ եւ իցէ կարողանաս զաւակիս եւ
մօրը օգտակար լինիլ, ես վստահ եմ որ դու ուրախու-
թեամբ պիտի կատարես այդ, մեր ընկերութեան սիրուն
համար: Այդ մասին վստահ եմ: Քու հոգատարութեան
կը յանձնեմ զանոնք»:

Տիրեց երկարատեւ լռութիւն մը: Կարծես ոչ մէկը
կ'ուզէր խօսիլ: Ատեն մը վերջ, Սոնիան արցունքոտ աչ-
քերը սրբելով, շնչալով հարցուց.

— Ուրեմն, կ'ուզէք Խատիճէի՞ն հանդիպիլ: Ի հար-
կէ, այս տեղ...

Լեւոնը դրական իմաստով պլուխը շարժեց:

— Այդ պարագային, ես առաւօտեան կը հանդիպիմ
նախապատրաստելու համար զայն, իսկ կէս օրէ յետոյ
ինքը կը լինի այս տեղ:

— Կարգադրեցէք ինչպէս որ կ'ուզէք: Այժմ խօսինք
դործի մասին: Ես մէկ երկու օրէն քաղաքէն պիտի մեկ-
նիմ, պիտի անցնիմ Շատարի կողմերը:

— Ինչո՞ւ համար, — ահամայ դող ելած հարցուց
Սոնիան ու անմիջապէս ինքզինք հաւաքելով՝ սովորա-
կան հանդարտութեամբ շարունակեց, — մի՞թէ ձեր եր-
թալը անհրաժեշտ է:

— Կարծեմ: Վահէն իրաւունք ունի: Քաղաքի մէջ
պատահած փոթորիկը անցած կարելի է համարել: Ու-
չընչով օգտակար չեմ կրնար լինիլ այս տեղ այժմ: Այն
պահեստները, որոնք կառավարութեան ձեռքը չանցան,
փոխադրուած են ապահով վայրեր. իմ հոս մնալս աւե-
լորդ է: Այս պահուս կառավարութիւնը մեծ թափով
զաւառներու մէջ խուզարկութիւններ կը կատարէ: Ժո-
ղովուրդը տանջելով ու սարսափեցնելով՝ հարիւրաւոր
հրացաններ ձեռք անցուց: Ժողովուրդը սարսափահար
վիճակի մէջ բոլորովին բարոյալքուած, ընդունակ է յի-
մար քայլեր առնելու: Հարկաւոր է անձամբ ժողովուր-
դի մէջ գտնուիլ, աշխատիլ բարձր պահել անոր տրամա-
դրութիւնը, եւ ամենէն կարեւորը՝ կորուստէ փրկել մը-
նացած ժողովրդական զէնքերը: Այս աշխատանքին լրծ-
ուած են Գէորգը, Պիժան, Մոսօն, թայց անոնք միաժա-
մանակ ամէն տեղ չեն կրնար գտնուիլ, պէտք է օգնել
անոնց: Հետեւաբար ես ալ փոքր իմբով մը պէտք է
երթամ զաւառները շրջելու:

— Որ այդպէս է, ի հարկէ պէտք է երթաք: Թայց
չէ՞ք կարծեր, թէ քաղաքը չի կարելի առանց մարդու

Թողուլ: Չէ՞ որ մինչեւ այժմ գաւառները իրար կապողը քաղաքն եղած է: Հիմա, դուք ալ դուրս երթաք, չեմ հասկնար թէ այդ կապը ինչպէ՞ս եւ ո՞վ պիտի պահէ:

— Դո՛ւք, օրիորդ Սոնիա...

— Ե՞ս, կ'երեւի, կատակել կ'ուզէք, ես ի՞նչպէս կրնամ օգտակար լինիլ...

— Ծատ պարզ կերպով: Որ քաղաքը առանց դեկավաւարութեան պիտի մնայ, անշուշտ ցաւալի է, բայց անխուսափելի անհրաժեշտութիւն մը: Պէտք է գոհանանք լաւագոյնն ընելով: Մօտ երեք ամիս եղաւ ինչ այստեղ էք: Որոշ չափով ծանօթացած էք ժողովրդին, սերտ կապեր ստեղծած էք: Իսկ ամենակարեւորը ձեր անձին հանդէպ ստեղծուած վստահութիւնն է: Կուսակալէն սկսած մինչեւ յետին ոստիկանը ձեր վրայ կը նային որպէս անվնաս օտարականի մը, որ յեղափոխականներու հետ որեւէ կապ չունի: Պէտք է օգտաւործել այդ վստահութիւնը:

— Բայց ինչպէ՞ս, այդ է որ ես յստակօրէն չեմ տեսնար... Անշուշտ, դուք կը հասկնաք, որ ես պատրաստ եմ ծառայելու ինչով որ կրնամ, բայց...

— Հիմա պիտի բացատրեմ... Նախ՝ պէտք է անկեղծօրէն խոստովանիմ, որ ձեզ համար վտանգաւոր հետեւանքներ կրնայ ունենալ այս գործը...

— Խնդրեմ, վտանգի մասին մի՛ խօսիք, ես ուրախութեամբ կ'ուզեմ աջակցիլ ընդհանուր գործին, եթէ դուք միջոցը ցոյց տաք... Անձնական ապահովութեան մասին մտածելու ժամանակը չէ...

— Ծի՛ղդ է, իրաւունք ունիք: Դուք պիտի դառնաք գաւառները իրարու միացնող ներքին կապը, իմ բացակայութեան ժամանակ: Յակոբը կը լինի ձեր խորհրդականը, ան շատ լաւ կը ճանչնայ գաւառը ու գրեթէ բոլոր գաւառական գործիչները: Ուրեմն, ձեր գլխաւոր գործը կը լինի կապ պահպանել գաւառներու եւ մեր միջեւ:

Անձնապէս պէտք է խուսափիք երեւան դալէ, Յակոբը կը լինի դրսի մարդոց հետ յարաբերութիւն պահող անձը: Սուրհանդակները եւ տեղական վստահելի ընկերները մօտէն կը ճանչնայ, պէտք եղած պարագային գործի կը դնէ յարմարաւոր մարդը: Ասկէ զատ, արտասահմանէն մեզ համար ուղարկուելիք դրամը ձեր անունով պիտի դայ: Հեշտութեամբ կրնաք այնպէս մը կարգադրել, որ դրամը դանձելով՝ հասցնէք ուր որ թելադրուի ձեզ: Կը մնայ բանտարկեալներուն օգնութիւն հասցնելու խընդիրը: Այդ մասին ձեզ պիտի օժանդակէ մեր վստահելի ընկերներէն Նշանը... Բայց անհրաժեշտ է, որ ան ձեզ ճանչնայ...

— Որպէս յեղափոխական, — ժպտալով Լեւոնի միտքը լրացուց Սոնիան, — քանի որ վստահելի ընկեր մ'է կ'ըսէք, ես անպատեհութիւն մը չեմ տեսներ: Ինքս միջոց կը գտնեմ անոր հետ յարաբերելու... Ուրի՞շ...

— Առանց կասկած հրաւիրելու, աշխատիլ կուսակալի միջոցով բանտարկեալներու անտանելի վիճակը թեթեցնել տալ: Չարհուրելի պայմաններու մէջ կը գտնուին, ամէն օր ծեծ ու տանջանք...

— Կ'աշխատիմ, թէեւ յաջողութեանս այնքան ալ վստահ չեմ: Թերեւս կուսակալի կնոջ միջոցով կարողանամ ազդեցցութիւն բանեցնել... Ուրի՞շ...

— Քաղաքի անցուղարձեբու մասին երբեմն գրել Պիծային. — ստացած լուրերը ան կրնայ մեզ հաղորդել:

— Այդ մէկը հազիւ թէ կարողանամ, — ժպտալով պատասխանեց Սոնիան, — ես հազիւ թէ աշակերտի նման հայերէն կրնամ գրել:

— Իսկապէս, ես դարձացած եմ որ այսքան տանելի հայերէն մը սովորած էք, — առանց մտածելու ըսաւ Լեւոնը եւ յանկարծ գեղալով որ այդ խօսքերը կրնային զինք մատնել՝ լռեց:

— Դուք... Դուք ինչպէս գիտէք, որ միայն վերջերս

սովորեցայ հայերէն, — զարմացած հարցուց Սոնիան :

— Ե՞ս... շա՛տ պարզ է, — շփոթած կ՛մկմալով պատասխանեց Լեւոնը՝ աշխատելով ելք մը դտնալ ու յանկարծ անսպասելի գիւտ մը ընողի ուրախութեամբ արագ արագ վրայ տուաւ. — Ես Վահէէն լսած եմ... կը պատմէր թէ անդամ մը Թիֆլիսի մէջ ձեզ հանդիպած է...

— Օ՛ր... Ճիշդ է, Արսէնեաններու տանը, ձախուեր հանդիպում մ'էր... Ինքզինքս այնքան յիմար կերպով պահեցի, որ հիմա կ'ամչնամ յիշելու... Հաղիւ քանի մը վայրկեան մնացի ու Վարդանի հետ միասին դուրս եկանք...

— Այդ ա՞յն երիտասարդն է, որու համար կ'ըտէիք, թէ դուք սպաննեցիք, — որպէս թէ միամտօրէն հարցուց Լեւոնը :

— Այո՛, — չոր կերպով պատասխանեց Սոնիան, որ ակներեւ դժգոհութեամբ վերջ կ'ուզէր տալ այդ փոսակցութեան :

Անցեալի վերջիչումը ջղայնացուց Սոնիան : Մուայլուած կծկուեցաւ ու գլուխը կախեց կրծքին, պատեանին մէջ քաշուած կրիայի նման : Որքան կ'ուզէր ազատուիլ իր կեանքը խորտակող այդ անցեալէն, որ իբ կեանքին մղձաւանջն էր դարձած, երկաթէ ծանր թաթ մը, որ ճզմելով իր ճահել կեանքը, խորտակած էր իր երագներն եւ ապագայի յոյսերը : Ա՛խ այդ թաթը, որ այնքան անսպասելի կերպով երեւան կուգար, երբ Սոնիային կը թուէր, թէ անցեալը թանձր մշուշով մը վարագորուած է, թէ այլեւս նոր կեանք մը պիտի սկսի իրեն համար : Ու ահա յանկարծ մշուշի մէջէն անկուշտ վիշապի նման գլուխը կը բարձրացնէր հին պատմութիւնը : Նորէն կը բացուէր հին վէրքը, կարծես աւելի խորացած, ալ աւելի արիւնոտ վիճակի մէջ :

Լեւոնի հանդէպ, վերջին ատենները, Սոնիայի հոգիին մէջ մեծ յեղաշրջում մը կատարուած էր : Այդ ան-

հրապոյր չոր երիտասարդի նկատմամբ զգացած սկզբնական խորշանքը, անոր հետ մօտէն շփուելէն վերջ, տեղի տուած էր համակրանքի, որ անհարթօրէն կը զարգանար իր մէջ : Այդ անհարթութեան գլխաւոր պատճառը Լեւոնի հանելուկային բնավորութիւնն էր, երբեմն անմարդկային լինելու աստիճան դաժան ու կարծես մարմարի կտորէ մը կերտուած, իսկ երբեմն ալ այնքա՛ն քնքուռ եւ ջերմութեամբ լեցուն :

Լեւոնի բնավորութեան փոփոխականութիւնը բնականաբար կ'անդրադառնար Սոնիայի վրայ՝ անկանոն ելեւէջ մը տալով անոր զգացումներու զարգացմանը : Երբեմն Սոնիային կը թուէր, թէ Լեւոնը կրնայ նոր Վարդան մը լինիլ իրեն համար, անցեալը մոռցնել տալ, ու հին վէրքը բոլորովին սպիանալով՝ ինք կ'ապրի նոր կեանք մը այդ երիտասարդին հետ, որ տիրակաւն դէմք մ'էր, ուժեղ, դադափարակաւն ու հաւատաւոր հայրենասէր մը : Երբեմն ալ, երբ Լեւոնը կ'երեւար դաժան ու անսիրտ չորութեամբ, Սոնիայի հոգուն մէջ անորոշ վախ մը մեծնալով սարսափի կը փոխուէր : Իսկ այդ սարսափը սանձահարած կը սահէր Սոնիայի զգացումները, որոնք ջերմաչափի սնդիկի նման վեր ու վար կը շարժէին :

Իայց ամէն բանէ աւելի անցեալ պատմութիւնը, միշտ կենդանի, կը թունաւորէր Սոնիայի հոգեկան անդորրութիւնը :

Երբ դիւանի վրայ կողք կողքի նստած այնքան մը տերմօրէն կը խօսէին գործի մասին, անցեալի նկատմամբ Լեւոնի ակնարկութիւնը բաւական եղաւ, որ Սոնիան ցուրտ զգար ու հոգիին մէջ նորէն զարթնէր անդամադրելի սարսափը :

Հոգեկան այս վիճակին մէջ, Սոնիան առանց կողքը նստողին նայելու, կը զգար սակայն Լեւոնի հայեացքին ծանրութիւնը իր դէմքին վրայ : Ինչո՞ւ, ի՞նչ իրաւունքով Լեւոնը այդպէս կը նայէր իրեն, կարծես թէ...

ու ինքն իր վրայ ճիգ մը թափելով Սոնիան սառը ձայնով սկսաւ խօսիլ.

— Խնդրեմ, խօսինք գործի մասին... Ինչ կը վերաբերի դրելուն, կ'աշխատիմ լաւագոյնս ընելու... Եթէ ուրիշ պատուէր չունիք տալու... Անշուշտ հանգստանալ կ'ուզէք, ձեր անկողինը իր տեղը մնացած է... Առաւօտեան կ'երթամ Խատիճէի ետեւէն... ես ալ յողնած եմ...

Լեւոնը բարձրացաւ տեղէն, ու «գիշեր բարի» ըսելով անցաւ կողքի սենեակը ու երկնցաւ անկողնի վրայ: Սոնիայի յանկարծական սառնութիւնը, խօսակցութեան ստացած կտրուկ ձեւը չզարմացուց Լեւոնը: Թերեւս ուրախ էր Սոնիայի հետ ունեցած յարաբերութեան պաշտօնական ձեւ ստանալուն համար: Ի՞նչ օգուտ չոր սերով ապրելէն, կը մտածէր Լեւոնը, երբ անանցանելի անդունդ մը կը քափնէր գիրենք: Լեւոնը հաւատացած էր, որ ոչ մէկ միջոց կրնայ այդ անդունդը կրկին լեցնել: Վերջ ի վերջոյ Վահէն իրաւացի է, խորհեցաւ Լեւոնը, երբ կ'ըսէ, թէ «մենք անձնական կեանք չենք կըրնար ունենալ»:

Երբ յաջորդ օր Յակոբը ներս մտաւ ձայն տալու Լեւոնին, ժամը տասը անցած էր արդէն: Սոնիան չկար: Առտու կանուխ դուրս ելած էր Խատիճէին այցելելու համար:

Երկու հին ընկերները իրարու կողքի նստան: Լեւոնը բացատրեց գործերու ընթացքը, դաւաւ անցնելու անհրաժեշտութիւնը, ու յայտնեց, թէ իր բացաւկայութեան՝ Սոնիան գործերը պիտի տանի եւ թէ Յակոբը պէտք է գործակցի անոր:

Սոնիան վերադարձաւ կէս օր չեղած: Յուզուած կ'երեւնար: Բակի մէջ խմբուած հիւանդներն ու աղքատները քաւարարելէ ու ճամբելէ վերջ, աճապարեց սենեակը բարձրանալ:

— Կարելի՞ է, — Լեւոնի սենեակի դուռը թխկացնելով հարցուց Սոնիան, — կ'ուզէի ձեզ կարեւոր տեղեկութիւն մը հաղորդել:

— Անշուշտ, անշուշտ, — լսուեցաւ ներսէն տղս ձայնը ու մէկ երկու վայրկեան վերջ դրան սեմին վրայ երեւցաւ Լեւոնը, — Ի՞նչ պատահած է, յուզուած կ'երեւիք...

— Այո՛, հանելուկային դէպք մը պատահած է երէկ գիշեր: Խնդրեմ, նստէք, — ու Սոնիան աթոռ մը ցուցուց ու ինք դիւանի վրայ տեղաւորուեցաւ. — Երեւակայեցէք, որ երէկ գիշեր բանտապետը սպաննուած է...

— Ի՞նչ կ'ըսէք, հաստա՞տ տեղեկութիւն է, — ու Լեւոնը զարմացած սկսաւ մտածել այդ սպանութեան մասին, որմէ ինք բոլորովին տեղեկութիւն չունէր:

— Բոլորովին հաստատ: Հիւսէյին բէկի տանը կը պատմէին՝ սպանութիւնն ալ վերադրելով յեղափոխականներուն, թէ եւ այնպիսի պարագաներու մէջ կատարուած է, որ մարդ կը դժուարի հաւատալ...

— Այսի՞նքն...

— Երեկոյեան բանտապետն ու ինչ որ Մէհմէտ Աղա, կ'ըսեն կարտիաններու պետն է այդ մարդը, միասին դուրս կուգան բանտէն՝ իրենց տները Կրթալու համար: Ճանապարհին, երկուքը միասին կառավարչատան քովի ոստիկանատունը կը հանդիպին: Քանի մը ըստէ միայն մնալով՝ բանտապետը կը մեկնի: Քիչ վերջն ալ Մէհմէտ Աղան: Դեռ տուն չհասած, փողոցի մէջ յանկարծ դաշոյնի երկու հարուածներ ստանալով՝ բանտապետը անչնչացած կ'իյնայ: Բանտապետի տունը Շամիրամի թաղին մէջ կը գտնուի, ուր հայեր դժուար թէ երթան, այն ալ այս խառնակ օրերուն... Դուք թերեւս նախօրոք տեղեկութիւն ունէիք:

— Ո՛չ, ոչ տեղեկութիւն ունէի եւ ոչ ալ նման որոշում մը կար... Ինչ ալ որ լինի, խորհրդաւոր սպանու-

թիւն մ'է, ճիշդ Վահէի կախաղան բարձրանալու օրը...
Հետաքրքիր է շատ... — ու Լեւոնը սկսաւ մտովի խոր-
հիլ, թէ արդեօք ո՞վ կամ ովքե՞ր կրնային այդ սպանու-
թիւնը կատարել:

Սաւայն, այդ խորհրդաւոր դադունիքը այդպէս ալ
դադունիք մնաց մինչեւ վերջը:

Բանտապետի սպանութենէն վերջ անոր տեղը Սարի
Մէհմէտ Աղան բանտապետ նշանակուեցաւ: Ան շատ ա-
ւելի մարդկային վերաբերմունք մը ցոյց տուաւ հայ յե-
ղափոխական լրանտարիկեակներու նկատմամբ: Մէհմէտ
Աղան Վահէի տուած քսակը այնպէս ալ պահեց, առանց
դրամին ձեռք տալու: Երբեմն, երբ տուն կուգար, եւ
աչքը կ'իյնար պատէն կախուած քսակին վրայ, սրտի
խորքէն օ՛Փ մը կը քաշէր, սիկարէթ մը կը պլլէր, ու ե-
րազկոտ տրամադրութեամբ բարձրացող ծուխին կը նա-
յէր:

Անգամ մը Մէհմէտ Աղայի փոքր երեխան, Վահէի
քսակը կախուած տեղէն վար առնելով՝ հետը կը խա-
ղար: Երբ հայրը տուն դալով տեսաւ տղու ձեռքին Վա-
հէի նուիրած քսակը, փառաւոր տիտոյ մը քաշեց եւ քսա-
կը նորէն տեղէն կախելով պատուիրեց տղուն:

— Անգամ մ'ալ այդ քսակին ձեռք չես դարներ: Հաս-
կըցա՞ր, շան լակոտ, քու ոսկորներդ իրար կ'անցընեմ:
Այդ մարդու մը յիշատակն է, որ նահատակ եղաւ: Ես
Ստամպոլէն մինչեւ Վան, քաղաք չէ մնացեր պտըտած
եմ, բայց երբեք անոր նման իզիթ մարդու չհանդիպե-
ցայ: Անգամ մ'ալ ձեռք չդարներս այդ քսակին:

Կէս օրէ վերջ եկաւ Սատիճէն: Եթէ Լեւոնը չգիտ-
նար, թէ եկողը Սատիճէն է, հազիւ թէ ճանչնար զայն,
այնքան որ փոխուած, մաշած էր մանկամարդ կրնը: Հա-
րազատ եղբօր մը ջերմութեամբ Լեւոնը, ինքն ալ սաս-

տիկ յուզուած, դիմաւորեց զայն եւ անոր ձեռքէն բռնած
նստեցուց դիւանի վրայ իր եւ Սոնիայի մէջտեղը:

— Ծանր տառապանք մը վիճակուեցաւ ձեզ, — կա-
րեկցաբար խօսեցաւ Լեւոնը՝ գգալով որ այդ պահուն
ընդունուած մխիթարական խօսքերը ծիծաղելի կրնային
հնչել:

— Աստուծոյ կամքը, — գլուխը ա'լ աւելի ծռելով՝
պատասխանեց Սատիճէն, որու մարած ձայնը կարծես
դատարկութեան մէջէն կուգար:

Սատիճէն երեւոյթապէս հանդարտ նստած էր,
նոյնիսկ Սոնիայի ներկայութիւնը կարծես թէ՛ կ'անդի-
տանար: Դէմքը բոլորովին տփուոյն, միալար առջեւը կը
նայէր, բութ, գրեթէ անկենդան հայեացքով: Զարմա-
նալի կերպով շարժումները ծանր հանդարտութիւն մը
ստացած էին:

— Օրիորդ Սոնիան յայտնած պիտի լինի, որ ձեզ
յանձնելու ծրար մը եւ նամակ մը ունիմ, — աղբուած
Սատիճէի պահած լուսթենէն, մեղմօրէն շնջաց Լեւոնը:

Առանց պատասխանելու, դեռատի կրնը դրական ի-
մաստով գլուխը մեղմօրէն վերէն վար շարժեց: Այո՛,
գիտէր, ծրար մը ու նամակ մը, նամակ մը Վահէէն...
ու կարծես ուսերուն վրայ ահագին բեռ մը ծանրացած՝
ընկճեց Սատիճէն, որ գգացած ցաւէն երկու տակ եղած
կ'երեւնար:

Գրպանէն Վահէի նամակն ու թաշկինակի մէջ ծը-
րարուած իրեղէնները հանելով՝ Լեւոնը զանոնք երկա-
րեց Սատիճէին: Առանց դիրքը փոխելու, Սատիճէն ար-
ձանի նման մեքենաբար ձեռքը երկարեց, առաւ Լեւոնի
երկարած ծրարն ու նամակը, եւ կարծես այդ չնչին շար-
ժումէն սաստիկ յոգնած, ձեռքը ինկաւ գոգին մէջ:

— Սատիճէ, աղաւնեակս, սիրելի ջոյրս...

Սատիճէն եւ ոչ իսկ կը լսէր Սոնիայի փաղաքշական
խօսքերը: Հայեացքը կեդրոնացուցած առջին, աչքերը

խոշոր խոշոր բացած, ան ակնյայտնի սարսափով կը նա-
յէր արին լռնած ծրարին վրայ: Յանկարծ ամբողջ
մարմնով ցնցուեցաւ եւ ինքն իր վրայ կծկուելով՝ սկսաւ
հոնգուր հոնգուր արտասուել այնքան սրտաճմլիկ հեկե-
կանքով, որ Լեւոնը անգոր էր ունէ կերպով օգնելու՝
տեղէն բարձրացաւ ու սկսաւ սենեակի երկայնքով ման
դալ, մինչ Սոնիան դրկած մանկամարդ կ'ինը՝ կ'աշխա-
տէր հազստացնել զայն:

— Վահէ', Վահէ', — նամակը շրթունքին տարած
ողբադին կը հեծկլտար խատիճէն:

— Խատիճէ... անդին... ու Սոնիան ալ, այլեւս
ինքզինքը պահելու անկարող, փաթթուած ընկերուհիին,
սկսաւ արտասուել:

Արցունքը վշտի սպեղանին է, կ'ըսէին մեր պապե-
րը: Հոգու մէջ լեռնացած ցաւը, որքան ալ ահադին, կը
նմանի ձմեռուան դիզուած ձիւնին, որ դարնան անձ-
րեններէն կը սկսի հալիլ: Այդպէս ալ խատիճէի անշարի
տառապանքը, որու հոգեկան ու Փիզիքական ուժերը
մինչեւ որոշ աստիճան մը կրնային տոկալ, անկէ անդին
արդէն փլուզումը պիտի յաջորդէր: Թափած յորդառատ
արցունքը վարձեւ մեղմացուց տառապանքը, ու երբ աչ-
քերը սրբեց, աւելի կենդանացած կ'երեւնար: Յուզումէն
զողացող ձեռքով բացաւ Վահէի նամակը, կարդաց ու
առանց բառ մը արտասանելու՝ ծրարին հետ միասին ծո-
ցը դրաւ:

Սոնիան ամօքիչ ձայնով կը խօսէր Վահէի մասին,
պատմելով անոր հետ ունեցած առաջին հանդիպումը,
երբ Թիֆլիս էին: Վերջէն, երբ ակնարկեց Լեւոնին գրած
նամակի մէջ զաւկի սպառաշի մասին գրած տողերուն,
խատիճէն գլուխը բարձրացուց, աչքերուն մէջ զարմա-
նալի կրակ մը վառուած, ու ձեռքը դնելով Սոնիայի ու-
սին՝ վճռական ձեւով մը ըսաւ:

— Սիրելիս, մի՛ մտահոգուիր, ինչ որ էր հայրը,
նոյնը կը լինի եւ զաւակը:

Երբ խատիճէն կը պատրաստուէր մեկնելու, Սոնիան
ալ ուղեց ընկերակցիլ անոր: Խատիճէն վայրկեան մը
Լեւոնի ձեռքը արին մէջ պահելով, հանդարտօրէն ըսաւ:

— Գիտեմ, որ անոր ամենամօտ ընկերն էիք: Մի՛
մոռնաք, որ անմխիթար քոյր մը ունիք հեռուոր Ապա-
ղայի մէջ, եւ որք երեխայ մը: Ես վաղը կը մեկնիմ,
այդպէս կը ցանկայ... ամուսինս: Փոքրիկ Ալիի մասին
վստահ եղէք... Աստուած մեծ է:

Սոնիան ու խատիճէն միասին մեկնեցան:

Երբ երեկոյեան ուշ ատեն տուն վերադարձաւ Սո-
նիան, բակին մէջ հանդիպեցաւ Յակոբին: Յակոբն ալ
ճիշդ այդ պահուն ներս կը մտնար այգիի կողմէն:

— Գիտէ՞ք, Լեւոնը մեկնեցաւ, — յայտնեց Յակո-
բը, — ուշացաք, չէր կրնար սպասել...

— Իրա՞ւ...

Սոնիան յողնած տրամադրութեամբ բարձրացաւ
սենեակը:

Գլխարկն ու վերարկուն աթոռի մը վրայ նետելով՝
Սոնիա կը պատրաստուէր ննջասենեակը անցնիլ, երբ
աչքին դիպաւ սեղանի վրայ ձգուած նամակը:

Քանի մը տողով Լեւոնը կը բացատրէր մեկնելու
անհրաժեշտութիւնը եւ կը յիշեցնէր նախորդ օրուան
կարգադրութիւնները:

Սոնիան, վերջացնելով նամակը՝ սեղանին վրայ դը-
րաւ զայն եւ աթոռ մը վերցնելով՝ նստաւ, արմուկները
յինած սեղանին: Գացեր էր Լեւոնը, բայց նամակն իսկ
բաւական եղած էր նորէն վրդովելու Սոնիայի սիրտը:
Ակնապիչ կը նայէր որսներէն գրուած նամակին վրայ:
Զարմանալի բան, քանի կը նայէր մատիտով գրուած այդ
երկտողին, իրեն այնպէս կը թուէր, որ այդ ձեռագիրը

կը յիշեցնէր մէկ ուրիշը, որ սակայն կը խուսափէր յիշողութենէն:

Անշուշտ, ծանօթ, շատ ծանօթ գիր մ'էր այդ գիրը, եւ Սոնիան չէր գիտեր, թէ ինչո՞ւ համար, երբ այդ գիրը անկողին մտաւ, շարունակ այդ մասին կը մտածէր, առանց սակայն յիշելու, թէ ո՞րտեղ տեսած էր այդ գիրը կամ ինչո՞ւ այնքան ծանօթ կը թուէր այն:

Օր մը վերջը, Լեւոնը իր փոքր խմբի հետ գիշերով դուրս եկաւ Այդեատանէն եւ ուղղուեցաւ Ծըւըստանի վրայով գէպի Հայոց Ձոր:

ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԽՄԲԻ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐԸ

— Մօ, խաղդ խաղա՛... .

— Հարիւր քսան:

— Հարիւր երսուն:

— Հարիւր յիսուն:

— Չոռ ու ցաւ, — բարկութեամբ փափախը ճակտին վրայէն ետ քշելով՝ Առիւծ Գեւօն թուղթերը իրար խառնեց, — ծօ՛, քու կարգդ էր թուղթ տալու. ես ալ կ'ըսեմ, թէ ինչո՞ւ կը վաստկիս:

Սպիտակ վանք փոքր գիւղի ըէս Յակոբի տանը հաւաքուած էին այդ գիշեր «աղբի» մարդիկը: Մինչ թոնրատան մէկ անկիւնը խմբապետները խորհրդակցական ժողով մը կ'ունենային, ախոռի սաքուին մէջ յիսունէ աւելի հայրուկները ժամանակ սպաննելու համար, խուփերու բաժնուած կամ թուղթ կը խաղային եւ կամ կը պատմէին իրարմէ բաժնուելէն վերջ պատահած անցքերը:

Մեր Առիւծ Գեւօն վահէի մահէն վերջ ատեն մը իր ձեւի սուգ պահելէ յետոյ, որու գլխաւոր արտայայտութիւնն էր ձեռքը խաղաքարտ չառնել, հետզհետէ սակայն իր զուարթութիւնը գտաւ, մանաւանդ Սպիտակ վանք գալէն վերջը, ուր այնքա՛ն հին ընկերներու կը հանդիպէր:

Լեւոնը իր ընկերներով երկու օր առաջ հասած էր Սպիտակ վանք, քրտարնակ Ոստանի պիտղ մօտը, որմէ հաղիւ քսան վայրկեան հեռու կը գտնուէր Չարահան Սուրբ Նշան պատմական վանքը: Տեղացիները Չաղար Սուրբ Նշան կը կանչէին զայն: Վանէն դուրս գալէն տաս օր վերջ Լեւոնը հասաւ այդ գիւղը, ուր ժամադրուած էր ընկերներուն հանդիպելու համար: Ծանապարհին բազմաթիւ գիւղեր հանդիպեցաւ: Ծըւըստանէն ելլելով գիրը մը կ'ունկավանք մնաց եւ ապա Արտամէտով անցաւ

Մաշտակ ու Անդրայ դետարբերանի մօտ գտնուող հայկական գիւղերը:

Լեւոնի Սպիրտակ Վանք հասնելու յաջորդ գիշերը, Պիծան ու վարդապետը իրենց խմբով եկած էին Գաւաշի շրջանէն, իսկ Մոսօն եւ Մոկացի Յակոբը՝ Վերի Հայոց Ձորէն, իրենց ապագայ գործունէութեան մասին խորհրդակցելու համար:

Սարուի մէջ հաւաքուած հայդուկներու համար այդ մէկտեղումը իսկական տօն մ'էր: Որքա՛ն քան ունէին իրարու պատմելու: Կարճատեւ ժամանակամիջոցի մը ընթացքին այնքան դէպքեր պատահած էին, ու իրենցմէ ամէն մէկը այս կամ այն ձեւով մասնակցած էր այդ դէպքերուն: Բայց, ի հարկէ, ամենէն աւելի պատմելիքներ ունէին Վանէն եկողները, որոնց պաշտօնական պատմողը կը համարուէր Առիւծ Գեւօն: Մարդ քանի՞ գլխանի պիտի լինէր, որ երբ Առիւծ Գեւօն ներկայ էր, համարձակէր բերանը բանալ: Բայց չես գիտեր ինչո՞ւ, հակառակ ընկերներու թախանձանքին, Առիւծ Գեւօն չլսելու կը զարնէր անոնց խնդրանքը՝ անպատասխանի ձգելով անոնց հարցումները, թոփալ Սատանայի հետ սկսած խաղը շարունակելով:

— Ծօ՛, ախպեր, հերիք թուղթ խաղաք, — Գեւոյի մօտ տեղաւորուելով ըսաւ Սալտաթը, ոռւսական բանակէն փախած զինուոր մը, որ տարի մը առաջ Երկիր անցած եւ միացած էր հայդուկներուն:

Առիւծ Գեւօն ծուռ ծուռ նայեցաւ Սալտաթին: Կարծես իր սրտի նեղութիւնը բաւական չլինէր, աս Սալտաթին ալ ո՞րտեղէն մէջտեղ ելաւ: Երկրորդ խաղը կը խաղային, ու էդ քնձոտ թոփալը առաջին խաղը շահած՝ հա հա երկրորդն ալ վաստակելու վրայ էր: Առիւծ Գեւոյի մէջքին ճաթիլը կոսգար: Եթէ չորս քուրը խաղին հետեւողներ չլինէին, նորէն ոչինչ, վերջէն կրնար ըսել, թէ խաղը ինք տարաւ, բայց այդքան վկաններու

ներկայութեան, քիչ մը շատ վրան բաց սուտ մը պիտի լինէր:

— Ծօ, խաղդ խաղա՛, — Առիւծ Գեւօն պոռաց թոփալ Սատանայի երեսին, — ժամերով կը սպասցնես...

— Աչի, ձգեցիք էս խաղը, — մէջ ինկաւ Սալտանը, — տնաշէննե՛ր, էգուց երեկոյ կը բաժնուինք, մէկ էլ ո՞վ խմանայ, թէ ե՞րբ կը հանդիպինք...

— Ծօ, ախպար քու գօռդ ի՞նչ է, — որպէս թէ բարկացած՝ ծուռ ծուռ Սալտաթին նայելով խօսեցաւ Առիւծ Գեւօն, թէ եւ ներքուստ ուրախ էր այդ բարեղէպ ընդմիջումին համար:

Գլխի իյնալով, որ երկրորդ խաղն ալ թոփալ Սատանան պիտի վաստակէ, մեր Առիւծ Գեւօն, կեղծ բարկութեամբ մը խաղաթղթերը իրարու խառնեց, Սալտաթի երեսն ի վեր պոռալով:

— Ծօ՛, դուն փորձա՞նք եկար իմ գլխուս, չես ձգեր որ սրտիս ուղածին պէս խաղ մը խաղամ: Տէ՛, հիմա ըսէ տեսնեմ, քու գօռդ ի՞նչ է:

— Պատմէ, պատմէ, — չորս կողմէն վրայ տուին հայդուկները, շրջապատելով զայն:

Առիւծ Գեւօն փքուեցաւ, երկար պէխերը ոլորեց, ծանր ու մեծ սիկարէթ մը պլլեց եւ անցուց չիպուխին ծայրը, մինչ քանի մը հայդուկները վառած լուցկի կը մօտեցնէին: Մէկ երկու անգամ պինդ պինդ ծուխը ներս քաշեց, քթածակերէն ու բերնէն դուրս տուաւ, բռունցքով բերանը սրբեց ու սկսաւ:

— Էսչափ մարդու մէջ, մէկ Առիւծ Գեւօ, ծօ, չախալներ, որ ես չեղնէի ձեր մէջ, հա՛յ հո՛ւյ, ձեր բանը պօշ կ'եղնէր. վալլահ, մէկ գիր կարդումս պակաս է... Սուրբ Լուսաւորչի մատներուն մեռնիմ, էն որ հայու գիրը գտաւ...

— Սուրբ Մեսրոպն էր գտնողը, — թոփալ Սատանան փորձեց զգացնել Գեւոյի սխալը, մանաւանդ որ բարկա-

ցած էր Գեւոյի վրայ՝ խաղը կխառ ձգելուն համար:

— Ծօ՛, ի՞նչ Սուրբ Մեսրոպ... մէկ էսոր բերնին նայեցէք, հա՛, հա՛, հա՛: Հէ՛չ Մեսրոպէն սո՛ւրբ կ'եղնի հայվան: Որ չես պիտեր, առև եղիր... Ախպօրս ըսեմ, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ երանելին, երբ որ Սորվիրապին մէջ գազաններուն հետ բանտարկեցին, կռապաշտ թագաւորի հրամանով, մեռնիմ Աստուծո՛ւ զօրութեանը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը գիշեր մը երազ տեսաւ... Ձէ, ճանըմ, երազ չէր, տեսիլք ունեցաւ եանիեա, աչքերը քաց Աստուծո՛ւ զօրութիւնը տեսաւ: Աստուծո՛ւ հրամանով, Գաբրիէլ հրեշտակապետը երեւցաւ մեր Լուսաւորիչին, ոնց որ ես ձեզի կը տեսնամ: «Արդարներու արդար Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ», ըսաւ Գաբրիէլը, «տըղաս, ո՞ղջ ես»: Դու մի ըսեր կռապաշտ թագաւորին քուրը գաղտուկ, ամէն օր կտոր մը հաց ու բրդուճ մ'ալ ժափի կը տանի եղեր Սուրբին...»

— Հա՛, գլոխ մ'ալ սոխ, — հեզնեց Սատանան:

Անշուշտ աններելի սրբապղծութիւն մ'էր թո՛ւիալ Սատանայի խօսքերը: Չորս կողմէն վրայ տուին հայդուկները, ու ալ չթողին որ բերանը քանայ:

— Ծօ, փոռոտ... յանուն հօր եւ հորեղբայր սրբոյ, — երեսը խաչակնքելով շարունակեց Առիւծ Գեւօն, պատմութեան թելը կրկին ձեռքն առնելով. — Մեր Աստուածը նորեալ կաթողիկոս Սուրբն Գրիգորիս Լուսաւորիչը...»

Թէեւ թո՛ւիալ Սատանան տեղէն բարձրանալով հեզնօրէն ծիծաղելով սաքուէն դուրս եկաւ, բայց Առիւծ Գեւօն մեծ բաւականութեամբ դիտեց շրջապատողները, որոնք իր շրթունքներէն կախուած էին, ու իր գիտցած ձեւով դրերու պիտոք պատմելէն վերջ, Վան քաղաքի դէպքերուն հասաւ: Երկար ու քարակ պատմեց սայլի կռիւը, դաւաճանի սպանութիւնը:

Ընդհանրապէս Առիւծ Գեւօն այնքան ողբերգուած

կը պատմէր, որ հեւ ի հեւ լսողները ժամանակ խփ չէին ունենար անբարդառնալու շատ մը մանրամասնութիւններու հակասութիւններուն վրայ: Բոլորովին Առիւծ Գեւոյի մեղքը չէր, եթէ իր պատմութիւնը լսողները կարծեցին, թէ Դաւոյի սպանութեան մէջ շատ խոշոր բաժին մ'ունեցած էր, որ գրեթէ գլխաւոր դերակատարն եղած էր Առիւծ Գեւօն: Եթէ լսողները այդ եզրակացութեան կուզան, ինքն ի՞նչ մեղաւոր է: Կեանքին մէջ ուրիշի մը անունը չէր շահագործած, իր բերնէն օր մը օրանց սուտ մը չէր լսուած, պատմութեան ընթացքին արժանաւոր տեղը տուած էր Տաճատին, անգամ մը յիշելով անոր անունը:

— Ինչ պատմէ՛, սէլի կռիւը ինչպէ՞ս պատահեցաւ, — հարցուց տարիքը առած հայդուկ մը, որ մէջքը տուած պատին՝ երկիւղած ուշադրութեամբ կը հետեւէր Առիւծ Գեւոյի պատմութեանը:

— Հա՛, պատմեմ, մեծ աղբար... եաման կռիւ եղաւ... մէկ ալ աչքս դարձնեմ ու ի՞նչ տեսնամ... Մղգեայի Ջաղտի վրայէն սէլ մը կուզայ, ութ տաս ասկեր... Հէ՛՛յ, Գեւօ, կ'ըսեմ, տէ՛, թէ որ մարիֆաթ մ'ունիս... թ՛ֆանքս շտկեցի, պո՛ւմ: Մէկ ալ ոնց որ աշխարհը իրար խառնուի. չորս կողմէն կարկուտի նման կիւլ-լէ թափեցաւ:

Երկար, շատ երկար Առիւծ Գեւօն պատմեց դէպքի մասին այնքան կենդանի կերպով, որ լսողները կարծես թէ իրական կուռնի ներկայ կը լինէին:

Մինչ Առիւծ Գեւօն իր անսպառ պատմութիւնները կը շարունակէր, թոնրատան մէջ հաւաքուած ընկերները թոնիրի շուրջը հաւաքուած, ապագայ դործունէութեան մասին կը խորհրդակցէին:

— Գէորգը գրեց, թէ չի կրնար գալ, որովհետեւ Պիթլիսի Ալայ Բէկը երկու հազար զօրքով մտեր է Կառկառ, — ընկերներուն կը պատմէր Պիժան, — ընդհարում

մ'ալ ունեցեր են զօրքի հետ Խնձորուտի տակ: Սարգիսը երկու ընկերներով սարէն իջած կը լինի Խնձորուտի ժողովուրդը գիւղէն լեռ բարձրացնելու համար: Գիւղացի մը հեռուէն ձայն կուտայ, որ գիւղ իջնան, զօրք չկայ գիւղին մէջ: Սարգիսն ալ միամիտ կը մօտենայ. բարեբախտաբար, յանկարծ թռախերու մէջ շարժուող կարմիր Ֆէսեր կը նկատէ, երբ արդէն գիւղի մօտ հասած կը լինի: Գլխի կ'իյնայ, որ թակարդի մէջ կ'ուզեն ձգել զինքն ու ընկերները: Անմիջապէս ընկերներուն հետ դիրք բռնելով կը սկսի կրակել: Չօրքն ալ կը պատասխանէ: Կռիւը կը սկսի: Սարգիսը երկու ընկերներով կը կռուի, մինչեւ որ Խնձորուտի ժողովուրդը ապահով կերպով դուրս կուգայ գիւղէն, ու կը բարձրանայ սարը:

— Հապա ինչո՞ւ գիւղացին կը պոռայ, լիք զօրք չկայ, — հետաքրքրուած հարցուց Մոկացի Յակոբը:

— Պարզ է, որ այդ գիւղացին, անկարող ժամանակին փախչելու, զօրքի ձեռքը կ'իյնայ, ու անոնց սպառնալիքին տակ, ինչ որ կը թելադրեն իրեն, ինքն ալ կը պոռայ: Կարեւորը՝ Գէորգի եւ ընկերներուն կատարած աշխատանքն է: Քանի մը մասի բաժնուած, Կառկառի գիւղերը կը չըջին, ու ժողովրդական գէնքերը հաւաքելով լեռներու մէջ որոշ տեղեր կը պահեն: Ձէնքերու տեղերը Սարգիսը, Կարօն եւ Գէորգը միայն գիտեն: Իսկ Գաւաչի մասին արդէն ըսի, փոքրաթիւ քանակութեամբ գէնք կորսնցուցինք միայն, իսկ մնացածները ապահով թաքստոցներու մէջ պահուած են:

— Մեր չըջանք, — իր կարգին սկսաւ պատմել Մոսօն, — քաղաքին աւելի մօտ գտնուելով՝ չափազանց աղղուած էր քաղաքի անցուղարձերէն: Յակոբն ու ես, բաժնուեցանք իրարմէ: Ես՝ վերի, ան վարի Հայոց Ձորի չըջանները վերցուցինք: Կառավարութեան խստութիւնները շատ աւելի զգալի էին մեր չըջանին մէջ, քան ուրիշ որեւէ գաւառ: Գիւղական պահեստներէն, հարիւր

յիսունի չափ գէնք ձեռք անցուց կառավարութիւնը, բայց մէկ մասը տեղական զինուորական խումբերու անջակցութեամբ, կրցանք փրկել ու ապահով վայրերու մէջ թաքցնել: Ներկայիս կայուն վիճակ մ'ունի Հայոց Ձորը. մեր աշխատանքը չափով մը լրացած է, եթէ նոր բարդութիւններ չպատահին:

— Քաղաքի մասին լսեցինք, չըջաններու վիճակն ալ յայտնի է: Հիմա կարեւորը մեր ապագայ գործունէութեան ուղեգիծը ծրարելն է, — խօսք առաւ մեր վաղածանօթ Մուռ Վարդապետը, — այսքան մեծ խմբով 'չենք կրնար շարժիլ: Գիւղացիք իրենք իսկ սոված վիճակի մէջ են: Եթէ երկու օր գիւղ մը մնալու լինինք, գիւղին մէջ հացի փշրանք իսկ չի մնար... Պէտք է այդ մասին մտածել...

Բնադրօրէն ներկաներու հայեացքը կեդրոնացաւ Լեւոնի վրայ, որ գէմքի սաստիկ յոգնած արտայայտութեամբ մտիկ կ'ընէր:

— Լա՛ւ, ի՞նչ կը մտածես, Լեւոն, — ընկերոջ ուր թախահարելով հարցուց Պիժան, — տնաքանդ, կարծես ուշք ու միտք ուրիշ տեղ է:

— Հա՛, — քնէն արթնցողի նման, ինքզինքը թօթուելով պատասխանեց Լեւոնը, — անկասկած որ մեր այս խումբը շատ մեծ է, ատկէ զատ չըջաններն ալ բոլորովին առանց մարդու չենք կրնար ձգել: Ծուտով մայիսը կուգայ, լեռները կը բացուին, մեզ համար շարժիլը կը հեշտանայ: Կը մտածեմ, որ Պիժան տասնեակ մը տղաներով նորէն վերադառնայ Գաւաչ, Յակոբը մնայ Հայոց Ձորի չըջանք, իսկ մնացածներս Փեսան Դաշտով անցնինք Շատախ: Սարերը բացուելուն Մոսօն հինգ վեց զինուորներով կ'ուղարկենք Մոկաց կողմը... Մինչեւ օգոստոս կը մնանք այս կողմերը, յետոյ արդէն կ'որոշենք թէ ովքե՞ր պիտի անցնին Քաղաք, Ալիւրի եւ Արճակի չըջանները... Հիմակուհիմա մեր գլխաւոր նպատակը

պլտի լինի ժողովուրդի տրամադրութիւնը պահել, դէնքերը փրկել, ու աշխատիլ որքան հնարաւոր է, կռիւներէ խուսափիլ...

— Ուրեմն, որքան շատ ցրուինք, այնքան լաւ, — առաջարկեց վարդապետը, — գիւղացիք ալ մեզ հիւրասիրելով ամբարները դատարկեցին... Ա՞յս գիշեր...

— Այո՛, թող այդպէս լինի: Նոր բան մը չունինք խօսելիք, — պատասխանեց Պիծան:

Յակոբը, Մոսօն ու վարդապետը հայդուկներու քով գնացին, Պիծան ալ կը պատրաստուէր տեղէն ելլելու, երբ Լեւոնը ընկերոջ թեւէն բռնելով՝ չթողուց որ շարժի:

— Պիծա՛, քեզի հետ առանձին խօսելիք ունիմ:

Պիծան այդ քանի մը ամիսներու ընթացքին կարծես տարիներով ծերացած լինէր: Ալեխառն մազերը ալ աւելի սպիտակած էին, դէմքը նոր հերկուող արտի նման, կնճիռներով ակօսուած կ'երեւէր: Մարսափելի ձախորդութիւններու լրումը եղած էր Վահէի կախաղան բարձրանալը: Այդ ցաւը ընկճած էր պողպատէ շինուած Պիծան: Այդ մարդը, որ յողնիլ եւ յուսահատիլ չէր գիտեր, այժմ վաստակաբեկ ու ծերացած, բոլորովին ընկճուած կ'երեւէր:

— Է, Լեւոն, խօսէ տեսեմ, — աւելի մօտենալով ընկերոջը հարցուց Պիծան:

Լեւոնը քանի մը խօսքով պատմեց քառաքի մէջ ըրած կարդադրութիւնները: Ըսաւ, թէ Սոնիային յանձնած է կապ պահպանելու հոգը:

Այդ լուրը այնքան ալ դժհասցուցիչ չէր Պիծայի համար, որ մեծ համարում մը չունէր կիներու մասին: Գըլուխը տարակուսանքով շարժեց եւ ուսերը թափ տալով՝ ըսաւ.

— Շիտակը, չեմ գիտեր, թէ որքա՛ն խելօք կարդադրութիւն մ'է ըրածդ: Նախ՝ շատ հարցական է անոր

կարողութիւնը, մէկ ալ որ չենք գիտեր, թէ որքա՞ն վատահելի է...

— Պիծա՛, ես լաւ կը ճանչնամ այդ աղջիկը...

— Է՛, եղբայր, հաղիւ չորս հինգ անգամ հանդիպեր ես անոր...

— Հնէն կը ճանչնամ, — ակամայ կարմրելով պատասխանեց Լեւոնը, — բոլորովին վատահելի եւ գործունեայ աղջիկ մ'է...

— Լա՛ւ, — չուզելով այդ հարցի մասին վիճել՝ համաձայնեցաւ Պիծան, մանաւանդ երբ նկատեց Լեւոնի շիտթութիւնը. — ուրիշ բան մը ունի՞ս ըսելիք...

— Այո՛, — ու Լեւոնը շատ կամաց ձայնով Պիծայի ականջին փսիսալէ վերջը հարցուց.

— Է, Պիծա՛, ի՞նչ է կարծիքդ...

— Վտանգաւոր ձեռնարկ մ'է... Թէեւ իմ խելքս ալ կը պառկի... Եթէ յաջողես...

— Մեր բոլոր ձեռնարկներն ալ վտանգաւոր են, — համաձայնեցաւ Լեւոնը, — բայց մէկ մտածէ հետեւանքներու մասին... Ես քաղաքի ընկերներուն պատուիրեցի... Կ'երեւի, տատը տասնեակինգ օրէն կ'ուղարկեն քեզ, անմիջապէս ինձ հասցնես...

Այդ գիշեր, մութը իյնալուն, Պիծան իր տասնեակով մեկնեցաւ Գաւաշ, իսկ Մոկացի Յակոբը ուրիշ տասնեակով մը դէպի Հայոց Ձոր: Վարդապետը մնաց Լեւոնի մօտ:

Ընկերները ճամբելէ վերջ միայն, Լեւոնը մնացած հայդուկները գիւղէն քիչ մը հեռու, կալերու մօտ հաւաքեց: Տասնեակներուն խմբապետ նշանակուեցան Առիւծ Գեւօն, Մոսօն եւ Վարդապետը: Հակառակ Գեւոնի եւ Թոխալ Սատանայի անվերջ կռիւներուն, այս երկուքը անբաժան էին իրարմէ:

Առիւծ Գեւօն իր տասնեակի գլուխը անցած, պատ-

րաստ կը սպասէր առաջ շարժուելու, երբ Թոփալ Սատանայի հեգնական հայեացքը դիպաւ աչքին:

— Ծօ՛, ես քու հոգին պիտի հանեմ, — կամացուկ մը շնչաց Առիւծ Գեւօն, — կռապա՛լտ, ես տասնապետ եմ հիմա, քու մեծաւորդ, դուն հասարակ զինուոր, խելօք կեցիր Թոփալ, վալլահ աչքդ տեղէն կը հանեմ... Հա՛, չանթաս շալիէ տեսնամ. ծօ, որ ուզեմ, դէնքերս ալ շալակդ կուտամ. հէ՛յ, հէ՛յ, ինծի Առիւծ Գեւօ կ'ըսեն, ընկեր մնկեր չեմ պիտնար, մէկ խօսքս երկուք չպիտի եղնի:

— Քե՞զ ալ շալիած Արտոս պիտի հանեմ, հը՞, — ծիծաղեց Թոփալ Սատանան:

— Որ ուզեմ:

— Քաֆթարացեր ես արդէն, դաշտի մէջ իսկ տըքտըքսով կը քալես:

— Ծօ՛ ձէնդ... մեծ կոտորածի տարին...

— Հա՛, հա քառասուն տարի առաջ:

— Ծօ, անիրաւ:

— Սո՛ւս, պարոն Լեւոնը մեր կողմը կուգայ:

Լեւոնը տասնեակները աչքէ անցուց, Քերձ վիւղացի Արշակը եւ Սպիտակ վանքեցի երիտասարդ վալադ մը հետը առած, առաջ ինկաւ: Տասնեակները որոշ հեռաւորութեան վրայ սկսան հետեւիլ անոր, Արտոսի թեք փէշն ի վեր բարձրանալով: Ճանապարհը այնքան ուղղաձիգ էր որ շուտով դժուարութեամբ սկսան քայլ փոխել:

Տասնեակներու հայդուկները հետզհետէ սկսան ետ մնալ, կարգը խանդարուեցաւ, քչեր միայն կրցան Լեւոնի ու վալադներու հետեւէն հասնիլ: Մեծամասնութիւնը ճգուած շղթայի նման իրարու կը հետեւէին, ով ինչպէս որ կրնար:

Մեր քարեկամ Առիւծ Գեւօն հերոսական ճիգ կը թափէր տասնեակի գլուխը մնալու, թէեւ յոգնարեկ

քայլերը դժուարութեամբ կը շարժէին: Վայրկեան մը կանգ առաւ Թոփալ Սատանայի կշտին:

— Այս, ծօ, հալ չմնաց վրաս, — գանդատեցաւ Առիւծ Գեւօն, բերանը բաց, ծանր ծանր շնչելով, — Աստուած պելան տայ Արտոսին, կ'ելլես կ'ելլես՝ չի հատնիր... Պարոն Լեւոնն ալ ետեւը չի նայիր, մէկ մը չի հարցըներ, թէ մենք ի՞նչ հալի ենք: Անիրաւը արշինաչափ ոտքերը բացած՝ կը վազէ, կարծես հարսանիք կայ: Ծունկերս ճաթեցան Թոփալ, քեզի պէս ընկեր չկայ, հաղարի մէջ մէկ հատիկ ես... Քիչ մը տեղ չանթաս ու փամփուշտակալներուս մէկ կապը վերցուր, շունչ չեմ կրնար քաշել... Վալլահի պիտի խեղդուիմ...

— Ես ալ յոգնած եմ, չեմ կրնար, — մերժեց Թոփալ Սատանան հեգնօրէն ծիծաղելով, — Հը՞, Գեւօ՛, էն ինչպէ՞ս թէ՛ Լուսաւորիչն էր հայոց դրերը գտնողը...

— Ծօ, ատե՛նը գտար կատակ ընելու... Աղբօրս ըսեմ... էսպէս նեղ սհաթին, ընկեր ընկերով որ չօգնէ... Թոփալ, հիչ չէ նէ՛ չանթաս վերցուր... ոտքերս չեմ կրնար շարժել:

— Աստուածընտրեալ Գրիգորիս Լուսաւորիչն էր մեր դրերը գտնողը, չէ՞, Մեսրոպէն սուրբ չի լինիր... հը՞: Հիմա ի՞նչ կ'ըսես, Գեւօ ջան, սարի սաղաթը դեռ շատ հեռու է, երկու ժամ մ'ալ պիտի քարձրանանք...

— Ծօ, բերանս բանալ մի տար, հիմա ըսի գիր չիտողին ալ, կարդացողին ալ: Անաստուած, մէջքս երկու կտոր եղաւ...

— Ձէ՛, պիտի ըսես որ Սուրբ Մեսրոպն էր մեր դրերը գտնողը:

— Ծօ, անօրէն, ծօ կռապալտ, քու խօսքդ թող եղնի, տէ՛, չանթաց վերցուր:

— Ձէ՛, բերնովդ պիտի խոստովանիս:

— Ծօ, շուն շան որդի, երնէկ սատկիս, քառսուն օր սուղդ պահեմ, չորս մատ մօրուք ձգեմ, անօրէն կռա-

պաշտ, թող խօսքդ եղնի,— եւ Առիւծ Գեւօն ձայնը
ցածցնելով, որ միւս հայրուկները չլսեն, քթին տակէն
քրթմնջաց.— Սուրբ Մեսրոպը դտաւ այբ, բեն, դիմը,
երեւէկ չբանար, դիւ ալ էս փորձանքին մէջ չձգէր: Է՞՛հ,
հիմա պորտդ տեղը ինկա՞ւ, աւազակ... ա՛ռ չանթաս
... էօ՛Փ, կարծես սար մը վերցուցին շալակէս... վալ-
լահ, մէկ հատիկ ընկեր մ'ես, թոփալ... նմանդ չկայ,
ատոր համար ալ քեզի աչքիս լուսին պէս կը սիրեմ:

Լեւոնն ու վալաղները կանդ առած էին, որպէսզի
ցրուած խումբը հաւաքուի:

Տասը բոպէի չափ հանդստանալէ վերջ, Լեւոնն ու
երկու վալաղները առաջ ինկան: Խումբն հետեւեցաւ ա-
նոնց, ծանր ծանր բարձրանալով:

Հայրուկային խմբերը, հանդիպումներէ խուսափե-
լու համար, որքան որ հնարաւոր էր, սովորական ճա-
նապարհներով չէին երթեւեկեր: Ընդհանրապէս կ'ընտրէ-
ին դժուարանցանելի ուղղութիւն մը, վստահ որ պա-
տահական ճամբորդի մը չէին հանդիպելու: Եթէ դաշ-
տային վայրերու մէջ ճամբաներէ խոտորումը դեռ մա-
սամբ տանելի էր, սակայն լեռնային շրջաններու մէջ
այդ խոտորումը կատարեալ դժոխք մը կը դառնար հայ-
րուկներու համար, որոնք ստիպուած էին երբեմն տա-
սը հազար ոտքէ աւելի բարձրութիւն ունեցող սարեր
բարձրանալ՝ ծանրաբեռնուած զէնքերով, փամփուշտա-
կալներով, չանթայով, երբեմն ալ ուտեստի պաշարով:

Սպիտակ վանքէն փեսան Դաշտ դնացող սովորա-
կան ճանապարհը Ոստանի մէջէն կ'անցնէր, ու բարձրա-
նալով Արտոսի համեմատաբար ցած լեռնանցքէն, որ
Բարաբառիկ կը կոչուի, կ'իջնար փեսան Դաշտի Կաղա-
զիզ դիւղը: Դժբախտաբար խումբը չէր կրնար օգտուիլ
այդ համեմատաբար դիւրին ճանապարհէն, այլ ստիպ-

ուած պիտի բարձրանար Արտոսի դժուարակոխ փէշով
դէպի լայնանիստ դադաթը, մօտաւորապէս տասնեւմէկ
հազար ոտք բարձրութեամբ:

Բազմաթիւ ձորերով ակօսուած Արտոսը, հսկայ
պահակի նման, բարձրացած է վանայ ծովակի հարաւա-
յին ափին, փոթիփոթած ճակատը ձիւնի տակ ծածկուած:
Ձորերը, հեղեղատներու խոռոչները ձիւնով լեցուած է-
ին: Տղաք դանդաղօրէն կը շարժէին: Ոչ մէկու վրայ կա-
րողութիւն մնացած էր, երկու տեղ թէեւ հանգստացած,
բայց նորէն հազիւ հազ կերպ մը կը շարժէին: Միայն
Լեւոնն ու Մոխրաբերդցի Յովհաննէսը, որ ծանօթ էր
Մազոտ Արջ անունով, աշխուժով կը բարձրանային՝ դեռ
մէկ երկուքի հրացաններն ալ շալկած:

Քանդուած շղթայի նման խումբը երկարած էր: Ա-
ւելորդ էր ըսել, որ մեր բարեկամ Առիւծ Գեւօն, փոխա-
նակ իր տասնեակի առջեւէն քալելու, ինչպէս որ կարգն
էր, խմբի հետեւէն կը քալէր: Հազիւ հազ ծանրացած ոտ-
քերը վը քաշկրտէր մեր բարեկամը, տքալով, հայհոյե-
լով, տրտնջալով ամէն բանի համար ու ամէնուն դէմ:

Երկար շունչ մը քաշեցին հայրուկները, երբ Լեւո-
նը հանգստանալու նշանը տուաւ: Տղաք, ձիւնով լեց-
ուած ձորի մը մէջ իրարու վրայ թափեցան: Այդ ձորէն
վեր, ձիւնի միապաղաղ հաստ շերտը մինչեւ սարի դա-
դաթը կը հասնէր: Խմբի համար, հանդստանալու նըս-
տին ալ իր կարգին ուրիշ ձեւի տառապանք մ'էր: Արիւն
քրտինքի մէջ կորած հայրուկները հազիւ թէ մէկ երկու
բոպէ անցած՝ սառեցան այդ բարձունքի վրայ տիրող
ցրտէն. ներքնաշորերը տախտակի վարժրութիւն ստա-
ցան: Ոչ կրնային շարունակել վերելքը եւ ոչ ալ նստած
մնալ:

— Հէյ տղաք,— ձայն տուաւ Գերձեցի Արշակը,—
կէօնտ մը դառնանք...

— Չէ, մի՛ դուռնայ,— բարկացաւ Սալտաթը, որ

արագիւրի նման կը կափկափէր ատամները իրարու դար-
նելով, — ա՛յ մէրդ չմեռնի, Հայաստան, էլ բան չե՞ս
գտեր, էս ափղահա սարերն ես շարել քիթ քիթ... Մէկ
հարցնող լինի թէ՛ ինչի՞ համար... Հալա դրախտն էլ
տեղ չեն գտեր տանելու՝ բերել են էս տնաքանդ երկի-
րը... Ոտքերս սառեցան, ախ թէ թոնիր մը գտնուէր...

— Ինչպէ՞ս չէ, մէկ էլ եռացող սամալար, հալուա
ու գաթա, տաքուկ անկողին, — հեգնեց Մոսոն՝ կառա-
պաններու նման թեւերը խաչաձեւ զարնելով իրանին —
ղօռ ցուրտ է... Հը՞, ի՞նչ հալի ես, մեծ ախպեր...

Առիւծ Գեւոն դարկութեամբ գլուխը անդին դար-
ձուց: Կենդանութիւն չէր մնացած վրան, հալա քէֆը կը
հարցնէին: Սեղմուած անբաժանելի Թոփալ Սատանայի
եւ Մաղոտ Արջի արանքը՝ կը փորձէր տաքնալ, եթէ կա-
րելի էր տաքնալ սառեցնող քամիի գէժ նստած: Ոմբի
տարէց հայդուկն էր մեր Գեւոն: Իր ըսելով նոր երեսու-
նուինը վերջացուցած ու քառսունը մտած: Գեւոն ընդ-
հանրապէս տարիքի մասին չէր խօսեր ու սաստիկ կը
բարկանար, երբ հին ընկերները կը պնդէին, որ տասը
տարիէ ի վեր Գեւոն քառսունի վրայ խարսխած մնացեր
է:

— Էսպէս չի լինի, — տղաք, — տեղէն բարձրանալով
կանչեց Արշակը, — վալլահ, բոլորս ալ պիտի սառինք,
եկէք կէօնտ մը բռնենք:

— Կէօնտ բռնենք, կէօնտ բռնենք, — ձայն ձայնի
տուին հայդուկները ու հրացանները ձգելով կիսաշրջան
մը կաղմած կարծրացած ձիւնի վրայ, սկսան երգել.

Արի գիւանֆ սարն ու սէյրան,
Մաֆրուհի ջան, Մաֆրուհի...

Հետզհետէ պարը տաքցաւ: Բոլոր հայդուկները,
նոյնիսկ Առիւծ Գեւոն ալ տքտքալով պարի մէջ մտաւ:
Իսկ երբ սկսան քոչարի պարել, աշխոյժ շուրջ պար մը:

այլեւս յոգնութիւնն ու ցուրտը մոռցան: Կուշտ կուշտի
սեղմուած, համաչափ շարժումներով ոտքերնին սառոյ-
ցին կը զարնէին:

— Տղաք, շարժինք, դեռ շատ ճամբայ ունինք եր-
թալիք, — ձայն տուաւ Լեւոնը՝ նստած տեղէն բարձրա-
նալով:

Վերջապէս Արտոսի դագաթը հասան, ուր արեւել-
եան քամին ձիւնը լիզելով՝ կողքերնէն կը ծեծէր հայ-
դուկները հաղարաւոր ասեղներու նման ծակձկելով զա-
նոնք: Բայց ճանապարհի դժուարին մասը անցած էին:
Վայրէջքը շատ աւելի հեշտ էր: Սառած ձիւնի վրայէն
գլորտելով, ինչալ ելնալով խումբը հեշտօրէն դէպի Փե-
սան Դաշտ կ'իջնար:

Պարզ էր, որ ժամանակին ջպիտի կրնային հասնիլ
Կաղաղիգ. վերելքը երկար տեւած էր: Դեռ բաւական
ճանապարհ կար կտրելիք, երբ լուսաստղը շքեղօրէն սկը-
սաւ բարձրանալ, տաք թոնիրի մը շուրջը բոլորուելու
հայդուկներու յոյսը օղբ հանելով: Ճարահատ, ցերեկն
ալ դուրսը պիտի մնային:

— Հը, Արշակ, — Լեւոնը հարցական նայեցաւ զո-
վէն քալող վալատին, — ի՞նչ կ'ըսեն:

— Վալլահ, պարոն Լեւոն, մինչեւ գիւղ չենք հաս-
նիր, լուսը բացուելու մօտ է...

— Իսկ որտե՞ղ կրնանք սդրուել:

— Լճակի մօտ շատ յարմար է, եթէ միայն հասնինք:

— Տէ, տղաք, ձեզ մատաղ, — ձայն տուաւ Լեւո-
նը, — քայլերնիդ պնդացուցէք, շատ ճամբայ չմնաց...
հիմա լուսը կը բացուի...

Պէտք էր թեւ առնել: Յոգնած, ուժասպառ հայդու-
կը պէտք է քալէ ու քալէ կրնկալոխ արագութեամբ,
տեղ հասնելու համար: Տղաք իրարու ձայն տուին, ար-
ճիճի ծանրութիւն ստացած ոտքերը արագօրէն սկսան
փոխուիլ: Եթէ գիւղ չէին հասնելու՝ գէթ լիճը պէտք է

հասնէին, ուրիշ տեղ չկար ցերեկը անցընելու համար:

Լոյսը կարգին բացուած էր, երբ խումբը հասաւ լըճակի մօտ: Թէեւ Ոստանի ճանապարհը շատ մօտէն կ'անցնէր, բայց լճակը, երեք կողմէն բարձրութիւններով շրջապատուած, ոչ գիւղէն ու ոչ ալ ճանապարհէն կ'երեւէր: Յարմար չոր գետին մը գտնալով, հայրուկները իրարու վրայ թափուեցան, մինչ քիչ մը հեռուն, բարձրութեան մը վրայ նշանակուած պահակը քարի մը տակ մտած, կը հսկէր: Հայրուկները, խումբերու քաթնըւած, սկսան իրարու ձեռքէ խլղտելով՝ վայելել չանթաներուն մէջ մնացած հացի փշրանքները:

Կոռի միջոցին հայրուկը դաժան գինուոր մ'է, պարտաճանաչ ու կարգապահ: Ճանապարհի վրայ, հայրուկը համբերատար ջորի մ'է, որքան ալ որ ծանր բռն մը դրուի ուսին, մտքէն իսկ չ'անցըներ դժգոհել, բողոքել: Բայց երբ հանգստի ժամանակ է, երբ ոչ ճանապարհ ունի երթալիք ու ոչ ալ կռիւ, այդ պահուն հայրուկը մազով մօրուքով երեսայ մ'է, կատակասէր, անհանդարտ, երեսայական լինելու աստիճան կուրբտող: Այս հողերանտական վիճակը ընդհանուր երեւոյթ մ'էր հայրուկային կեանքի մէջ: Թէկուզ շատ լուրջ համարուած հայրուկներ, քառասուն յիսուն տարեկան, գաւակներու թոռներու տէր, հանգստի ժամանակ իրենք զիրենք այնպէս կը պահէին, ինչպէս արձակուրդ ստացած դպրոցական պատանիները: Այդ պահերուն մեծ ու պզտիկ չկար, ամէնքը իրարու հաւասար էին:

Լեւոնը բնաւորութեամբ սառը, եւ ոչ հաղորդական, հայրուկներէն մեկուսացած կը մնար, մինչդեռ նոյն պայմաններու մէջ, Գէորդը, Պիժան, Բայց մանաւանդ՝ Վահէն, երբ դեռ կենդանի էր, կ'ապրէին հարազատ հայրուկի հողերանտութեամբ: Այս պատճառով ալ հայրուկներու եւ Լեւոնի միջեւ աներեւոյթ պատ մը կար. ան չէր սիրուեր այնպէս, ինչպէս իր ընկերները, թէեւ

անոր հանդէպ խոր յարգանք մը կար, ու անսահման վրստահութիւն: Լեւոնի հրահանգը բուխտապէս կը կատարուէր: Հայրուկները գիտէին որ ան խիստ է, պահանջկոտ ու անխնայ, բայց միաժամանակ բացարձակ վստահութիւն ունէին անոր կարողութեան եւ ղեկավարութեան վրայ: Գիտէին, որ այդ քարէ շինուած պաղ մարդը, որ հազիւ երբեմն կը ժպտար, դարմանալի հոգատարութիւն մ'ունէր հայրուկի նկատմամբ, ամենայետին շալակաւորի մը համար պատրաստ էր իր կեանքը զոհելու: Հայրուկներու այս գիտակցութիւնն էր պատճառը՝ Լեւոնի մեծ հեղինակութեան եւ ազդեցութեան:

Մինչ խմբի հայրուկները, Առիւծ Գեւոյի շուրջը հաւաքուած, ուշադրութեամբ կը հետեւէին անոր անվերջանալի պատմութիւններուն, Լեւոնը վալաղի ու Քերձեցի Արշակի հետ կը խորհրդակցէր, խումբէն քիչ մը հեռուն նստած:

— Մութը լաւ մը կոխելուն վը մտնանք Կաղազիդ, — կ'ըսէր Արշակը, — արդէն քանի մը քայլի ճամբայ մնացած է...

— Այո՛, Բայց տղաքը ուտելու հաց չունին:

— Մէկերնիս երթալու է գիւղը:

— Ճիշդ այդ կը մտածէի... դու գէնքերդ վար դիր ու գնա գիւղ: Եթէ գիւղին մէջ զօրք կամ քիւրտ չկայ, դորձադիրին կ'իմացնես մեր մասին. թո՛ղ իրիկուան համար տեղ պատրաստեն, քիչ մ'ալ հաց ճամբեն ցերեկուան համար:

Արշակը գինաթափ եղած գիւղ գնաց, որ հազիւ երեք քառորդ ժամու հեռաւորութիւն ունէր:

Արեւը բարձրացաւ: Նոր միայն հայրուկները, արեւի ճառագայթներէն ստաքացած, երկնցան հանգստանալու: Կէս օրուան մօտ, գիւղէն շալակաւոր երկու կիներ եկան տղայոց մօտ:

— Վեր մեր աչաց, վեր մեր գլխին, — մօտենալով

ըսաւ կիներէն տարէցը, մինչ ընկերը, ճահիլ հարս մը, լաջակով ծածկած ճակատն ու բերանը, ինչպէս որ կարգն էր, ուսէն վար բերաւ ահագին ծրար մը:

— Էս լէ ձի համար, ես քօռնամ անօթի կ'եղնիք,— ծրարը քանալով կը խօսէր պառաւը,— Թագա հաց, Ժա-
Ժիկ, ճաւարէ սիլա... Զե ոտաց մեռնեմ, ազդութեան մարդ էք...

— Մարէ, շնորհակալ ենք... գիւղին մէջ ասկեր, քիւրտ կա՞յ,— հարցուց Լեւոնը:

— Կրողը տանի էտ շները, քէօքերնին չորնայ, չէ, պալամ, դրսէն մարդ չկայ, մենք գիւղ գեղական... Որ մթնի, մեր ճահիլներ քեօ կուշտ պիտի գիան... մեծա-
ւորը դո՞ւն ես... վախ քօռանամ, մեր ճահիլ ճիվան պա-
րոն Վահէն... Թուրքի տունը քանդուի... աշխարհի զագէպն ի...

Այդ երեկոյ, մթնելէն սկերջ, Արչակի հետ Կաղազի-
զէն եկող երիտասարդներու ընկերակցութեամբ խումբը մտաւ գիւղը եւ տեղաւորուեցաւ գիւղի ծայրը քտնուող տան մը մէջ: Մինչ Լեւոնը տեղական Գործադիրի ան-
դամներուն հետ ժողով կ'ունենար թոնրատան մէջ, մեր Առիւծ Գեւօն, գիւղի երիտասարդները չորս բոլորը հա-
ւաքած, Վանայ կռիւներէն կը պատմէր, դաւաճան Դա-
ւոյի տեւօրէն, իր կատարած քաջագործութիւններէն: Աւելորդ է ըսել, թէ գիւղացիք երկիւղած լուծեամբ մտիկ կ'ընէին, առանց բառ մը կորսնցնելու: Առիւծ Գե-
ւոյի քէֆին քէֆ չէր հասներ: Պատմութիւնները լրացը-
նելով, բոլորովին անխռով ձեւով մը, ըսաւ գիւղացի ե-
րիտասարդներուն.

— Տօ էս ձեր սարը... համմա ցուրտ էր երէկ գի-
շեր, տղաներէն շատեր սառեցան: Տղերք, կ'ըսեմ, ոտք վերցուցէք, շուտով տեղ հասնինք, ախպօրս ըսեմ, որո՞ւ
կ'ըսես, տղոց վրայ հալ չէր մնացեր... Էհ, հապա Հա-
յաստան ազատելը հե՞շտ կարծեցիք... Եա, դօռ է... Ա-

մէն մարդ հայդուկ չի կրնար լինել... Էհ, ինծի մի նա-
յէք, իմ ոսկորներս եփեր են այս ճամբաներու վրայ...
Արտոս է եղեր, Սիվան է եղեր, Մասիս է եղեր, էտ բո-
լորը մէկ հաշիւ է ինծի համար... Հա, Մասիսի դագա-
թը, հա դուրուն դաշտ...

Թոյիալ Սատանան քթի տակէն մեղմօրէն կը ժըպ-
տար՝ յիշելով Առիւծ Գեւոյի առջի գիշերուան խեղճա-
ցած վիճակը:

Երկու օր մնալով Կաղազի գիւղի մէջ, Լեւոնը վամբով
անցաւ Յառեղ գիւղը:

Փեսան Դաշտի փոքր տարածութեան վրայ իրարու
կշտի իննը գիւղեր կան: Ատոնցմէ եօթը հատը զուտ հա-
յաբնակ են, իսկ վերին ու ներքին Դարենցները քրտա-
խառն բնակչութեամբ:

Լեւոնի խումբը երկու շաբաթ մնաց այդ շրջանին
մէջ, այցելելով հայաբնակ գիւղերը, ամէն գիւղի մէջ
ալ հանդիպելով սրտբաց ընդունելութեան:

Լեւոնական պարզ ժողովուրդ մ'է փեսան Դաշտի հա-
յը, նահապետական վարք ու բարքով, անփութիտի սո-
վորութիւններով, որոնք դարերու անցեալ ունին: Երբ-
ջապատուած բարձրաբերձ սարերով, բնականաբար տե-
ղացի ժողովուրդի տնտեսութեան մէջ անասնաբու-
ծութիւնն ալ կարեւոր տեղ մը կը բռնէր: Երբ յու-
նիս ամսուն, հարաւէն ու շրջակայ դաւառներէն քըր-
տերը կը բարձրանային սարերը, հայերն ալ իրենց
հօտերով կ'երթային եայլախ: Վաչկատուն քրտե-
րու հետ ամենօրեայ շփումը, իրենց սեփականութիւնը
պահպանելու անհրաժեշտութիւնը բնականօրէն առա-
ջացուցած էին իրենց մէջ մասնաւոր սէր մը դէպի զէն-
քը, որու միջոցով միայն կրնային պաշտպանուել ալան
թալանի սովոր քրտերու յարձակումներէն, որոնք սո-
վորական երեւոյթներ էին: Փեսան Դաշտեցիները, թե-

րեւս ուրիշ շրջաններու ժողովուրդէն աւելի կրցած էին գնահատել զէնքը, անոր անհրաժեշտութիւնը խաղաղ կեանք մը ապրելու համար: Ու այդ էր պատճառը, որ կառավարութեան խիստ խուզարկութիւններու ատեն, խնամքով թաղցուցած էին իրենց ունեցած զէնքերը, քանի մը կոտորած չախմախի հրացաններ միայն յանձնելով խուզարկող պաշտօնեաներուն:

Մայիսի սկիզբի օրերն էին, երբ ձիւնը կամաց կամաց սարերու գագաթը կը բարձրանայ: Լեւոնը Փեսան Դաչտի Նառ գիւղէն անցաւ Սիւտիին, որտեղէն կը սկսի Շատախի ընդարձակ շրջանը, ու կ'երկարի մինչեւ Արմըշատ, Տիգրիսի ափին ինկած հայկական գիւղը: Գիւղէ գիւղ թափառելով, խումբը մայիս ամիսը անցուց Շատախի շրջանին մէջ:

Յունիսի սկզբնական օրերէն սկսած, հարաւէն եկող քոչուոր քրտերը երեւցան Տիգրիս գետի հարաւային ափերուն: Անոնք հաղարաւոր ոջխարներ քշելով, հանդարտօրէն կը մօտենային Խլկտունի եւ Արմշատի կամ մուրջներուն, որոնք գլխաւոր անցքերն էին Տիգրիսի:

Յունիսի տասնէն սկսած, քոչուորները սկսան բարձրանալ Աւնոսի լեռնաշղթան ու ցրուեցան մինչեւ վերի ծայրը, հասնելով մինչեւ Արտոս եւ Եղիբով լեռնաշղթան, որ Գաւաշն ու Հայոց Զորը կը բաժնէ Շատախէն եւ Մոկսէն:

Յունիսի կէսին Լեւոնն ու իր ընկերները կը գտնուէին Շատախի թաղէն երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Բոլս գոլտ հայաբնակ գիւղը:

Երկու օր այդ գիւղին մէջ հանգստանալէ յետոյ, Մոսօն տասնեակով մը գնաց Մոկսի շրջանը, իսկ Լեւոնը կը պատրաստուէր մնացած երկու տասնեակով գէպի Ծիծանց անցնիլ, երբ Փեսան Դաչտի Կարատեր գիւղէն սուրհանդակ մը եւ երեք շալակաւորներ հասան: Սուր-

հանդակները հասան ճիշդ այն ժամանակ, երբ խումբը ճամբայ պիտի ելնէր:

Պիծայէն ստացուած նամակը կարդալով, յայտնաւէտ ուրախացաւ Լեւոնը եւ կարգադրեց օր մ'ալ սպասել Բոլսի մէջ: Կարատերէն եկած շալակաւորներն ու սուրհանդակը իրենց շալկի ծրարները յանձնելով վերադարձան: Ախոռի մէջ մնացին հայդուկներն ու տեղացի երիտասարդներէն ոմանք:

— Տեսնես, ի՞նչ կայ այդ կապոցներուն մէջ,— Առիւծ Գեւոյին մօտենալով փսփսաց Թոփալ Սատանան, աչքը անկած կապոցներուն վրայ,— Հը՞, Գեւօ, ի՞նչ կայ էդոնց մէջ, զէնքի չի նմանիր...

— Հալուայ ու դաթա,— քթի տակէն խնդալով պատասխանեց մեր բարեկամը, բոլորովին անտարբեր ձեւ մը առած, թէ եւ ընկերոջմէն ալ աւելի կը հետաքրքրուէր ծրարներու բովանդակութեամբ:

— Մադօ՛,— կարգադրեց Լեւոնը,— ծրարները տար թոնրատուն, Մարէին պահ տուր:

Գործոթի Մղսիի տղան, մեր վաղածանօթ Սադօն, երկու ընկերներով վերցուց ծրարները, որոնք հակառակ մեծ լինելուն՝ շատ ալ ծանր չէին ու մեկնեցան ախոռի սաքուէն, ուր հաւաքուած էին հայդուկները:

Վարդապետն ու Լեւոնը, սաքուի բուխերիկի մօտ իրարու կշտի նստած, ցած ձայնով կը խորհրդակցէին:

— Ուրեմն,— խօսքը վերջացուց Լեւոնը,— կ'անցնիս Ծիծանցի վրայով Յինենց, կը մնաս այդ շրջանին մէջ մինչեւ վերադարձս: Ութը զինուոր կը վերցնես հետդ... Այդքանը զաւական է: Եթէ պէտք ունենաս, տեղական կամաւորներով կրնաս խումբդ մեծցնել:

— Իսկ դու քանի՞ օրէն կը վերադառնաս,— հարցուց վարդապետը.— եւ որո՞նք վերցնեմ հետս:

— Ես տասը տասնեակնեք օրէն կը վերադառնամ, շատ շատ քսան օրէն, իսկ հայդուկներէն վերցուր Սա-

դօն, Մկօն, վստահելի տղաք են, եւ ուրիշ տղաներ, որոնք որ կ'ուզես:

— Շատ լաւ, ուրեմն մենք ճամբայ ելնենք, հազիւ թէ լուսը բացուելէն առաջ Ծիծանց հասնինք:

— Այո՛, բայց կը հասկնաս, վարդապետ, ոչ մէկ խօսք, նոյնիսկ ղինուորները չպիտի իմանան:

— Օ՛, անշուշտ, — ու Ծուռ վարդապետը ոտքի ելնելով՝ իր ընկերները ջոկեց:

Տասը բոպէ վերջ տեղացի վալադի մը առաջնորդութեամբ վարդապետը իր վստամբով ճամբայ կ'ելնէր դէպի Ծիծանց:

— Գեւօ, բան մը կը հասկնա՞ս անցած դարձածէն, — հարցուց Թոփալ Սատանան, — իմ խելքս բան մը չի կտրեր: Քիչ մը առաջ քոլորս միասին ճամբայ պիտի ելնէինք, ինչո՞ւ վարդապետը դատուեցաւ մեզմէ... Այդ կապոցներն ալ, դէնք է ըսեմ՝ դէնք չէ... Գեւօ, բաներ մը կ'անցնին կը դառնան...

— Հըմ, հէլպէթտէ, — ձայնին առանձին խորհրդաւորութիւն մը տալով ըսաւ Առիւծ Գեւօն, որ նոյնքան անգիտակ էր որքան ընկերը, — բաներ մը կը դառնան մեր շուրջը, վաղը մէկէլ օր... մեծ բաներ, մեծ բաներ... Հասկցա՞ր, Թոփալ... մարդու բան չըսես...

— Հա, ինչպէ՞ս չէ, հասկնալը հասկցայ, մեծ տխրակեր, վաղը մէկէլ օր... Խե՞նթ եմ որ բերանս բանամ... — ու կարծես նոր անդրադառնալով որ իր հասկցածը այնքան անօրոշ էր որքան Գեւոյի խօսքերը, կամաց մը ընկերոջ թեւէն քաշեց.

— Հը՞, ծօ՛:

— Եանի վաղը մէկէլ օր, ի՞նչ, — կզակը քորելով հարցուց Թոփալը:

— Ծօ, սուս, մարդ չլսէ...

Թոփալ Սատանան պարտաւոր էր ընկերոջ այդ պերճախօս քացատրութեամբ գոհանալ, թէեւ ինքն ալ հաս-

տատ չէր գիտեր թէ ի՞նչ պաղտնիք էր որ մէկու մը չպիտի ըսէր: Ըսենք, միայն մեր երկու բարեկամները չէին որ այդ երեկոյեան անցուդարձով հետաքրքրուած էին, այլ եւ խմբի բոլոր հայդուկները, որոնք զանազան ենթադրութիւններ կ'ընէին, առանց հաստատ բան մը գիտնալու:

Ձաւարէ փլաւով ու մածունով կուշտ ու կուռ ընթրիք մը ընելէ վերջ, հայդուկները երկնցան սաքուի թաղիքներուն վրայ: Լեւոնը մինչեւ ուշ ատեն պրելով ըզբաղած էր, մինչ ընկերները, բացի պահակէն, անխոռով կը քնանային: Մէկ երկու անգամ ժամացոյցը նայեցաւ, վերջապէս տետրակները հաւաքելով չանթային մէջ, կամաց մը Գեւոյի ուսը շարժեց.

— Գեւօ, արթնցիր, Գեւօ:

— Հը՞, ի՞նչ կայ, — թեւերը պարզած եւ յօրանջելով հարցուց Գեւօն:

— Տղաքը արթնցուր, ճամբայ պիտի ելնենք:

— Հէ՛յ տղաք, — աջ ու ձախ ձայն տուաւ Առիւծ Գեւօն, ուժեղ աքացի մ'ալ Սալտաթի նստատեղիին բաժին հանելով, — ելէք, տղաք, ելէք, պատրաստուեցէք... Ծօ՛, շոշորդ, չանթադ վերցուր... Ծօ՛ պող էշ, իր դամանդ ինկաւ...

Հայդուկները քնաթաթախ ոտքի ցատկեցին՝ դարձացած իրարու նայելով: Կէս գիշեր կը լինէր, ալ ի՞նչ ճամբայ ելնել էր, իսկ եթէ տեղ պիտի երթային, ինչո՞ւ սովորականին պէս արեւը մարը մտնելուն ճամբայ չէին ելած:

— Գեւօ՛, Աբրոյի հետ կապոցները տարէք Գործադիրի մարազը, — կարգադրեց Լեւոնը, — ինքը մարազի առջեւ ձեզ կը սպասէ: Գեղամէջէն առանց աղմուկի անցէք, մարդ չնկատած ձեր երթալը...

Գեւօն ու Աբրօն թոնրատունէն կապոցները շալկելով՝ շուտով կալերը հասան, ուր մարազի մը առջեւ

նստած՝ իրենց կը սպասէր երիտասարդ մը, Բոլս դիւղի Գործադիրը, կամ ինչպէս գիւղացիք կը կոչէին՝ Կոմիտէն: Հազիւ թէ մարազը մտած ու քանի մը բոպէ նստած էին, եթէ Լեւոնն ու խմբի մնացորդը ներս մտան: Մոմպատի աղօտ լոյսը հազիւ կը լուսաւորէր փոքր մարազը:

— Տղաք, հանուեցէք, — հրամայեց Լեւոնը ու առանց այլեւայլի ինքն սկսաւ փամփուռտակալները քանդելով զգեստները հանել:

Հայդուկները հազիւ խնդուքնին լռնած՝ հետեւեցան Լեւոնի օրինակին, առանց հասկնալու թէ ինչո՞ւ համար պիտի հանուէին: Կային շատեր, որոնք երեք ամիսէ աւելի էր՝ ինչ բաճկոննին չէին հանած վրաներէն:

— Գեւօ, կապոցները քանդէ...

Առիւծ Գեւօն Գործադիրի օգնութեամբ սկսաւ կապոցները բանալ: Առաջին կապոցը բացուելուն, մեր Գեւօն զարմանքէն աչքերը չռած՝ դարձաւ Լեւոնին.

— Էստ՞նք... պարոն Լեւոն, էստնք...

— Հա, Գեւօ, պիտի հազնիք... Նոկեցէք ձեզ յարմարները... ատոնց մէջ հատ մը ռսկեղօծ երկդով պիտի լինի... Հա, էդ... ինձ տուր... շուտ շարժեցէք...

Կապոցներու մէջէն դուրս թափեցան թուրք զինուորներու յատուկ համազգեստներ, ծոպաւոր Փէսեր: Հայդուկները հռհուալով վրայ ինկան: Անոնցմէ մեծագոյն մասը կեանքերնուն մէջ տարատ ու բաճկոն չէին հաղած: Լեւոնը արագօրէն սպայի համազգեստը հագած՝ կ'օգնէր անճարակներուն: Մեր Առիւծ Գեւօն կեցած տեղը սառած մնացեր էր:

— Գեւօ, չհաղուի՞ս, — կողը մխթելով ըսաւ Սալտաթը, — մէրդ չմեռնի, թուրք ասկեր ալ պիտի լինիս եղեր...

Գեւօն բարկութեամբ աչքերը ոլորեց Սալտաթի վրայ ու սգաւորի նման, դէմքը կախած, շարվարի կապը

քանդելով հանեց գայն ու փորձեց տարատներէն մէկը հաղնիլ:

Լեւոնն ու Գործադիրը հաւաքեցին տղայոց հանած շորերը, ծրարելով կապեցին ու չոր խոտի դէզի տակ պահեցին:

— Շարաթ մը վերջը շարակաւորներով Ծիծանց կը ճամբես, — պատուիրեց Լեւոնը, — ոչ մէկ խօսք եղածի մասին, գիւղի մէջ քեզմէ դատ մարդ իմանալու չէ: Տըղաք, բոլորդ ալ պատրաստ էք: Լաւ, ուրեմն, ճրագը մարեցէք... Այդպէս, հիմա դուրս եկէք մարազէն:

Մինչ Գործադիրը գէպի գիւղ կ'երթար, Լեւոնը վալդի հետ խումբի առջեւէն ինկած, գետի եղերքով ձորն ի վեր սկսան բարձրանալ: Բաւական տեղ առաջանալէ վերջ, յանկարծ կանդ առաւ: Հայդուկները վամբուեցան չորս դին:

— Տղաք, մտիկ ըրէք, — ու Լեւոնը գլխին հաւաքուած հայդուկներուն երկար բարակ բացատեց թէ ինչո՞ւ համար այդ ծպտումը անհրաժեշտ էր, ի՞նչ պիտի ընէին եւ թէ հայդուկները ինչպէ՞ս պիտի պահէին իրենք զիրենք:

Բոլացի երիտասարդ մը, որ նոր մտած էր խմբի մէջ, ու շատախեցի Ղարիպ անուն ճահիլ պատանի հայդուկ մը հետը վերցնելով՝ Լեւոնը առաջ ինկաւ: Ութ տաս քայլի վրայ խումբը հետեւեցաւ անոնց, Առիւծ Գեւոյի առաջնորդութեամբ, որ խեղդուելու աստիճան սեղմուած էր այդ տարօրինակ զգեստներու մէջ:

— Է՛, օնպաչի, բարի ճանապարհ, Գեւօն մխթելով ըսաւ Թոփալ Սատանան, — էֆէնտիմ, բարի վայելում, ինչալլահ ըէֆդ տեղն է... լաբ խուզուած ոչխարի կը նմանիս... դմակդ դուրս ինկած է...

— Ծօ, ձէնդ, — ատամները կը ճտացնելով բարկացաւ մեր Գեւօն, որու սոքերը կարծես իրարու կը խառնուէին, — քաշելիք ունինք եղեր, մարդավարի լեն շալ-

վարները հանեցինք՝ էս զուռնաները հաղնելու համար
... Աստուած պէլան տայ էսոնք հնճարկողին... Ա՛խ
քեզի ի՛նչ ըսեմ Հայաստան, մէկ մը ազատէիր, մենք ալ
քո փորձանքներէն ազատէինք...

ԻՍՎԷՐ ՌՍՊԻՆ

Հիւսիսէն հարաւ երկնցած լեռնաշղթայ մը իրարմէ
կը բաժնէ Շատախն ու Մոկաց աշխարհը:

Այդ լեռնաշղթայի ընդարձակ տարածութեան վրայ
կը բարձրանան մէկը միւսէն աւելի չքեղ գագաթներ, ու
րոնց բոլորի վրայ կ'իջնէ տասներկու հազար ոտք բարձ-
րութիւն ունեցող Առնոս սքանչելի սարը, որու տարա-
ծուն փէշերը մէկ կողմէն կ'երկարին մինչեւ Տիգրիսի
ափը, իսկ միւս կողմէն՝ կը հասնին մինչեւ Վանայ ծո-
վը՝ հանգոյց մը կապելով Եդերովի եւ Արտոսի փէշե-
րուն հետ:

Հսկայ լեռներու, անդնդախոր ձորերու անհուն
խառնարան մ'է Վանայ ծովի հարաւային երկրամասը,
ուր Կառկաոն ու Մոկսը, Շատախն ու Փեսան Դաշտը,
Գաւաշն ու Կարճկանը կը սահմանաւորուին իրար խաչա-
ձեւող բարձր լեռնաշղթաներով: Այդ լեռնաշղթաներու
լանջքերուն կ'երկարին Հայկական Բարձրաւանդակի լա-
ւազոյն եայլախները, կամ, ինչպէս սովորաբար կ'ըսեն,
լոմանները:

Առնոսի դէպի Մոկս նայող կողին, փոքր լեռնա-
դաշտի մը հարթութեան վրայ, ամէն տարիներու նման
իր ահագին չատրը զարկած էր Միլանցի աշիրաթի մե-
ծը, Իսվէր Ռոսպին, մինչ իր ցեղակիցներու չատրներու
չարքը կ'երկարէր Արմշատէն մինչեւ Ռատանի սարը:

Միլանցիները քրտական քաղմամարդ, հարուստ ու
լաւ գինավարժ աշիրաթ մ'են: Տարին տասներկու ամիս
չարժման մէջ լինելով՝ անոնք առանց մշտական կայանի
մը, միշտ ճամբու վրայ կը գտնուէին, իրենց ամբողջ հա-
րըստութեան հետ միասին: Ընտանիքներով, ճիժ ու
սլփերով, ոչխարի անհատնում հօտերով, ջորիներու ե-

բամակներով եւ արարական հռչակաւոր ձիերով, այդ քոչուորները նայած եղանակին, դանդաղօրէն մէկ դէպի հարաւ կը շարժէին, մէկ դէպի հիւսիս: Սյուպէս էր Միլանցի աշիրաթի կեանքը: Ծէղերէի տափաստանները կը համարուէին անոնց ձմեռանոցները, ուր քանի մը ամիս մնալէ վերջ, դանազան ուղղութիւններով կը տարածուէին, հետզհետէ բարձրանալով դէպի հիւսիս:

Միլանցիներու ցեղապետը, Մասո փաշան, մինչեւ Պոհտանի ճամօն կարէ ըսուած վայրը իր ցեղակիցներու հետ բարձրանալէ յետոյ, այդ դրախտանման վայրին մէջ կը զարնէր իր բազմաթիւ վրանները, մինչ իր աշիրը երկու թելի կը բաժնուէր. մէկը կ'անցնէր Տոսքու լեռնադաշտով դէպի Նորտուզի սարերը, իսկ միւսը, իսկէր Ռսպիի առաջնորդութեամբ, կողար Արմշատ հայկական սիւղի դիմաց: Հոն Տիգրիսը անցնելու համար, Ռսպիի ամէն տարի ծառի թարմ ճիւղերէ հիւսուած կախեալ կամուրջ մը կը ձգէր յորձանուտ գետի վրայ: Այդ օրօրուող կամուրջի վրայէն կ'անցնէին բազմահազար սլխարի հօտերը, ջորիները, ձիերը:

Անոսի գազաթէն քանի մը հարիւր քայլ վար փոքր հարթութեան մը կեդրոնը զարնուած էր իսկէր Ռսպիի այժի մագէ հիւսուած շատ ընդարձակ վրանը, չորս սիւներու վրայ բարձրացած: Այնքան ընդարձակ էր այդ վրանը, որ տասը ընտանիքներ կրնային հանգստօրէն ապրիլ անոր մէջ: Զիւրով հիւսուած շարժական միջնորմներով զատուած դանազան բաժանմունքներ ունէր վրանը, որու կեդրոնը կը գտնուէր իսկէր Ռսպիի սենեակը, որ միաժամանակ իր ննջարանն էր, ճաշարանը, հիւրասենեակը: Մնացած բաժանմունքներէն ոմանց մէջ Ռսպիի ամուսնացած տղաքը կ'ապրէին. ոմանք ալ տընտեսութեան յատկացուած էին եւ կամ ծառաներուն:

Լուսաստղը հազիւ բարձրացած՝ կեանքը սկսաւ խըլըրտիլ վրանին տակ: Վրանի հեռաւոր ծայրին երեք քա-

րերու արանքը օճախը կը վառէր: Կին մը պղնձէ լէկէնի մը մէջ լսմոր կը հունձէր երկաթէ տախտակներու վրայ, քոչուորներուն յատուկ հացը եփելու համար: Երկու կիներ թաղիքները կը հաւաքէին:

Մագէ տործուած երկու օրօրոցներուն մէջ քնացող երեխաները, կ'երեւի օճախի ծուխէն անհանդիստ, ձայներնին գլուխնին ձգած, միաբերան կը ճուային: Անոնց ուշադրութիւն իսկ դարձնող չկար:

Ռսպիի մանկամարդ աղջիկը վրանի արեւմտեան փէշերը կը բարձրացնէր, ձողերու վրայ ամրացնելով գաննք:

Իսկէր Ռսպիի պառկած տեղէն բարձրացաւ, երբ աղջիկը վրանի փէշը վեր վերցուց: Ռսպիի ճերմակ շապիկի ու վարտիքի վրայէն թալաֆի ապան ուսերուն նետեց, մետաքսէ փուշին անցուց գլուխը, փուշի վրայէն ալ ոսկեթել բանուած ակալը ամրացուց, ճերմակ շապիկի մինչեւ գետինը հասնող թելերը իրարու հանդուստելով ծոճրակէն կախեց եւ գոլըս գալով վրանէն երկու տասնեակ մը քայլ հեռաւորութեան վրայ գտնուող աղբիւրին մօտեցաւ: Հանդարտ շարժումով կիզեցաւ աղբիւրին առջեւ ու երկու ափերով սառնօրակ ջուրը երեսին զարկաւ:

— Աստուած մեծ է, եւ Մուհամմէտը անոր Մարգարէն, — գէմքը դէպի հարաւ դարձուցած՝ քանի մը անգամ միեւնոյն նախադասութիւնը կրկնելով վերջացուց կարճ աղօթքը, ու հանդարտաքայլ մօտեցաւ վրանին:

Բարձրահասակ, լայնաթիկունք, պատկառելի ծերունի մ'էր իսկէր Ռսպիի, Միլանցիներու աղան: Բացի իր առասպելական հարստութենէն, իսկէր Ռսպիի հըռչակուած էր որպէս արդարամիտ մարդ մը, աստուածաշնչական մեծ նահապետ մը, որուն կը դիմէին բացի իր ցեղակիցներէն, նաեւ շրջանի քրտերն ու հայերը: Տասնեակ տարիներէ ի վեր Ռսպիի այդ եայլախները կը

բարձրանար՝ բարի դրացիական յարաբերութիւն պահելով Շատախի եւ Մոկսի հայերուն հետ: Անոր սարսափէն ոչ մէկ Միլանցի քիւրտ կրնար անիրաւի հայու մը չտիր վերցնել:

Իսվէր Ռսպին հաղիւ թէ վրանին մօտեցած էր, երբ առաւօտեան խոր խաղաղութեան մէջ, շատ հեռուէն, քոչարներու յատուկ աղբանշանը լսուեցաւ:

— Տէ՛, լի՛ լի՛ լի՛ լի՛... .

— Ճաֆէ՛ր, այ տղայ Ճաֆէ՛ր, — պահ մը ուշադրութեամբ ձայնի ուղղութեամբ մտիկ ընելէ վերջ վրուկը վրանէն ներս կոխած՝ պոռաց Իսվէր Ռսպին:

— Պապօ՛, — վրանի բաժանմունքներէն մէկէն դուրս թուաւ քնաթաթախ պարթեւ երիտասարդ մը:

— Տղա՛յ, Հասոյի ձայնը ձորամէջէն կուգար: Շուտ թռիր, տես՝ ի՞նչ պատահած է:

Վրանի սիւնէն կախուած հրացանը ուսին նետելով, Ճաֆէրը ցիցի մը կապուած մերկ ձիու մը վրայ նետուեցաւ եւ ակնթարթի մը մէջ անյայտացաւ դունաթափ խաւարին մէջ:

Իսվէր Ռսպին, ատեն մը հեռացող տղու ուղղութեամբ նայելէ վերջ, ներս մտաւ վրանը, ու մէջքը յենած վրանի սիւնին՝ բազմեցաւ հաստ թաղիքներու վըրայ:

— Աստուած մեծ է, եւ Մուհամմէտը անոր Մարգարէն, — մրմնջեց Ռսպին ու գոհունակութեամբ աչքը պտըտցուց Մոկսի վայրի գեղեցկութեան վրայ, ուր անդրնդախոր ձորեր կ'երկնային դէպի Մոկսի գետի հովիտը:

Կամաց կամաց լուսնալ սկսաւ: Սարերու դազաթներէն արեւի ճառագայթները վար թափեցան, մինչդեռ ձորերու խորքին մէջ խաւարը օրհասական պայքար կը մղէր: Վրանի աջ ու ձախ կողմերուն կ'երեւային ոչխարի բազմաթիւ հօտեր, որոնք կանաչ ֆօնի վրայ նաչխուն

կապերտի նման՝ հանդարտօրէն կը շարժէին: Հեռուէն հեռու կ'երեւնային քոչարներու վրանները, որոնք անկտրուկ շղթայի նման կ'երկարէին լեռնաշղթայի ամբողջ երկարութեամբ:

— Տէ՛, լի՛ լի՛ լի՛ լի՛... .

Անդորր խաղաղութեան մէջ կրկին անգամ լսուեցաւ քոչարներու սովորական կանչը, բայց այս անգամ շատ մօտէն եւ երկու ըսպէս չանցած՝ վրանի առջեւ ձիէն վար ցատկեց Ճաֆէրը, սանձը ձիու պլխէն հանեց ու մօտեցաւ հօրը:

— Հը՞, խն՞ր է տղայ, ի՞նչ պատահած է:

— Պապօ, բան չկայ... տասնեւչինդ քսանի մօտ Ռօմի ասկերներ կուգան ձորամէջէն...

— Ասկե՛ր, — դժգոհ քրթմնջաց Իսվէր Ռսպին, — այդ չները էս կողմերը ի՞նչ բան ունին...

— Ո՞վ գիտէ, թերեւս Մոկս կ'անցնին:

— Մօտեցա՞ր հետները:

— Չէ՛, դեռ հեռու են, հաղիւ ժամէ մը հասնին:

— Մօրդ յայտնէ, թո՛ղ պատրաստութիւն տեսնէ... բան մը ուտեն ու չքուին երթան...

Ճաֆէրը անմիջապէս անցաւ վրանի միւս ծայրը, ուր օճախի մը առջեւ քանի մը կիներ սաճերու վրայ հաց կ'եփէին, իսկ երկու ուրիշ կիներ կաթսաներով կաթ կը տաքցնէին, ուրիշ մը, Իսվէր Ռսպինի աղջիկը, կը դարնէր եռօտանիէ կախուած խնոցը, որ պարզապէս ոչխարի տիկ մըն էր:

— Մարէ, Ռօմի ասկեր կուգայ ճաշ պատրաստէ...

— Չո՞ռ ու ցաւս ուտեն այդ ասկերները, — ծուխէն արցունքոտ աչքերը ճմռթկելով քրթմնջաց պառաւը, — աղջի՛ սասկելիք, շերեփը դարձուր, կաթի տակը առաւ...

Իսվէր Ռսպին ծայրապատիկ նստած՝ հանդարտօրէն չիպուկը կը քաշէր, երբ Ճաֆէրը ներս մտաւ ու յայտ-

նեց, որ ասկերները սարը շրջեցան եւ շուտով կուգան:

— Տղա՛ս, դե՛ս՛ դիմաւորելու:

Քառորդ մը չէր անցած, երբ ճաֆէրի հետ տասնեւհինգ ասկերներ, իրենց միլադիմի հետ վրանէն ներս մըտնելով, բարեւեցին ու շուրջանակի նստան:

— Բարով եկաք, հազար բարով, իմ աչքիս, իմ գըլխոսս վրայ տեղ ունիք:

Անշուշտ ընթերցողը գլխի ինկաւ, որ այդ ասկերները թուրք գինուորներ չէին, այլ Լեւոնը ու իր ընկերները, որոնք Բոլսի ձորէն բարձրանալով եկած էին հող:

Մովորական խօսակցութիւն մը ծայր առաւ, երբ երկու ղուամներ, մէկ լէկէն ու իբրէք մը ձեռքը, իսկ երկրորդը երեսարբիչով ներս մտան: Ռսպիի աղջիկն ու ուրիշ կին մը սփռոց մը փռելով սեղանը շտկեցին: Սեղանի չորս թոյրը ծալապատիկ նստողները, ձեռները լուալէ վերջ, սկսան ճաշել:

Իսվէր Ռսպիի սեղանը վայելելէ վերջ, Լեւոնի մէկ ակնարկին վրայ հայդուկները վրանէն դուրս ելան եւ հաւաքուեցան աղբիւրի գլուխը, մինչ Լեւոնն ու Ղարիպը մնացին առանձին Իսվէր Ռսպիի հետ: Ծերունի ցեղապետը կասկածանքով կը դիտէր տղայոց շարժումները, մանաւանդ երբ նշմարեց Լեւոնի ըրած գլխու թեթեւ շարժումը հայդուկներուն, որ դուրս գան վրանէն: Ռսպին անհանգստացած չորս կողմը կը նայէր, երբ Լեւոնը հանդարտօրէն չանթան բացաւ ու ջսակի մէջէն արծաթ գրամի մը կէս կտորը հանելով՝ առանց բառ մը արտասանելու երկարեց Իսվէր Ռսպիին: Թրքական մէծիտիէի մը մէկ մասն էր, մէջտեղէն անկիւնաւոր դիկզակով մը երկու մասի բաժնուած: Հազիւ թէ Ռսպին փողի կէսը ձեռքն առաւ, կողքի ջսակի մէջէն ուրիշ կտոր մը հանեց ու իրարու քով բերաւ: Երկու կտորները

կատարելապէս գիրար կը լրացնէին: Ռսպիի քիչ առաջուան մտահոգ դէմքը պայծառացաւ, մէկ ալ ծունկը ծեծելով՝ քարձրածայն սկսաւ ծիծաղիլ:

— Մարդ ամէն ձեւի մէջ կրնայ հանդիպիլ ձեզի... եաման մարդիկ էք... Բայց այս արդէն անսպասելի էր... Երկու տարի առաջ ալ, աշնան կողմ, Վահէ փաշան ճամէ կարէ եկաւ, որպէս Ֆրանկ բժիշկ մը... Վալլահի, թաւուր մարդիկ էք, մարդ չիչ չսպասած տեղը կըրնայ ձեզի հանդիպիլ... Ձեզմէ շատերուն հանդիպեր եմ, բայց քեզի տեսած չունէի... Հրամանքդ ո՞ր տեղէն կուգաս...

— Շատախի կողմերէն, — անորոշ կերպով պատասխանեց Լեւոնը, որու խօսքերը քրտերէնի կը թարգմանէր Ղարիպը:

— Վահէ փաշայի պատահածը լսեցինք, — ցաւակցօրէն գլուխը շարժելով խօսեցաւ Ռսպին, — ափսոս եղաւ, կտրիճ, խօսքի տէր մարդ մ'էր... Ծունկ ծունկի կը նստէր մեր Մսո փաշայի հետ հարազատ եղբայրներու նման: Ափսոս եղաւ, շատ ափսոս... Ռօմի տունը քանդուի ինչալլահ... Ին մէկէլը, քաղաք նստող ձեր մեծ կոմիտէն, Լեւոն փաշան, անունը լսեր, զինք չեմ տեսեր... անշուշտ անոր կողմէն կուգաս... Հալը, քէֆը ինտօ՞ր է... Որ զինքը տեսնես, իմ կողմէս շատ, շատ բարեւ խօսէ: Իրա՞ւ է, որ ձիւն նալը մէկ ձեռքով կը ծագէ... Անոր մասին մեր աշիրաթի մէջ շատ մը բաներ կը պատմուին:

Ցանկանալով իր ինքնութիւնը ծածկել, Լեւոնը պատասխանեց որ Լեւոն փաշան շատ լաւ է, մասնաւոր բարեւներ տնի ու ծխախոտի արծաթէ տուփի մը յանձնած է իրեն՝ իր լաւ բարեկամին, Իսվէր Ռսպիին տալու համար: Ու չանթային մէջէն ծրար մը հանելով, երկարեց Ռսպիին:

Մինչ Լեւոնն ու Իսվէր Ռսպին վրանի տակ իրենց

խօսակցութիւնը կը շարունակէին, հայրուկները, աղբիւրի շուրջը թաւ գորգի նման կանաչի վրայ պառկած, համբերութեամբ կը սպասէին Լեւոնի կարգադրութեանը:

Իսովէր Ռսպիլի մեծ վրանի տակ աշխոյժ կեանք մը կ'ենար: Երբեմն Ռսպիլի աղջիկներէն մէկն ու մէկը, պղնձէ խալկին մը քոնած, կը վազէր աղբիւրի մօտ ջուր տանելու, բոլորովին չքաշուելով օտարականներու ներկայութեանէն: Քոչար քրտուհիները, մինչեւ ոտքերը հասնող երկար պարեգօտ մը կը հագնէին, մէջքերնին սեղմած գօտիով, իսկ գլուխնին կը ծածկեն փուշիով: Բարձրահասակ, շքեղ կաղմուածք մը ունին ու զարմանալիօրէն գեղեցիկ են, սարերու վայրի մարալներու նման:

Մասնաւորաբար մէկը այդ աղջիկներէն, հազիւ տասնեւհինգ տարեկան գեղեցկուհի մը, հայրուկներու ուշադրութիւնը դրակեց:

— Ա՛յ, մէկ սա Հայաստանը ազատուէր ու մենք ալ կնկայ տէր լինէինք, — հառաչելով թի տակէն խօսեցաւ Աբրօն, — տնաքանդի աղջիկը խելքս գլխէս տարաւ...

— Կա՞ր որ, — հեգնեց ընկերներէն մէկը, — աչքդ շատ վեր մի՛ տնկեր... շաշ կը դառնաս, Աբրօ ջան:

— Տղերք, — ձայն տուաւ Սալտաթը, — եթէ օր մը պատահի որ ամուսնանամ, անպատճառ քոչարի աղջիկ պիտի առնեմ... Ես էսպէս գեղեցիկ աղջիկներ չէի տեսած կեանքիս մէջ:

— Հա՛, մէկ ատ էր պակաս, ծօ մէկ դէմքիդ նայէ, մարդ քեզ տեսնելուն լեղաճաք կ'եղնի, — երկար պիտեբըր ոլորելով ըսաւ Առիւծ Գեւօն, ոչ պակաս գրաւուած քոչար աղջիկներու մարմնեղ գեղեցկութեամբ:

— Հը՛, մեծ ախպէր, չլինի՞ դուն ալ կը մտածես ամուսնութեան մասին, — չարամտօրէն ժպտելով խօս-

քի մէջ ինկաւ Թոփալ Սատանան, — եթէ տարիքդ անցուկ չեղնէր...

— Ե՞ս ալ... ծօ ի՞նչ ըսել կ'ուզես. Եանի ես մարդ չեմ, իմ ի՞նչս պակաս է, — տաքացաւ Առիւծ Գեւօն:

— Վայ մեր գլխուն, տղաք, — պոռաց Արշակը, — պառաւ ձին ալ խրխնջալ սկսաւ:

— Գարին շատ մի՛ տաք, — հեգնեց ուրիշ հայրուկ մը, — ակռաները կ'առնէ:

— Վաթսուկն վերջ, նոր բարի լոյս, — ընկերներուն աչք ընելով ըսաւ Սալտաթը, մինչ հայրուկները քրքջալով կը ծիծաղէին:

Առիւծ Գեւօն շանթահարող հայեացք մը նետեց ընկերներուն վրայ, բարկացած քանի մը քայլ հեռացաւ ընկերներէն, կանաչի վրայ պառկելով, գլուխը հանգչեցուց թեւերուն վրայ, ու դառնացած սրտով սկսաւ մտածել: Է՛յ աշխարհ, երէկուան լակոտներն ալ լեզու ելած, զինք ձեռք կ'առնէին: Ալ ինչպէ՞ս դիմանար ինքը: Եւ սակայն, Առիւծ Գեւօն, թէկուզ ակամայ, իրաւունք կուտար ընկերներուն: Ի՞նչ եղաւ իր կեանքը: Քանի՞ տարիներ առաջ դուրս եկաւ գիւղէն ու այն ելնելը եղաւ: Ատկէ վերջ օր մը օրանց հանգիստ չունեցաւ: Հայրենական օճախը ձգած, յեղափոխական հայրուկ մը, Հայաստանը մէկ ծայրէն միւսը շրջեցաւ, ու ո՞վ դիտէ, թէ ո՞ր քարի տակ, օր մը պիտի իյնար: Ահա շուտով քառասունն ալ պիտի անցնէր... Զէ, Առիւծ Գեւօն թէկուզ ինքնիրեն մտածած ժամանակ իսկ, չէր ուզեր խոստովանիլ, որ տարիքը ճամբան ձեռք առած կ'երթայ եւ որ յաջորդ Բարեկենդանին յիսուն տարեկան պիտի լինի: Յուսահատ վճռականութեամբ կառչած էր քառասունին ու չէր ուզեր ասկէ անդին անցնիլ: Այս ինքնախարէութիւնը կը միխթարէր զինք: Ա՛յ, որ մէկ մը Հայաստանը ազատի, կը մտածէր Առիւծ Գեւօն, հեծկլտուք մը խեղդելով կոկորդին մէջ, անմիջապէս պիտի երթար Ա-

լաշկերտի իրենց գլխովը, մալ ու միւլքին տէր պիտի
կանդնէր, հօրենական օճախը պիտի շէնցնէր: Եւ ինչո՞ւ
չէ որ: Կը կարգուէր, սիրուն որբեւայրի հարսի մը հետ:
Որբեւայրի հարսի մը հետ: Այս միտքը շատ ալ դուր
չեկաւ Առիւծ Գեւոյին: Սրտովի չէր: Ինչո՞ւ համար
որբեւայրի հարս մը. փառք Աստուծու, դեռ ինք առոյգ
տղամարդ մը, ուժը, կարողութիւնը տեղը, ալ որբեւայ-
րի՞ս որն է, մտածեց Առիւծ Գեւոն: Տասնութը, քսան
տարեկան կոյս աղջկան մը հետ կ'ամուսնանայ, հինգ
վեց տարիէն երեք չորս դաւակներ կ'ունենայ, օճախը կը
չէննայ, երեխաները ծունկերուն վրայ առած՝ կը խաղ-
ցընէ: Երբ երեկոները դաշտի աշխատանքէն տուն կը վե-
րադառնայ, օրուան աշխատանքէն յողնած ու քրտնած,
դաւակներուն մայրը տան շէմքին վրայ կը դիմաւորէ
զինք, պղնձէ թասով թանը դէմ կուտայ, երեխաներն ալ
զինք կը շրջապատեն, «պապօ, պապօ» կանչելով:

Առիւծ Գեւոն ձեռքը աչքին տարաւ ու արցունքոտ
աչքերը սրբեց: Ա՛խ, Հայաստանը մէկ մը ազատուէր:

Իսովէր Ռոսպին մինչեւ մթնշաղը պահեց հիւրերը:
Երբ հայդուկները երեկոյեան ընթրիքէն վերջ մեկնեցան
դէպի Մոկս, ամէն մէկու շալակը ծանրաբեռնուած էր
նոր բեռով մը:

— Տեսնես ի՞նչ է տոպրակիս մէջինը, — կը հարցնէր
Թովիւլ Մատանան, — շատ ծանր է:

— Խեղդ սիրեմ, ծօ, ի՞նչ պիտի լինի, մէկ մը ձեռ-
քով տնտղէ՝ կը հասկնաս, հրացանի խողովակներ են,
փամփուշտ, չոռ ու ցաւ: Վա՛խ, մէջքս կոտրեցաւ, էն
ծանր տոպրակը ինծի բաժին հանեցին: Հէչ տարիքիս
պատիւ տուող չկայ... Ես ձեր բոլորին ալ...

— Հա՛, տեղը գայ երիտասարդ ես, կարգուիլ կ'ու-
ղես, բեռ շալկելու որ գայ...

— Ծօ՛, ձէնդ...

Լեւոնը, Ղարխալը ու Բոլսեցի վալադը առաջ ինկած՝
խոշոր քայլերով կ'իջնէին Հառինջի ձորն ի վար: Տղաքը
կը հետեւէին անոնց, երբ հեռուէն լսուեցաւ Դէմկոռի
չներու հաջոցը: Առջեւէն գնացողները կանգ առին:
Խուճբը եկաւ հասաւ անոնց:

— Տղաք, դդուշութեամբ պէտք է անցնել, ոչ Դէմ-
կոռ եւ ոչ ալ Հառինջ կանգ պիտի առնենք: Ոտքերնիդ
քիչ մը բարձրացուցէք: Պէտք է լուսը չբացուած՝ Ամե-
նասիրկիչ վանքը հասնել: Հանգչելու ուրիշ տեղ չունինք:

Հառինջի ձորի մէջէն փոքր գետակ մը կ'անցնէր:
Այդ գետակը ձորի երկու կողմերէն վազող առուներէն
ուռճելով կ'երթար կը միանար Մոկսի գետին: Ծանա-
պարհը այդ գետակի մօտէն կ'անցնէր, Դէմկոռ, Խաչենց
եւ Հառինջ հայկական դիւղերու մէջէն անցնելով: Խուճ-
բը քնակնաբար ստիպուած էր գիւղերուն մօտենալու
պարագային ճանապարհէն շեղիլ ու շրջան մը ընելով
գիւղի վերէն կամ վարի կողմէն անցնիլ:

Մովորական բեռներէն դատ, շալկած տոպրակները
սաստիկ յողնեցուցած էին հայդուկները: Ամբողջ գիշե-
րը քալելէ վերջ, մեծ դժուարութեամբ հասան Ամենա-
փրկիչ վանքը, երբ լուսաստղը արդէն մէկ նիզակաչափ
բարձրացեր էր արեւելքէն:

Բակի մէջ գտնուող հօտաղներէն մէկը առաջնորդեց
խուճբը վերի յարկը:

— Օրհնեա՛ր ի տէր, տէր հայր, — ըսելով խմբով
երկրորդ յարկի մեծ սենեակ մը մտաւ Լեւոնը:

— Աստուած... — ու ծերունի քահանան առանց
չարունակելու դարմանքով նորեկներուն նայեցաւ. — աս
ինչպէս խապար է...

— Ծարունակէ, տէր հայր, շարունակէ, հայ քրիս-
տոնեաներ ենք, — ծիծաղելով մօտեցաւ ու քահանայի
ձեռքը համբուրեց Լեւոնը, մինչ հայդուկները Փէսերնին

վար առած՝ կարգով կը մօտենային պատկառելի ծերունիին ձեռքը համբուրելու:

Ամենափրկիչ վանքի վանահայրը կը համարուէր քահանան, ութսունըհինգ տարեկան, ձիւնի նման ճերմկած մաղ ու մօրուքով նահապետ մը, որ սենեակի բաց պատուհանի առջեւ նստած՝ առաւօտեան աղօթքը կը մրմնջար:

— Ալ օյին մ'նա՞ց որ խաղաք կառավարութեան դըլխուն, — չորս քոլորը շարուած տղոց վրայ հայեացք մը դարձնելով քմծիծաղով մը ըսաւ Տէր հայրը, — տէր Աստուած, էս յեղափոխականներդ, ոնց որ սատանայ, ամէն ձեւի կը մտնաք...

— Հարկը այդպէս կը պահանջէ, տէր հայր: Այս կողմերը ի՞նչ կայ չկայ...

— Սաղութիւն, որդի:

— Տէր հայրը ո՞րտեղ է...

— Ծօ տղայ, — հօտաղին պատուիրեց քահանան, — զնա Գաբրիէլը կանչէ:

Գաբրիէլը ծերունի քահանայի դաւակն էր, նոյնպէս քահանայ: Քիչ անցած՝ սենեակէն ներս մտաւ պարթեւ հասակով, յիսուննոց մարդ մը, գեղական շորերով, արեւէն խանձուած դէմքով: Տէր Գաբրիէլ հազիւ ներս մըրտած, ուրախ բացաղանջութեամբ վաղեցի Լեւոնի մօտ:

— Գալուստդ բարի, երկու շաբաթ առաջ Պիժան դըրած էր, որ մեր կողմերը պիտի անցնիս: Աչքս ջուր կտրեցաւ՝ ճամբադ սպասելով: Հայր, մեր պարոն Լեւոնն է...

— Հա՞, անունդ լսած էի, տղաս, փառք Աստուծու, աչքովս ալ տեսայ: Անօթի կը լինէք, Գաբրիէլ, ձեռաց բան մը պատրաստել տուր:

Նախաճաշէն վերջ, մինչ հայրուկները երկնցան հանգստանալու, Լեւոնն ու Տէր Գաբրիէլը առանձնացան վանքի խուցերէն մէկուն մէջ:

— Ասոնք, — մատով պարկերը ցուցնելով ըսաւ Լեւոնը, — մէկ երկու օրէն Սուրս պէտք է փոխադրել, Հառինջի, Խաչենի շալակաւորները կանչել տուր, ինքդ ալ կ'առաջնորդես:

— Շատ լաւ:

— Ի՞նչ կը ինչպէ՞ս է:

— Ամէն ատենուան նման, պարապ ժամերուն նըստած աւետարան կը կարդայ: Վերջերս վանքի մէկ արտը դրաւեց որպէս թէ ժամանակաւոր կերպով: Չայն չհանցինք:

— Լաւ ըրիք, չարժէ ատոր համար խնդիր հանել: Եօլա երթալու է հետը, պէտքական մարդ է: Աչկանցի ու Տըտեցի քոչարները այս տարի նորէն ժողովուրդին նեղութիւն կուտա՞ն:

— Ահա, մինչեւ այստեղ հասցնուցին, — ու Տէր Գաբրիէլը ցուցամատը կոկորդին տարաւ, — նորէն մեր կողմի ժողովուրդը, Մուրթուլլահ լէկի աղդեցութեան չընորհիւ, համեմատաբար հանգիստ է: Բայց Կառկառի խեղճ հայրութեան նեղութեանը չստի ու սահման չկայ. ամէն օր արան թարան: Տըտեցի քրտեր անցեալ շաբաթ իջեր են Խնձորուտի կելին, ու Հալսի տաւարը քչեր տարեր են... Խեղճ Հալսեցիները, արդէն քանի մը տընուոր, հիմա վղերնին ծոած, ձեռքերնին ծոցերնին մընաց:

— Լաւ, ինչպէս կ'երեւի, այս անգամ տըտեցիներու հետ հաշիւնիս կը փակենք, իսկ Աչկանցիները:

— Էհ, պարոն Լեւոն, Սատանի ճուտեր երկուքն ալ, մէկուն անունը Սլիկ, մէկէլինը Պլիկ, տասը նալլէթ Սլիկին ալ, Պլիկին ալ...

— Տէր հայր, խմբի ներկայութեան մասին ոչ մէկ խօսք: Վերադարձիս գիւղերու դործադիրները կը հաւաքես հոս, կը խօսինք տեղական խնդիրներու մասին: Գէորդէն լուր կա՞յ:

— Լսածովս Կառկառէն Կարճկանի կողմերը անցած է:

— Այս շրջանի գործերը ի՞նչ վիճակի մէջ են: Խուզարկութիւններ եղա՞ն:

— Ձէ, մենք այդ փորձանքէն ազատեցանք: Մարթոլլահ բէկը վրան առաւ գէնքերը հաւաքելու գործը: Զիս կանչեց Յաղին: «Այ տէրտէր», ըսաւ, «քանի մը կը տոր հին ու մին բաներ բերէք, ես ալ ղրկեմ վան, որ կառավարութիւնը հանդատանայ»: Այդպէս ալ ըրինք:

Յերեկը Ամենափրկիչ մնալէ վերջ, երեկոյեան կողմ, Լեւոն ու ընկերները մեկնեցան Ամենափրկիչ վանքէն:

Գիշեր մը միայն մնալով Սուրս գիւղը, յաջորդ առաւ քարճրացան հսկայ լեռաշղթան, որ Կառկառը կը բաժնէ Մոկսէն:

Իրարու վրայ զիզուած լեռներու կոյտ մ'է այդ լեռնաշղթան, որու ամենաբարձր գագաթներն են Մնտուս, Կէոէ Ծէյխան, Կարէլաչ, Կալատոտ եւ քաղմաթիւ ուրիշներ: Մնտուսի եւ Կէոէ Ծէյխան սարերու միջեւ կը տարածուին Պանասէվէն անունով սքանչելի եայլախները: Ամէն տարի, զարնան կողմ, այդ եայլախները կը բարձրանային հարաւի կողմերէն քոչած Ալկանցի եւ Տըտեցի վաչկատուն աշխրաթները, որոնք իսկական պատուհաս դարձած էին հայ ազգաբնակչութեան համար:

Տըտեցիները, որոնք աղքատ ու փոքր ցեղ մ'էին, ցեղապետ Միրզա Աղայի առաջնորդութեամբ կը բարձրանային Կառէ Ծէյխանի եայլախները՝ ահ ու սարսափի տակ պահելով Կառկառի ամբողջ ժողովուրդը: Դեռ մինչեւ երկու տարի առաջ, Միրզա Աղան Կառկառի ամէն զիւղէն իւրայատուկ տուրք մը կը պանծէր, բացի անպաշտօն ալան թալանէն, որ չափ ու սահման չունէր: Բայց օր մը եղաւ, երբ Կառկառի ժողովուրդը չուրեց այլեւս տուրք տալ Միրզա Աղային:

Ալ ի՞նչ օրուան Միրզա Աղան էր, որ չկրնար խօսք հասկցնել քոսոտ հայերուն: Տասնեակ մը կտրիճներով վրայ տուաւ, ու Ձկու գիւղի տաւարը քշեց: Եւ հաւարը փրթաւ: Շրջակայ գիւղերէ զինուած հայեր սարի ճամբան բռնեցին: Կռիւր սկսաւ:

Այդ ժամանակ Վահէն խմբով Խնճրուտ գիւղը կը դանուէր, հաւարի լուրը առնելով՝ իր խմբով հասաւ կուռին: Միրզա Աղան, երկու սպաննուած տալով, թալանը ձգած՝ հաղիւ կրցաւ իր կոները հասնիլ: Այդ դէպքը պատահած էր երկու տարի առաջ:

Ատիկէ վերջ, Միրզա Աղան սանձերը հաւաքեց: Հայ գիւղացիք ալ առիթէն օգտուելով՝ դադրեցուցին տուրքը: Միրզա Աղային կը մնար կատաղութեամբ ատամները կրճտացնել: Բայց այս տարին արդէն ուրիշ տարի էր: Թուրք կառավարութիւնը անօրինակ հալածանք մը սկըսած էր հայերու դէմ, որոնք օրէնքէ դուրս հռչակուած էին: Բնական է որ Միրզա Աղան օգտուէր այդ պատահութեան, երկու տարի առաջուան պարտութեան վրէժը լուծելու, անցած երկու տարուան տուրքերը տոկոսով միասին հաւաքելու հայ գիւղացիներէն:

Հայկական բոլոր գիւղերը խուզարկուած եւ կամ խուզարկութեան ենթակայ էին: Ժողովուրդը թրքական հարիւրաւոր զօրքերու ներկայութեան պատճառով ահ ու սարսափի մատնուած:

Գայլը ամպոտ օրը կը սիրէ. Միրզա Աղան ալ՝ խառն ժամանակները:

Ղուամներով շրջապատուած, Միրզա Աղան ոտքի տակ տուաւ Կառկառի հայկական գիւղերը. թալլեց, կողոպտեց անարգել կերպով: Հայերը ոչ կրնային ինքնապաշտպանութեան զիմել, եւ ոչ ալ իրենց բողոքը կը լըսուէր թուրք կառավարութեան կողմէ: Անչափ թալանով ծանրարեւնուած, Աղան իր անկուշտ գայլերու վոհմա-

կով վերադարձաւ եայլախի կոները, երբ ոչ մէկ բան մնացած էր թալլելու, հայկական գիւղերու մէջ:

Յանկարծակիի եկաւ Միրզա Աղան, երբ օր մը, կէս օրուան ժամանակ, թուրք զօրքեր իր վրանը մտան, ու բռնութեամբ ոչ միայն բոլոր թալանը տարին, այլ եւ գրաւեցին 18 հրացան, երեք ջորի ալ հետերը առին տարին:

— Եթէ անգամ մ'ալ կառկառի դիւղացիներուն վնաս մը տաս, — սպառնացեր էր կաղ միւլաղիմը, — ոտքդ ձեռքդ շղթայած, վան կը տանիմ քեզ, բանտին մէջ վերտելու համար:

Միրզա Աղան մնացեր էր ապշած: Խելք հասնելու բան չէր կատարուածը: Ինք տարիներով թալլեր ու ըսպաններ էր, բայց օր մի օրանց կառավարութիւնը հայերու կողմը բռնած չէր: Շատ շատ թալանէն Բաղէշի եւ վան քաղաքի մեծամեծներուն բաժին մը կը հանէր, անոնք ալ մատի արանքով կը նայէին իր կատարած քաջագործութիւններուն վրայ:

— Վալլա՛հ, աշխարհը թարսուեր է, — մօրուքը ձեռք առած, մտածեց Միրզա Աղան, — հիչ լսուած բան է որ հայու թալանը զօրքի ձեռքով ետ երթայ: Ասոր տակը բան մը կայ...

Բայց միւլաղիմն ու զօրքը ամբողջ երկու շաբաթ մնացին լեռներու վրայ, խստօրէն պատժեցին աւազակ քոչարները ու օր մ'ալ, ինչպէս յանկարծ եկած էին, այնպէս ալ անյայտացան:

ԾԻԾԱՆՑԻ ԿՈՒԻԸ

Յուլիսի քսանին, Ծիծանց գիւղի ամբողջ ժողովուրդը, կարեւոր խորհրդակցութեան մը համար, հաւաքուած էր Ռէսսի տան բակը:

Ծիծանցէն հազիւ երեք քառորդ ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուէր Ռաշիդ Բէկի Պիֆէրան գիւղը: Հինգ տնոց գիւղ մ'էր այդ: Կիրեւանցի չոպան Ռաշիդը տասնեակ տարիներ առաջ Տիգրիսի միւս ափէն գաղթած, Ծիծանցի հողէն մաս մը բռնութեամբ գրաւած ու սուն մը շինելով հոն հաստատուած էր: Շատ շուտով սակայն այդ տիւր քիւրտը հարստացաւ, զոլամներ ունեցաւ, դիրք ու պատուի տէր դարձաւ: Չոպան Ռաշիդը դարձաւ Ռաշիդ Բէկ, որու ձայնը մեծ կշիռ ունէր Թաղի կառավարութեան մօտ, խօսքը մտիկ կ'ընէին: Նշանաւոր աւազակ մ'էր, կտրիճ տղամարդ մը: Իր զոլամներով միասին ափին մէջ առաւ շրջակայ գիւղերը: Քիչ ժամանակ անցած, Պիֆէրանի երկու կողմերուն գտնուող հայկական մեծ գիւղերը՝ Ծիծանցն ու Տղասպարը ենթարկեց իր ազդեցութեանը, ու շատ չանցած՝ դարձաւ անոնց Աղան, իսկ անոնք իր հարկատու բաւանները (հպատակ): Այս յեղաշրջումը կատարուեցաւ այնքան սովորական ձեւով, որ գիւղացիք չկրցան հասկնալ թէ՛ ինչպէս տիւր չոպան մը, յանկարծ Բէկ դարձաւ, իրենց Աղան, որու հրամաններուն պարտաւոր էին հպատակիլ, նշանակուած տուրքերը տալ անտրտունջ կերպով:

Մասնաւորապէս Ծիծանց գիւղացիներու պարտքն էր Ռաշիդ Բէկի արտերը հերկել, ցանել, հնձել, կալել, յարզն ու ցորենը իրենց սէլերով հասցնել Բէկի ամբարներն ու մարազները: Տան գլուխ հարկ մը կուտային, որ ըստ հաճոյս կը բարձրանար: Ամուսնանալու պարագա-

յին բէկէն հրաման պիտի առնէին՝ որոշ նուէրով մը դիմում կատարելով: Բէկը քաղաք երթալ գալուն բարի եկարի պէտք է երթային գիւղի մեծերը, միշտ որոշ նուէրներով, իսկ եթէ բէկի տանը հարսնիք կամ մահ պատահելու լինէր, գիւղացիք պիտի հողային բոլոր ծախսերը, դեռ դրամական խոշոր նուէր մ'ալ ընելով Ռաշիդ Բէկին: Այս օրէնքները Ռաշիդ Բէկէն բխած, տարիներէ ի վեր տառացի կերպով կը կատարուէին:

Ուրիշ խօսքով, ծիծանցիք դարձեր էին Ռաշիդ Բէկի ստրուկները: Եւ այդպէս երկար տարիներ:

Շնորհիւ յեղափոխական շարժումին, օր մը եղաւ, որ ծիծանցիք մտածեցին իրենց վատթար վիճակի մասին: Յեղափոխական շարժումի հետեւանքով, գիւղի երիտասարդութիւնը ոգեւորութեամբ սկսաւ պիտուիլ: Ձէնքը եւ կազմակերպութիւնը, հոգեբանօրէն փոխեց երիտասարդութիւնը. սկսան խորհիլ ու մտածել բաներ, որոնք առաջ կը վերպէին իրենց տեսողութենէն:

Առջի տարին գիւղի մեծերը հաղիւ կրցեր էին խօսք հասկցնել ճահիլներուն, թէ Ռաշիդ Բէկի տուրքը պիտի տրուի, թէ անոր դաշտային աշխատանքները իրենք պէտք է կատարեն, ինչպէս կատարած էին տասնեակ մը տարիներէ ի վեր: Սակայն, այդ գարնան անհամաձայնութիւնը ծայր առաւ գիւղին մէջ: Գիւղացիներու մեծամասնութիւնը կտրականապէս մերժեց որեւէ աջակցութիւն եւ կամ տուրք վճարել: Հակառակի պէս Ռաշիդ Բէկն ալ, քաջալերուած հայոց հանդէպ կառավարութեան ցոյց տուած խստութիւններէն, նոր հարկ մը եւս դրաւ ծիծանցիներու խտնոցներուն վրայ, որոնք մինչեւ այդ ազատ էին տուրքէ:

Բաժակը լեցուեր էր: Ամբողջ գիւղը մէկէն ոտքի ելաւ: Ծիծանցի ոչս Պետրոսը, անվախ, խելօք մարդ մը, կանչած էր գիւղացիները խորհրդակցութեան:

Ռէսի բակը լեցուեր էր գիւղացիներով: Շատեր տան

երեսքացը բարձրանալով կը հետեւէին ժողովին: Ռէս Պետրոսը, պատի տակ նստած, հանդարտօրէն կը խօսէր՝ բացատրելով գիւղի անել վիճակը եւ անհրաժեշտութիւնը անմիջապէս որոշ եզրակացութեան մը գալու: Քաղի ժամանակ էր. Բէկը ղոլամներու միջոցով երկու անգամ լուր դրկած էր, որ գիւղացիք դան իր արտերուն ցորենը հնձելու:

Երբ Ռէս Պետրոսը խօսքը վերջացուց, գիւղացիք լուռ իրարու նայեցան: Կարծես ոչ ոք խօսել կ'ուզէր: Ոմանք գլուխնին քերեցին, փսփսացին, շատեր յօրանջեցին, որպէս թէ հարցը իրենց հետ ոչ մէկ առնչութիւն ունենար: Հասարակ գիւղականին ի՞նչ կը վայելէր խօսիլ, երբ գիւղի առաջաւոր մարդիկը լուռ կը մնային:

— Հա՛, մեր ոչսը խելօք քաներ կ'ըսէ, — վերջապէս ծերունի Մրտօ իմին սկսաւ խօսիլ, — հարկ չտանք, Բէկի համար չաչխատինք, լա՛ւ, շատ լաւ, իմ ալ ուղածո այդ է, կառավարութեան ծանր հարկերը արդէն հալ չեն ձգած գիւղականի վրայ, Բէկի բեռն ալ չուան մը ձգած մեր վզին, հա հա պիտի խեղդէ մեզ: Ոչ աշխատանք եւ ոչ ալ հարկ տանք Բէկին, այդպէս կ'ըսէք, լաւ, բայց որ Բէկը ղոլամներով գիւղ դայ, գօռով մեզ քչէ տանի, մեր մալ ու միւլքին ձեռք նետէ... Օխթանասունս անցեր եմ, մազս մօրուքս ճերմուկած... աշխարհը էսպէս էկեր՝ էսպէս ալ պիտի երթայ... Ես կ'ըսեմ, նորէն Բէկի սիրտը առնենք, երթանք աշխատինք, խարճը տանք... գօռով շունը չկատղեցնենք...

Մրտօ իմի խօսքերը որոշ տպաւորութիւն գործեցին ներկաներու վրայ, ոմանք տխրօրէն գլուխնին կախեցին, անգոր կատարութեամբ ատամները կրճտացնելով, ոմանք հաւանութիւն յայտնելու ձեւով գլուխնին փարտեցին: Երիտասարդները, որոնք բոլորն ալ «ագրութեան մարդ» էին, դաժան կատարութեամբ լեցուած, լուռ մնացին: Առաջինը ո՞վ պիտի խօսէր:

— Հա՛, տանք,— յանկարծ դրան մօտ կանգնողնե-
րէն երիտասարդ մը քովինները հրմշտկելով առաջ ին-
կաւ,— կառավարութեան տանք, Բէկին տանք: Մեր արտե-
րը ձգենք, երթանք Բէկին համար աշխատելու, ապա մեր
տուն տեղ ո՞վ նայէ, մեր ճիժ ու պօքերուն ո՞վ հաց տայ:
Գեռ քանի՞ տարի եղաւ, որ այդ մարդը մեր կողմերը
երեւցաւ: Տկլոր չոպան մ'էր առաջ, հիմա բէկ եղաւ:
Առաջ զինք մարդու տեղ չէինք դներ, հիմա ամբողջ գե-
ղը իր ծառան է: Քանի գլուխ ծոնցինք, այնքան ինք մեծ-
ցաւ: Մեր հողերու կէսը գրաւեց, ձայն չհանեցինք, հարկ
դրաւ մեր վրայ, ընդունեցինք, կող ու պեկարը տարինք,
ինչո՞ւ համար: Առաջ մենք մեր գլխուն տէրն ու տիրա-
կանն էինք, հիմա դարձեր ենք Ռաշիգ Բէկի բայաները:
Ձեր գիտնալու բանն է, բայց ես ոչ աշխատելու կ'եր-
թամ, ոչ ալ մէկ փարա կուտամ... ես իմս ըսի...

Սօսողը Մրտօ Էմիլի կրտսեր դաւակն էր: Բոլորի
ակնարկը կեդրոնացաւ ծերունի հօր վրայ, որ յօնքերը
կիտած՝ ատեն մը մտիկ ըրաւ եւ ապա ձեռքի փայտը
բարկութեամբ դարկաւ գետին.

— Ձէ՛նդ: Տահա էրէկ մէկ, էս օր երկու, ելեր խօս-
քի կը խառնուիս...

— Իրաւունք ունի, իրաւունք ունի,— խառն ի խոռն
չորս կողմէն ձայն տուին զիւղացիները,— մենք այլեւս
այս պայմաններով չենք կրնար ապրիլ:

— Իմ արտիս ցորենը հասեր է, ես ի՞նչ տա՞րտը լամ,
թէ երթամ ձրի աշխատելու Բէկին համար,— կը պոռար
տարէց զիւղացի մը.— մեր քաջածը բաւական եղաւ,
որ տեղն որ բարակ է, էն տեղէն թող կտրի... մենք ալ
խալսինք էս ցաւէն...

— Ձենք երթար, տուրք չենք տար...

Գիւղացիք իրար խառնուեցան, ոչ մէկը միւսին ը-
սածը չէր լսեր: Քիչ առաջուան անհոգ անտարբերու-
թիւնը տեղի տուած էր անսանձ կատաղութեան: Կը պո-

ռային, բռունցք կը շարժէին: Ամենէն շատ երիտասարդ-
ները կ'աղմկէին:

Առանց վերջնական եզրակացութեան մը դալու, գիւ-
ղացիք ցրուեցան, ամէն մէկը իր գործին: Բակին մէջ
մնացին Ռէս Պետրոսը, եւ երեք երիտասարդներ, որոնց
մէջ եւ Մրտօ Էմիլին տղան:

— Ներս երթանք,— խորհրդաւոր ձեւով ըսաւ Ռէ-
սը,— երէկ զիչեր սարէն վարդապետն ու տղաքը վար ի-
ջան: Երթանք, մէկ անոնց հետ խօսինք:

Իրօք, Ռէսի ընդարձակ սաքուի շուրջ շարուած էին
ընթերցողին վաղածանօթ Ծուռ վարդապետը ու ընկեր-
երը: Ռէսի հետ ներս մտնողները բարեւեցին ու պատի
տակ շարուեցան կարգով:

Գիւղացիներու անակնկալ ըմբոստութիւնը կատղե-
ցուց Ռաշիգ Բէկը:

Յաջորդ առտու իր ղոլամներէն հինգը ուղարկեց,
որպէսզի բռնութեամբ զիւղացիները իրենց աշխատան-
քէն պոկեն ու քերեն իրեն արտերը քաղելու: Ղոլամները
մահակներով զինուած, իջան հայոց արտերը, ու պատա-
հած զիւղացիները ծեծելով սկսան մէկտեղել: Արտէ արտ
հաւարի ձայնը հասաւ մինչեւ հեռաւոր շրջանները, կի-
ներ ու տարէց մարդիկ աշխատանքին ձգած՝ աճապա-
րեցին գիւղ հասնիլ: Երիտասարդները նախ տատամտտ,
ապա վճռական քայլերով մօտեցան Բէկի ղոլամներուն,
որոնք քսանի չափ զիւղացիներ հաւաքած, ծեծելով կը
քշէին դէպի ՊիՓէրան, Բէկի գիւղը: Երկու կողմէն խօս-
քէն հրմշտուկի անցան, մէկ ալ ղոլամներու մահակները
սկսան ճօճիլ օղի մէջ:

Ծիծանցի երիտասարդները աւելի մօտեցան ղոլամ-
ներուն ու երբ մէկ երկու մահակի հարուած ստացան,
յարձակեցան ղոլամներուն վրայ, խլեցին մահակները ու

այս անգամ զոլամներն էին որ կ'աշխատէին տեղացող հարուածներէն ողջ ազատել իրենց գլուխները: Ղուամներէն Ալի անուն երիտասարդ մը, որ Ռաշիդ Բէկի աջ բազուկը կը համարուէր, գլխուն երկու մահակի հարուած ընդունելով՝ արիւնլուայ վիճակի մէջ երկնցաւ առուի մօտ, մինչ զոլամներէն մէկը բազմութիւնը ձեռքելով սխալաւ, Բէկին հաւար հասցնելու:

Լուրը թեւ առած արդէն հասեր էր ՊիՖէրան: Որքան որ զոլամ ունէր ձեռքին տակ, Ռաշիդ Բէկը զինեց ու Միծանցի վրայ քալեց դաս մը տալու: Բայց այնպիսի դաս մը պէտք էր տար, որ երբեք ծիծանցիներու մտքէն չելլէր: Հազիւ ճանապարհի կէսը կտրած՝ երբ իր ուղարկած զոլամներուն հանդիպեցաւ, որոնք Ալին շալկած՝ ՊիՖէրան կը բերէին: Կտրիճ Ալիի արիւնլուայ վիճակը կատաղեցուց զինք, չափը անցուցեր էին այդ անհաւատ շները, պէտք էր պատժել այդ անհաւատները, այնպիսի ծանր պատիժով մը, որ անոնց եօթը պորտերը յիշէին: ՊիՖէրանը Միծանցէն դատող բլուրը որ դարձաւ, երեւցաւ Միծանցը, ընկոյզի ծառերով շրջապատուած: Ղուամներ խառն ի խառն սկսան հրացան արձակել: Հիմա հայերը ահ ու սարսափի մատնուած, մտածեց Ռաշիդ Բէկը, կուղան ու կ'իյնան իր ոտքերուն, գլթութիւն աղերսելով: Բայց չէ՛, ինք գիտէր անոնց հետ վարուելու կերպը, այդ օրը չպիտի մոռնային ծիծանցիները:

Դժբախտաբար, Ռաշիդ Բէկին վիճակուած էր այդ օր մեծ յուսախարութիւն մը:

Երբ գիւղի աղբիւրին մօտեցան, ուրկէ ութ հարիւր քայլ կը մնար գիւղ հասնելու, մէկ ալ գիւղէն բազմաթիւ հրացաններ բացուեցան ու գնդակները վզգալով սկսան գետնէն փոշի բարձրացնել:

Ռաշիդ Բէկի զոլամներէն մէկը ոռնալով գետին փռուեցաւ, ծնկոսկորը գնդակէ մը ջախջախուած:

— Ետ դարձէք, էս շները մեզ պիտի կոտորեն, — հայերու անսպասելի դիմադրութենէն չիօթած, պոռաց Ռաշիդ Բէկը՝ զոլամներուն հետ մինչեւ քլուրը նահանջելով:

Եղածը անօրինակ, չլսուած դէպք մ'էր, եթէ բուռ մը բայս գիւղացիները կը յանդուհէին իր վրայ զէնք արձակելու, ալ ինք ի՞նչ օրուան Ռաշիդ Բէկն էր: Քոլոզի տեղ, լաչակ մը անցնելու էր գլխուն:

Ռաշիդ Բէկը անմիջապէս ձիաւոր մը հասցուց Թաղ, ուր Շատախի դայադամը կը նստի: Լուր ուղարկեց, թէ հայերը ապստամբելով՝ ՊիՖէրանի վրայ յարձակած են: Երկրորդ ձիաւոր մը զրկեց Սլիտուն, որպէսզի կամուրջէն անցնելով քիւրտ աշիրաթներու մէջ հաւար ձգէ:

Արեւը մայր մտնելէն քիչ առաջ, ծայր տուին էգնանցի, Սալիլանցի եւ Սվշտանցի աշիրաթներուն պատկանող ձիաւոր քրտերու շարքերը, որոնք հաւարի ձայնը առած՝ օշնութեան կը հասնէին Ռաշիդ Բէկին:

Մինչեւ մթնելը երկուստեք կռիւր շարունակուեցաւ: 150-է աւելի քիւրտ ձիաւորներ օշնութեան հասած էին արդէն, իսկ լոյսը բացուելուն, Ռաշիդ Բէկը վստահ էր որ իր հետ 500-է աւելի կռուողներ կ'ունենար: Բայց ինչ որ մտահոգութիւն կը պատճառէր Բէկին, ծայր աստիճան դարմացուցած էր զինք, այդ՝ դայադամի պահած չէզոքութիւնն էր: Աշխարհը թարսուած էր, լուրը անհաւատալի: Գիւղերով՝ ուշ ատեն Թաղ գնացող ձիաւորը վերադարձաւ՝ անհաւատալի պատգամ մը բերելով: Գայմադամը խտտօրէն պատուիրած էր ամէն գնով կռուիւր դադարեցնել՝ սպառնալով ապագայ բարդութիւններու պատասխանատու բռնել Ռաշիդ Բէկը: Գայմադամը բացարձակապէս մերժած էր զօրք ուղարկել:

Յաջորդ առտու 500-է աւելի քրտեր Միծանց գիւղի վրայ յարձակեցան անընդհատ կրակելով: Գիւղը նորէն սպասողական վիճակի մէջ՝ կը թողուր որ մօտենան:

Մոռն վարդապետը չորս տղաներով դիրք բռնած էր դիւղի անմիջապէս ետին դռնուող բլուրի վրայ, ուրկէ ամբողջ հովիտը պատկերի նման կ'երեւէր: Սմբի մնացած հայրուկները, տեղական զինուորներու գլուխը անցած, դիւղի մէջ զանազան դիրքեր բռնած էին:

Քրտերը հրացան արձակելով եւ սալավաթ պոռալով հասած էին նորէն Միծանցի աղբիւրին մօտ, երբ բլուրի ծայրէն հրացանները գոռացին: Անոնց արձագանգեց դիւղի կռուողներու հրացաններու որոտը: Ամէն ինչ իրար խառնուեցաւ: Քրտերը քիչ մը տեղ ընկրկելով՝ դիրքեր բռնեցին ու ամրացան:

— Վալլահի պիլլահի, էդ անհաւատներու մէջ զըրսէն մարդիկներ կան... Փետայիներ կան, — կատաղութենէ խենթացած, քովը դռնուողներուն կը բացատրէր Ռաշիդ Բէկը, — ո՞վ է տեսեր, որ տեղացի հայը գէնքով դիմադրել փորձէ... Ականջ դրէք... հա՛, էտոնք մոսիւնի հրացանի ձայներ են...

Մինչեւ կէս օր աչք կապուկ կռիւը շարունակուեցաւ: Կռիւը սկսելէն առաջ, վարդապետը պատուիրած էր բոլոր կռուողներուն, որ արիւնահեղութենէ խուսափին եւ դոհանան աշխատելով քրտերը որոշ հեռաւորութեան վրայ պահել. ծայրայեղ պարագային միայն, երբ քրտերը աղբիւրը անցած վտանգէին դիւղը, սկսէին ուղղակի խփել: Այդ էր պատճառը, որ հակառակ քրտերու աննպաստ դիրքին, մինչեւ կէս օր ետեւ դռն միայն տըւին:

Կէս օրէ վերջ սակայն, կռուի ընթացքը փոխուեցաւ, եւ լուրջ կերպով վտանգուեցաւ Միծանց դիւղը: Յիսուների չափ քրտեր, գետակը անցնելով, ձորի հակառակ կողմէն սկսան բարձրանալ դէպի Կիտ քրտական դիւղը, ձորով մը բաժնուած Միծանցէն ու աւելի բարձր դիրքով: Միծանցի կռուողները երկու կրակի մէջ ինկած՝ դժուարութեամբ կը պահէին իրենց դիրքերը: Այսքանը

կարծես բաւական չլինէր, մէկ ալ գործոթցի Սաղօն սողալով վարդապետին մօտեցաւ.

— Վարդապետ, տունդ չքանդուի, սարէն զօրք կ'իջնայ, չորս կողմէն պիտի պաշարեն մեզ...

— Սարէ՞ն... ո՞ւր է, տղայ...

— Հունա... վազելով կուզան, տասնեւհինգ քսան հատ մը կը լինին...

Դժբախտաբար զօրքի գալը միայն հայերը չէ որ տեսած էին: Քրտերը, երբ տեսան լեռնէն իջնող զօրքը, ձայն ձայնի տուած՝ վրայ տուին: Անոնց օրինակին հետեւեցան եւ Կիտի կողմը անցած քրտերը:

— Սաղօ՛, երկու հոգիով զօրքը ետ պահել աշխատէ, — պոռաց վարդապետը, — Սահակ, ցատկէ դիւղը, դիւղի խալիւր եւ կռուող տղաքը կամաց կամաց թող մեր դիրքերը բարձրանան... Գիւղը ձեռքէ ելլելու մօտ է... շուտ ըրէ... հա, քէ մատաղ, թուր... Տղա՛ք, չձգէք որ զօրքը մօտենայ...

Սաղօն, անբաժանելի Մկօն եւ քերձեցի Արշակը, վարդապետէն քանի մը քայլ վեր քարի մը տակ տափած, կ'աշխատէին զօրքը հեռու պահել: Գիւղի մէջ աներեւակայելի իրարանցում մը ծայր տուած էր: Կին, երեխայ, ծեր ու պառաւ, ամէն մէկը իրեղէն մը շալկած, կ'աճապարէին դիւղի նեղ փողոցով բլուրը բարձրանալ: Լաց ու կոծ, հայհոյանք, կատարեալ Սողոմ-Գոմոր մը այդ նեղլիկ փողոցը, ուր դիւղացիներէն ամէն մէկը միսսէն առաջ անցնիլ կը փորձէր: Կռուող երիտասարդները դիւղի առաջաւոր դիրքերէն դուրս նետուած, կռուելով կը նահանջէին՝ ժողովուրդի ետեւէն քալելով: Բարեբախտաբար, դիւղի տները երկուստեք ծածկած էին փողոցը, եւ քրտերը հեռուէն չէին տեսներ դիւղացուց խուճապահար փախուստը:

Երբ լեռնէն իջնող զօրքը զնդակի հասողութեան սահմանի մէջ մտաւ, Սաղօն ու ընկերները, սկսան ան-

խնայ գնդակի բռնել զանոնք: Երեքը միասին կատաղու-
թեամբ կը կրակէին, առանց անդրադառնալու, որ զօրքը
արագ առաջանալով՝ գնդակ մ'իսկ չէր արձակած:

— Սադօ՛, — յանկարծ ընկերոջ թեւը բռնելով պո-
ռաց Մկօն, — էնա ի՞նչ կը շտեմն... Զօրքը կանգնե-
ցաւ... տե՛ս, եայլուիս թափ կուտան... եանի ի՞նչ...
Խելքս բան չի կտրեր... Վարդապե՛տ, վարդապե՛տ...

— Ծօ, հա՛, ես ի՞նչ գիտնամ էդ ի՞նչ թաւուր բան
է... Հէլէ մէկ վարդապետին ձէն տանք...

— Կրակե՞մ, Սադօ, — հրացանը շտկելով հարցուց
Արշակը, — ինչ կ'ուզէ էղնի, շուն մը աւելի՛ շուն մը
պակաս...

— Ծօ՛, կեցիք, կ'ըսեմ, — բարկացաւ Սադօն, —
մէկ վարդապետը թող դայ... Հէ՛յ, վարդապե՛տ...

Երկու ոստիւնով արիւն քրտինքի մէջ կորած մեր
Ծուռ վարդապետը տղոց մօտ ցատկեց.

— Ի՞նչ կայ, Սադօ՛...

— Զօրքը կանգներ է, ճերմակ բան մը ժաժ կու-
տան...

Իրօք, լեռնէն վար իջած զօրքը բաւական մը մօտե-
նալէ վերջ բլուրին, կանգ էր առած: Հաղիւ թէ գիտակը
աչքին տարած՝ վարդապետի մօռայլուած դէմքը պայ-
ծառացաւ:

— Տղաք, հրացան չարձակէք, պարոն Լեւոնն է...
Փրկուեցանք... Գէպի գեղ, դէպի գեղ... Հասէք, տը-
ղաք... Գեղը ձեռքէ հանելու չէ...

Սադօն, Մկօն ու Արշակը բլուրէն վար վազեցին ու
գիւղը մտան՝ պոռալով.

— Տեղներդ պինդ կանգնէք, պարոն Լեւոնը եկաւ...

Մինչ այդ, վարդապետը մէջքի երեսորբիչը քանդե-
լով՝ սկսաւ ամբողջ ուժովը շարժել: Մէկ ալ ան է տե-
սաւ, որ զօրքը վազելով սկսաւ մօտենալ բլուրին:

Սադոյի ու ընկերներու կրկին գիւղ մտնալը կասե-

ցուց անկարգ նահանջը, երբ արդէն գիւղի պինդ մօտէն
կը լսուէին քրտերու կախարդային լօջօներն ու հրացան-
ներու գոռոցը:

Ինչպէս որ գարնան հեղեղը խելագար ընթացքով
լեռներէն վար կը խուժէ՝ սրբել տանելով ճամբան հան-
պած ամէն արդեւք, այնպէս ալ Լեւոնի խուժքը բլուրը
հասնելով դէպի գիւղ խոյացաւ: Լեւոնը, վայրի գաղանի
նման, քարէ քար ցատկելով՝ գիւղ մտաւ իր ընկերնե-
րով:

— Լեւոնը, Լեւոնը եկաւ, — ձայն ձայնի կուտային
գիւղի մէջ գտնուող կռուողները, նախկին դիրքերը դը-
րակելով:

Լեւոնի ընկերներէն միայն Առիւծ Գեւօն բլուրի վը-
րայ ինկած մնաց: Խուժքի ամենատարէցն էր Գեւօն, երբ
վազելով հասեր էր բլուրը, ալ ոչ շունչ մնացեր էր վը-
րան եւ ոչ ալ կարողութիւն վազելու: Ի դուր կը պոռար
ընկերներուն, որ քիչ մը սպասեն, մէկ շունչ մը առնեն
... Բայց մտիկ ընողը ո՞վ: Նոյնիսկ Թոփալ Սատանան
լքեր էր զինք, Լեւոնի ետեւէն դէպի գիւղ վազելով:

— Սատանի ձագեր, — ընդհատ շունչ առնելով կը
պոռար մեր բարեկամը, — պէնամուս ըրիք զիս, կռա-
պաշտներ, ձեր սուզը պահեմ... Տօ, Առիւծ Գեւօն...
յետնապահ չինեցիք... տօ ես...

Այդ ամբողջ օրը քրտերը ՊիՖէրանի բլուրի ետեւէն
դուրս չէլան: Մթնեց: Հրացաններու ձայները դադրե-
ցան:

Լեւոնը, վարդապետը, Ռէս Պետրոսը, եկեղեցին
հաւաքուած, կը խորհրդակցէին: Գիւղի բլուրը բռնուած
էր տասնեակով մը:

— Աչքերը չորս քաց, — պատուիրած էր Լեւոնը Ա-
ռիւծ Գեւոյին, — գիշերուան մթնէն օգտուելով կրնան
յանկարծ այս դիրքը դրակել, այդ պարագային Ծիծան-
ցը կորսուած է: Ես մէկ երկու ժամէն կը վերադառ-

նամ, — ու Լեւոնը իջած էր գիւղ, խորհրդակցութեան համար:

Ամբողջ գիշերը տղաքը գիրքեր մտած, առանց աչք խփելու, աչալուրջ սպասեցին: Առիւծ Գեւոն մինչեւ լոյս գիրքէ գիրք կ'անցնէր, վստահ լինելու համար թէ՛ հայ-դուկներէն մէկն ու մէկը քնած չէ, թէ ամէն ինչ կարգին է:

— Հը, մեծ ախպեր, — կատակելով խօսեցաւ Թոփալ Մատանան, երբ Առիւծ Գեւոն մօտեցաւ իր գիրքին, — քիչ մը ուշ հասանք հարսանիքին, բայց վնաս չունի, վաղը առտու ալ թմբուկի տմբամբոցը կը սկսի:

Առիւծ Գեւոն, առանց պատասխանելու, գլուխը մէկ կողմ դարձուց եւ հեռացաւ ընկերոջը մօտէն: Սոսկած էր Թոփալին հետ, ալ երբեք, երբեք կեանքին մէջ անոր հետ բառ մը չպիտի փոխանակէր: Կռապաշտ անաստուածը բլուրի վրայ զինքը մինակ ձգած՝ վազեր էր Լեւոնին ետեւէն:

Յաջորդ առտու, երբ լոյսը քացուեցաւ, քրտերը, որոնց թիւը ապահովաբար հազարի հասած էր, անկանոն կերպով սկսան առաջ շարժուիլ ձորի երկու կողմերէն: Որոշ գիրքեր գրաւելով՝ անոնք սկսան իրենց սովորական հրացանաձգութեան:

Ծիծանցը լուռ էր: Տղաքը, գիրքերը մտած, կը սպասէին: Երբեմն միայն քիւրտ յանդուգն ձիաւորներու փոքրիկ խմբակներ, սրարշաւ կը մօտենային գիւղին, ու դիմաւորուած վզվզացող զնդակներով, կիսաշրջան մը կազմելով՝ կը վերադառնային նախկին գիրքերը:

Այդ աչքակապուկ կռիւը շարունակուեցաւ բաւական ժամանակ:

Կռուի երրորդ օրն էր: Գիւղացուց յուսահատութեան չափ չկար: Ծիծանցէն մինչեւ դետը, ոսկեգոյն արտերը

կը խշխշային՝ սպասելով քաղող ձեռքերու, մինչ գիւղացիք ձեռքերնին ծոցերը, վզերնին ճկած, հեռուէն միայն կը նայէին անկարող արտերը իջնելու:

Կէս օրուան մօտ, քրտերու մէջ մեծ իրարանցում մը սկսաւ: Հեռուէն կը լսուէին անոնց կոկորդային ձայները: Ի՞նչ էր պատահած:

Լեւոնը, գիւղէն վար, այգիի մը պատին տակ տասը ընկերներով գիրք բռնած, դիտակով կը հետեւէր քրտերու շարժումներուն: Մէկ ալ Լեւոնը նկատեց, որ քիւրտ ձիաւորներէն շատեր դէպի Պիֆէրան դարձան ու հազիւ կէս ժամ անցած, կրկին վերադարձան յիսունէ աւելի թրքական կանոնաւոր ձիաւորներու հետ, որոնք խիտ շարքերով կը յառաջանային ու հասնելով քրտական զանդուածին՝ կանգ առին:

«Կռիւը պիտի բարդանայ, — ինքնին մտածեց Լեւոնը, — ուրիշ ճար չկայ, երբ կառավարութիւնն ալ կռուի մէջ կը մտնայ, գիւղը պիտի դատարկենք ու ժողովուրդը ցրուենք շրջակայ հայկական գիւղերը»:

— Տեսա՞ր, — Ռէս Պետրոսին դառնալով հարցուց Լեւոնը, — սվարի եկաւ, յիսուն վաթսուն հատ մը կան, կռիւը պիտի երկարի...

— Մեր բանը սօշ է, պարոն Լեւոն, այլեւս միայն հրաչք մը կրնայ փրկել մեզ... Արդէն զարմանալի է որ կառավարութիւնը երրորդ օրը մէջտեղ ելաւ...

— Ըհը...

— Ի՞նչ կայ, պարոն Լեւոն:

— Կնիկ մը, այդպէս կ'երեւի հագուստէն, ձեռք ձեռմակ շոր մը շարժելով դէպի մեր գիրքերը կուգայ:

— Ես... էտ ի՞նչ խապար է...

— Շուտ, մէկը ճամբէ վարը ջաղացքը, տեսնենք ինչո՞ւ համար այդ կնիկը ճամբեցին:

Պատգամաւոր կինը, մօտենալով ջաղացքին, հանպէս գիւղէն ճամբուած զինուորի մը, որուն նամակ

րականդնումը: Դուք մեր մեծ եղբայրն էք, մեր փառքը: Հայերը եղան առաջին անգամ մեր աչքը բացողները: Մենք յաւիտեանս պիտի չմոռնանք ձեր ըրածը, կեցցէ՛ հայ ժողովուրդը...

Սպան կրկին անգամ գրկեց ու համբուրեց Լեւոնը, որ քիչ մը անյարմար կը դէար, բոլորովին չսպասելով որ թուրք սպայ մը զինք քարեկամօրէն պիտի համբուրէ:

Երկրորդ սպան, տարիքն առած հին զինուորական մ'էր, որ պատկառանքով մէկդի քաշուած՝ կը սպասէր իր կարգին: Երբ միւսներուն ողջադուրումը վերջացաւ, մօտեցաւ ու Լեւոնի ձեռքը թօթուելով՝ յայտնեց, թէ Շատախի մէջ պատրաստութիւններ տեսնուած են եւ թէ կառավարութիւնն ու ժողովուրդը անհամբեր կը սպասեն իր ժամանումին:

Երբ առաջին բոսիւններու տարտամութիւնը փարատեցաւ, բոլորը միասին նստան ծառի մը ստուերին տակ ու սկսան խօսիլ Սելանիկի մէջ կատարուած յեղափոխութեան շուրջը, քաղաքի մասին, ուր ամէն օր հանդէսներ տեղի կ'ունենային: Երբ սպաները կրկին թախանձեցին որ անմիջապէս ճամբայ ելնեն, Լեւոնը կտրականապէս մերժեց, պահանջելով որ Ռաշիդ Բէկը ձերբակալուի, եւ քիւրտ ամբօխը ցրուի, նախ քան իր մեկնիլը:

— Ես հազիւ թէ մինչեւ վաղը կրնամ ճանապարհ ելնել, — քացատրեց Լեւոնը, — իսկ մինչեւ այդ՝ հեռաւոր շրջաններէ եկած քիւրտերը մեկնած պէտք է լինին այս շրջանէն:

— Անշուշտ, արդար պահանջ է ձերինը, — համաձայնեցաւ Կալիպ պէյը (այդպէս էր երիտասարդ սպային անունը), — մենք անմիջապէս կը կարգադրենք: Ի՞նչ կ'ըսես, Օսման պէյ...

— Ինչպէս որ կ'ուզէք, Կալիպ պէյ, հրամանը ձերն է:

— Լաւ ուրեմն, քրտերը անմիջապէս կը ցրուես:

Ոսք մտիկ չընողներուն, դիտես ա՛... Էդ աւազակ Ռաշիդն ալ ձեռքերը կոնակը կապած թաղ կը ճամբես, ինքդ ալ մնացած սուլարիներով կը սպասես Պիֆէրան գիւղը: Ես Լեւոն էֆէնտիի հետ հոս պիտի մնամ այս գիշեր: Վաղը առտու միասին կուգանք քեզ գտնալու:

Նախազդու շուրթեան համար, Լեւոնը այդ գիշեր ալ գիւղի շուրջը որոշ դիրքեր պահել տուաւ: Առիւժ Գեւոն իր տասնեակով բլուրի վրայ մնաց, թէեւ դեռ չմիտած՝ գիւղ իջան կրկին իրենց նախկին զգեստները հագնելու համար: Երկար օ՛խ մը քաշեց Գեւոն, երբ ասկերի նեղ տարատը հանելով շատախցու լայն շալվարը քաշեց մէջքին, վրայէն ալ քեազախին հագաւ:

— Ոնց որ մարդ դժոխքէն ելնելով արքայութիւն մտնայ, — թեւերն ու ոտքերը շարժելով ըսաւ Առիւժ Գեւոն, — սո՛, ես ատոնք անգամ մ'ալ հագնողին...

— Է՛, օնպաշի էֆէնտիս... քէֆդ, հալդ... անձախ մարդու կերպարանք մտար...

Բայց թո՛ւիալ Սատանան չկրցաւ շարունակել: Գեւոն յօնքերը կիտած՝ գլուխը մէկ կողմ դարձուց, ու շարժութեան իսկ շարժանացնելով ընկերը, որու հետ քէն ըրած, ամբողջ օր մը չէր խօսած:

Գիւղին մէջ ընդհանուր իրարանցում կար: Ռէս Պետրոսի երեսրացին մէջ, թաղիքներու վրայ երկար սփռոց մը ձգուած էր: Գիւղի մեծամեծները, Լեւոնը, վարդապետը, Գարեգինը, Եկաւեանը եւ երիտասարդ սպան սեղանի գլուխը նստած էին Ռէսի եւ քահանայի հետ: Առիւժ Գեւոն եւ ընկերները, ինչպէս նախօրօք կարգադրած էր Լեւոնը, բլուրի վրայ իրենց դիրքերուն մէջ մը նսցին:

Գիւղէն ոչխարի խորոված միս, ձաւարէ փլաւ ու մածուն ուղարկեցին տղայոց համար: Բայց Գեւոն ընկերներէն քիչ մը հեռու քաշուեցաւ, քարի մը վրայ նստելով գլուխը առաւ ձեռքերուն մէջ ու սկսաւ դառնութեամբ

լեցուած մտածել այդ օրուայ անակնկալ նորութեան վրայ, երբեմն կրծքի խորէն ախ մը քաշելով: Ընկերները դարմացած, իրարու աչք կ'ընէին. այդ ի՞նչ էր պատահած Առիւծ Գեւոյին, որ կարծես սգաւոր լինէր, չէր մասնակցեր ընդհանուր ուրախութեան եւ իրենց սեղանին, ուր թարմ լաւաշի հետ խորոված միս ալ կար:

Թօփալ Սատանան չդիմացաւ, ախր ի՞նչպէս պատառ մը կրնար ծամել երբ անդին, Առիւծ Գեւոն առանձնացած նստած էր, առանց ընկերներու ուրախութեան մասնակցելու:

— Մեծ ախպէր, — լաւաշի մէջ կտոր մը միս պլլած Թօփալ Սատանան մօտեցաւ Գեւոյին, — մեծ ախպէր, կտոր մը բան ծամէ...

Առիւծ Գեւոն գլուխը միւս կողմը դարձուց որպէս թէ բարկացած, թէեւ սրտանց կողզէր հաշտուիլ Թօփալ Սատանային հետ, անոր առջեւ դուրս թափել սրտի դառնութիւնը: Թօփան Սատանան առանց այլեւայլի Գեւոյի կողքին նստաւ, լաւաշով միսը անոր ծնկան վրայ դնելով.

— Ախպէրս, բան մը կեր...

— Չոր ու ցաւ ուտեմ ու խալսիմ ձեռքէդ... Տօ', լմ ցաւս հերիք չէ, դուն ալ մէկ կողմէն...

— Գեւո ջան, աղիղ ախպէրս, քեզի ի՞նչ պատահեցաւ, Աստծու սիրուն, տարտդ ըսէ... Մեծ ախպօրս ըսեմ, մենք ալ սրտի, ճիկեարի տէր հայ քրիստոնեայ ենք... այսօր աշխարհ քէ՛Ք ուրախութեան մէջ...

— Ուրախութի՞ւն ըսիր, ծօ հայվան, մէկ ըսէ տեսնեմ, այդ ինչո՞ւ համար կ'ուրախանան...

— Ըհը'մ... մեծ ախպեր, սահմանադրութիւն...

— Ծօ, սահմանադրութիւնդ ի՞նչ է:

— Ախպօրս ըսեմ, — թուրք կուլ տալով սկսաւ Թօփալ Սատանան, առանց որոշապէս գիտնալու թէ ինչպէ՞ս պիտի բացատրէր, — Սահմանադրութիւն որ կ'ըսեն, ախպօրս ըսեմ, եանի՛ հայ, թուրք, քուրտ ախպօր պէս...

Սահմանադրութիւնը... էնպէս, ինչպէս ազատութիւն էդնի...

— Թահո՛ւ... ծօ, ուրեմն ազատութիւն է...

— Ըհը', — վստահօրէն պատասխանեց Թօփալը:

— Ուրեմն Հայաստանը ազատեցա՞ւ:

Թօփալ Սատանան բերանարաց ընկերոջը նայեցաւ: Չէ, շիտակը, Հայաստանի ազատութիւնը հաստատ չէր դիտեր, բայց այդ քանի մը ժամուայ ընթացքին այնքան լսած էր այդ բառը, որ բնական համարեց Հայաստանի ալ ազատութիւնը եւ դրական իմաստով գլուխը շարժեց:

— Որ էդպէս է, — շարունակեց արդէն բարկացած Գեւոն, — ըսէ տեսնեմ, այդ ե՞րբ հայոց թագաւորը թախտ նստաւ...

Թօփալ Սատանայի թուրք բերնին մէջ չորցաւ: Աչքերը խոշոր բացած՝ նայեցաւ անողոք ընկերոջը:

— Էջմիածնայ կաթողիկոս սուրբ միռոնով ճակատն ու ձեռքերը օծե՞ց... հայու դրօշակ տուա՞ւ ձեռքը...

Գեւոյի ջախջախիչ փաստերու առջեւ, Թօփալը սմբեր ոչնչացեր էր: Մեղաւորի նման գլուխը կախեց: Էդ բաներէն ինք խարար չունէր:

— Հը՞, չխօսե՞ս, Թօփալ... Սահմանադրութիւն հա սահմանադրութիւն... Ծօ', ըսէ տեսնեմ Փրանկի թագաւոր օսկի թագ ճամբե՞ց հայու թագաւորին...

— Ախպօրս ըսեմ, Փրանկները թագաւոր չունին, — Թօփալ Սատանան ընդմիջեց Գեւոյի խօսքը, ուրախ որ առիթ մը գտաւ իր իմաստութիւնը ցուցնելու: Տէ՛ր Աստուած, վերջապէս ինքն ալ բաներ մը կրնար հասկնալ:

— Ծօ, սո՛ւս կռապաշտ, — ու Թօփալի գլխուն բռնուցք մը իջեցնելով՝ փախախը մինչեւ ականջները իջեցուց Առիւծ Գեւոն, — ծօ', առանց թագաւորի ազգ կ'եղնի՞... որ ազատութիւն եղնէր, մենք ալ մեր թագաւորը կ'ունենայինք... Սահմանադրութի՛ւն, հա սահմանադրութիւն, ծօ էդա սահմանադրութիւնը պօշ բան է, հէջ

հայր թրքին, քիւրտին հետ ախրեր կ'եղնի՞... Ծօ աւա- նակ, մէկ ըսէ տեսնեմ, թուրքը, քիւրտը մ'կրտութիւն ունի՞ն... երեսներուն սուրբ մ'իւռն կա՞յ...

Ալ ի՞նչ կրնար ըսել թոփալ Սատանան: Կաթը թափող մեղաւոր կատուի նման ամբեցաւ, միեւնոյն ժամանակ դարմանալով Առիւծ Գեւոյի խելքին ու դիտուեցան վրայ:

Մտքի ծով էր, ծով Առիւծ Գեւոն:

Իրարու կուշտի նստած, երկու ընկերները ատեն մը լռեցին: Մահայն պարզ էր որ Գեւոն ուրիշ մտածում մ'ալ ունէր, զինք տանջող ներքին ցաւ մը: Ծունկի լաւաչը կողքին դրաւ, ու մէկալ դառնալով թոփալ Սատանային կողմը, երես երեսի, խեղճացած ձայնով մը հարցուց.

— Թոփալ, ախպերս, դու կ'իմանաս, Բուժկու Սուրբ Գեւորդը զօ՞ւ սուրբ է:

— Մեռնեմ զօրութեանը, հա Աստուած, հա մեր Բուժկու Սուրբ Գեւորդ... եանի երկուքի դուլէթը հա- մա համա իրար հաւասար:

Պահ մը լռելէ վերջ, Գեւոն նորէն խօսեցաւ, բայց այս անգամ շատ սրտաբեկ ձեւով մը:

— Թոփալ, ախպերս, մէկը որ ուխտ կատարէ, ու վերջէն ուխտը աւրէ... եանի սուրբը...

— Սո՛ւս, մեծ ախպեր, մեղք մի՛ խօսիր... ուխտը աւրողին ազատում չկայ, դժոխքի բաժին կ'եղնի, հուրն յաւխտենից...

Առիւծ Գեւոյի թեւերը յուսահատօրէն վար կախ- ուեցան, հառաչանքի նման մոնչիւն մը կրծքէն թռաւ, ու գլուխը ախորժէն տարուբերելով ինքնիրեն քրթմնջաց.

— Մէկ երկու տարի վերջը դար, եթէ պիտի դար... Խնձո՞ր դրկեցինք ետեւէն... Աստուած պելան տայ Սահ- մանադրութեան ալ, տուողին ալ, առնողին ալ... ա՛խ թոփալ, ուրեմն ասկէ վերջ... Ծօ, խելքդ ի՞նչ կը կըտ- րէ... ալ քրդերու հետ կուիւ չպիտի՞ ունենանք...

— Ալ ի՞նչ կուիւ, սահմանադրութիւն է...

— Ծօ, ես ըու Սահմանադրութեան ալ, քեզի ալ, շուն շան որդի, հէջ իմ մասին չես մտածեր, հապա իմ ո՞ւխտս...

— Ո՞ւխտ, Գեւո ջան, ի՞նչ ուխտ...

— Ծօ, էն որ Սուրբ Սաչ վանքն էինք, որ պարոն Լեւոնը գիշերով ճամբու դրինք...

Առիւծ Գեւոն, երբեմն կանգ առնելով, սլառեց իր ըրած ուխտի մասին: Նեղ սահաթի մը խոստացեր էր, Փութիկի զօրաւոր Սուրբ Գեւորդին տասներկու քրդի ա- կանջ: Հիմա որ այլեւս Սահմանադրութիւն էր, ալ կուիւ չկար... ու Գեւոն կուրծքին կախուած քսակին մէջէն, երկու կաշեցած աղանջներ հանելով՝ դառն յուսահատու- թեամբ մը ըսաւ.

— Թոփալ, աղիդ ախպեր, եղած չեղածը երկու հատ ... հապա մնացած տա՞սը...

Թոփալի կարգն էր մտմտալու: Ուխտը ուխտ էր, Բուժկու Սուրբ Գեւորդն ալ զօւ սուրբ մը: Եթէ Սբ. Սարգիսը լինէր, կամ Աստուածածինը, էհ, ո՞վ գիտէ, մոմ վառելով, ծոմապահութեամբ, աղաչանք պաղատան- քով միջոց մը դանուէր, թերեւս անոնց սիրտը կարելի լինէր շինել: Բայց Բուժկու Սուրբ Գէո՞րդը... դալուճ սուրբ մ'էր: Թիմարէն մինչեւ Կարճկանի գիւղերը, ժո- դովուրդի բերանն էր, թէ ինչպէս Աւանցի կէմիճի մը, Փոլըթունայի մը ժամանակ ուխտ կ'ընէ երկու եզ մա- տաղ ընել Սուրբ Գեւորդին, եթէ ազատուի փոթորկէն: Սուրբն ալ կը հաւատայ կէմիճի խօսքին, քամիները տապրակը կը կոխէ, ծովը կը խաղաղի: Արի տես, որ կէ- միճին հալալ կաթ չէ կերեր: Երբ փորձանքէն կ'ազատի կ'ուրէ սուրբին հախը ուտել, երկու եզի փոխարէն դառ- նուկ մը եւ աքլոր մը մորթելով: Ալ ի՞նչ օրուայ Բուժկու Սուրբ Գեւորդն էր որ իր զօրութիւնը չցուցնէր: Ահա տասներկու տարի է, խեղճ մարդը անկողնին վրայ ան- շարժ դամուած է, ոչ կը լաւանայ ու ոչ ալ մէկ անգամէն

կը մեռնի: Ուրիշ քիւրտի մ'ալ երեսը յանկարծ կը ծռի, երբ Բուժկայ վանքէն աշտանակ մը կը գողնայ:

Այսպիսի վաւերական դէպքերը Թոփալ Սատանան ինչպէ՞ս կրնար անտեսել: Մտածելու լուրջ խնդիր մ'էր: Վերջապէս, Գեւօն իր մեծ եղբայրը կը համարուէր: Ճիշդ է, զինքը քիչ մը շատ կը նեղէր, բայց ինքն ալ խօսմ պահաս չէր մնար: Ասով մէկտեղ Առիւծ Գեւօն Թոփալ Սատանայ կ'ըսէր, ուրիշ մարդու անուն չէր տար: Ձէ, պէտք էր ճար մը գտնալ:

Յանկարծ խորհուրդ մը լուսաւորեց Թոփալ Սատանայի միտքը: Հը՞, գէշ գաղափար չէր: Է՞, Թոփալ Սատանան ալ պակաս մտածող մարդ չէր:

Թոփալ Սատանան ակներեւ ուրախութեամբ ձեռքերը իրարու շփեց, ինքն ալ զարմացած որ այդքան փայլուն գաղափար մը յղանալու ընդունակ է: Համ Սուրբը պէտք էր գոհացնել, համ ալ Գեւոյի ուխտը պահել:

— Գեւօ՛, — ըսաւ Թոփալ Սատանան, — շատ ալ հոգ մի ընե՛ր, ես ճարը գտայ... Մեծ Ախպօրս ըսեմ, հոս հոն հանդիպած քրդին... Ղըրթ— ու ձեռքը հորիզոնական ձեւով կոկորդին քսեց, — հիմա հասկցա՞ր...

— Ծօ, կ'եղնի՞... հապա էն, Սահմանադրութիւն է, ինչ դարադատա է...

— Է՞, բա՞ն չունի՞ս...

Յաջորդ օրը, Ղարիպն ու երկու հայդուկներ ձգելով Ծիծանցի մէջ, Լեւոնը իր խմբով մեկնեցաւ: Ճանապարհին զանազան գիւղերէ ժողովուրդը միացաւ Լեւոնի խմբին ու երբ Շատախի Թաղը մտան, արդէն հազարէն աւելի կը հաշուէր: Տիգրիսի երկու կողմերուն գտնուող հայկական գիւղերէն ժողովուրդը թափած էր Թաղ, կառավարչական շէնքի առջին գտնուող հրապարակը:

Նկարագրել խմբին եղած ընդունելութիւնը, գրեթէ

անկարելի է: Ոչ թէ անոր համար, որ այդ խեղճուկ դիւղաքաղաքին մէջ տպաւորիչ, շքեղ հանդէսներ տեղի ունեցան, այլ այն մեծ արժէքին համար, որ եղած քիչը անվերապահ զգացումներու հարազատ արտայայտութիւն մ'էր: Ժողովուրդը, մասնաւորաբար հայերը այդ պահուն կ'ապրէին հոգեկան վիճակ մը, որ հազիւ թէ ուրիշ ազգապրած լինի:

Սահմանադրութեան անսպասելի լուրը առաջին պահուն շփոթե՛ր էր ժողովուրդը, ու մէկ ալ խելայեղ հոգեկան արբեցութեան մը մէջ նետեր էր զայն, երբ ամէն սահման կը վերնայ, մարդիկ դեռ արցունքները աչքերուն՝ ուրախութենէ կը սկսին պարել: Անցեալի բոլոր տառապանքները գէշ երազի նման չքացեր էին: Այս օրը կար միայն ու մէկ ալ ապագայի փայլուն հեռանկարը:

Երբ հայդուկներու խումբը, վարի դպրոցի քովէն անցնելով, նեղ փողոցը մտաւ, տներու, խանութներու տանիքները լեցուած էին հարիւրաւոր հանդիսականներու բազմութեամբ: Կիներ, երեխաներ, ծերունիներ ու աղջիկներ տանիքներէն վար կը կախուէին՝ «ազգի մարդիկը» տեսնելու համար: Մասնաւորաբար կիներն ու պառաւները յայտնապէս յուզուած՝ մէկ կը ծիծաղէին, մէկ լաւալի ծայրով աչքերնին կը սրբէին:

Հակառակ նախօրօք եղած կարգադրութեան, Վերի ու Այվազեան թաղերէն բոլոն հրացանաձգութիւն մը սկսաւ, երբ եկող բազմութեան յառաջապահները Թաղ մտան: Երկու զոյգ դաւուլ զուռնաները, որոնք Թաղի առջեւ խումբն ու եկողները դիմաւորած՝ կ'առաջնորդէին զանոնք դէպի կառավարչատուն, այնպիսի սարսափելի ժխորով մը լեցուցին նեղլիկ փողոցը, որ մարդ քովէն քալողի մը խօսքերը չէր կրնար լսել:

Հայդուկները խմբուած կը քալէին: Բնականօրէն Առիւծ Գեւօն առաջին շարքի մէջ կը գտնուէր, դեռ մէկ երկու քայլ ալ առաջ ինկած: Այդ առտու մեր բարեկամը

ամիսներէ ի վեր անլուայ գլուխը լուացած, երկար ու թաւ պեխերը առանձին խնամքով ոլորած էր: Համբերութեամբ նստած ու լայն շալվարին մէկ երկու ծակերը կարկտած:

Պէտք էր տեսնել այն աղաղակող հպարտութիւնը, որ Առիւծ Գեւոյի քալուածքէն կը պոռթկար: Ուխտի խընդերը Թոփալ Սատանայի հանճարեղ գիւտով լուծուած լինելով, միամտուած էր: Այլեւս Առիւծ Գեւոյի քէֆին քէֆ չէր հասներ: Թող արար աշխարհ տեսնէ թէ՛ Ալաշկերտցի Առիւծ Գեւոն ինչ մարդ է: Հէ՛յ, հէ՛յ, մօտ երկու տասնեակ տարիներ «ազատութեան զինուոր» եղած էր, կա՞ր մէկը որ չափուէր իր հետ:

Հանդիսականներէն շատ շատեր, անոր քալուածքէն, խիստ դէմքէն, բայց մանաւանդ երկար ու ջբեղ պեխերէն ազդուած, կը կարծէին թէ ան է պարոն Լեւոնը, «ազգութեան մեծը»: Փոքր աղջնակ մը, դռնէ մը դուրս վազելով փունջ մը վայրի ծաղիկներ տուաւ Առիւծ Գեւոյին, դայն Լեւոնի հետ շփոթելով: Մեր բարեկամը արժանավայել ծանրութեամբ փունջը վերցուց՝ աղջկայ գլուխը շոյելով, բայց կարիք չզգաց յայտնելու, որ Լեւոնը երկու քայլ ետեւ հայդուկներու հետ քալողն է:

Կառավարչատան մէջ տեղի ունեցած ընդունելութեանէն վերջ, երբ թուրք պաշտօնեաներ ու հայեր տեղի անտեղի կը համբուրուէին իրարու հետ, բազմութիւնը, շըրջապատած հայդուկներու խումբը, զանոնք առաջնորդեց երկու կամուրջներով դէպի Թաղ, ուր «պատուաւոր աղաքային»-ի մը տան մէջ մեծ սեղան մը շտկուած էր: Կեր ու խումբ եւ ուրախութիւնը մինչեւ մթնելը շարունակուեցան: Առիւծ Գեւոյի տրամադրութիւնը շատ բարձր էր: Երկու անգամ ճառ խօսեցաւ, բազմաթիւ բաժակներ դատարկելէ վերջ:

Այդ երեկոյ, Գարեգինի, Եկաւեանի, Կալիպ պէյի ու երկու հայդուկներու ընկերակցութեամբ, Լեւոնը մեկնե-

ցաւ Աթանան՝ կարգադրելով, որ խումբը գլուխէ գլուխ անցնելով հետեւի իրեն:

Վեց ձիաւորները արագ արագ կը քալեցնէին ձիերը, լոյսը բացուելուն Աթանան հասնելու ցանկութեամբ: Բայց կէս գիշերը անցած, երբ Փեսան Դաշտի Ծիտան գլուխէ կ'անցնէին, գլուխացի մը հանգստանալու համար ճամբու եզրը նստող անցորդները ճանչնալով՝ ամբողջ գլուխը ոտքի հանեց: Լեւոն ու ընկերները հինգ բոպէ չէին նստած, երբ դրեթէ ամբողջ Ծիտանի ժողովուրդը պաշարեց զինքը: Այլեւս անկարելի էր ճամբան շարունակել, հոտ սլեք էր մնային: Լոյսը բացուելուն, դաւուլ դուռնայի դըրդոցը ծանր ծանր կը տարածուէր Փեսան Դաշտի ցրուած գլուխերու վրայ, բոլոր ժողովուրդը մէկտեղելով Ծիտանի մէջ:

Այդ գիշեր ու յաջորդ ցերեկը Ծիտան մնալով՝ Լեւոն ու ընկերները մութը կոխելուն անցան Աթանան:

ԱՌԻԻԾ ԳԵԻՕՆ ԵՒ ԹՕՓԱԼ ՍԱՏԱՆԱՆ

Նահատակներու հոգեհանգստի օրն էր:

Հազարաւոր ժողովուրդ խոնուած էր Հայկավանքի ընդարձակ տարածութեան վրայ: Եթէ վերէն ասեղ մը իյնալու լինէր, հազիւ թէ դետին հասնէր, այնքան մեծ բաղմութիւն մը հաւաքուած էր դաշտի ամէն կողմը: Թիմարի, Արճակի, Հայոց Ձորի ու քաղաքի ողջ բնակչութիւնը, հայ ու թուրք, դրաւած էր դաշտի ամէն մէկ անկիւնը: Ձորքը զինուորական Փանֆարով բռնած էր նախօրօք իրեն յատկացուած տեղը: Ներկայ էին կուսակալը, զինուորական հրամանատարը, պետական պաշտօնէութիւնը: Հակառակ դաշտային աշխատանքներու ամենանոուն ժամանակը լինելուն, հեռաւոր շրջաններու զիւղացիները քաղաք թափած էին այդ օրը:

Հայկավանքի փոքր եկեղեցիի կողքին, թարմ ծաղիկներով դերեղմանի շուրջը, քահանայական դասը, կը պատրաստուէր հոգեհանգստի կարգը սկսելու: Թարմ ծաղիկներու տակէն երեւցող չորցած հողի կոշկոռները կը վկայէին որ այդ դերեղմանը հին դերեղման մը չէր: Անոր վրայ, դեռ խոտ իսկ չէր բուսած: Ոստիկանները մեծ դժուարութեամբ կ'աշխատէին ազատ շրջան մը պահել դերեղմանի շուրջը, մինչ չորս կողմէն ծովացած բաղմութիւնը դէպի առաջ կը շարժէր:

Գերեզմանի կողքին կանգնած էին կառավարական թուրք պաշտօնեաները, զինուորական սպաներ եւ վանեցի առաջաւոր թուրքեր, իսկ անոնց դէմ դիմաց կանգնած էին յեղափոխականները: Հոն էին Պիժան, Գէորգը, Գարեգինը, Եկաւեանը, Մոկացի Յակոբը, Գործոթի Մազօն, Մկոյի հետ միասին, Թոփալ Մատաշան, Մա-

զոտ Արջը, Մալտաթը եւ ուրիշ բաղմութիւ հայդուկներ, որոնք երեք օր առաջ քաղաք եկած էին:

Մոսօն, անգամ մը շուրջը նայած ժամանակ, բազմութեան մէջ նշմարեց Մոնիան: Մեծ դժուարութեամբ հասաւ անոր քով եւ աջ ու ձախ հրմշտկելով՝ հասցուց զայն դերեղմանի մօտ, ուր համեմատաբար աւելի ազատ տեղ կար:

— Մարսափելի բաղմութիւն կայ, սաստիկ ալ շող է, — փսփսաց Մոնիան երեսի ջրտինջը սրբելով, — որքա՛ն ուրախ եմ որ քեզ կրկին ողջ առողջ կը տեսնեմ...

Մոսօն չորս բոլորը նայելով՝ գլուխը շարժեց. իրաւոր շատ մեծ բաղմութիւն կար:

— Ես չէի գիտեր թէ քաղաք իջած ես: Ինչո՞ւ ինձ չհանդիպեցար. չէ՞ որ մենք հին բարեկամներ ենք:

— Օրիորդ Մոնիա, — նոյնպէս փսփսալով խօսեցաւ Մոսօն, — այս առտու միայն հասայ քաղաք. ես ճանապարհին քիչ մը ուշացայ:

— Կ'ըսեն, պարոն Լեւոնը երեք օրէ ի վեր քաղաքն է, դեռ չեմ հանդիպած... Ծանր օրեր անցուցիք... կ'երեւակայեմ թէ՛ ի՛նչ սարսափելի կեանք մը ապրած պիտի լինիք, զիւղէ զիւղ թափառելով, միշտ հետապնդուած կառավարական զօրքէն... Բայց դարմանալի է որ պարոն Լեւոնը ներկայ չէ... Ծիծանցի կռուի մասին լրսեցինք: Քաղաքը տակնուվրայ եղաւ... Պարոն Լեւոնի ու իր վմբի որպէս թուրք զինուորներ ազատ համարձակ ման գալը մեծ շփոթութիւն առաջ բերաւ կառավարական շրջաններու մէջ... Մոսօ՛, դու Ծիծանցի կռուին մասնակցեցար... Կ'ըսեն, պարոն Լեւոնը եթէ ժամանակին չհասնէր...

— Ես Մոկայի կողմերն էի:

— Իսկ ինչո՞ւ պարոն Լեւոնը չէ եկած, — կարծես աւելի ինքն իրեն խօսեցաւ Մոնիան:

Մոսօն լռելեայն, գլխով քահանաներու կողմը ցու-

ցուց, որպէս թէ ըսել ուզէր, «Լեւոնը հոն է, ինչպէ՞ս չտեսար մինչեւ հիմա»:

Գերեզմանի շուրջը շարժում մը սկսաւ:

Շուրջառուորուած, քահանաները գերեզմանի վերի կողմը կարգով շարուեցան: Հոգեհանգստի արարողութիւնը սկսած էր: Խոնկի անուշաբեր հոտը սկսաւ տարածուիլ:

Երբ ծերունի աւագերէցը աւետարանը կարդալու համար գիրքը փոխեց եւ գերեզմանի հակառակ կողմը անցաւ, Սոնիան նոր միայն նկատեց Լեւոնը, որ Աւուծ Գեւոյի հետ գերեզմանի վերի կողմը կանգնած էր, գլուխը կրծքին կախած, երկար հասակը կորացած, կարծես անհուն ծանրութեան մը տակ բոլորովին ընկճուած լինէր:

Անբեւոյթ ձեռք մը յանկարծ ասիւն մէջ սեղմեց Սոնիայի սիրտը: Երեք ամիսէն աւելի էր, որ Սոնիան չէր տեսած դայն: Լեւոնի բացակայութեան ատեն, ինքն ալ հաշիւ չէր կրնար տալ, թէ ինչո՞ւ, բայց ամէն ատենէ աւելի միտքը դբաղուած էր Լեւոնով: Ճիշդ է, այդ մտածումը շարունակ միեւնոյն ուղղութեամբ չէր դարձնար: Լեւոնի սֆինքսային դէմքը ու անմատչելի ներքին մարդը հանելուկային կերպարանք մը տուած էին անոր, այդ պատճառով ալ Սոնիան փոխն ի փոխ կ'ապրէր զիրար խաչաձեւող զգացումներու ազդեցութեան տակ:

Հոգեկան այդ վիճակը չափազանց ջշագրելու դարձուցած էր Սոնիան: Լեւոնի մասին չմտածել չէր կրնար, իսկ անոր մասին մտածած ժամանակն ալ անքին առջեւ կուգար անոր այլանդակուած դէմքը, դէմքի խիստ տարօրինակ դատան արտայայտութիւնը: Ճիշդ է, մէկ երկու անգամ, տղան առանց վարազոյրի բացած էր իր հոգեկան աշխարհը, բայց կրիայի մը նման անմիջապէս նորէն կձկուեր էր պատեանին մէջ, առանց ժամանակ տալու որ Սոնիան իր հոգիի խորքը իջնայ: Այս յանկարծական

փոփոխութիւնները ալ աւելի շիտթեր էին Սոնիան, որու համար Լեւոնը կը մնար անլուծելի առեղծուած մը: Բայց եւ այնպէս երեք ամսուան բացակայութեան ժամանակ, Սոնիան ահամայ մտածեր էր Լեւոնի մասին:

Հիմա՛, որ Լեւոնը Սոնիայի դէմն ու դէմը կանգնած էր վշտէն խորտակուած վիճակի մէջ, աղջկան կը թուէր թէ՛ Լեւոնը սաստիկ նիհարած է, դէմքը անգլի մը կը տուցին պէս երկարած, ու աւելի տարէց կ'երեւար, քան առաջ:

Հոգեհանգիստը վերջաւորութեանը կը մօտենար: Աւագերէցը հաղիւ լսելի ձայնով վերջին աղօթքը ըսաւ: Քահանաներն ու տիրացուները գերեզմանի քովէն մէկ կողմը քաշուեցան:

Գարեգինը անմիջապէս աթոռակի մը վրայ բարձրացաւ: Հաղարաւոր բաղմութիւնը մէկ մարդու նման լըռեց: Լսուեցաւ Գարեգինի որոտացող ձայնը.

— Հայրենակիցներ, — սկսաւ ճառել, — այս օր աւելի յարմար, աւելի խորհրդաւոր գերեզման մը չէինք կրնար ընտրել մեր բիւրաւոր նահատակներու հոգեհանգիստը կատարելու համար, քան այս անշուք հողակոյտը, որու տակ կը հանգչին հայ ժողովուրդի հարազատ զաւակներէն մէկուն՝ հերոսական Վահէի նուիրական սսկորները...»

Բաղմութիւնը ալիք ալիք շարժեցաւ: Ամէն մարդ կը փորձէր առաջ անցնել՝ աւելի մօտէն լսելու համար:

Լեւոնը կարծես չէր իսկ լսեր Գարեգինի խօսքերը: Գլուխը կրծքին ինկած, ան ջարդուած արձանի մը տպաւորութիւնը կը ձգէր տեսնողի վրայ: Սոնիայի ենթադրութիւնը ճշմարիտ էր: Իրօք քանի մը օրերու ընթացքին, մեծ փոփոխութիւն մը կատարուած էր, ոչ թէ Լեւոնի արտաքին, այլ անոր հոգիին մէջ: Տարիներով ապրած փախտական կեանքը, ամէն րոպէ հաւանական վըտանդի մը զիտակցութիւնը եւ հսկայական գործի մը

պատասխանատուութեան զգացումը պրկած, լարած էին
Լեւոնի ջիղերը, անխորտակելի կարծրութիւն տալով ա-
նոնց: Այդ պայմաններուն մէջ, Լեւոնը պողպատէ շին-
ուած մարդ մեքենայ մ'էր, յարատեւ շարժման մէջ,
կրկնուպեան աչք մը, որ դիշեր ցերեկ պիտի հսկէր:

Յեղափոխական ղեկավարի մը լարուած կեանքը
ամբողջովին կլանած էր Լեւոնի ողջ էութիւնը, առանց
ժամանակ ձգելու, որ ան ինքն իր եսով ապրի, անդրա-
դառնայ իր ողբերգական վիճակին վրայ: Սահմանադը-
րութեան հռչակումը, ատոր հետեւանքով իր եւ ընկեր-
ներու քաղաք իջնալը, ուր արդէն ազատ համարձակ կըր-
նար պտտիլ, նախկին հեւ ի հեւ կեանքի յանկարծական
դադարը կարծես պատճառ եղած էին պրկուած ջիղերու
թուլանալուն, հոգեկան կորովին նուազելուն: Լեւոնը
ջրէն դուրս նետուած ձկան պէս կը դգար ինքզինքը: Սո-
վորական կեանքը անտանելի ծանրութեամբ կը ճնշէր
դայն:

Հոգեկան այդ վիճակին մէջ, կրկնակի ուժգնու-
թեամբ զգաց իր կեանքի իսպառ խորտակումը, այն մեծ
ողբերգութիւնը, որ ակամայ դիմակ մը անցուցեր էր իր
դէմքին, դատապարտելով զինքը մինչեւ մահ՝ այդ դի-
մակով ապրելու: Շատախէն վերադարձին, ընկերներէն
ոմանք իջած էին Գարեգինենց տունը: Փնքը նախընտրած
էր Եկաւեանի մօտ իջնալ:

Հոն շատ աւելի հանդիստ կընար զգալ: Ընդարձակ
տան մէջ միայն Եկաւեանն ու մայրը կ'ապրէին: Երկրորդ
յարկի վրայ, առանձնացած դիրքով սենեակ մը յատկա-
ցուցին Լեւոնին: Երբ առաջին առտուն արթնցաւ Լեւո-
նը, զարմանալիօրէն ճնշուած կը զգար:

Կանոնաւոր անկողինի մէջ պառկելը, առաջին քայլն
էր դէպի նորմալ կեանքը: Լեւոնը վաղուց կտրուած էր
այդ զգացումէն, ահա քանի՜ տարիներէ ի վեր ան երբեք

հանուած ու անկողին մտած չունէր: Անգամ մը միայն
երբ ինք ծանր հիւանդ էր ու անդիտակից վիճակի մէջ:
Անսովոր տպաւորութեան ազդեցութեան տակ ընկճուած
էր Լեւոնը, երբ հազիւ աչքերը բանալով ինքզինք գտաւ
ճերմակ սաւաններով անկողնի մէջ պառկած: Կարծես
վաղուցուայ մոռցուած յիշողութիւն մ'էր, որ նոր կ'ար-
թըննար իր մէջը: Այո՛, ատենօք... եւ անհուն կարօտով
յիշեց հայրենական տունը, իր սենեակը, պատի այնքան
մտերիմ պատկերները: Պատուհանի առջին դրուած դը-
րասեղանը, աջ թեւի վրայ իր դրադարանը, որու դրճե-
րը այնքան խնամքով կը դասաւորէր: Այդ հարազատ
պատկերներու ազդեցութեան տակ, Լեւոնը հոգեկան
այն վիճակը կ'ապրէր, երբ անցեալն ու ներկան իրարու
կը խառնուէին: Այնպէս կը թուէր Լեւոնին, որ ահա պի-
տի լսէ նրբանցքի մէջ քալող մօր ոտքերու թեթեւ ար-
ձագանգը, որ սենեակի դուռը պիտի բացուի, ինչպէս
հին օրերուն, ու մայրը գլուխը ներս կոխած սենեակի
դռնէն, գորովանքով պիտի լսէ. «Վարդան ջան, հը՞,
արթնցե՞ր ես, նախաճաշդ պատրաստ է պալէս»:

Լեւոնը ձեռքերով դէմքը ծածկեց, ու բուռն ճիգ մը
ըրաւ մինչեւ կոկորդը բարձրացած հեկեկանքը խեղդե-
լու համար: Յանկարծ, խելագարի նման ոտքի ցատկե-
լով, մօտեցաւ պատէն կախուած փոքր հայելիին: Հոն
արձանացած մնաց: Անշուշտ առաջին անգամը չէր որ իր
սեփական դէմքը կը տեսնար հայելիի մը մէջ: Շատ ան-
գամներ: Բայց, բայց այդ առտու, ինքն ալ հաստատ չէր
գիտեր թէ ինչու համար, այնպէս կը թուէր, թէ նոր մի-
այն կը տեսնէր դէմքը: Ո՞վ դիտէ, թերեւս առաջին ան-
գամ լինելով դիտեց դէմքը նոր սպասումով մը, նոր ա-
կընկալութեամբ: Լեւոնը ամբողջ մարմնով կը դողար:
Սարսափելի էր: Այլանդակուած էր դէմքը, որքան որ
դէմք մը կընար այլանդակուել: Հայելիի մէջէն իրեն կը
նայէր բոլորովին անծանօթ կերպարանք մը՝ անտանե-

լիօրէն խեղաթիւրուած : Չախ աչքը առանց թերթեանք-
ներու եւ յօնքի, կղակի մէկ մասին տեղ խոռոչ մը, դէմ-
քի ամբողջ ձախ կողմը մինչեւ գլխու կատարը առանց
մազի, ողորկ, փայլուն կաշիով մը ծածկուած, որու վը-
րայ կծկուած կարծր սլալարները սնդիկի նման կը շար-
ժէին...

Լեւոնի արեւէն պղնձազոյն դարձած դէմքին վրայ
գունթաափ շրթները դողդղացին :

— Մարտափելի է, սարտափելի...

Աջ ձեռքով աչքերը ծածկեց, ու խեղճացած կքեցաւ
ինքն իր վրայ :

Երբ իր հետեւորդներով իջած էր քաղաք, ընկերնե-
րը մեծ դժուարութեամբ համոզած էին զինքը, որ ան-
հրաժեշտ է կուսակալին եւ ղինուորական հրամանատա-
րին այցելել : Անոնք լսած լինելով իր քաղաք հասնելը՝
մարդ ուղարկած էին զինքը հրաւիրելու : Խոշոր փափա-
խը ձախ կողմի վրայ ծռած, ընկերներով գնաց այցելու-
թեան, ու վերադարձին այլեւս դուրս չէլաւ, մինչ հայ
ժողովուրդը աշնքան անհամբերութիւն ցոյց կուտար
զինքը տեսնելու :

Այդ օրը, հոգեհանգիստի պատճառով Լեւոնը առա-
ջին անգամ լինելով՝ կ'երեւնար բաղմութեան առաջ : Վա-
հէի գերեզմանին առջեւ, թերեւս անձնական ողբերգու-
թեան չափ ուժգին կերպով կը դգար Վահէի մահուան
կսկիծը : Վահէի մահը իր հոգիին մէջ անփոխարինելի
բաց մը թողուցեր էր : Իսկ այդ բացը ամէն ժամանակ
աւելի հիմա կը դգար, աչքերը յառած անշուք գերեզմա-
նի չորցած հողին : Պատանեկութեան շրջանին Վահէն իր
առաջնորդն եղաւ : Տարիներ ամենածանր պայմաններու
մէջ միասին աշխատեցան : Վահէն էր միակ մարդը, ո-
րուն համար Լեւոնի հոգին դիմակ չունէր : Հիմա արդէն
Վահէն չկար. անոր հետ չքացեր էր ջերմ սիրտ մը, մը-
տերիմ մը, որուն կրնար յայտնել սրտի վէրքերը :

« Հայաստանի ամէն սարի ու ձորի մէջ սփռուած են
մեր նահատակներու նուիրական ոսկորները... » — Թե-
ւերը լայն բացած՝ կը շարունակէր Գարեգինը :

Լեւոնը հազիւ թէ ուշադրութիւն կը դարձնէր անոր
խօսքերուն : Հայեացքը յառած հողակոյտին՝ դառնու-
թեամբ կը մտածէր անցեալ օրերու մասին : Վահէն, յե-
ղափոխական կատարելատիպն էր Լեւոնի աչքին : Ան-
սահման անձնուիրութիւն մը, որու համար ամէն ինչ
էր հայ ժողովուրդը : Վահէն հազիւ թէ անձնական կեանք
մը ապրած լինէր. ան եսը ուրացեր էր, հայ ժողովուր-
դով ապրելու համար : Բոլորը, բոլորը զոհած էր իր ժո-
ղովուրդի սիրուն, ու հիմա այդ անսահման եռանդով
լեցուած մարդէն, այդ յեղափոխական առաքեալէն քա-
նի մը փտած ոսկորները կը մնային :

« Ձեր նահատակները մեր նահատակներն են, օսման-
եան պետութեան վերածնունդի մեծ նահատակները : Հա-
զար անգամ օրհնուած լինի անոնց յիշատակը : Կեցցէ
օսմանեան պետութիւնը, կեցցէ ազատութիւնը, կեցցէ
հաւասարութիւնը, կեցցէ հայ ժողովուրդը » :

Լեւոնը քունէն արթնցողի մը նման ինքզինքը թօթ-
ուեց : Գարեգինէն վերջ, թուրք սպայ մ'էր որ խօսքը
վերջացնելով աթոռակէն վար կ'իջնար :

Ժողովուրդը խոնուեցաւ իրար, ժամանակ չձգելով
որ Լեւոնը ընկերներուն միանար : Հարիւրաւորներ իրար
հրձուկելով՝ կ'ուղէին մօտէն տեսնել Լեւոն ըսուած
մարդը, որու մասին այնքա՞ն անհաւատալի բաներ լսած
էին :

Մեծ դժուարութեամբ ինքզինքը ազատելով՝ կառք
մը նստաւ ու հասաւ Եկաւեաններու տունը :

Բաղմութիւնը կամաց կամաց սկսաւ ցրուել : Պիծան,
Գարեգինը, Եկաւեանը եւ Գէորդը ի դուր Լեւոնը փընտ-

ուելէ յետոյ, խմբով վերադարձան Այդեստան: Առիւծ Գեւօն ու Թոփալ Սատանան միասին Սղղիայի ճաղատէն առաջանալով՝ խառնուեցան բազմութեան, որ զարնան հեղեղի մը նման կը հոսէր լայն ճամբուն վրայ: Իրարու կողքէն կը քալէին: Թոփալ Սատանան գլուխը կախ, մըտամոլոր վիճակի մէջ, մինչ Առիւծ Գեւօն գլուխը բարձր բռնած, երբեմն երկար բեխերը կ'ոլորէր, հպարտօրէն աջ ու ձախ նայելով: Թող անցորդները տեսնան թէ՛ ո՞վ է անցնողը:

Աւելորդ է ըսել թէ՛ բոլորի ուշադրութիւնը կեդրոնացած էր Առիւծ Գեւօնի վրայ: Երեք օրուան ընթացքին, քաղաքի ու Այդեստանի մէջ ան արդէն յայտնի դէմք մը դարձած էր: Շատեր անոր պատմութիւններէն տպաւորուած՝ յեղափոխութեան իսկական ղեկավարը կը համարէին զայն: Անշուշտ ինք բողոքելու պէտք չէր զգար: Առիւծ Գեւօն ի՞նչ մեղաւոր էր, որ մարդիկ արժանիքները գնահատելով ինքնարեւաբար այդպիսի եզրակացութեան մը կը յանդէին:

Առջի գիշեր Եկաւեանի տանը հաւաքուեցան ղեկավարներն ու զինուորներէն անոնք, որոնք քաղաքը կը գտնուէին, բոլորը միասին սեղանի շուրջը բոլորուեցան, բաժնուելէ առաջ վերջին անգամ մ'ալ իրար տեսնելու համար: Յեղափոխութիւնը վերջացած էր, ու նոր կեանք մը պիտի սկսէր բոլորի համար: Պիտի ցրուէին, ամէն մէկը ո՞վ գիտէ ուր: Վաթսունէ աւելի էին սեղանակիցները: Հակառակ ոմանց ճիգերուն ուրախ տրամադրութիւն ստեղծելու, խրախճանքի սեղանը դարձեր էր հոգեհացի սեղան մը, կարծես մեռելի դադաղը նոր դուրս ելած լինէր Եկաւեաններու տնէն:

Մեր բարեկամը՝ Առիւծ Գեւօն, մէկ երկու բաժակ իրարու վրայ կոնծեց. ո՞վ գիտէ, թերեւս տրամադրութիւնը բացուէր, բայց հակառակի նման, քիթը աւելի կախուեցաւ: Գրեթէ նոյն վիճակի մէջ էին մնացած հայ-

դուկներն ալ: Պիծան, որպէս տարիքով ամենամեծը եւ պատասխանատու ղեկավարներէն մէկը, հայդուկներու կենացը բաժակ վերցնելով՝ ըսաւ.

«Տղա՛ք, հիմա պիտի բաժնուինք, ամէն մէկս իր տունը: Տարիներով մենք իրարու համար եղանք հարազատ եղբայրներէ աւելի: Միասին աշխատեցանք, միասին տանջուեցանք, մեր այնքան արիւնոտ ճամբուն վըրայ, մեր աղիկ ընկերներէն շատերը թողուցինք սարբուրու տոշին ինկած, շատերն ալ բանտերու խորքը մահացան: Այդ օրերը անցան: Ասկէ վերջ նոր կեանք մը պիտի սկսի բոլորիդ համար: Բայց դուք չէք մոռնալու, որ դուք դեռ մեծ ուխտի զինուորներն էք: Այդպէս եղաք անցեալի մէջ, այդպէս ալ պիտի մնաք: Դուք ձեր կեանքը նուիրեցիք հայ ժողովուրդին, հիմա պիտի առաջնորդէք զայն, ծառայելով հայ ժողովուրդին: Բարով, հարգար բարով երթաք, բայց մի՛ մոռնաք որ ձեր աշխատանքը վերջացած չէ: Այս քանի օրս ազատութիւն, հաւասարութիւն բառերը շատ լսեցինք: Այդ նորութիւն մը չէր ձեզի համար, դուք միշտ ալ ազատ եղաք, շնորհիւ ձեր քաջութեան ու զէնքերուն: Իրական ազատութիւնն ու հաւասարութիւնը խօսքով չեն գար եւ ոչ ալ Սուլթանի Փէրմանով: Ազատ եւ հաւասար զգալու համար, հայ ժողովուրդն ալ պէտք է միեւնոյն պայմաններուն մէջ գըտնուի, ինչ որ թուրքն ու քիւրտը: Միտքս անշուշտ հասկըցաք: Քանի մեր դրացի ժողովուրդները զինուած են, հայն ալ պէտք է զինուի: Կարիք կա՞յ ձեզի խօսելու զէնքի անհրաժեշտութեան մասին, անշուշտ ոչ, զէնքի արժէքը դուք ամենէն աւելի լաւ գիտէք: Ահա ձեր մեծ գործը: Զինել հայ ժողովուրդը: Ականջներուդ թող ոսկիէ օղ լինին խօսքերս: Զինեցէք հայ ժողովուրդը: Երթաք բարով»:

Գարեգինն ալ մէկ երկու խօսքով թելադրեց որ հայդուկները իրենց գիւղերը վերադառնալով՝ դպրոցական

գործին դարկ տան : Կարգը եկաւ , որ հայդուկներէն մէկն ալ արտայայտուի : Հայդուկները չորս կողմէն հրելով գրեթէ բռնութեամբ ոտքի հանեցին Առիւծ Գեւօն , որ քիչ մը շփոթած , փափախը ձեռքին մէջ դարձնելով սկսաւ խօսիլ .

«Պիժա ջան , մեր աղիդ ախպեր պարոն Լեւոն : Որ Յիսուս Բրիստոս Սինա լեռան վրայ երեցաւ սուրբ առաքեալներուն , ըսաւ անոնց , «Գնացէք քարոզեցէք կըռապաշտներուն , անոնք սուրբ հաւատքի բերէք» : Աղբակեցի սուրբ Բարթողէմոսն ու Մահուեցի սուրբ Թադէոս Առաքեալները ան ճամբեց Հայաստան , մեռնիմ անոնց զօրութեանը , որ քանց ուրիշ աղբեր , առաջ հայ աղբը սուրբ հաւատք ընդունէ : Հիմակ ալ դուք , մեր մեծ ախպերները , մեզի կը ճամբէք մեր տները՝ սուրբ յեղատիտութիւն քարոզելու : Մեր գլուխը շատոնց աղբի տափթարի մէջ գրուկ ի : Վեր մեր աչաց , վեր մեր գլխին . հաճեր հրաման , հա սուրբ կաթողիկոսի կոնդակ : Էսա Սահմանադրութիւն կը՝սեն՝ լաւ բան է : Որ մեր մեծերը կ'ըսեն լաւ է , լաւ պիտի եղնի , մեզի խօսալ չի վայլեր : Համա զէնքն էլ լաւ է : Չորս կապ փամփուշտ , Մօսինի հրացան , ոնց որ Սահմանադրութիւն : Ես ու իմ Աստուած , որ մեր զեղացիք չզինուին... հօ հօ՛յ , էսա փափախ տեղ լաչակ կը թալկեմ գլխուս : Հիմա աղիդ ախպերտիք , ձեր հողուն դուրպան եղնիմ ես , մեր մշտսին կերած աղ ու հաց... էսքան տարուց վերջ , ոնց որ որբի պէս... Մենք ալ սխալախան ենք... պակասութիւն ըրած ենք... աղիդ ախպերներ , ներեցէ՛ք... աւել պակաս հելալ ըրէք» . . .

Առիւծ Գեւօն , առանց խօսքը վերջացնելու , յանկարծ նստաւ ու գլուխը յենած սեղանին՝ երեխայի նման հոնքուր հոնքուր արտասուել սկսաւ :

Առիւծ Գեւօն ու Թոփալ Սատանան զնացին Փանոսի հետ , այդ գիշեր անոր տունը մնալու համար : Առիւծ Գե-

ւօն ծանր տրամադրութեամբ մտաւ անկողին : Էդ քանի օր էր , գիշերները հանգիստ չէր կրնար քնել : Տարիներ շարունակ փամփուշտակալները մէջքին , հանդիպած տեղը պակեկելու վարժուած , փափուկ անկողնի մէջ բոլորովին անհանգիստ կը դաւար : Մինչեւ կէս գիշեր աջէն ձախ դառնալով , երբ տեսաւ որ չպիտի կրնայ քնել , ելաւ , ճրագը վառեց , ստիպեց խեղճ Թոփալ Սատանան որ ելլէ հագնուի ու մէկ երկու ձեռք թիրիֆ խաղայ հետը :

— Ախպեր , ձեռք քնեմ , ի՞նչ թիրիֆ խաղալու ժամանակն է ,— յօրանջելով պատասխանեց Թոփալը :

— Ծօ , անասուած , ել կ'ըսեմ ,— պնդեց Առիւծ Գեւօն ,— քունը աչքէս փախաւ . . .

— Ախպեր , ե՞րբ պիտի երթաս Ալաշկերտ , քու գիւղը :

— Հողեհանգիստի մէկալ օրը : Ինչո՞ւ որ . . .

— Մէկ երթայիր ու ձեռքէդ ազատէի . . . մէկ ալ երեսդ չտեսնայի . . .

— Ծօ , ես քու երեսդ տեսնողին . . . շուն շան որդի , հազար տարի անցնի , երեսիդ նայողը ո՛վ ,— բարկացաւ Առիւծ Գեւօն :

Բայց եւ այնպէս , մինչեւ լոյս նստած՝ թիրիֆ խաղացին :

Առիւծ Գեւօն ու Թոփալ Սատանան , ինչպէս նախապէս ըսի , բազմութեան հետ ծանր ծանր քալելով՝ հասան Սաչ Փողան : Հողեհանգիստէն վերադարձող ժողովուրդը հետզհետէ ցրուեցաւ զանազան ուղղութիւններով : Առջի գիշերուան բաժանման ճաշը , այդ առաւօտեան հողեհանգիստն ու Վահէի գերեզմանը սաստիկ յուզած էին Առիւծ Գեւօն , տրամադրութիւնը տեղը չէր :

— Գիտե՞ս ինչ կայ , Թոփալ ,— յանկարծ փողոցին մէջ կենալով ըսաւ ընկերոջը .— երթանք Մուարիֆի կաղինոն . . .

— Արդէն օրերդ հոն կ'անցընես, — փնթփնթաց թոփալ Սատանան:

— Ծօ, ձէնդ... նորէն տուտացիր... որ կ'ըսեմ երթանք, ալ բերանդ մի' բանար... տէ' քալէ տեսնեմ, մենք ալ մարդ ենք, մեղի ալ ցաւ ու դարտ կայ, ճիկէրսոնց որ մազ մազ կրակի վրայ...

Նալըանտեանց փողոցով ծռեցան մեր բարեկամները ու Աղըսաձորէն բարձրանալով հասան Ամերիկեան Շըրջանակի վառիվայրի ոտքը գտնուող Մուարիֆ Յովհաննէսի կազինոն: Մուարիֆ Յովհաննէսը հին յեղափոխական մ'էր, դաւադրական աշխատանքի իսկական տիպ մը: Մուարիֆը, յեղափոխականներու համար աչքի դեր կը կատարէր «դրսի» աշխարհին մէջ: Մուարիֆը կազինո կը բանեցնէր: Մտնող ելլողը շատ: Ամէն դասի մարդ ծարաւը անցընելու համար քանի մը վայրկեանով ներս կը մտնար օղի մը կամ դաւաթ մը դինի նետելու համար: Թուրք պաշտօնեաներն ու փոլիսներն ալ հոն կուգային: Տեսակ մը համայնական կեդրոն կը համարուէր այդ կազինոն: Փոլիսներէն շատեր մօտ բարեկամներ էին Մուարիֆի: Գիտէր զանոնք խօսեցնելու կերպը. փառք Աստուծոյ, օղին առատ էր: Լսածները անմիջապէս կը հաղորդէր յեղափոխական ղեկավարներուն: Ատկէ զատ, այդ կազինոն հեռաւոր դաւառներու անմիջական կեդրոնն էր: Գիւղերէն ճամբուած սուրհանդակներ հոն կուգային, նամակաբեր մը Յովհաննէսին կը յանձնէր նամակը ղեկավարներուն հասցնելու համար: Մէկ խօսքով, Մուարիֆ Յովհաննէսը դաւառներու եւ ղեկավարներու միջեւ գտնուող առաջին հանգրուանն էր:

Երբ Առիւծ Գեօն ու Թոփալ Սատանան կազինոյէն ներս մտան, հաղիւ թէ քանի մը մարդիկ կային սեղաններու շուրջ: Անկիւն մը նստած էր Ուրանցի Յակոբը:

— Յակոբ, դուն հոս ի՞նչ բան ունիս, — հին զինակից ընկերը տեսնելով ուրախացած մօտեցաւ Առիւծ Գե-

օն, — ախպեր, հէչ մէջտեղ չկաս. երէկ դիշեր տղաքը կը հարցնէին: Ինչու չեկար, բոլորս մէկտեղուած էինք... պարոն Լեւոնը, Պիծան, Գէորգը, մեր տղաքը...

— Ձէի կրնար: Երէկ օրիորդը հեռագիր ստացաւ Թիֆլիսէն, մայրը հիւանդ է... կապկպել սկսաւ... տուներ մնացի որ օգնեմ...

— Ծիկէրով աղջիկ է, մեղմ է եղեր, բայց բոլորի աչքը քոսցուցեր՝ մարդ խապար չէ ունեցեր... վալլահ, ղոչախ աղջիկ է... Յովհաննէս, մէկ սա կողմ եկուր...

Փոքրահասակ, միջին տարիքի նիհարակազմ մարդ մ'էր Մուարիֆի Յովհաննէսը: Երկրով զարդարուած սեղանի ետեւէն դուրս դալով՝ մօտեցաւ մեր երեք բարեկամներուն:

— Հազար բարով, տղաք: Գէֆդ, հալդ, Առիւծ Գեօ:

— Ալ ինչ քէֆ հա՞լ մնայ, առտուընէ մինչեւ հիմա դեռ ծոմ եմ... տէ', ուտելու բան մը բեր... Առաջ մէկ մէկ հատ էն լաւ օղիէն... մեծ բաժակներով եղնի... է՛ Յակոբ, էրնէ՛կ էն օրերուն.

— Հա՛, Գեօ, էրնէ՛կ: Անցա՞ն էն լաւ օրերը. հիմա ամէն մէկս չոր հացի ետեւէն...

— Ծա՛տ, շատ բազմութիւն կար... Հա, ծօ թոփալ, էն թուրք զապիթը ի՞նչ ըսաւ, տնաչէնը շատ գրաբար կը ջարդէր... Հէլէ մէկ մէկ հատ նետենք: Աստուած բանն յաջողէ մեր Յովհաննէսին, լաւ օղի է, մօր հալալ կաթի պէս վար կ'երթայ... Տղաք, անցած օրերուն...

Երեք բաժակները չիկալով իրարու զարնուեցան:

— Հիմա որ էս էսպէս եղաւ, — շարունակեց Առիւծ Գեօն՝ միաժամանակ նշան ընելով Յովհաննէսին, որ բաժակները կրկին լեցնէ. — ախպօրս ըսեմ, մենք վաղը ճամբայ կ'ելլենք Ալաշկերտ... Ախպերս մեռեր է, մեր հողերուն մէկ մասը դրկից քրտերը զաֆթեր են... Հէ՛յ, մէկ մը ոտքս սեղ կոխեմ, աչքերը պիտի հանեմ... Ծօ,

նորէն ի՞նչ կայ, — բարկութեամբ դարձաւ Թովալին, — դէմքը որպէս թթու դրած վարունդ... Ա՛խ, մէկ ազատուէի էտ թթուած դէմքդ տեսնելէ...

— Ի՛նչքա տեղը չեղեալը, — մեղմութեամբ նկատեց Ուրանցցի Յակոբը, — դարա մի ընէր, Թովալ, աշխարհը լէն է, մարդ փորու հաց մը ամէն տեղ ալ կը ճարէ: Ո՞ր կողմերը պիտի երթաս...

— Է՛հ, Յակոբ, ես ի՞նչ պիտեմ, — մեղմօրէն խօսեցաւ Թովալ Սատանան, — տուն տեղ չունիմ. մինակ ախպեր մ'ունիմ Սալմաստի կողմերը: Ես տասնհինգ տարի կայ անկէ ալ խաղար մը չունիմ. ո՞ղջ է, մեռած է, ո՞վ պիտէ... Մեր գեղը ԳՅ-ի կոտորածին քրտերը ջարդեցին: Ազատուողներս Աղբակէն Սալմաստ փախանք... Շատ ալ որ Մահամադրութիւն է... Ըսենք՝ հողերն ալ ետ տուն, ես չոր գլխով գեղ երթամ ի՞նչ ընելու...

— Հապա ի՞նչ կը մտածես, — կարեկցաբար հարցուց Յակոբը:

— Է՛հ, ախպերս, էս կողմերը կը մնամ: Բան չեղաւ, մէկու մը մօտ մշակ կը մտնամ ու...

Թովալ Սատանան չկրցաւ խօսքը վերջացնել: Առիւծ Գեւոյի թաթը բարձրացաւ ու յանկարծ թմբալով Թովալի գլխուն իջաւ՝ դժբախտ փախախտ մինչեւ քիթը իջեցընելով:

— Հա՛ հա՛ հա՛, Յակոբ, էս սարսախի խելքին նայէ, մէկու մը քով մշակ կը մտնայ եղեր: Հա՞, ես քու էն, էն, էն... Ծօ, աւանակ, Առիւծ Գեւօն մեռա՞ւ... Սուրբ եղբայրութիւն աշխարհէն վերցա՞ւ... Ծօ, որ կ'ըսեմ վաղը ճամբայ կ'ելլենք, եանի ես միս մինա՞կ պիտի երթամ... Առիւծ Գեւօն ո՛ւր, Թովալ Սատանան ալ հոն... Աստուած պելատ տայ, քէֆս խարապ ըրիր... Տասը տարիէ ի վեր վղիս մեղքը դարձեր ես... կիւլլէ մ'ալ չհանդիպեցաւ քեզի, որ ազատէի ձեռքէդ... Մէկու մը մօտ մշակ պիտի մտնայ եղեր... Յակոբ, մէկ էսոր խօսքին

մտիկ ըրէ... Ծօ, արար աշխարհը վրա՞ս պիտի խնդարնես... Սո՛ւս, բերանդ չբանաս... Մենք ալ հայ քրիստոնեայ ենք, փառք Աստուծու պատիւ ունինք, նամուս ունինք... Մէկու մը քով մշակ կը մտնաս, ոնց չէ՛, ծօ, իմ պատիւս ցեխի մէ՞ջ պիտի նետես: Հող շատ ունիմ, տուն ալ կայ, տեղ ալ կայ... հալալ աղբօր պէս փայ բաժին կ'ընենք... Ծօ, սուս կ'ըսեմ. ա՛լ բերանդ չբանաս, վալլահ ձեռքէս դադէպ մը կ'ելլէ: Հէ՛յ, հէ՛յ, Առիւծ Գեւօն մոռնա՛յ Թովալ Սատանան... Ես քու հոգուն մատաղ, աղիղ ախպերս, Աստուած դապուլ կ'ընէ՞, որ Առիւծ Գեւօն տուն տեղ ունենայ, Թովալը՝ վիղը ծըրած ուրիշի դրանը աշխատի:

Առիւծ Գեւօն սաստիկ յուզուած, երկրորդ բռունցք մ'ալ իջեցուց Թովալի դիւտն, կարմիր թաշկինակը աչքերուն տարաւ արցունքը սրբեց ու դէպի Յովհաննէսը դառնալով՝ պոռաց.

— Ծօ, հազար անգամ ըսի որ շիշ մը օղի բերես, էս բաժակներով մա՞րդ կ'ուղես խաբել... Ես քու էն, էն...

Բաղմաթիւ օղիի բաժակներ դատարկելէ վերջ, երեք ընկերները սկսան ճաշել, մինչ կաղինօն հետզհետէ կը լեցուէր բաղմութեամբ: Գրեթէ ամէնքը արդէն կը ճանչնային Առիւծ Գեւօն: Զանազան սեղաններէ խմիչք կ'ուղարկէին պատուաւոր հիւրին: Առիւծ Գեւոյի քէֆին քէֆ չէր հասներ: Ա՛յ թէ կարգին հասարակութիւն էր, ինչպէ՞ս ալ գիտէին յարգել արժանաւոր մարդը: Անընդհատ կը խօսէր նիւթէ նիւթ թոնելով առանց ժամանակ տալու, որ ընկերները բերան բանան: Խորովածի պատառ բերանը տարած ժամանակ, յանկարծ ձեռքը կէս ճամբան մնաց, ուշադրութեամբ փողոցէն անցնողներուն նայելով. ու մէկ ալ ուրախացած՝ Թովալ Սատանան մշտեց.

— Ծօ, մեր Սաղօն ու Միօն փողոցէն անցան, շուտ ետեւուն հասիր...

— Էդ ո՞ր Սաղօն է, — հարցուց Ուրանցցի Յակոբը, մինչ թոփալ Սատանան կաղինոյէն դուրս թռաւ:

— Գործոթցի դինուոր մը... Հա՛, էն որ Մկոյի հետ խապար բերաւ Մուղսիի դաւաճանութեան մասին... Ասլան կարիճ մը դարձաւ ատ տղան, Մկօն ալ լաւն է...

— Մուղսին Սաղոյի հէ՞րն էր...

— Հա՛, դաւաճանը: Հը՞, Յակոբ, էն ի՞նչ կռիւ եղաւ... Երեք օր... Վախ, ինչ ասլան տղաք կորսնցուցինք Ղլլճայի սարին վրայ... Վա՛խ, իմ Համբօն, — Առիւծ Գեւոյի ձայնը ակամայ դողաց, — Նիկոլը, քանաքեոցի Յակոբը... Փռոտ Վարժապետը... Աստուած հոգինին լուսաւորեսցէ...

— Ամէն: Լուսերու մէջ պառկին: Զօռ կռիւ էր, եթէ պարոն Լեւոնը ժամանակին չհասնէր, մեր քանն ալ պօշ էր...

— Իրաւ է, հա՛... Երեք օր անօթի էինք... Այն, մեր իկիտ տղաքը հիմա ողջ էղնէին... էս սեղանի շուրջը բոլորուէինք բոլորս: Էօ՛Փ, ախպեր, աշխարհի տակը պօշ է, պօշ, ոչ ինծի պիտի մնայ, ոչ քեզի... Վա՛յ, բարով, հազար բարով Սաղօ ջան, քէ՛Փդ Մկօ: Ծօ, նստէք տեսնեմ ի՞նչ հալի էք... Ի՞նչ կայ չկայ...

— Սաղութիւն, մեծ ախպեր, — բարեկերով Առիւծ Գեւոյի կուշտը նստաւ Սաղօն, — խապարը քեզմէ: Էսպէս աւարա Այդեստանի փողանները ման կուզայինք Մկոյի հետ:

— Գեղ ե՞րբ պիտի երթաս, — հարցուց Ուրանցցի Յակոբը, — քաղաքը մնալէն ի՞նչ կ'ելլէ...

Սաղօն չպատասխանեց, դլուխը կախած՝ հակառակ կողմը նայեցաւ:

— Մեծ ախպեր, — մէջ ինկաւ Մկօն, — լաւ կ'ըսէք, դեղ երթանք, բայց...

— Ծօ՛, ի՞նչ բայց, կ'ելնէք շիտակ գեղ կ'երթաք. աւարա աւարա ման դալէն օդուտ մը չկայ, — նստած

տեղը երերալով խօսեցաւ Առիւծ Գեւօն:

— Հա, շիտակ կ'ըսես, — դունչը քորելով պատասխանեց Մկօն, — դեղ երթալու է, բայց...

— Ծօ վա՛յ, ձեր տունը չքանդուի, հասկցայ լեզուիդ տակինը, ծօ, ինծի Առիւծ Գեւօ կ'ըսես, մէկ աչքով մի նայիք. հիմա մտիկ ըրէք: Վաղը ես ու թոփալը ճամբայ պիտի ելլենք, արդէն Գործոթի մօտով պիտի անցնէինք, դուք ալ մեզի հետ կուգաք... Կ'երթանք դեղ, սուրբ յեղափոխութիւնը վկայ, ես իմ ձեռքով դաւաճանի վիզը կը կտրեմ, ողջ ողջ կաշին կը քերթեմ... Սուս, խօսք չ'ուզեր, մազս մօրուքս յեղափոխութեան ճամբին ճերմկացցի, համ ալ ձեր խմբապետն եմ, պղտիկն որ մեծի խօսքը չպահէ, յեղափոխութիւնը կը քանդուի, ազատութեան գործ պօշ կ'եղնի... Առաջ Աստուած, վաղը առտու, արեւը չելած, ճամբայ կ'ելլենք... Քէ՛Փերնիդ խարապ մի՛ ընէք. ծօ՛, ես ձեզի հետ կուգամ որ կ'ըսեմ, կուգամ, փափախնիս ծռած, չորսով ճամբայ կ'ելլենք: Մէկ սա բաժակները վերցուցէք տեսնեմ... առիւծի կաթ է, առիւծի... Զեր կենացը:

Երկար ժամանակ հինգ ընկերները սեղանի շուրջը բոլորուած՝ քէ՛Փը շարունակեցին: Գեւօն ու թոփալը պէտք է երթային Փանոսենց տունը երեկոյեան ընթրիքի, բայց Առիւծ Գեւօն կատարը տաքցուցած՝ խօսք մտիկ ընելու վիճակի մէջ չէր գտնուեր:

— Ծօ, մէկ ալ ո՞վ գիտէ, իրարու հանդիպինք թէ չէ... մէկ մը սա բաժակները լեցուցէք, ես ձեր հոգուն դուրպան:

Երեկոյեան կողմն էր, երբ պատանի մը կաղինոյէն ներս մտնելով քաներ մը ըսաւ Մուարիֆի ականջին, որ անմիջապէս տղուն հետ փողոց ելաւ: Ծառի մը բունին կրթնած՝ ծերունի քահանայ մը կեցած էր, տարէց մարդու մը հետ միասին:

— Հա՛, տէր հայր, ի՞նչ կ'ուզես...

— Որդի, դործոթցի ենք, սաղ օրը քաղաքը տակնու-
վրայ ըրինք: Ըսինք՝ մէկ ալ հոս հարցնենք, դուն կ'ի-
մանաս, մեր Սաղօն, Մկօն նե՞րս են... կամ ո՞ր տեղ
փնտռենք...

— Ձեմ դիտեր: Փնտռածներդ ի՞նչ մարդիկ են...

— Աղբայրին մարդիկ, պարոն Լեւոնի կուշտը կը մը-
նային:

— Որ այդպէս է, քիչ մը սպասեցէք, լուր մը կը բե-
րեմ,— ըսաւ Մուարիֆի Յովհաննէսը ու ներս մտնելով՝
մօտեցաւ Առիւծ Գեւոյին:

— Մեծ ախպեր, դործոթցի Սաղօն կը ճանչնա՞ս,
դուքսը հարցնող կայ...

— Կը ճանչնա՞մ մի... ծօ, մէրդ չմեռնի, էս կտրի-
ճը որ կայ, Սաղօն է... ի՞նչ կայ որ...

Յովհաննէսը առանց պատասխանելու հեռացաւ ու
կազինոյի դռնէն դուրս ծռած՝ պոռաց.

— Տէր հայր, տէր հայր, հոս է:

Մեր բարեկամներու աչքերը դէպի դուռը ուղղուե-
ցան: Յանկարծ Սաղօն նստած տեղէն վեր թռաւ, բնադ-
դօրէն ուզեց առաջ վազել ու հաղիւ ինքզինք պահելով՝
կեցած տեղը կանգնած մնաց, դարմանքէն աչքերը լայն
լայն բացած: Տղուն երեսի դոյնը թռաւ: Գռնէն ներս
մտնողներէն մէկը մեծ հայրն էր, Գործոթի ծերունի քա-
հանան, իսկ անոր ետեւէն եկողը իր հայրը՝ Մուղսին:
Մկօն ալ կամաց մը ոտքի ելաւ:

Պղծալի էր ամբարտաւան Մուղսիի տեսքը: Այն
մարդը, որու առջեւ Գործոթի մէջ ոչ ոք կը յանդգնէր
դուրսը բարձր պահել, քոլոզը ձեռքը բռնած՝ մեղաւորի
նման կանգնեցաւ հարադատ դուրս առջին, աչքերը ար-
ցունքով լեցուն: Չհամարձակելով աւելի մօտենալ, ար-
ցունքէն խեղդուած ձայնով մը հաղիւ կրցաւ ըսել.

— Սաղօ՛, արեւուտ մեռնեմ, Սաղօ՛ ջան, էս քեզի
մեղայ, էս քեզի մեղայ...

Սաղօն վայրկեան մը երկուք փորձեց ինքզինքը պա-
հել, բայց հօր խեղճացած վիճակը տեսնելով՝ բոլորովին
յուզուած նետուեցաւ հօր թեւերուն մէջ: Մկօն, փափա-
խը վար առած, մօտեցաւ տէր հօր ձեռքը համբուրելու:

Ինչպէս որ կարգն էր, Առիւծ Գեւօն, Յակոբը, Թո-
փալ Սատանան ոտքի ելան եւ դուրսինն բաց՝ դառամած
քահանայի աջն առին:

— Ապրիք, շատ ապրիք, զաւակներս... էս ամբողջ
օրը քաղաքը տակնուվրայ ըրինք, ոչ Սաղօ, ոչ Մկօ...
Մեծերուն մօտ ալ իղանք, պարոն Լեւոնն ալ տեսանք...
Աստուած բանը յաջողէ պարոն Լեւոնին, թունդ մարդ
է, ոնց որ երկնքի կայծակ: Բերանը բացաւ՝ ամմա զօռ
տուաւ. Մուղսին ոնց որ չխօսկան հարս, լեզուն քիմքին
կպաւ: Մէջ ինկայ. «Պարոն Լեւոն», ըսի, «էս անգամին
Մուղսիի մեղքը Սաղոյի սիրուն համար պաշխէ, վզին
ծանր բեռ մը դիր, թող մեղքը քաւէ», Մուղսին ալ մե-
ղայի եկաւ, պարոն Լեւոնի ձեռքն ու ոտքը ինկաւ, «էս
ըրի, դուն մի ըներ» ըսաւ: Իր քսակէն դեղի դպրոցը պի-
տի շինէ Մուղսին, ամէն տարի ալ վարժապետին ծախ-
սը պիտի հոգայ: Աստուած երկար կեանք պարգեւէ պա-
րոն Լեւոնին, ազգութիւն պինդ պահէ... անցուկը թող
մոռցուի... Ձեզի ալ երկար կեանք տայ Աստուած, ա-
զատութեան, սէր-միութեան մէջ պահէ բոլորս:

Թէեւ Առիւծ Գեւօն դաւաճանին հետ վարուելու ձե-
ւը դիտէր, բայց երբ բարի քահանան ըսաւ թէ պարոն
Լեւոնն ալ ներած է, այլեւս անցուկը մոռցուկ պիտի հա-
մարել, վեհանձնաբար քովը նստեցուց զայն, մինչ քա-
հանան Մկոյի հետ ճամբու դրին դէպի Մղբիա դիւղը,
որ Այդեստանին կպած է:

Կազինոյի մէջ դրեթէ մարդ չէր մնացած մեր բարե-

կամներէն զատ, երբ Առիւծ Գեւօն, եղածը բաւ համարելով՝ օրօրուելով տեղէն բարձրացաւ: Բոլորովին մըթնած էր: Ճամբու վրայ Ուրանցցի Յակոբի հետ համբուրուելէ վերջ, Առիւծ Գեւօն, Մազօն, Մուղսին ու Թոփալ Սատանան Մղգիայի ճամբան բռնեցին:

Առտու շատ կանուխ ճամբայ ելան տէր հայրն ու Առիւծ Գեւօն ձիււոր, իսկ մնացած չորսը հետեւակ:

Այդ գիշեր Խարակոնիս մնացին: Ամբողջ գիւղացիք հաւաքուեցան եկեղեցիի կուշտը գերեզմանի մը մօտ, որ ըստ աւանդութեան՝ Նահապետ Քուչակի գերեզմանն է: Մեր Առիւծ Գեւօն օրհնուած բերանը բացած՝ ժամերով խօսեցաւ:

Յաջորդ օրը, կէս օրէն վերջ, հեռուէն երեւցաւ Գործոթը:

Ամբողջ գիւղը ոտքի վրայ էր: Գործադիրի նախագահ Աւօն, Խիւս Օվաննէսը, Մակարը առանձին հպարտութեամբ կարգադրութիւններ կ'ընէին: Քիչ բան չէր. Գործադիրի անդամներէն, Մազօն տուն կուգար, հուշակաւոր հայդուկ մը դարձած: Մազօն ու Մկօն այլեւս Գործոթի փառքն էին, գեղի հպարտութիւնը:

Տղամարդիկ գիւղի եկեղեցիի մօտ խմբուած կը սպասէին, հայեացքները ճամբու երկարութեան վրայ կորած: Մուղսիենց տունը հարձնետան մը կերպարանքը ստացեր էր, մտնող ելնողը անպակաս: Դուռ դրկից կիներ աչքալոյս տալու կուգային Մազոյի մօրը:

Մէկ էլ հեռուէն տեսնուեցան սպասուած ճամբորդները: Գործադիրի նախագահ Աւօն առաջ ինկաւ Մակարի ու Խիւս Օվաննէսի հետ: Եկեղեցիի կողմը հաւաքուած քաղմութիւնը հետեւեցաւ անոնց: Տմբլա տմբա, տմբլա տմբա, դաւուլ զուռնայի ձայնը աշխարհ բռնեց: Գիւղի անվարտի, ոտաբոպիկ երեխաները, արարական

նժոյգներու նման, սրարչաւ վազեցին դէպի եկողները: Գիւղէն բաւական հեռու, քաղաքէն եկողներն ու դիմաւորողները հանդիպեցան իրարու:

— Ծօ, Մազօ', ծօ, Մկօ', — ոգեւոր բացազանչութիւններով իրարու խառնուեցան:

Դաւուլ զուռնան առաջ ինկաւ, շրջապատուած երեսներու բաղմութեամբ: Մնացածները երգելով, հրացան արձակելով գիւղ մտան: Այդ գիշեր, Գործոթի գըրեթէ ամբողջ ընակչութիւնը հաւաքուած էր Մուղսիի բակը, շրջապատած գետնի վրայ փռուած սեղանը: Մէկ Գործոթ, մէկ Մուղսի, խօս հանաք մասխարհութիւն չէր: Գիւղացիք չէին յիշեր այդպիսի առատ սեղան մը: Օղին, ոնց որ գիւղի չռացող աղբիւրը: Մուղսին ի զուր տեղը երիտասարդութիւնը օտար երկիր չէր անցուցած, գիտէր աղայավայել հիւրասիրել:

Սեղանի վերի գլուխը, պատուոյ տեղը, բաղմած էր Առիւծ Գեւօն: Երբ Առիւծ Գեւօնի նման հերոս մը ներկայ էր, ինչո՞ւ զարմանալ որ Մազօն, Մկօն, Թոփալ Սատանան երկրորդական կարգի վրայ իյնային: Կարծեմ աւելորդ պիտի լինէր ըսել, թէ մեր բարեկամը երկարաչունջ ճառ մը խօսեցաւ: Նշանաւոր ճառ մ'էր այդ: Լըսողները շունչերնին բռնած, ամբողջովին լսողութիւն կտրած՝ Առիւծ Գեւօնի շրթունքներէն կախուած մնացեր էին: Բա՛հ, բա՛հ, բա՛հ, էդպէս էլ խօսող, ոնց որ դարնան որոտմունք լինէր, բերան չէր, աւետարան էր, աւետարան:

Առիւծ Գեւօն, փափախը երբեմն աջ, երբեմն ձախ կը ծռէր, շանթահարող աչքերը կ'ոլորէր շուրջիններուն վրայ ու առիւծի մռնչիւնի նման կը գոռար:

— Հը', Գործոթի ժողովուրդ, էդ ո՞նց Սահմանադրութիւնը եկաւ, էդ ո՞նց ազգութիւն ոտքի կեցաւ: Գործոթի, Աղլճայի, Քարադաշտի, Ծիծանցի կռիւնք . . . հայհո՞ւյ, էդա կռիւնքու հաւար Ստամբօլ հասաւ,

Սուլթանի դահ տեղէն երեբաց, ոնց որ երկրաշարժ եղ-
նէր: Սուլթան կանչեց զմեծ վէզիրն. ծօ, վէզիր, ըսաւ,
էսա յեղափոխականներ իմ գլուխ պիտի ուտեն. Սահմա-
նադրութիւն թող եղնի, պէլքի պարիչենք: Հըպը՛, զօրը
գիտէ: Սահմանադրութիւն եկաւ, բարով եկաւ, հաղար
բարով, բայց քիւրտը, բէկը, զաբթիան, ծօ իսոնք կան
ու կը մնան, ոնց որ առաջ: Ասելիքս էն է, որ ազգութեան
գործ կայ: Հայու լոյս հաւատք, մեռնիմ էնոր զօրու-
թեան, ոնց որ Մասիսի սար, հայ ժողովուրդը, ոնց որ
Վանայ ծովու աւազ, մարդ կարա՞յ համբել, դու ըսէ
քառսուն՝ ես ըսեմ յիսուն միլիոն... Ծօ, դուն, ծօ դուն,
հէչ մէկերնիդ կրնա՞յ ախոռի ցախաւել կոտրել, հէչ ե-
ղա՞ծ բան է... մարդու զօրութիւն փէյլիվանի զօրու-
թիւն էլ եղնի՞ չի կարայ կոտրել... Համա, մէկ մէջքի
կապ կտրեցէք, ծօ, վալլահ, էսա երեխան լէ ծախերը
մէկ մէկ կը ջարդէ: Եանի խօսքս էն է, Սահմանադրու-
թիւն եկաւ, վեր մեր աչաց, վեր մեր գլխին, բայց մեր
ազգ, մեր ժողովուրդ քամակ քամակի պիտի տայ, ոնց
որ գութան քաշող եղներ... «Հայոց ազգին սէր-միու-
թիւն»... Հա, վալլահ, էդ միութիւն քանց մեղրը անուշ
բան է... Վասակութիւն քանդեց հայու տուն, որ վա-
սակութիւն չեղնէ՞ր, հայու թագաւորութիւն մինչեւ
Պաղտատ, մինչեւ Ստամբօլ կը հասնէր... Նորէն կ'եղնի,
ազգն անուշ մնայ, ոնց որ Սուրբն Գրիգորիս Լուսաւո-
րիչն մեր, Սուրբ Երուսաղէմայ բերաւ հայու լոյս հա-
ւատք, էնպէս էլ սուրբ յեղափոխութիւն հայու ազատու-
թիւն բերաւ»...

Առիւծ Գեւօն, երկար, երկար խօսեցաւ զէնքի մա-
սին, սուրբ Մոսին հրացանի մասին, պարտադրելով որ
դիւղացիք զինուին, հրացան առնեն, կազմակերպուին.

«էսա Մազօն, էսա Մկօն, — խօսքը վերջացուց Առիւծ
Գեւօն՝ մատնանչելով երկու երիտասարդները. — էսոնց
խօսք, ոնց որ կաթողիկոսի խօսք. էն որ էսոնց խօսք

չի լսեր, էն որ վասակութիւն կ'անէ, էն սուրբ միւռոն
չունի երեսին, էն հայ չէ, դժոխքի բայ է, հուրն յաւի-
տենից պիտի էրի, մրրկի... Յեղափոխութիւն պիտի
զարկի էդ վասակներ... հէյ հէ՛յ, յեղափոխութիւն քա-
ռասուն աչք ունի. ցերեկն էլ կը տեսնի, գիշերն էլ...
Խօսքս էս է. գործոթցիներ, սէր-միութիւն ըրէք, հրա-
ցան առէք. էն որ հրացան չառներ, էն վասակ է... էն
ազգութեան տաֆթարէն դուրս է»...

Արժանաւլայել մեծարանքներով երկու օր հիւրա-
սիրուելէ վերջ, Առիւծ Գեւօն եւ Թոփալ Սատանան ճամ-
բայ ինկան Ապաղայով դէպի Ալաշկերտ, ուր գործունէ-
ութեան նոր ասպարէզ մը պիտի բացուէր անոնց առաջ:

— Ծօ, Թոփալ, — կ'ըսէր Առիւծ Գեւօն ընկերոջ կո-
ղը մխթելով, — մէկ մը Ալաշկերտ հասնենք, հէ՛յ, ին-
չե՞ր, ինչե՞ր...

ԲԱԺԱՆՈՒՄ

Հոգեհանգիստը աւարտելէն վերջ, Սոնիան Գաղաքամէջ անցաւ, հարկաւոր գնումներ կատարելու համար:

Վանի արծաթեղէնները հոչակուած էին Կովկասի մէջ: Սոնիան խանութէ խանութ անցնելով՝ գնումներ կ'ընէր, իրեններուն ու Արսէնեաններուն նուէր տանելու համար: Հօրը ու Աշոտ Արսէնեանի համար, սափաթով նաշխուած երկու տուփի ու երկու դաւազանի գլուխներ գնեց: Դղալներ, գինիի թասեր, տեղական կանացի զարդեր, մօրը, տիկին Մարիամին ու Եւգինէի համար: Իրական հաճոյք մ'էր խանութէ խանութ թափառիլ Վանի սպաղարին մէջ, ուր ամէն ինչ իրարու խառնուած՝ քնորոշ արեւելեան դիմադիծ տուած էր այդ քիչ մը ծուռ ու մուռ նեղ սիրողներուն:

Սոնիան կանգ առաւ կրպակի մը առջեւ: Առաստաղէն կախուած էին Շատախի նաշխուն շալվարներ, բըրդոտ քաղախիներ՝ ոսկեղօծ թելով բանուած: Խանութպանը ծալապատիկ նստած կակուղ մինտէրի վրայ, մէկ աչքը դոց միւսը բաց, կը մրափէր, երբ կիսովին բաց մնացած աչքը նշմարեց խանութին առջեւ կանգնած Սոնիային: Աշխոյժ ոտքի ցատկեց, սարդի մը ճարպիկութեամբ: Ինչպէ՞ս չէ, ամէն ինչ ունի, օրիորդը աւելի լաւ խանութ մը չէր կրնար ընտրել գնումներ կատարելու համար:

— Այո՛, այո՛, խնդրեմ, երկու ամբողջական ըզգեստ, լաւագոյն նաշխերով, քոլոզ, փուշի, չուստեր, բրդէ ծաղկաւոր գուլպաներ, վերջապէս ամէն ինչ որ հարկաւոր է... Իմ տունս դիտէ՞ք... Շատ լաւ, ուրեմն, ուղարկեցէք:

Հարազատներու համար նուէրներ գնելը առանձին

հոգեկան բաւարարութիւն մ'է ճամբորդի համար: Սոնիան, երկու ժամուան մէջ գնումներ կատարելէ վերջ, ուրախ տրամադրութեամբ կառք մը վերցուց եւ հասաւ Արքեստան, իր տունը:

Առջի գիշեր տան իրեղէններուն մեծ մասը կապեր կապկպեր էր Յակոբի հետ: Հիմա արդէն պատրաստ էր ճամբայ ելլելու: Կը մնար որ Յակոբը կառք մը վարձէր:

Այդպէս յանկարծակի երթալը Սոնիայի համար ալ անակնկալ մը եղաւ: Առջի օր, Թիֆլիսէն հեռագիր մը կը յայտնէր, որ մայրը տկար է, ու պիտի երթայ Գերմանիա՝ բուժուելու համար:

«Գիտես որ, ես շատ զբաղուած եմ գործերով, — հեռագրով կը յայտնէր հայրը, — չեմ կրնար երկար ժամանակով բացակայիլ Թիֆլիսէն, մինչդեռ մայրիկիդ հիւանդութիւնը երկարատեւ բժշկութեան կարօտ է: Քու դալդ անհրաժեշտ է, որպէսզի ընկերակցիս մօրդ: Մայրիկիդ ցանկութիւնն ալ այդ է»:

Սոնիան անմիջապէս հեռագրով պատասխանած էր, թէ երկու երեք օրէն ճամբայ կ'ելլէ: Սոնիան պարտաւոր կը զգար երթալ, եթէ նոյնիսկ լրջօհն չէր մտածած երթալու մասին: Մայրը իր խնամքին պէտք ունէր, այդքանը քաւական էր անմիջապէս որոշում մը տալու համար: Եւ վերջապէս Վան մնալն ալ չափով մը իր իմաստը կորսնցուցած էր:

Շուտով սահմանադրական նոր կարգերը պիտի կերպարանափոխէին Թուրքիան, այդպէս համոզուած էր Սոնիան, յեղափոխութիւնը վերջացած, հիմա արդէն նոր կեանք մը պիտի ստեղծուէր, նոր պահանջներով: Իսկ այդ նոր կեանքի մէջ իր կատարելիք դերը շատ ալ պարզօրէն չէր տեսներ Սոնիան: Մանկաբարձուհիի աշխատանքը հոգեկան բաւարարութիւն մը պատճառելէ շատ հեռու էր: Եթէ Սոնիան մինչեւ այդ ժամանակ այդքանով գոհացեր էր, ատոր պատճառը Վարդանի եղերա-

կան մահուան հետեւանքով իր հոգեկան բեկումն էր եղած, որքան կարելի է շուտով սովորական կեանքէն դուրս նետուելու բուն փափաքը: Բայց այլեւս նախկին պայմանները փոխուած էին, ներքին ոգեւորութեան չէր մղեր զինք, եւ ոչ ալ կը սիրէր իր գործը:

Ասով մէկտեղ, Վանէն բաժնուելու գաղափարը սաստիկ տխրեցուց զինք: Ինչո՞ւ համար: Սոնիան թիկնաթոռի մը վրայ ինկած, կը փորձէր անկեղծօրէն վերլուծել իր տրամութեան պատճառը:

Անշուշտ ամենակարեւոր շարժառիթը ապրած թախիժին, անկեղծօրէն կը հաւատար Սոնիան, Վանի սքանչելի բնութիւնն էր, վայրի գեղեցկութիւն մը, Ասիայի մէջ ինկած երկրորդ Զուիցերիա մը: Զինջ մթնոլորտ, վառ գոյներ, բնութեան զարմանալի պէսպիսութիւն՝ անդնդախոր ձորերու կուշտին բարձրաբերձ սարերը, մարմանդ հովիտներ, մշակուած փոքր դաշտեր, ու ասոնք բոլորը մէկ ահնարկով ընդգրկուող շրջանակի մը մէջ: Այդ չքեղ պատկերին ճիշդ մէջտեղը, կապտաւուն սքանչելի ծովակը, որու մուգ կապոյտին կրնար նախանձիլ ամառուան ջինջ երկինքը: Սոնիայի աչքը երբեք չէր յապեցած դիտելէ՝ այդ համայնապատկերը: Գարնան՝ Վասպուրականը կը պճնուէր դրախտային գեղեցկութեամբ:

Անշուշտ ուրիշ պատճառներ ալ կային իր տխրութեան: Աղքատ ժողովուրդի մը մէջ, Սոնիան հոգեւին նըւիրուած, լաւադոյնը ըրած էր օգտակար լինելու բոլորին: Նոր ծանօթներ, նոր բարեկամներ ստեղծած էր Վանի մէջ, որոնք այնքան կը տարբերէին Թիֆլիսի իր շրջանակի մարդիկներէն: Ասոնք պարզ մարդիկ էին, դիւրահաղորդ, աւելի բնական իրենց գրական եւ բացասական գրծերուն մէջ: Վերջապէս յեղափոխական գաղտնի աշխատանքը, ջղերու տարապայման լարուածութիւնը նոր գլխաշունթիւն մ'էր՝ մինչեւ այդ անծանօթ Սոնիային:

Սոնիան ինքզինքը կ'աշխատէր համոզել, թէ ասոնք էին իր տխրութեան բուն պատճառները: Ասով մէկտեղ, որքան ալ կը ջանար անկեղծ լինել ինքն իրեն հետ, սակայն հոգիի խորքին մէջ կը զգար որ այդ դեռ ամբողջ չէր. իր անկեղծութիւնը ինչ որ կեղծիքով կ'աշխատէր վարագուրել, թէկուզ ինքզինքը խաբելու համար:

Հապա Լեւոնը:

Սոնիան մէկէն ի մէկ նստած տեղէն վեր ցատկեց: Առանց կարդալու, սեղանի վրայ ինկած գիրք մը սկսաւ թղթատել ջղային արագութեամբ: Սրտնեղած ոտքը գետին զարկաւ գիրքը ձեռքէն նետելով, նորէն ինչո՞ւ այդ անունը միտքը ինկաւ: Իր ինչն էր այդ մարդը, ինչ լա՞ւ, որ շուտով ճամբայ կ'ելլէր, ու կ'ազատուէր անոր ներկայութենէն:

Աչքերը առաստաղին, մէկ երկու վայրկեան Սոնիան կեցած տեղը անշարժ մնաց: Ինչպէ՞ս կ'ուզէր որ չմտածէր այդ մասին ու սակայն միշտ նոյն միտքը, թէկուզ տարբեր ձեւով, կը զբաղեցնէր զինք: Արդեօ՞ք Լեւոնէն բաժնըւելու գաղափարը խոշոր բաժին մը չէր ունեցած իր տխրութեան մէջ: Արդեօ՞ք: Սոնիան ետ ու առաջ ման գալ սկսաւ սենեակի երկայնքին:

«Անշուշտ չունի, անշուշտ չունի», հազիւ լսելի ձայնով մը կը մրմնջէր Սոնիան, ինքզինքը համոզելու համար, մինչ շրթները կը շարժէին իրեն այնպէս կը թուէր թէ՝ հոգեկան ձայն մը կը փափսար ահանջին՝ «արդեօ՞ք չունի»:

Վարդանի մահէն վերջ, Սոնիան պինդ մը գոցեր էր սրտի դռները: Այլեւս ոչ մէկ սէր: Զէ՛, ինքը չէր գոցած սրտի դռները, այլ բնականօրէն գոցուեր էին ասոնք, հէքեաթի մը հմայուած դռներուն նման: Վարդանը իր հետ գերեզման տարած էր Սոնիայի սէրը, ու այլեւս յարութիւն չկար իր սրտին համար: Այդ այնքան բնական մտածողութիւն մը կը թուէր Սոնիային, որ այլեւս մըտ-

քէն իսկ չէր անցներ թէ երբ եւ իցէ կրնար երիտասարդ մը սիրել, անոր հետ կապուել:

Ու ահա, Վարդանի մահէն տարիներ յետոյ, Վանի մէջ հանդիպած էր Լեւոնին: Հաշմանդամ, դաժան մարդ մը, որ Լեւոնէն գլորուած ժայռի մը տպաւորութիւնը կը ձգէր տեսնողին վրայ: Ճնշող, կրաւորական մեծութիւն մը, երիտասարդ մը, որ ծերունիի մը սառնութիւնն ունէր, կրանիթէ կերտուած մարդ մը, որ սֆինքսի կերպարանք ունէր, ու խուսափուկ հոգի մը, ո՞վ գիտէ թերեւս զուրկ հոգեկան նուրբ ապրումներէ:

Սոնիան ման դալէ յոգնած, երկնցաւ դիւանի վրայ: Դժգոհ ինքն իրմէ, դժգոհ ամէն բանէ: Ինչո՞ւ համար այս հոգեկան տառապանքը: Եթէ միայն կարողանար յըստակօրէն մտածել, մանրակրկիտ քննութեանէ մը անցնէր իր զգացումները, այն ժամանակ թերեւս կարենար ըսել թէ՛ իրօք ի՞նչ եղած էր Լեւոնը իր համար:

Պարագաներու բերումով Սոնիան Լեւոնի աշխատանքներուն օժանդակած էր, այդ ճիշդ էր, սակայն չէ՞ որ, այդ ոգրծը ազգային ընդհանուր բնոյթ մը ունէր. որ ամէն հայ անխուսափելի պարտականութիւն մը ունէր իր մասնակցութիւնը բերելու: Եւ բնականաբար Սոնիան ալ իր բաժինը պիտի ունենար, նախ՝ իր անձնական բաւարարութեան համար, ու երկրորդ, որովհետեւ Վարդանը այդ գործին համար զոհուեցաւ, ու իր մասնակցութեամբ, հոգեկան կապը անջնջելի կերպով կը շարունակուէր, թէ՛ կուզ Վարդանի ոսկորները իսկ փտած լինէին գերեզմանին մէջ:

Սոնիան ճիգ իսկ չէր ըներ ուրանալու, որ Լեւոնը, որպէս յեղափոխական ղեկավար, ուժեղ տպաւորութիւն ձգած էր իր վրան: Եւ ինչո՞ւ ուրանար: Գաւազանութեանէն վերջ, երբ ամէն յոյս խորտակուած էր, երբ ամէն մարդ իր գլուխը ազատելու մասին կը մտածէր, Լեւոնը սարի նման պինդ կանգնած, կուրծք տուեր էր իրարու յա-

ջորդող դժբախտութիւններուն, հեղեղի առջեւ կեցած, թուփ կանգնած էր անոր ընթացքը շեղելու: Սոնիան զմայլած էր անոր ցոյց տուած երկաթէ կամքին վրայ: Անշուշտ ուժեղ անհատականութիւն մ'էր, բացառիկ դեկավար մը: Բայց այդքան: Եթէ Լեւոնը իր մտքին կը խօսէր, սրտին հետ սակայն ի՞նչ գործ ունէր: Անշուշտ չունէր: Չէ՞ որ, տարիներ առաջ իր սիրտը մեռած էր:

Սոնիան ցատկեց, ոտքի ելաւ ու ջղայնօրէն սենեակին մէջ սկսաւ ման դալ: Յանկարծ կանգ առաւ սենեակի մէջ տեղը ու զգաց որ դէմքը ակամայ կը շառագունէր, յանցանքի մէջ բռնուած երեխայի մը դէմքին նման: Հասկա ինչո՞ւ համար, Լեւոնի քաղաք հասնելու լուրը առնելէն վերջ անմիջապէս Գարեգինեաց տունը գնաց: Ի հարկէ, Գարեգինեաց շուտ շուտ կ'այցելէր Սոնիան, բայց ինչո՞ւ այդ օրը երբ դեռ նոր տեղեկացած էր Լեւոնի քաղաք հասնելու մասին, եւ վերջապէս ինչո՞ւ յուսախաբուած վերադարձեր էր տուն, երբ անոնց տանը չէր գտած Լեւոնը: Ասոնք հարցեր էին, որոնց ճշգրիտ պատասխան մը չէր կրնար տալ Սոնիան: Ասով մէկտեղ, անկախ ազատ աղջիկ մ'էր ինք, եթէ սիրէր Լեւոնը, ի՞նչ պատճառ ունէր թաղցնելու ուրիշներէն, բայց մանաւանդ ինքն իրմէ: Անշուշտ, ոչ մէկ պատճառ: Սոնիան յոգնած մարդու արտայայտութեամբ ձեռքը թափ տուաւ ու անցաւ կողքի սենեակը: Որքա՞ն ատենէ ի վեր այդ հարցը զինքը կը շարժարէր, մտածեց Սոնիան, երբ, Աստուած վկայ, ոչ մէկ հիմք կար շարժարուելու:

Սոնիան աչքէ անցուց կապուած պայուսակները, դրպանէն ցուցակ մը հանելով՝ քննական ակնարկ մը նետեց վրան, այո՛, պէտք եղած գնումները լրիւ կատարած էր: Անշուշտ մեկնելէն առաջ, քանի մը այցելութիւններ պիտի տար: Ռուսաց ջոնսիւլին, որ այնքա՞ն բարեացակամ եղած էր իրեն հանդէպ, իտալական ջոնսիւլին, կուսակալին, քանի մը հայ ընտանիքներու եւ Գարեգինեաց:

Նորէն Գարեգինենց : Սոնիան բռնադրօսիկ ծիծաղով մը խնդալ սկսաւ, թէեւ այդ այցելութեան մէջ ոչինչ կար տարօրինակ : Գարեգինի մայրն ու քոյրը, Վանուհին, այնքան սիրալիր եղած էին իրեն հանդէս : Անոնց հետ միասին շրջակայ վանքերը դացած էր շատ անգամներ, նոյնիսկ անոնց տունը գիշերած, երբ Գարեգինը բանտն էր :

Դեռ ճամբայ ելնելու երկու օր կայ, մտածեց Սոնիան, անշուշտ Գարեգինենց պէտք է երթալ, բայց վերջի օրը, այն ժամանակ, երբ կառք պիտի նստէր ճամբաց ելնելու համար : Իսկ պարոն Լեւոնի՞ն... Է՛հ, որ ան չեկաւ տեսութեան, կարելի է եւ զանց ընել :

Սոնիան որոշեց այդ օրն իսկ մէկ երկու այցելութիւններ տալ, որով վաղուան գործը դիւրացած կը լինէր : Գլխարկը դրաւ, ու ինքն ալ չգիտցաւ, թէ ինչպէ՞ս, ատեն մը քալելէ վերջ մէկ ալ ինքզինքը գտաւ Գարեգինենց տան դրան առջեւ : Պարզ պատահականութիւն մ'էր այդ : Դուռը կիսաբաց գտաւ : Անշուշտ անյարմար էր այլեւս վերադառնալ : Դուռը հրեց ու ներս մտաւ :

— Մայրիկ, որ գիտնաս թէ ո՞վ եկաւ, — ուրախացած պոռաց Վանուհին ու դիմաւորելով գրկեց Սոնիան,

— Բարեւ, Վանուհի, այս երկու օրս այնքա՞ն դբաղուած էի...

— Ափսոս աւելի կանուխ չեկար : Տղաքը բոլորն ալ հոս էին, ճիշդ քիչ առաջ մեկնեցան : Մենք ալ պատրաստութիւն կը տեսնանք, քիչ վերջը պիտի մեկնինք : Այ, ի՞նչ լաւ կը լինի, դու ալ մեզ հետ եկուր, կառքին մէջ ազատ տեղ կայ... Ես, մայրիկը, մէկ ալ Սաթենիկը, մեզի նեղ կ'ընենք, քեզի տեղ, — հնչեղ ծիծաղեցաւ Վանուհին :

— Բայց չար աղջիկ, — նոյնպէս ծիծաղելով ըսաւ Սոնիան, — նախ ըսէ թէ ո՞ւր կ'երթաք, ապա զիս հրաւիրէ :

— Պա՛հ, չե՞ս գիտեր, վաղը կէս օրին Վարագի վան-

քին մէջ պիտի բացուի ուսուցչական համագումարը... Մերոնք խմբով մեկնեցան...

— Այսի՞նքն...

— Բոլորը՝ պարոն Գէորգը, եղբայրս, Պիծան, Ներսէսը, Եկաւեանը, պարոն Լեւոնը, Գաւաչցի եւ Հայոց Զորցի քանի մը երիտասարդներ...

— Ա՛, ուրեմն զնացին Վարագ, — Սոնիայի ձայնին մէջ ահամայ յուսախաբութեան շեշտ մը կար. — իսկ քանի օր պիտի մնան վանքը :

— Երկու կամ երեք օր, բայց մենք շաբաթ մը պիտի մնանք, թերեւս աւելի : Գիտես, եղբայրս բանտի նեղութիւններէն վերջը կազդուրուելու պէտք ունի : Հը՞, Սոնիա, արի միասին երթանք, դուն ալ կը հանդստանաս, միասին Վերին Վարագ կը բարձրանանք : Օ՛, ինչ լաւն է հոն, հայրենիքիդ կարտօն ալ կ'առնես : Գիտե՞ս, Վերին Վարագէն Մասիսի սարը կ'երեւի...

— Բայց չես հարցներ, թէ՛ ես ինչո՞ւ եկած եմ :

— Ինչո՞ւ, — ու Վանուհին ձեռքի գործը ձգած՝ դարձաւ Սոնիային :

— Եկած եմ մնաք բարով ըսելու ձեզի...

— Ի՞նչ...

— Մայրս հիւանդ է, երէկ հեռագիր ստացայ, պէտք է մեկնիմ Կովկաս :

— Օ, Սոնիա՛, շատ կը ցաւիմ, որքան վարժուած է ինք քու ներկայութեանդ, արդէն տնեցի կը համարէինք քեզ... Ե՞րբ միտք ունիս ճամբայ ելնելու :

— Մէկ երկու օրէն :

— Այդքան շուտո՞վ... Ախ ներէ, լեզուիս տուի, ու աթոռ մ'ալ չտուի, որ նստիս : Մայրի՛կ, մայրիկ, վար եկուր, մէկ լսէ թէ՛ Սոնիան ի՞նչ կ'ըսէ :

— Եկայ, եկայ, — սանդուխի վրայ լսուեցաւ Գարեգինի մօր ոտքի ձայնը :

Քիչ անցած Գարեգինի մայրը վերի յարկէն իջնելով՝
բակի սենեակը մտաւ:

— Վայ, Սոնիա, բարով հազար բարով աղջիկս. երկու օր է չերեւցար: Վա՛յ վա՛յ վա՛յ, ի՛նչ խորամանկ աղջիկ մ'ես եղեր, ես ալ միամտաբար կը կարծէի թէ... էսօր սեղանին վրայ տղաքը քու վրադ կը խօսէին... Մի ըսեր, դուն ալ անոնցմէ ես եղեր... Մեղայ, մեղայ, որո՞ւ մտքէն կ'անցնէր... էնպէս ալ անմեղ դէմք մը կը շինէիր...

— Մայրիկ, մէկ հարցում թէ Սոնիան ինչո՞ւ եկած է:

— Քա՛ ինչո՞ւ...

— Կ'ըսէ, որ մէկ երկու օրէն Ռուսաստան պիտի երթայ...

Սոնիան Գարեգինի մօրն ալ երկու խօսքով բացատրեց իր անակնկալ մեկնումի պատճառը:

— Հա՛, ի հարկէ, — համաձայնեցաւ բարի կինը, — որ մայրդ հիւանդ է, ո՞վ կարայ բան ըսել: Էսօր կ'երթանք Վարադ, երկու օր կը մնաս, վերջէն Աստուած բարի ճանապարհ տայ... ողջ առողջ հասցնէ ձերանց մօտ:

— Ես ալ շատ կը փափաքէի, մայրիկ, բայց չեմ կըրնար, պատրաստութիւն պիտի տեսնեմ...

Բայց եւ այնպէս մայրիկը պնդեց: Անշուշտ Սոնիան պարտաւոր էր տեղի տալ, ի՞նչպէս կարելի էր մայրիկի խնդիրը մերժել:

Մթնած էր, երբ կառքը Վարադի մեծ դարպասին առջեւ կանգ առաւ:

Սաթենիկը, Վանուհին եւ Սոնիան թեթեւ ծրարները վերցուցած՝ աճապարեցին ներս մտնալ վանքի ընդարձակ բակը, մինչ մայրիկը կամաց կամաց քալելով՝ հետեւեցաւ անոնց:

Հարաւային անկիւնի ընդարձակ սենեակը յատկաց-

ուած էր Գարեգինենց, իսկ այդ սենեակի հակառակ կողմը, վանքի արեւմտեան անկիւնը կը գտնուէր դպրոցի սենեակներէն մէկը: Այդ սենեակի պատուհանները լուսաւորուած էին, եւ հոնկէ աղմկալի խօսակցութեան ձայներ կը լսուէին:

Երեք աղջիկները, սենեակը կարգի բերելէ վերջ, դուրս ելան պատշգամբ, որ բակին մէջ կը բացուի ու բոլոր սենեակները կը միացնէ իրար:

— Տղաքը այն սենեակը հաւաքուած են. կ'երեւի, կը խորհրդակցին վաղուայ ընելիքներնուն մասին, — ըսաւ Վանուհին. — երթանք, ներկայ լինենք:

— Բայց, անյարմար չէ՞, — առարկեց Սոնիան:

— Ինչո՞ւ անյարմար, ես ուսուցչուհի մեմ, Սաթենիկն ալ դալ տարի Կարմրուորի որբանոցին մէջ պիտի պաշտօնավարէ...

— Հապա ե՞ս, — ծիծաղեցաւ Սոնիան:

— Դո՞ւ, ախ դու աւելի քան ուսուցչուհի մ'ես...

Երթանք:

Երեքով միասին մտան անկիւնի սենեակը: Աղջիկներու ներս մտնելով՝ ժողովը խանդարուեցաւ: Տղաքը չըջապատեցին նորեկները: Ամենէն առաջ Գարեգինը մօտեցաւ Սոնիային: Ինչպէս կը յիշէ ընթերցողը, Գարեգինը անտարբեր չէր Սոնիայի հանդէպ: Հոն գտնուողներէն ամենէն աւելի Մոսոյի ներկայութիւնը ուրախութիւն պատճառեց Սոնիային: Մօտեցաւ անոր: Սենեակի մէջ աջէն ձախէն խօսակցութիւն մը ծայր առաւ:

Գարմանեանը, Վարադայ որբանոցի աւագ ուսուցիչն ու Լեւոնը, սեղանի մօտ նստած, գրոտած թուղթ մը առջեւնին, տաք տաք կը խօսէին հարցի մը մասին: Սոնիան աչքի պոչով տեսած էր Լեւոնը, բայց չմօտեցաւ անոր, այլ բաւականացաւ հեռուէն գլխու թեթեւ բարեւոյ մը:

— Ափսոս, շատ ափսոս որ ստիպուած էք մեկնել, — եղունգները ափին մէջ խրած՝ ըսաւ Գարեգինը, որ ու-

համար անակնկալ հարուած մ'էր Սոնիայի մեկնելու լուրը:

— Ես ալ կը ցաւիմ: Անշուշտ օր մը պիտի մեկնէի, բայց ոչ այսքան անակնկալ կերպով... Օ՛, բարեւ ձեզ պարոն Լեւոն, վաղուց է չենք հանդիպած... Լսեցի որ շաբաթէ մը ի վեր քաղաքն էիք...

Աղջկայ ձայնին մէջ յանդիմանական շեշտ մը դգալի էր: Լեւոնը չհասկնալու դարնելով՝ ձեռքը երկարեց ու հանդարտօրէն ըսաւ.

— Շատ զբաղուած էի... անշուշտ պիտի դայի ձեզ տեսնելու... ձեզ շատ պարտական եմ...

— Ա՛, պարոն Լեւոն, այդ խօսքը չէի սպասեր ձեզ մէջ... ամէն մարդ իր պարտքը միայն կրնայ կատարել...

— Տօ, ի՞նչ ոտքի վրայ մնացեր էք սալտաթներու նման... փառք Աստուծու դրասեղաններ շատ կան, — ու Եկաւեանը ծիծաղելով կողքի նստարանին վրայ նստաւ. — մարդ աշակերտութեան օրերը կը յիշէ...

— Եւ ըրած անառակութիւնները, — ծիծաղելով վըրայ բերաւ Դարմանեանը՝ Եկաւեանի կողքին տեղաւորուելով:

Աշակերտներու նման բոլորը տեղաւորուեցան նստարաններու վրայ: Սոնիան Մոսոյի մօտ նստաւ:

— Պա՛, չե՞ս գիտեր, Լեւոն, — Եկաւեանը խօսքը ուղղեց ընկերոջը, — շուտով օրիորդ Սոնիան պիտի կորսընցնենք... երկու օրէն կը մեկնի...

Որքան ալ որ այդ լուրը անսպասելի չէր, բայց Լեւոնը մէկէն սրտի սեղմում մը ունեցաւ, անկարող իր յուզումը ծածկելու: Առանց բառ մը արտասանելու, հարցական հայեացք մը նետեց դէպի Սոնիան, կարծես ըսել ուզէր, «իրա՞ւ որ պիտի երթաք»...

— Զիչէ է, պիտի մեկնիմ... մայրս հիւանդ է...

Սոնիային թուեցաւ, որ Լեւոնի շրթները վայրկեան մը դողացին, բայց երբ պլուխը ամբողջովին տղու կողմը

դարձնելով դէմ դիմաց նայեցաւ անոր անքերուն, Լեւոնի դէմքը սովորական դաժան սառնութեամբ երեցաւ:

Ա՛յ քեզ հանելուկ, մտածեց Սոնիան, քիչ մը առաջ ինձ այնպէս թուեցաւ, որ իմ մեկնելուս լուրը... Է՛, էս, մինչեւ վերջ հանելուկ պիտի մնայ ինձ համար: Մէկ մը մեկնէի ու այլեւս չտեսնէի այս մարդը:

— Ուրեմն, շուտով կ'երթա՞ք, — մտերմօրէն հարցուց Մոսոն:

— Այո՛: Կ'ուզե՞ս քեզ ալ հետս միասին Թիֆլիս տանիմ... Հայրս լաւ պաշտօն մը...

— Չէ, օրիորդ Սոնիա, — ընդմիջեց Մոսոն առանց ձգելու որ աղջիկը խօսքը վերջացնէ. — Ես Ախլաթ, մեր գիւղը պիտի երթամ... Երկար տարիներ բացակայ եղայ, հիմա մերոնք կը սպասեն վերադարձիս, մէկ ալ որ, ներկայիս հոն շատ աշխատանք կայ կատարելիք...

— Հետաքրքիր է: Որոշ ծրագիր մը ունի՞ս, — հետաքրքրուած հարցուց Սոնիան, որու այնքան մտերմական վերաբերմունքը Մոսոյի հետ կը զարմացնէր Գարեգինը:

— Ամենէն առաջ պիտի ամուսնանայ, ծրագրի գլխաւոր կէտն է այդ, — կարճ ու կտրուկ արտայայտուեցաւ Պիծան, մինչ ընկերները ընդհանուր ծիծաղով մը իրենց համամտութիւնը յայտնեցին:

— Այդ իր կարգին, — քիչ մը շառագունած պատասխանեց մեր Մոսոն, — բայց ատկէ կարեւոր շատ մը ընելիքներ կան: Օրինակ, մեր գիւղը երբեք դպրոց չէ ունեցեր: Եթէ չլինէր... — կարծես բան մը դէմ առաւ Մոսոյի կողորդին մէջ, դժուարութեամբ թուրը կուլ տալով շարունակեց, — եթէ չլինէր Վարդանը, ես մինչ օրս անդրադէտ կը մնայի... Ես Արսէնեաններու տան դռնապանութիւն կ'ընէի այն ժամանակ... Ազատ ժամերուն Վարդանը կը պարապէր հետս...

Սոնիան կախեց զլուխը, թեթեւ հառաչանք մը հանելով եւ Մոսոյի ձեռքը բռնած, ուժով մը սեղմեց:

— Միտքս դրած եմ, — ինքզինքը հաւաքելով շարունակեց Մոսոն, — մեր գիւղին մէջ դպրոց մը բանալ, շըրջակայ գիւղերն ալ կ'օգտուին մեր դպրոցէն...

— Իսկ որքա՞ն դրամ հարկաւոր է դպրոցի շէնք մը կառուցանելու համար, — լըջօրէն հետաքրքրուած՝ հարցուց Սոնիան:

— Տաս, տասներկու ոսկին կը բաւէ, գիւղական համեստ դպրոցի շէնք մը շինելու համար: Ի հարկէ, պէտք եղած դրամը չունիմ, բայց կերպ մը գիւղացիներէն կը հաւաքեմ: Որը ձրի կ'աշխատի, որը բարտի ծառեր կը նուիրէ... չորս ոսկի ալ ես ունիմ պատրաստ:

— Միթէ՞ այդքան ջնջին դումարով կարելի է, — դարձացած հարցուց Սոնիան, — գիտե՞ս ինչ կայ Մոսո, քու դրամին ձեռք մի՛ տար, քեզ պէտք կրնայ դալ, դըպրոցական շէնքի ամբողջ ծախսը ինքս կը հոգամ, ամէն տարի ալ ուսուցչի թոշակը... Այս ամառ դպրոցի շէնքը կը շինես, անունն ալ Վարդանեան վարժարան կը դնես ի յիշատակ քու ուսուցչին, — վերջի բառերը հազիւ լսելի ձայնով մը արտասանեց Սոնիան, — այս մասին պէտք եղածը յետոյ կը խօսինք, միասին կը կարգադրենք...

— Հետաքրքիր է, օրիորդ Սոնիա, ի՞նչ ճանապարհով պիտի երթաք, — հարցուց Գարեգինը, — գիտէ՞ք, որքան ալ որ սահմանադրական կարգեր, բայց Թուրքիայի մէջ կնոջ մը համար առանձին ճանապարհորդելը այնքան ալ ապահով չէ, մանաւանդ այս կողմերը:

— Օ՛ր, այդ մասին մի մտահոգուիք, ուսուց քօնսիւղի կաւազը մինչեւ Իգտիր պիտի ուղեկցի ինձ:

— Ուրեմն, Երեւանով պիտի անցնիք Թիֆլիս, — ուրախացած հարցուց փարաքարցի Գէորգը:

— Անշո՛ւշտ: Երեւան պիտի հանդիպիմ, մօրաքոյրս

տեսնելու համար, — բացատրեց Սոնիան, — մէկ երկու օր անոնց մօտ մնալով՝ կ'անցնիմ Թիֆլիս...

— Ես չէի գիտեր թէ դուք Երեւան մօրաքոյր ունիք: Ուրեմն հայրենակից կը համարուինք, ինքս փարաքարցի եմ:

— Ճիշդն ըսած՝ մօրաքոյրս չէ. բայց մեր ընտանիքները իրարու շատ մօտ եղած են: Հաւանական է, լըսած կը լինիք՝ Արսէնեանները: Վերջերս Թիֆլիսէն Երեւան փոխադրուեցան ամբողջ ընտանիքով:

— Բայց օրիորդ, — ընդմիջեց Եկաւեանը, — եթէ չեմ սխալիր, Պոնտովսկին սպաննող պատանին, որ վերջէն այնքան եղերական վախճան մը ունեցաւ Արաքսի կղզիներէն մէկուն վրայ, Արսէնեանն էր: Այո՛, լաւ կը շիջեմ, Վարդան Արսէնեան... Չլինի՞ թէ ձեր այդ բարեկամներուն զաւակն էր:

— Ճիշդ գուշակեցիք, — շնչաց Սոնիան, — Վարդանն ու ես միասին մեծցած ենք, — եւ Սոնիան բուռն ճիւղ մը ընելով՝ հազիւ արցունքը պահեց:

— Ա՛յ, հիմա պարզ է: Գիտե՞ք, օրիորդ, այնքան անսովոր երեւոյթ մ'է մեր ունեւոր դասի մասնակցութիւնը յեղափոխական դործին, որ մինչեւ այսօր ինձ համար պարզ չէր՝ ձեր մասնակցութեան պատճառները: Այժմ, ի հարկէ, հասկնալի է: Ուրեմն, Վարդանը մօտէն կը ճանչնայիք:

Սոնիան զլուխը քարճրացուց, ու առանձին շեշտ մը դնելով բառերուն վրայ՝ ըսաւ.

— Վարդանը իմ ընկերս էր, իմ նշանածը...

Բոլորը շփոթած իրարու նայեցան: Գարեգինը գունաթափուած կը լուէր: Մոսոն նստած տեղը դոյն կուտար կ'առնէր: Սոնիայի հայեացքը ինկաւ Լեւոնի վրայ: Տղու զլուխը ինկած էր կրծքին վրայ, ու ատամներով շրթուէքը կը խածնէր:

Նորէն ի՞նչ պատահեցաւ այդ մարդուն, իւրովի մը-

տածեց Սոնիան, Տէր Աստուած, այդ ի՞նչ վայրագ դէմք մը ստացեր է: Չլինի՞ թէ կը նախանձի մեռած մարդու մը:

— Ժամանակը ուշ է, — ոտքի ելլելով ըսաւ Պիժան, — երթանք հանգստանալու, իսկ վաղը...

— Վաղը չենք կրնար համազումաբ բանալ, — առարկեց Դարմանեանը, — դեռ դաւառներէն շատեր չեն եկած:

— Ուրեմն, վաղը կը բարձրանանք Վերին Վարագ, — ուրախացած պոռաց Վանուհին:

Յաջորդ առտու, ուխտաւորներու յատուկ անհող ուրախութեամբ, արեւը ծագելէ առաջ, սենեակէ սենեակ ձայն կուտային. «Ելէ՛ք, ելէ՛ք, Վերին Վարագ պիտի երթանք»:

Սաթենիկն ու Վանուհին կերակուրի պատրաստութիւն տեսած էին: Հետզհետէ մեր բարեկամները մէկտեղուեցան, ճամբայ ելլելու համար:

— Գարեգին, հապա այս ծրա՞րը, ո՞վ պիտի տանի, յետոյ ուտելու բան չենք ունենար, — ըսաւ Վանուհին, — պէտք է կերպով մը հետերնիս տանինք:

Գարեգինը մօտեցաւ, ու ծրարը վերցնել փորձեց:

— Աղջիկ, զիս ի՞նչ կարծեցիր, Սամսոնի ո՞ւժ ունիմ, այս ահագին ծանրութիւնը շալկելու համար. ինչո՞ւ մանր ծրարներու ջրածնեցիր, այնպէս հեշտ կը լինէր տանելը:

— Պա՛հ պա՛հ, իսկապէս ծանր է, միայն լեւոնը կրնայ տանիլ, — ինդալով ըսաւ Պիժան:

— Հա՛, — աւելցուց Եկաւեանը, — անիրաւը ճամբան յողնողներն ալ կրնայ շալկել:

— Հիմա ուրիշ մէկը թող տանի, վերդարձին ես կը բերեմ, — հեզնօրէն ծիծաղելով՝ ըսաւ Գարեգինը, դիտնալով որ վերադարձին բան մը չէր մնար ետ բերելու:

Մոսոն ծրարը ուսին նետելով՝ առաջ ինկաւ: Դանդաղ քայլերով անցան Ապարանձան աղբիւրի մօտէն եւ քաղցին ձորն ի վեր որ հետզհետէ նեղնալով՝ կը բարձրանար լեռը:

Զարմանալի Ֆիլիքական կազմուածք մ'ունի Վարագայ սարը: Զուգահեռ երկարող երկու սարեր են, որոնք կեդրոնէն բարձրութեամբ մը իրարու կը միանան: Այդ օղակող բարձրութենէն ծայր կ'առնեն իրարու հակառակ ուղղութեամբ երկարող խոր հովիտներ, մէկը Սուրբ Գրիգորի, իսկ միւսը՝ Վարագայ կեալի անուններով ծանօթ:

Երկու սարերը միացնող բարձրութեան վրայ կը գըտնըւի աւերակներու կոյտ մը, քանի մը կիսափուլ պատեր եւ տասնեակ մը քայլ հեռաւորութեան վրայ սառնօրակ աղբիւր մը, որուն տեղացիք Քրիստոսի Արցունք անունը տուած են: Այդ բարձունքի վրայ գտնուող աւերակներու կոյտը կը կոչուի Վերին Վարագ: Քիչ հեռուն Բամբասանաց Բլուրն է, իսկ Վերին Վարագի կողքէն սաստիկ շեղ վերելքով մը կը բարձրանայ Աստղկան Բերդը, անառիկ ժայռերու կոյտ մը:

Ամբողջ օրը շատ ուրախ ժամանակ մը անցուցին մեր բարեկամները: Անվերջ կատակներով, ծիծաղելով, Քրիստոսի Արցունք աղբիւրին քով նստած ճաշեցին, ուրկէ կ'երեւէր Մասիսի սպիտակափառ կոնը:

— Գէորդ, մէկ նայէ, հայրենիքիդ կարօտը առ, Մասիսի դադաթին նայելով, — ըսաւ Գարեգինը, — էդ դադաթէն էն կողմը Արարատեան Դաշտն է, Երեւանը, էջմիածինը, ձեր դիւղը, Փարաքարը...

— Կովկաս վերադառնալու ցանկութիւն չունի՞ք, — հարցուց Սոնիան, մինչ Գէորդը երազկոտ հայեացքը ուղղած էր Մասիսի դադաթին:

— Անշուշտ, — կարծես քնէ արթննալով պատասխանեց Գէորդը, — օր մը անշուշտ պիտի երթամ, պառաւ

մայր մը ունիմ, եղբայրներ, բայց ոչ այժմ, հոս դեռ շատ աշխատանք կայ կատարելիք, յետոյ երբ մեր գործը շարունակողներ կը հասնին:

Սոնիան վայրկեան մը երկուք ուշադրութեամբ դիտեց Գէորգի պայծառ դէմքը, որ արեւէն խանձուած՝ բրոնզէ գոյն ստացեր էր:

Ի՞նչ կորովի, վճռական դէմք, իւրովի մտածեց Սոնիան: Զարմանալի կերպով այդ տղան ալ գրեթէ միեւնոյն խօսքերը կը կրկնէր, ինչ որ առջի օր ըսած էր Մոսոն: Թիֆլիսի դռնապան Մոսոն, այժմ արդէն կը մտածէր վերադառնալ գիւղ, ինքզինք նուիրելու հասարակական աշխատանքներու: Ահա երիտասարդներ, որոնք դիտեն թէ ի՞նչ բանի կը ձգտին, եւ թէ ինչպէ՞ս պէտք է իրականացնեն իրենց նպատակը: Ժողովուրդի իսկական ղեկավարներ են ասոնք, իւրովի մտածեց Սոնիան, Ժողովուրդի ծառաները, ու ոչ մէկ զոհողութիւն ասոնց համար անկարելի է: Ծիշդ այսպիսի մարդիկ հարկաւոր են՝ մեր Ժողովուրդը ոտքի հանելու համար:

Սոնիայի ուշադրութենէն չէր վրիպած որ այդ ամբողջ օրը, Լեւոնը իր հետ առանձին մնալէ կը խուսափէր: Յարմար առիթ մը գտնելով, երբ Լեւոնը առանձին Բամբասանաց բլուրի մօտ նստած էր, Սոնիան մօտեցաւ, տեղաւորուեցաւ անոր մօտ, մինչ վերջինս հայեացքը ուղղած Մասիսին, ո՞վ գիտէ թէ՛ ինչ մտքերու մէջ թաղուած էր:

— Հիանալի սար մ'է Վարազը, — բան մը ըսած լինելու համար խօսեցաւ Սոնիան, տղու կուշտը տեղաւորուելով:

— Այո՛, հիանալի է — պատասխանեց Լեւոնը:

— Մարդ չի յազենար այս տպաւորիչ սարին նայելէ: Ամէն կողմ՝ առատ աղբիւրներ, կանանչութիւն, ծաղիկներ...

— Այդպէս է: Վարազը կենսունակութեան աղբիւրն

է այս շրջանին համար, — կարճ ու կտրուկ պատասխանեց Լեւոնը, ատով կարծես ըսել ուզէր — «Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ զիս առանձին ձգէիք»:

— Շատ կը ցանկանայի Աստղեան բերդը բարձրանալ: Կ'ըսեն՝ այնտեղէն անհուն հորիզոն մը կը բացուի:

— Այո՛, շատ մեծ հորիզոն մը...

Հակառակ չկամութեանը, իւրովի մտածեց Սոնիան, ուզես չուզես քեզի պիտի խօսեցնեմ, շատ ալ որ չես ասորովի խօսելէ: Ու յանկարծ խօսքի նիւթը փոխելով՝ հարցուց.

— Պարոն Լեւոն, հիմա որ Սահմանադրութիւնը հրաշակուեցաւ, դեռ կը մտածէ՞ք Վանի մէջ մնալ... Ըսել կ'ուզեմ թէ՛ չէ՞ք ուզեր երթալ ձեր հայրենիքը... Թէեւ շիտակը ձեր ինչ տեղացի լինելն ալ չեմ գիտեր, — եւ փորձիչ հայեացքով մը նայեցաւ տղու աչքերուն:

Անսպասելի հարցում մ'էր: Լեւոնը կեդրոնացած հայեացքով նայեցաւ քովը նստած Սոնիային, ի՞նչ ըսել կ'ուզէր: Պահ մը լուռ մնալէ վերջ, Լեւոնը հանդարտօրէն սկսաւ խօսիլ, ուսուցիչի նման, որ կ'աշխատի իր միտքը հասկնալի կերպով մը քացատրել աշակերտին:

— Հոս դեռ շատ աշխատանք կայ կատարելիք... Մեր գործը գրեթէ նոր կը սկսի, ըսել կ'ուզեմ վերաշինական աշխատանքը: Գործող բազուկներու պահանջը շատ, դժբախտաբար աշխատողները սակաւ...

— Այսի՞նքն:

— Շատ քան: Պէտք է վերակազմել, աւելի ճիշդ է ըսել, պէտք է ստեղծել ու կանոնաւոր հիմքերու վրայ դնել գաւառներու կրթական գործը: Երկրի մէկ ծայրէն մինչեւ միւսը, գիւղական տնտեսութիւնը, մասնաւորաբար Համիտեան շրջանին, սնանկացած վիճակի մը հասաւ, հայ Ժողովուրդը իրապէս վերակենդանացնելու համար, անհրաժեշտ է աշխատիլ ամէն բանէ առաջ ա-

նոր տնտեսական վիճակը բարելաւել: Կայ եւ ամենակարեւորը՝ ժողովրդական զինումի հարցը...

— Ձեզ լաւ չեմ հասկնար, այլեւս ի՞նչ զինում, երբ Սահմանադրութիւնը...

— Այս երկրին մէջ, օրիորդ Սոնիա, — մէկ երկու վայրկեան մտածելէ վերջ խօսքը շարունակեց Լեւոնը՝ բառերը հատիկ հատիկ արտասանելով, կարծես ուղեւորով, որ այդ խօսքերու իմաստը ուժեղ կերպով տպաւորուին աղջկայ մտքին վրայ, — այս երկրին մէջ, տարբեր բան է սահմանադրութեան հռչակումը եւ բոլորովին տարբեր բան՝ իրագործումը... Դարերու հակամարտութիւնը, հոգեբանական տարբեր մտայնութիւններ ստեղծած են երկրի բազկացուցիչ աղքերու մէջ: Թուրքը համեմատաբար նորեկ մը, գէնքի ուժով պարտադրած էր տիրապետութիւնը, կ'իշխէ՝ որպէս բացարձակ տէրը երկրին եւ իրմով միայն, գէթ մինչեւ հիմա, կ'արտայայտուի պետութիւնը: Քիւրտը, անկուտուրական տարր մը, դեռ կ'իստովին վաչկատուն վիճակի մէջ է: Քաղաքական պայմաններու շնորհիւ քիւրտը շիւրջաձ դաւակը դարձած է այս երկրի մէջ. ան արժէք մը կը ճանչնայ, որու առջեւ միայն կը խոնարհի: Այդ՝ գէնքի ուժն է: Քրտի համար ուժը համազօր է տիրապետելու իրաւունքին: Իսկ հայը... դժուար է բնորոշել... Հողին կպած՝ դորշ դանդուած մը, որ հոգեբանօրէն կորսնցուցած է գլուխը վեր բռնելու մարդկային առաքինութիւնը: Անշուշտ կը հասկընաք թէ ինչ ըսել կ'ուզեմ...

— Ի հարկէ, խնդրեմ շարունակեցէք...

— Հայ ժողովուրդը աղատ ժողովուրդ մը լինելու համար, նախ ինքն իր հոգին պէտք է ազատագրէ դարերու ստրկային հոգեբանութենէն... Ազատութիւն կամ հաւասարութիւն չի շնորհուիր ժողովուրդի մը, ատոնք հոգեկան անհրաժեշտ պահանջներ պէտք է լինին ժողովուրդի մը հոգիէն բխող, այլապէս կը մնան անբովանդակ

բառեր...

— Բայց ես դեռ գէնքի դերը...

— Շատ պարզ է. թուրքը թէ՛ զինուած է եւ թէ՛ ինքզինքը հիմնական մասը կը համարէ պետական կառուցուածքին: Քիւրտը նոյնպէս զինուած է: Ձէնքը քրտի համար անհրաժեշտութիւն մ'է: Երկու գլխաւոր աղբակներ կան անոր կեանքը կանոնաւորող, մէկը կառավարութիւնը, որ կ'ուղէ գանոնք սիրաշահել, մէկ մ'ալ ներքին գիտակցութիւնը իր արժէքին: Հոն, ուր չհասաւ կառավարութեան օժանդակութիւնը, հոն կայ քրտի առողջ բնազդը՝ իր ձեռքով բաւարարելու ինքզինքը: Ահա թէ որ տե՞ղ գէնքը հոգեբանական խոշոր դեր մը կը կատարէ: Այդ դպացումէն դուրի է հայ ժողովուրդը: Վերջին տարիներու ընթացքին գէնքի սէրը որոշ չափով արծարծեցաւ, որոշ տեղ բռնեց ժողովուրդի կեանքին մէջ, բայց դեռ զանգուածի հոգեկան բնածին պահանջը չէ դարձած: Արիւն ու ոսկոր չէ դարձած: Ձէնքը առնականութիւն է, կռիւ է, իրաւունքի գիտակցութիւն է: Ոչխարը չի կրնար դայլերու մէջ ապրիլ, պէտք է ինքն ալ դայլ դառնայ... Այս՝ անխուսափելի հրամայական մ'է՝ իրական հաւասարութիւնը ձեռք բերելու համար...

— Ուրեմն այդ կը նշանակէ որ դուք դեռ երկար...

— Այո, դեռ երկար եւ ծանր աշխատանք մ'ունինք մեր առջեւ: Կը յիշէք, չէ՞, Վահէի վերջին նամակը, ժողովուրդի առաջնորդը սեփական կեանք չի կրնար ունենալ. — ու թերեւս ակամայ, Լեւոնի ձայնին մէջ դառն շեշտ մը զգալի էր:

Լեւոնը խօսքը վերջացնելով, գլուխը կախ՝ լռեց: Սոնիան, Լեւոնի ձայնին, շեշտին մէջ խորապէս զգաց այն վճռական կորովը, պողպատէ կամբք, որ այդ մըտքերը դէպի իրականացում պիտի տանէին, Լեւոնի եւ ընկերներու կողմէ: Ճիշդ որ Լեւոնի եւ ընկերներու գործը չէր վերջացած, իւրովի մտածեց Սոնիան: Դեռ շատ աշ-

խատանք կար կատարելիք: Ապա ի՞նչ, Սոնիան մի՞թէ
ինքն ալ բաժին մը չպիտի ունենար ապագայի աշխատանքին մէջ:

Երբ բաւական մը վերջ, Սաթենիկը մօտեցաւ Լեւոնին ու Սոնիային, զարմանքով նկատեց, որ այդ երկուքը, իրարու կողքի նստած, ցրուած արտայայտութեամբ, լուռ կը մնային ամէն մէկը իր մտքերով տարուած:

Ճաշէն վերջ ամբողջ խմբով բարձրացան Աստղիկան Բերդը, Վարազի ամենաբարձր դադաթներէն մէկը, որ տիրապետող դերք մ'ունի: Մքանչելի տեսարան մը կը պարզուէր այդ բարձունքէն: Գրեթէ ամբողջ Վասպուրականը լայնօրէն սիւռուած էր Վարազի շուրջը: Արեւմուտքէն, Նէմրութն ու Գրգուռ սարերը կ'երեւէին, իսկ արեւելքէն, հորիզոնի անորոշութեան մէջ թրջօպարսկական սահմանի ստուերային լեռնաշղթան, Արատլի բարձր սարով: Աստղիկան Բերդի ոտքերուն տակ, կարծես անդունդի մը յատակին փռուած լինէր կապուտակ Քէշիշ Կէօլը, անհուն ծաղկանոցով շրջապատուած:

— Հիանալի է. հիանալի...

Սոնիան զգաց որ աչքերը կը թրջուէին, հոգին լեցուած էր անբացատրելի հոգեկան բաւականութեամբ: Այդ բարձունքէն վար նայած ժամանակ գլուխը պտտեցաւ ու բնազդօրէն տատամսոտ քայլով մը ընկրկեցաւ ժայռի վրայէն: Անմիջապէս Լեւոնի երկաթէ ձեռքը բոլորեց Սոնիայի թեւը, ամուր օղակի նման:

— Բան չկայ, մի վախենաք. զգուշութեամբ ոտքերնիդ փոխեցէք...

Թեւը Լեւոնի աքցանի նման ձեռքին մէջ սեղմուած՝ Սոնիան զարմանալի հոգեկան խաղաղութիւն մը զգաց: Ձեռքի այդ հպումը բացարձակ վստահութիւն ներշնչեց իրեն: Բարձրացաւ սուր ցցուած ժայռի դադաթը, ուր հազիւ ոտք դնելու տեղ կար: Չէ, այլեւս չէր վախնար: Եթէ պէտք լինէր այդ անդունդէն վար իջնալ, Սոնիան

բոլորովին չէր տատամսիր, բաւական էր որ թեւին վրայ զգար Լեւոնի ձեռքը:

— Իջնենք, իջնենք, — պոռաց Գէորգը, — ժամանակ է վերադառնալու:

Իրօք, պէտք էր աճապարել: Այդ երեկոյ Սոնիան պիտի մեկնէր քաղաք, յաջորդ օրը դէպի Իգդիր ճամբայ ելնելու համար:

Շատեր գրեթէ վազելով իջան Աստղիկան Բերդէն մինչեւ Վերին Վարազ: Սոնիան Սաթենիկի հետ, զգուշութեամբ քայլերը փոխելով, վար կ'իջնար: Մէկ ալ ինչպէս եղաւ, ինքն ալ չգիտեցաւ, Սոնիայի ոտքը սահեցաւ, խիճերու շեղջը ջրի նման վար հոսեցաւ ոտքի տակէն ու աղջիկը հաւասարակշռութիւնը կորսնցուցած՝ թաւալ գլուխ քշուեցաւ մանր քարերու կոյտին հետ:

Ակնթարթի մը մէջ, Լեւոնը, Գարեգինը, Գէորգը հասան Սոնիայի մօտ: Գէորգը գրկելով վերցուց աղջիկը, մինչ Գարեգինը մտահոգուած կը հարցնէր.

— Ի սէր Աստու, չվիրաւորուեցա՞ք, մէկ տեղերնիդ չի՞ ցաւիր...

— Ձէ', բան չկայ, — ժպտեցաւ Սոնիան, — այնպէս, ոտքս յանկարծ սահեցաւ... Ձէ, բան չկայ... կարծեմ միայն զգեստս... անհանգստանալու բան չկայ, շնորհակալ եմ...

Յանկարծ Սոնիայի հայեացքը ինկաւ Լեւոնի դէմքին: Ծանր ծանր շունչ կ'առնէր տղան, սարսափի ահնեբեւ արտայայտութիւն մը աչքերուն խորը: Բայց երբ նկատեց Սոնիայի իր դէմքին յառած հայեացքը, ճիգով մը ինքզինքը հաւաքեց, անտարբեր ձեւով մը կողքի դարձաւ ու կոտորով վերցուց Սոնիայի ձեռքէն ինկած անթառամ ծաղիկներու փունջը:

— Օրիորդ Սոնիա, Ձեր փունջը...

— Շնորհակալ եմ, — չարացած ըսաւ Սոնիան, — շատ բարի էք:

Ահա թէ ինչպիսի հանելուկային մարդ մ'է այս տղան, շորերը դրստելով, սրտնեղած մտածեց Սոնիան. հազիւ թէ հարազատ մը այնքան վախնար իյնալէս որքան սարսափած կ'երեւէր եւ սակայն վայրկեան մը չանցած նոյն անթափանց դէմքը, անտանելի չորութիւնը. «օրիորդ Սոնիա, ձեր փունջը»... կարծես չէր կրնար զիս վեր բարձրացնել. ամենէն առաջ ինք հասաւ քովս ու թողուց որ միւսները զիս վերցնեն գետնէն... «Ձեր փունջը,» ո՛հ՛՛՛, այս մարդը զիս պիտի խենթեցնէ... հիմա ալ դէմքը կարծես երկաթէ ձուլուած լինի, թեւէս խսկ չի բռներ: Փո՛ւ, վայրենին, տեսնես որտե՞ղ մեծցեր է. թերեւս Ապարանի գիւղերէն մէկուն մէջ:

Վերին Վարազէն խուճբը հանդարտօրէն ձորն ի վար իջաւ: Մինչեւ Վարազայ Վանքը, Լեւոնը այլեւս չմօտեցաւ Սոնիայէն: Ամենէն առաջ ինկած, թեթեւ մը կաղալով կը քալէր, առանց ետին նայելու: Անոր քալուածքին, շարժումներուն մէջ դարմանալի կերպով տպաւորիչ, յուզող բան մը կար: Որքան ալ որ Սոնիան նեղուած էր անոր ցոյց տուած անտարբեր վերաբերմունքէն, թերեւս հակառակ իր կամքին, աչքերը անոր վրայէն չէր վերցըներ: Ահա մարդ մը, որ կենսուրախ ընկերներու մէջ, յամառօրէն դաժան, մինակ կը քալէր, ձեռքերը տարատի գրպանները կոխած, գլուխը կախ, կարծես անապատի մը մէջ մոլորուած մը լինէր: Այդ ամբողջ օրը, Լեւոնը թէեւ ընկերներու շրջանին մէջ, բայց կարծես առանձին կը դար ինքզինքը: Ճիշդ է, միշտ ընկերներուն հետ, բայց դարմանալի վերապահում մը ունէր, մտամիտի, կորած ինքն իր խոհերուն մէջ: Սոնիան դարմանքով նկատած էր, որ Լեւոնի ընկերները, կ'երեւի վարժուած անոր բնաւորութեանը, ուշադրութեան չէին առնէր անոր օտարոտի կեցուածքը: Սոնիան նոյնիսկ նկատած էր, որ Լեւոնի բացակայութեան ժամանակ, խմբի մէջ աւելի կենսուրախ տրամադրութիւն մը կը ստեղծուէր: Հայեացքը առջեւէն

քալող Լեւոնի վրայ յառած, Սոնիան իւրովի մտածեց. ահա մարդ մը, որ մենակ կը զգայ: Այս միտքը՝ յուզեց Սոնիան, դարմանալի կերպով քնքուշ տրամադրութիւն ստեղծելով իր մէջ: Արդեօք բնաւորութեան խնդր՞ր մ'էր թէ՛ հաշմանդամ վիճակի գիտակցութիւնը դառնացուցեր էր դայն, իր ու կեանքի մէջ անանցանելի պատ մը քաչելով: Սոնիան, այնքան ատեն չէր սպրած Լեւոնի հետ, որ կարողանար դոհացուցիչ պատասխան մը գտնել իր մտածումներուն, բայց հաստատ դիտէր, որ ըստ երեւոյթի, այդ դաժան մարդը, կեանքէ զրկուած, հոգեկան աքսորուած մը, մեն մենակ մարդ մըն էր:

Երբ վանք հասան, մեծ դարպասի առջեւ կը սպասէր Սոնիան տանելու եկած կառքը: Ամբողջը միասին քալելով ընկերացան Սոնիային մինչեւ Կուրկուտ Սաչ: Հոն Սոնիան բոլորին ձեռքը թօթուելով՝ կառքը բարձրացաւ Մոսոյի հետ միասին:

Վայրկեան մը Սոնիայի եւ Լեւոնի ձեռքերը իրար սեղմած մնացին:

— Մնաք բարով չեմ ըսեր ձեզ, — շիտակ տղու աչքերուն նայելով ըսաւ Սոնիան, — ցտեսութիւն:

Լեւոնը թեթեւ մը ցնցուեցաւ, խուզարկիչ հայեացքով մը նայեցաւ աղջկան, ու ապա առանց բառ մը արտասանելու Սոնիայի ձեռքը սեղմեց:

Կառքը դանդաղօրէն սկսաւ առաջանալ:

— Մեզի չմոռնաս, կ'ըսէր մայրիկը, — շուտ շուտ գրէ, տեղեկութիւն տուր մայրիկիդ մասին...:

— Մնաք բարով... Մնաք բարով...

— Բարի ճանապարհ... յաջողութիւն...

— Սոնիա, իզգիւրէն գրել չմոռնաս, — կը պոռար կառքի ետեւէն Վանուհին:

— Ինքզինքիդ լաւ նայէ, ճամբան չհիւանդանաս...

— Եթէ ժամանակ ունենաք, Փարաքար հանդիպեցէք

մերոնց տեսնելու, կառքի ետեւէն վազելով կը պոռար Գէորգը:

Կառքը օրօրուելով՝ վար կ'իջնար Վարազի դառնիւայրէն: Մոնիայի պայծառ դէմքի ուրախ արտայայտութիւնը կարծես մէկէն չբացած լինէր: Կառքի մէկ անկիւնը սեղմուած, ան հակառակ ուղղութեամբ կը նայէր, որ Մոսօն իր դէմքը չտեսնայ:

Շուշանցի կէս ճամբան կտրած կը լինէին, երբ Մոնիան գլուխը ետ դարձուց: Մոսօն ալ բնազդօրէն ետ նայեցաւ: Կարկուտ խաչի մօտ, բարձրահասակ, մենաւոր մարդ մը կանգնած՝ կը նայէր կառքի ուղղութեամբ:

— Պարոն Լեւոնն է, — գլուխը տխրութեամբ օրօրելով ըսաւ Մոսօն, — պարոն Լեւոնն է:

Մոնիան չպատասխանեց: Յանկարծ հեծկտանք մը բարձրացաւ մինչեւ կոկորդը: Ճիշդ մը թափելով ինքզինք զսպեց: Մէկ այդ էր պակաս, որ Մոսոյի ներկայութեանը լար: Գրապանակի մէջէն թաշկինակ մը հանելով՝ սկսաւ շարժել:

Կառքը հիմա արդէն աւելի արագօրէն կը մօտենար Շուշանց գիւղին:

— Տնեցոց բոլորին բարեւներ կ'ընէք, — կը խնդրէր Մոսօն, — ձերոնց, Եւգինէին, պարոն Աշոտին... մանաւանդ տիկին Մարիամին... Խեղճ կին, խեղճ կին, անոր կսկիծը ամենէն շատ է...

Նորէն հին պատմութիւնը... Մոնիայի ձեռքը կառքէն վար կախուած մնաց:

— Ուրեմն, վաղը առտու շատ կանուխ ճամբայ պիտի ելլէք, — կ'ըսէր Մոսօն, — էհ մէկ ալ ո՞վ գիտէ թէ իրար պիտի տեսնանք:

— Շուտով, Մոսօ, շատ շուտով պիտի վերադառնամ...

— Իրա՞ւ, օրիորդ Մոնիա, իրա՞ւ, կրկին պիտի վե-

րադառնաք:

— Անշուշտ, Մոսօ'... Իմ աշխատանքս ալ ձերինի նման դեռ նոր պիտի սկսի:

Կառքը Շուշանց գիւղին մօտեցած էր: Հեռուէն կ'երեւնար Կարմրուոր վանքի դմբէթը: Մոնիան անգամ մ'ալ դէպի ետ նայեցաւ: Արդեօք Լեւոնը նոյն տեղը կանգնած էր... Հիմա արդէն շատ հեռուէն կ'երեւար Կարկուտ խաչի մօտ արձանացած մարդու բարձր հասակը, որ կարծես սարէն ինկած անշարժ ժայռի կտոր մը եղած լինէր: Մոնիան թաշկինակը շարժեց:

Հեռուէն, շատ հեռուէն փափախ մը երեբայ օդի մէջ:

— Պարոն Լեւոնը, փափախը կը շարժէ...

— Գիտեմ, — շնչաց Մոնիան, առանց Մօսոյին նայելու, — գիտեմ...

Իրօք, Կարկուտ խաչի մօտ կանգնողը Լեւոնն էր: Ընկերները վերադարձած էին վանք, մինչ ինք, կարծես արձանացած՝ չէր կրնար ինքզինքը պոկել այդ տեղէն: Դանդաղօրէն հեռացող կառքին հետ, կ'երթար Մոնիան, ու անոր հետ ամբողջ անցեալ մը, պատանեկան վառ երազներ, անձնական երջանկութիւն, ապագայի յոյս: Ամէն ինչ, ամէն ինչ կ'աղօտանար, ինչպէս կ'աղօտանար հեռացող կառքը, որ հազիւ փոքր բան մը կ'երեւար:

Վերջի ամիսները կարծես երազ մը եղած լինէին: Անբացատրելի յոյս մը մէկէն լուսաւորած էր Լեւոնի խաւար երկինքը: Բայց հիմա, այդ երազն ալ կը ցնդէր: Ահա կ'երթար Մոնիան, միակ էակը, որ կրնար յարուսթիւն առնել տալ մեռած Վարդանին: Բայց արդեօք Վարդանը կրնար կեանքի վերադառնալ, ինչո՞վ կարելի էր երկուքի մէջ բացուած փոսը լեցնել: Մէկդի ձգած իր հաշմուած, այլանդակուած մարմինը, արդեօք Լեւոնը իր կեանքին տէրն էր, որու ուսերուն ինկած էր այնքան ծանր բեռ մը, ամբողջ ժողովուրդը մը առաջնորդելու պարտականութիւ-

նը: Կառքը հաղիւ կը տեսնուէր, Լեւոնի շրթները դող-
դրդալով շարժուեցան, «երթաս բարով, երթաս բարով
հրեշտակս», ու յանկարծ տղու լարուած ջղերը թուլցան,
կուրծքը բարձրացաւ եւ արցունքները հանդարտօրէն հո-
սեցան երեսն ի վար:

Կառքը Ուրբաթ Առուն անցած՝ կը մօտենար Նորա-
տունկերուն: Քանի մը վայրկեան եւս, ու ահա ան բո-
լորովին կորսուեցաւ կանաչութեան ետին: Ոչ կառք,
ոչ Սոնիա:

Լեւոնը աչքերը սրբեց ու գլուխը բարձրացուց:

Իրիկուան մօտ էր, Վանի վերջալոյսի պահը, որու
նմանը մարդ հաղիւ ուրիշ տեղ կարենայ տեսնել: Արեւը
Փրզուռ եւ Նեմրութ սարերու մէջտեղէն հանդարտօրէն
կ'անցնէր հորիզոնի ետին արիւննոտած ամպերու արան-
քէն սուղելով: Ծովակի շքեղ կապոյտը, տեղ տեղ ոսկիի
գոյն առած, մեղմօրէն կը ծփար: Աջ կողմի վրայ Սիւիա-
նի հսկայ սարը քօղաւոր հարսի նման կը բարձրանար Ա-
տիլճավաղի հարթ դաշտին մէջէն, ուր ցան ու ցիր գիւ-
ղերը իրենց անտառակներով գորշ-կապոյտ գոյն մը
ստացած էին: Ձախի վրայ կ'երեւնար Արտոսը, աւելի հե-
ռուն՝ Առնոսը, Եղերովը, վերջալոյսի լոյսով զարդար-
ուած ոսկեղօժուած կողերով, ամեհի հսկաներ, որոնց
ապստամբ գազաթները մխրճուած էին երկնքի կապոյտին
մէջ: Վարը, Լեւոնի ոտքերուն տակ լայնօրէն սփռուած
էր Այգեստանը, կիսովին կորած ծառերու կանաչութեան
մէջ ու աւելի հեռուն, քաղաքամէջը, կողքին բարձրացած
բարձրադիր բերդը, ժանիքաւոր պարսպով:

Սքանչելի համայնապատկերը կրօնական յափշտակու-
թեամբ լեցուց Լեւոնի ողջ էութիւնը, հին գինիի նման
հարբեցուց զայն, որ ինքզինք կորսուած կը զգար վերջա-
լոյսի ակնապարար գոյներուն մէջ:

Արձանի նման անշարժ կանգնած էր Լեւոնը, Կարկուտ

նաչի կողքին, ինքն ալ միաձուլուած բնութեան մեծաշուք
գեղեցիկութեան հետ: Սրբազան երկիւղածութեամբ հոգին
կը խոնարհէր հայոց աշխարհի հոյակապ վսեմութեան
ի տես: Հեռուն, շուրջը, ամէն ինչ այնքան գունաւոր,
չքեղօրէն հզօր, անպարփակելի մեծութիւն մը, իր փո-
թորկող պէսպիսութեամբը ճնշող, սարսուցնող բայց եւ
ամբողջութեամբ այնքան ներդաշնակ ու գեղեցիկ: Վաս-
պուրական երկիր դրախտավայր: Սրբութիւն սրբոց,
Սրբազնագոյն Հայրենիք Հայոց:

Երկիւղած հաւատացեալի մը նման, Լեւոնի դէմքը
դէպի արեւամուտ, հզօր աստուածներու բազինի մը առ-
ջեւ կանգնած կը զգար ինքզինք, անհուն տաճարի մը, ո-
րու բարձրաբերձ սիւներն էին վիթխարի սարերը, եր-
կինքն ի վեր սլացող գազաթներով, բարձրաբերձ դմբէ-
թը՝ փոսորային երկինքը անսահմանելի եւ արեւի վերջին
ճառագայթներով արիւնաներկ կապտաւուն ծովակը,
պատարազի սեղանը, որու վրայ հազարաւորներ զոհուե-
ցան Ազատութեան Աստուծուն:

Աղջամուղջը հանդարտօրէն կը ծանրանար երկրի վը-
րայ: Կամաց կամաց գոյները կը մեռնէին եւ նոսր շղարշ
մը կը վարադուրէր ամէն ինչ: Դեռ միեւնոյն տեղը ան-
շարժ կանգնած, Լեւոնին կը թուէր թէ՛ լճակի ստուերոտ
խորքէն լուսաւոր ամպ մը սիւնի նման կը բարձրանար,
ու ամպի մէջէն, նախ անորոշ ու հետզհետէ որոշ գծերով
Վահէի դէմքը կը գծադրուէր, աստիճանաբար մեծնալով,
մինչեւ որ ամբողջ հորիզոնը լեցուց:

Թերեւս երազ մը, խաբուսիկ պատկեր մըն էր այդ,
ո՞վ կրնայ ըսել:

Լեւոնի գունաթափ շրթները մեղմօրէն շարժեցան,
կարծես աներեւոյթ ոգիի մը կ'ուղղէր իր խօսքերը:

— Կ'երդնո՛ւմ, կ'երդնում մինչեւ մահ ծառայել քեզ,
մեծագոր հայրենիքս :

Հետզհետէ Լեւոնի դաժան դէմքը պայծառացաւ, դո-
հունակ ժպիտի մը ստուերը քարացաւ դէմքին վրայ :
Կռացած մարմինը շտկեց, բռունցքները սեղմուեցան,
լայն կուրծքը դուրս նետեց, գլուխը խրոխտօրէն բարձ-
րացուց ու մէկ նայուածքով ամբողջ հորիզոնը ընդգրկե-
լով, պողպատի ծանրութեամբ կրկնեց .

— Հայաստան, Հայաստան, Հայաստան...

ՎԵՐՋ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՀԱՏՈՐԻ



Ընթերցողը ԶԱՐԹՕՆԻ շարունակութիւնը պիտի
գտնայ ԼՈՒՍԱԴԻՄԻՆ երկհատոր վէպի մէջ :

Handwritten text in Armenian script, appearing to be a title or a list of items, though the characters are faint and difficult to decipher.

« Ազգային գրադարան

NL0352206

11411